

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (27)

2024

Գյումրի 2024

---

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն հիմնադրվել է 1998թ.  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ:  
Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316  
eISSN 2953-8076  
DOI: 10.52971/18294316-2024.27.1

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝**

ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ՄԵՐԳՈ՝ (գլխավոր խմբագիր) բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ  
ԱԿՈՂՈՎ ԱՐԿԱՐԻ՝ (գլխ. խմբագրի տեղակալ), պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ  
ԲԱԶԵՑԱՆ ԿԱՐԻՆԵ՝ (պատ. քարտուղար) պատմ.գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ

ԲԱՐԱՆՅԱՆ ՄԵՐԳԵՑ՝ բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ  
ԲԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր, IAAM թղթակից անդամ Մոսկվա, ՌԴ  
ԳՐԻԳՈՐՅԱՆ /Հայկազուն/ ԱՇՈՏ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, ՃԱԹԻ, Երևան, ՀՀ  
ՂԵՎԵՆՂԵՐ ԿՈՒՄԱՐ՝ բան. գիտ. դոկտոր PhD, ԲՀՀ, Կուրուկչետրա, Հնդկաստան  
ԽԱՉՏՁՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ  
ԽԱՉՏՐՅԱՆ ԼԱԼԻԿ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ, Երևան, ՀՀ  
ԽԵՍՏՅԱՆ ԷՍԹԵՐ՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ  
ԽՈՍՐՈՒՅՎԱ ԱՆԱՀԻՏ՝ պատմ. գիտ. թեկնածու, Լորթ Փարք համալսարան, Չիկագո, ԱՄՆ  
ԿԱՆՈՐ ՌՈՒՄԼԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՊՀ, Մայկոպ, ՌԴ  
ԿԱՎԵՆԼԻՇՎԻԼԻ ՌՈՒՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ՍՁՊՀ, Ախալցխա, Վրաստան  
ԿՐՑՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀԿԴՀ, Ստավրոպոլ, ՌԴ  
ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵՊԿ ԳՄ, Գյումրի, ՀՀ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ ՇՊՀ, Գյումրի, ՀՀ  
ՀՈՒՍԿԱՆ ՅԱԹԻՄԵՏ՝ բան. գիտ., թեկնածու, ՄՊՏՀ, Վորոնեժ, ՌԴ  
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ՝ աստվածաբանության դոկտոր, ԱՊՀ, Աթենք, Հունաստան  
ՄՍՀԵ ԺԱՆ - ՊԻԵՐ՝ հայագետ, ԱԳԱ անդամ, Փարիզ, Ֆրանսիա  
ՄՄՐԳԱՐՅԱՆ ԱՐԱՔՍ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵԳԱ ԳՄ, Գյումրի, ՀՀ  
ՄՄՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՊԻ, Երևան, ՀՀ  
ՄԿՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՇՊՀ, Գյումրի, ՀՀ  
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԳՐԻՍ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ  
ՌՈՒՆԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ՝ արվ. դոկտոր, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ  
ՄԱՂՈՎՍԿԻ ՄԻՒՍԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր PhD, ՎՀ, Վարշավա, Լեհաստան  
ՄԱՀԱԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ՝ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ  
ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՄԼԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ  
ՕՐԴՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ՝ քաղ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՓՄԻԻ, Երևան, ՀՀ

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ». N 1(27) / Հայագիտություն և հասարակա-  
կան գիտություններ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հոդվածների ժողովածու Խմբ. խորհուրդ՝ Ս.  
Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2024,-224 էջ:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ.Սարգսյան 5ա:  
էլ. հասցեն՝ scient.works@shirakcenter.sci.am  
կայքէջը՝ www.shirakcenter.sci.am  
Հեռախոսը՝ +374/94/ 411 228*

ISSN 1829-4316  
eISSN 2953-8076  
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023

Республика Армения  
Национальная академия наук  
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

1 (27)

EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre for Armenological Studies  
National Academy of Sciences  
Republic of Armenia

Гюмри 2024 Gyumri

---

Периодический сборник статей «Научные труды» учрежден Ученым советом ШЦАИ НАН РА в 1998.  
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.

The periodical collection of “Scientific Works” established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS, is indexed in the list of SCC MESCS RA.

ISSN 1829-4316

eISSN 2953-8076

DOI: 10.52971/18294316-2024.27.1

#### РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АЙРАПЕТЯН СЕРГО - главный редактор, РА  
АКОПОВ АРКАДИЙ- зам. гл. редактора, РА  
БАЗЕЯН КАРИНЕ- отв. секретарь, РА

АЙРАПЕТЯН АРМЕН, РА  
АРУТЮНЯН АСМИК, РА  
БАДАЛЯН СЕРГЕЙ, РА  
БАЛЪЯН КАРЕН, РФ  
ВАРДАНЯН БЕНИК, РА  
ГРИГОРЯН (АЙКАЗУН) АШОТ, РА  
ДЕВЕНДЕР КУМАР, Индия  
ЖАН-ПИЕР МАЭ, Франция  
КАВРЕЛИШВИЛИ РОИН, Грузия  
КАЗАРЯН ГЕВОРГ, Греция  
КАНДОР РУСЛАН, РФ  
КРЮЧКОВ ИГОРЬ, РФ  
МАРГАРЯН АРАКС, РА  
МАРУҚЯН АРМЕН, РА  
МКОЯН АРТАШЕС, РА  
ОГАНИСЯН АРТАК, РА  
ОРДУХАНЫАН ЭМИЛЬ, РА  
ПЕТРОСЯН САРГИС, РА  
РУХКЯН МАРГАРИТ, РА  
СААКЯН КАРИНЕ, РА  
САДЛОВСКИЙ МИХАЛ, Польша  
ХАЧАТРЯН ГУРГЕН, РА  
ХАЧАТРЯН ЛАЛИК, РА  
ХЕМЧЯН ЭСТЕР, РА  
ХОСРОЕВА АНАИТ, США  
ХУАКО ФАТИМЕТ, РФ  
ЦАКАНЯН РУСЛАН, РА

#### EDITORIAL BOARD

HAYRAPETYAN SERGO editor-in-chief, RA  
AKOPOV ARKADI vice editor, RA  
BAZEYAN KARINE secretary, RA

HAYRAPETYAN ARMEN, RA  
HARUTYUNYAN HASMIK, RA  
BADALYAN SERGEY, RA  
BALYAN KAREN, RF  
VARDANYAN BENIK RA,  
GRIGORYAN (HAYKAZUN) ASHOT, RA  
DEVENDER KUMAR, India  
JAN-PIER MAHE, France  
KAVREISHVILI ROIN, Georgia  
GHAZARYAN GEVORG, Greece  
KANDOR RUSLAN, RF  
KRYUCHKOV IGOR, RF  
MARGARYAN ARAKS, RA  
MARUQYAN ARMEN, RA  
MKOYAN ARTASHES, RA  
HOVHANNISYAN ARTAK, RA  
ORDUKHANYAN EMIL, RA  
PETROSYAN SARGIS, RA  
RUKHKYAN MARGARIT, RA  
SAHAKYAN KARINE, RA  
SADLOVSKI MIKHAL, Poland  
KHACHATRYAN GURGEN, RA  
KHACHATRYAN LALIK, RA  
KHEMCHYAN ESTER, RA  
KHOSROEVA ANAHIT, USA  
HUAKO FATHIMET, RF  
TSAKANYAN RUSLAN, RA

“Научные труды” ШЦАИ НАН РА NN 1(27). Арменоведческие и общественные науки / НАН РА:  
Сборник статей: Редакционный. совет: С.Айрапетян и др.: -Гюмри,” ЧП Р.Аветисян”, 2024, 224 с.

“Scientific Works” N1(27)of SCAS of NAS RA: Ed.Board:S.Hayrapetyan & others:Gyumri, "IE RA".2024,224p.

Адрес: 3101, РА, Гюмри, ул. В.Саргсяна 5а  
Address: 30101, 5 a V. Sargsyan Street, Gyumri, RA  
E-mail: scient.works@shirakcenter.sci.am  
hppt: www.shirakcenter.sci.am  
мел./tel.: +374/94/411-228

ISSN 1829-4316  
eISSN 2953-8076  
DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА. 2024  
@ Shirak Center for Armenological Studies of NAS RA. 2024

ՀՏԴ՝ 94 (3)

DOI: 10.52971/18294316-2024.27.1-5

ԴՐՎԱԳ՝ ԱՍՈՐԵՍՏԱՆԱ-ԽԵԹԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*Ռուսյան Ա. Ցականյան*

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Հին Մերձավոր Արևելքի երկրների պատմության ուսումնասիրման գործում իր ուրույն տեղն ունի միջպետական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը: Վերլուծվում են Ասորեստանի և Խեթական պետության միջև այդ հարաբերությունների ծագման քաղաքական և տնտեսական շարժառիթներն ու ընթացքը: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Աղբյուրների ուսումնասիրության ժամանակ կիրառվել է այդ մեթոդի համադրման և հակադրման սկզբունքը: Հիմնականում օգտագործվել են Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1242-1206 թթ.) և Խեթական պետության արքա Թուղխալիյաս IV-ի (մ.թ.ա. մոտ 1245-1215 թթ.) միջև նամակագրությունն ու Ասորեստանի տիրակալի թողած արձանագրությունները: Վերլուծություն. Նյութի ուսումնասիրության ընթացքում մանրակրկիտ քննության են ենթարկվել այդ սեպագիր տեքստերն ու արձանագրությունները: Վերհանված է Ասորեստանա-խեթական հարաբերությունների բնույթը: Արդյունքներ. Չնայած երկար դարեր ի վեր Աշշուրի և Խաթթիի միջև ռազմաքաղաքական առումով բավականին լուրջ տարաձայնությունների առկայությանը՝ մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին երկու երկրների միջև միջպետական հարաբերությունները կարգավորվեցին, հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ: Խաթթի արքա Թուղխալիյաս IV-ն իր «բարյացակամ» խորհուրդներով ու դիվանագիտական ճանապարհով փորձում էր իր սահմաններից և վերահսկողության տիրույթներից հեռու պահել Ասորեստանի նոր, երիտասարդ ու հավակնոտ արքա Թուկուլտի-Նինուրտա I-ին: Սակայն նույն տարածքների նվաճումը ելնում էր Ասորեստանի տնտեսական ու

քաղաքական շահերից, որի արդյունքում էլ այդ տարածքները շուտով, թեկուզ և ոչ հաստատուն, բայց հայտնվեցին Ասորեստանի վերահսկողության տակ:

**Բանալի բառեր՝** *Ասորեստան, Խեթական պետություն, դիվանագիտական հարաբերություններ, նամակ, արձանագրություն, արշավանք, Թուղխալիյաս IV, Թուկուլտի-Նինուրտա I-ին, Բաբանափի-Պափի:*

**Ինչպես հղել՝** Ցականյան Ռ. *Դրվագ՝ Ասորեստանա-Խեթական միջպետական հարաբերությունների պատմությունից* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1 (27): 5-17 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-5

## EPISODE FROM THE HISTORY OF ASSYRIO-HITTITE INTERSTATE RELATIONS

*Ruslan A. Tsakanyan*

The Institute of Oriental Studies NAS, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** The study of the Ancient Near East and the inter-state relations has its own place. The paper analyzes the origins, political and economic motives and course of the relationship between Assyria and the Hittite state. **Methods and materials:** The work uses a historical-comparative research method. The principle of comparison and contrast of this method was applied in the study of sources. The correspondence between the Assyrian king Tukulti-Ninurta I (1242-1206 B.C.) and the Hittite king Tudhaliya IV (c. 1245-1215 B.C.) and Assyrian royal inscriptions were mainly used. **Analysis:** During the study of the material, these cuneiform texts and inscriptions were carefully examined. The nature of Assyrian-Hittite relations is highlighted. **Results:** Despite the existence of quite serious military-political differences between Assyria and Hittite Kingdom for many centuries, BC. In the second half of the 13th century, interstate relations between the two countries were regulated. Neighborly relations were established between the two countries. The Hittite king Tudhaliya IV tried to keep the new, young and ambitious king of Assyria, Tukulti-Ninurta I, away from his borders and domains of control with his "friendly" advice and diplomacy. However, the conquest of the same territories came from Assyria's economic and political interests, as a result of which these territories soon came under Assyria's control, albeit not permanently.

**Key words:** *Assyria, Hittite state, diplomatic relations, letter, inscription, campaign, Tudhaliya IV, Tukulti-Ninurta I, Babanahi-Paphi.*

**Citation.** Tsakanyan R. *Episode from the History of Assyrio-Hittite Interstate Relations* // "Scientific Works" of SCAS NAS of Armenia. Gyumri. 2024. 1. (29). 5-17pp.

DOI:10.52971/18294316-2024.27.1-5

## ЭПИЗОД ИЗ ИСТОРИИ АССИРО-ХЕТТСКИХ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ

*Руслан А. Цаканян*

Институт востоковедения НАН, Ереван, РА

### Аннотация

**Введение:** В изучении истории стран Древнего Ближнего Востока свое место занимает изучение истории межгосударственных отношений. Анализируются истоки, политические и экономические мотивы и ход взаимоотношений между Ассирией и Хеттским государством. **Методы и материалы:** В работе использован историко-сравнительный метод исследования. Принцип сравнения и противопоставления этого метода был применен при изучении источников. В основном использовались переписка между ассирийским царем Тукульти-Нинуртой I (1242-1206 до н. э.) и хеттским царем Тудхалием IV (ок. 1245-1215 до н. э.), а также ассирийские царские надписи. **Анализ:** в ходе изучения материала были тщательно изучены эти клинописные тексты и надписи. Освещен характер ассиро-хеттских отношений. **Результаты:** несмотря на существование довольно серьезных военно-политических разногласий между Ассирией и Хеттским царством на протяжении многих веков, во второй половине XIII века до н.э. урегулировались межгосударственные отношения между двумя странами. Между двумя странами установились добрососедские отношения. Хеттский царь Тудхалия IV пытался удержать нового, молодого и амбициозного царя Ассирии Тукульти-Нинурту I вдали от своих границ и владений своими «дружескими» советами и дипломатией. Однако завоевание тех же территорий исходило из экономических и политических интересов Ассирии, в результате чего эти территории вскоре перешли под контроль Ассирии, хотя и временно.

**Ключевые слова:** Ассирия, Хеттское государство, дипломатические отношения, письмо, надпись, поход, Тудхалий IV, Тукульти-Нинурта I, Бабанахи-Папхи.

**Как цитировать:** Цаканян Р. Эпизод из истории ассиро-хеттских межгосударственных отношений // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри. 2024. Т. 1(27). 5-17сс.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-5

**ՆԱԽԱԲԱՆ.** Խեթական պետության ու Ասորեստանի միջև ռազմաքաղաքական և միջպետական հարաբերությունների պատմության աղբյուրագիտական հիմքը (բացի արքաների արձանագրություններից՝ խիստ կարևոր են արքաների ու բարձրաստիճան պալատականների նամակագրությունները այլ պետությունների տիրակալների հետ) աղբատիկ է: Փաստագրական վավերագրերը սակավ են կամ բավականին վնասված, որի պատճառով Խաթթուսասի ու Աշշուրի ռազմաքաղաքական զարգացումների մասին հաճախ օբյեկտիվ պատկերացում կազմելու հնարավորություն չեն ընձեռում:

### Աշշուրն ու Խաթթին մ.թ.ա. մոտ 1362-1243 թթ.

Խեթական պետության [36, pp. 573-603; 6, էջեր 140-213; 5, էջեր 177-188; 14, pp. 154-326] և Ասորեստանի [18, pp. 61-81; 33, pp. 707-800; 25, pp. 347-354; 13; 15, pp. 40-56; 24, pp. 348-358; 22] միջև ռազմաքաղաքական հարաբերությունների պատմության սկիզբը կարելի է համարել մ.թ.ա. XIV դարի երկրորդ կեսին սկսված «միտտանական խնդրի» հանգուցալուծմանը երկու երկրների ներգրավվածությունը: Աշշուր-ուբալլիթ I-ի (մ.թ.ա. 1362-1327 թթ. [1, էջեր 15-16] [22, pp. 10-77]) կառավարման ընթացքում Աշշուրը ոչ միայն

դուրս եկավ իր բնական սահմաններից և անցավ նախահարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին: Նույն ժամանակահատվածում սկսված «Մի-րիական մեծ պատերազմի» ժամանակ խեթերին հաջողվեց նվաճել Կարքեմիշը: Միտտանիի համար օրհասական այս ժամանակահատվածում քաղաքացիական պատերազմ է բռնկվում: Վերջինս ավարտվեց պալատական հեղաշրջմամբ, որի արդյունքում Միտտանիի արքա Տուշրատտան (մ.թ.ա. մոտ 1360-1335 թթ.) սպանվեց [11, № 6A, § 6; 16, pp. 500-501; 6, էջ 155; 14, pp. 161-163]: Մի կարծիքի համաձայն՝ Միտտանիում պալատական հեղաշրջման թիկունքում կանգնած է եղել Խաթթիի արքա Սուպլիլուլիումաս I-ը (մ.թ.ա. 1355-1322 թթ.) [29, pp. 116-118; 7, cc. 82-86]: Հետաքրքիր է նաև, որ կայսերական նկրտումներով Աշշուրի արքան խեթերի հետ առճակատման չգնաց<sup>1</sup>: Ըստ երևույթին, ճիշտ գնահատելով իրերի դրությունն ու Խաթթիի ներուժը՝ Աշշուրի տիրակալը փորձում էր արևմուտքում, ի հակակշիռ Խաթթիի, օգտագործել Միտտանիին:

Աշշուր-ուբալլիթ I-ի հաջորդների՝ Էնլիլ-նիրարի I (մ.թ.ա. 1326-1317 թթ.) և Արիկ-դեն-իլիի (մ.թ.ա. 1316-1305 թթ.) կառավարման ժամանակահատվածում Ասորեստանը փորձեց բարելավել և ամրապնդել իր դիրքերը Մերձավոր Արևելքում [33, pp. 732-740; 3, էջեր 14-16, 18-28, 73-76; 22, pp. 78-80]:

Արիկ-դեն-իլիի (մ.թ.ա. 1316-1305 թթ.) որդի Ադադ-նիրարի I-ը (մ.թ.ա. 1304-1273 թթ.) [22, pp. 81-178], շարունակելով ամրապնդել իր նախորդների ձեռքբերումները, հաջող արշավանք է կատարում դեպի Միտտանի: Միտտանին նվաճելուց հետո [20, A.O. 76-3, ll. 4-20], ըստ KUB 23.102<sup>2</sup> տեքստի՝ Խաթթիի արքան Աշշուրի տիրակալին փաստացի ճանաչում է որպես «*մեծ արքա* (աքք.՝ šarru rabû = LUGAL GAL)»: Միաժամանակ Խաթթուսիլիս III-ը հրաժարվում է ընդունել Ադադ-նիրարի I-ի «*եղբայրության*» (աքք.՝ ahjûtu) առաջարկը [33, p. 746]:

Ընդհանուր առմամբ, ըստ Ա. Քոսյանի՝ արտաքին ասպարեզում Խաթթուսիլիս III-ը հակված էր հրաժարվելու տարածքային նոր նվաճումներից և Խաթթիի ավանդական հակառակորդների հետ հարաբերությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու [6, էջ 183]:

Ադադ-նարարի I-ի վարած ակտիվ նվաճողական քաղաքականության շնորհիվ Ասորեստանը Մերձավոր Արևելքում դարձավ հզոր տերություն [33, p. 755], սակայն խեթա-ասորեստանյան հարաբերությունները շարունակում էին մնալ ոչ բարիդրացիական: Նրա օրոք նույնպես խեթերի հետ առճակատում տեղի չունեցավ, սակայն դիվանագիտական հարաբերություններ երկու երկրների միջև նույնպես չհաստատվեցին:

Ադադ-նարարի I-ի ռազմական հաջողությունները Միտտանիում ժամանակավոր էին, և խեթերին հաջողվել էր միտտանական գահին նստեցնել իրենց դրածոյին: Ինչպես երևում է Ադադ-նարարի I-ի հաջորդ Շուլմանու-աշարեդ I-ի (մ.թ.ա. 1272-1243 թթ.)

<sup>1</sup> Հնարավոր է, որ KUB 8.80; KUB 23.61 և KUB 4.93 նամակները վերաբերում են Աշշուր-ուբալլիթ I-ի ժամանակահատվածին, մանրամասն տե՛ս [26, p. 265].

<sup>2</sup> Ինչ վերաբերում է KUB 23.102-ի հեղինակին, ապա ենթադրվում է, որ կարող է լինել կամ Մուվաթալիս II-ը, կամ Մուրսիլիս (Ուրիսի-Թեշուբ) III-ը, կամ Խաթթուսիլիս III-ը [23, № 104; 27, № 20; 11, № 24A; 21, № 192; 22, pp. 101-102; 10, pp. 63-70].



արձանագրությունից, խեթերը, ամենայն հավանականությամբ, Միտտանիում գորքեր էին տեղակայել: Ասորեստանի պատասխանը երկար սպասել չտվեց, և մ.թ.ա. մոտ 1270թ.<sup>3</sup> Ասորեստանի գորքերը ներխուժեցին Միտտանի: Խաթթիի, Միտտանիի ու ախլամու կոչվող ցեղի հակասորեստանյան ուժերը չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ ասորեստանցիներին: Միտտանին նվաճվեց, իսկ ասորեստանյան գորքն ասպատակությամբ հասավ Եփրատ գետը՝ Կարքեմիշի դիմաց [20, A.0.77.1, ll. 56-87; 13, pp. 100-110]: Երկու երկրների միջև հարաբերությունները հասան իրենց լարվածության գագաթնակետին և հանգուցալուծում ստացան մ.թ.ա. մոտ 1250թ.՝ Նիխրիայի ճակատամարտում, որտեղ խեթական արքան պարտություն կրեց [37, pp. 202-203; 22, pp. 185-188, 217-219, 244-245, 260-261] :

Ճիշտ է՝ Ասորեստանին հաջողվեց պարտության մատնել խեթերին, սակայն նրանք նույնպես չզարգացրին իրենց հաջողությունը, ըստ երևույթին, բավարարվելով ձեռք բերածով: Հնարավոր է նաև, որ Նիխրիայի միջադեպը խեթասորեստանյան հարաբերություններում մի փոքրիկ դիպված լինի [6, էջ 194]: Ամեն դեպքում, Նիխրիայից հետո Ասորեստանի և Խաթթի միջև կարծես թե լարվածությունը թուլանում է, իսկ երկու երկրների հարաբերությունները, ընդհուպ մինչև Խաթթիի անկումը [6, էջեր 204-213; 14, pp. 327-371], կարելի է որակել բարիդրացիական:

**Թուկուլտի-Նինուրտա I (մ.թ.ա. 1242-1206 թթ.) և**

**Թուդիսալիյաս IV (մ.թ.ա. մոտ 1245-1215 թթ.)**

Շուլմանու-աշարեդ I-ի հաջորդ Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1242-1206 թթ.) գահակալության ժամանակահատվածում Խաթթիի ու Աշշուրի միջև լուրջ միջադեպեր չգրանցվեցին [37, pp. 213-217]: Երկու երկրների հարաբերությունը դիտարկվում է որպես բարեկամական: Վերջինիս խոստուն վկայությունը կարող է լինել Խաթթիի արքա Թուդիսալիյաս IV-ի KUB 23.103 [31, S. 42-43; 27, pp. 167-168; 21, № 191] նամակը՝ հասցեագրված Ասորեստանի մեկ կամ մի քանի բարձրաստիճան անձանց՝

- «1. [... .. A-B]I-IA LUGAL KUR URU.Aš-šur-ia [ ... ]
  2. [... ..]x ŠA A-BI-IA ku-it INIM.MEŠ EGIR-a[n ]
  3. [... ..]x SIG<sub>5</sub>-eš-šu-u-en SIG<sub>5</sub>-eš-šu-u-en-ma-an-kán x[... ]
  4. [Š]A IEN A-BI AMA kiš-du-um-ma-at ma-an-na-aš x[ ... ]
  5. am-mu-uk-ma-an I-NA KUR-ŠU i-ia-ah-ḫa-at NINDA-an-ma-an 1-aš 1-e-[el] x[...]
  6. nu EN-KU-NU BA.ÚŠ am-mu-uk-ma-za A-NA EN-KU-NU ma-ah-ḫa-an SIG<sub>5</sub>-an-za x[...]
  - 7.nu-za a-pé-e-da-ni-\*ia\* QA-TAM-MA-pát SIG<sub>5</sub>-an-za na-an pa-ah-ḫa-aš-tén nu-uš-ši x[...]
- «1. [...] իմ [հայրը] և Աշշուր երկրի արքան [... ]
2. [...] քանի որ հորս խոսքերն (արդեն) անցյալում են [... ]
3. Մենք լավ (ընկերներ) դարձանք: Օ՛, մենք լավ (ընկերներ) դարձանք: [... (կարելի է ասել): «Որդիների/եղբայրների նման ( 𐎎 )
4. Ինչպես ( 𐎎 ) (որ) մի հորից ու մորից դարձանք<sup>4</sup>: Մեզ [... ]
5. Ես կգնայի նրա երկիրը, մեկս մյուսի հացը [կուտեր]:

<sup>3</sup> Ըստ Յ. Բլոխի՝ Միտտանիի դեմ Շուլմանու-աշարեդ I-ի արշավանքը կարելի է թվագրել նրա կառավարման ութերորդ և Աշշուր-նադին-շումեի էպոնիմատով՝ մ.թ.ա. 1263թ.՝ [13, pp. 200 n. 22, 406; 12, 147].

<sup>4</sup> Տողի թարգմանության ու վերլուծության համար մանրամասն տե՛ս [27, p. 167 n. 85]:

6. *Բայց ձեր տերը մեռավ: Եվ քանի որ ես լավ տրամադրված/բարեհաճ էի ձեր տիրոջ հանդեպ [...],*

7. *նույն կերպ ես նաև լավ տրամադրված/բարեհաճ եմ նրա նկատմամբ (նոր արքայի), իսկ դուք պաշտպանո՞ւմ եք նրան: Նրան [...]:*

Չնայած նամակի վնասվածությանը, ինչպես նաև նախադասությունների աղճատվածությանը, այնուամենայնիվ նամակի բովանդակությունից ակնհայտորեն երևում է, որ Ասորեստանի և Խեթական պետության միջև հարաբերությունները Թուկուլտի-Նի-նուրտա I-ի գահ բարձրանալուց առաջ արդեն կարգավորված էին:

Հաջորդ KUB 3.73 նամակը բավականին հետաքրքիր է, այն հասցեագրված է Խաթթիի արքա Թուդիսալիյաս IV-ին, որտեղ Թուկուլտի-Նի-նուրտա I-ը հիշեցնում է Խեթական պետության արքային, որ իր նախորդները Խաթթիի արքաների թշնամիներն են եղել, բայց ինքը, ըստ նամակի բովանդակության՝ պատրաստ է բարիդրացիական հարաբերություններ հաստատել: Այստեղ հետաքրքիր է այն հանգամանքը, որ ըստ KUB 23.103 նամակի, որտեղ Խաթթիի տիրակալը չի ժխտում նախկինում երկու երկրների միջև թշնամության հանգամանքը, բայց նշում է նաև, որ այդ թշնամությունն անցյալում է: Ինչևէ, KUB 3.73 նամակում Թուկուլտի-Նի-նուրտա I-ը Թուդիսալիյաս IV-ին անգամ «*եղբայր*» է անվանում: Այս վերջին փաստը վկայում է այն մասին, որ Թուկուլտի-Նի-նուրտա I-ը Խեթական պետության տիրակալին դիտարկում է իրեն «*հավասար*» ինքնակալ՝

« 1-2. ... xxxxxxxx ...

3. [ ... ]xMEŠ šar-ru-ut-ti-[ia] hi-tu mi-nu-[um-mé-e]

4. [ ... ] [a]-na KUR ša ŠEŠ-ia ah-/ih-|í-ú-ni

5. [ ... ]x-an ša ŠEŠ-ia EN ta-ab-ti-ka šu-ut

6. [ ... ]x-ma KUR-ka ih-ta-tab-bu-tu

7. [ ... ] KUR-ka-ma ih-ta-tab-bu-tu

8. a-na] KUR-ka ma-am-ma la-a ih-tí

9. ha-a-ma?) hu-ša-ba i+na qa-an-ni KUR-ka ma-am-ma la-a iš-ši

10. [ ... ] [e]-pu-ša-an-ni a-bu-ia EN KÚR-ka šu-ut

11. [x x x x x (x)] a-na-ku EN su-lum-mae ša ŠEŠ-ia

12. a-na i-n]é? ŠÀ-ka tu-ša-áš-ni

13. í]é?-[e]-ma a-ki-šu-ma a-na i-né te-p[u-uš]

14-17. ... xxxxxxxx ... »

«« 1-2. ... xxxxxxxx ...

3. ... *իմ արքայական աստիճանի թերությունն/ մեղքն է: Ցանկացած ամեն ինչի*

4. ... *որ ] ես /նա/ նրանք ձախողել են իմ եղբոր երկրի նկատմամբ,*

5. ... *(քո), եղբորս, քո ընկերը նա (կա/եղել է՞):*

6. ... ] ... *և քո երկիրը նրանք բազմիցս թալանել են:*

7. [ ... ] *քո երկիրը նրանք բազմիցս թալանել են:*

8. *Քո երկրի [դեմ] ոչ ոք մեղք չի գործել,*

9. ... *մի հատիկ] (կամ) փայտի կտոր, որը ոչ ոք չի տարել քո երկրի սահմաններից:*

10. [ ... ] *Նա ստեղծեց ինձ: Հայրս՝ քո թշնամին էր:*

11. *[բայց] ես (փոխարենը) ես եղբորս ընկերն եմ:*

12. *Բնչո՞ւ էս դու փոխել քո հոգին,*

13. [ ... ] *Բնչո՞ւ էս դու այդպես պլանավորել:*

14-17. ... xxxxxxxx ... » [27, № 11; 21, № 202; 37, p. 209, 22, p. 144]:

Հետաքրքիր է նաև KUB 3.74 [21, № 190] նամակը: Այն բավականին ուշագրավ է արքայական աստիճանակարգության մեջ երկու երկրների իրավահավասարության արձանագրման համար: Ընդհանուր առմամբ, նամակի բովանդակությունը մնում է անհասկանալի, իսկ վնասված տողերը գրեթե անվերականգնելի են: Այստեղ Խեթական պետության տիրակալն Ասորեստանի արքային համարում է ոչ միայն իրավահավասար «Մեծ» արքա, այլև «եղբայր»:

KUB 3.74 հեղինակը Խաթթիի նույն տիրակալ Թուդիսալիյաս IV-ն է, իսկ հասցետերը՝ Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա I-ը՝

«1. [U]M-MA <sup>D</sup>UTU<sup>S</sup>1 <sup>m</sup>Tu-ut-*ha-li-ia* L[UGAL.GAL LUGAL KUR URU.*Ha-at-ti*]

2. [A-N]A <sup>m</sup>Tù-ku-ul-tu-<sup>D</sup>IB LUGAL.[GAL LUGAL KUR URU.*Aš-šur ŠEŠ-IA QÍ-BI-MA*]

3. [nu z]i-[ik] ku-it <sup>m</sup>Tù-ku-ul-t[u-<sup>D</sup>IB ...]

4. [am-me]-[e]-el SIG<sub>5</sub>-an-ni x [ ... ]»

«1. *Այսպես (ասում է) Արևս՝ Թուդիսալիյասը, Խաթթի երկրի [Մեծ] արքան.*

2. *Թուկուլտի-Նինուրտային, [Մեծ] արքային, [Աշշուր երկրի արքային՝ եղբորս, ասա՛]:*

3. *Բնչ վերաբերում է նրան, ինչ [դու, Թուկուլտի-Նինուրտա... գրել էս ինձ...]*

4. *Իմ բարի բնավորությամբ ... [ ... ]»:*

Մ.թ.ա. մոտ 1242/1241թ., ըստ երևույթին Թուկուլտի-Նինուրտա I-ի կարգադրությամբ, Թուդիսալիյաս IV-ի արքունիք են ժամանում Ասորեստանի երկու դեսպաններ՝ Ծիլլի-Աշշուրը և Ամուրրու-շարեդը: Նրանք Խաթթի տիրակալին տեղեկացնում են Շուլմանու-աշարեդ I-ի մահվան և նրա որդու՝ Թուկուլտի-Նինուրտա I-ի գահ բարձրանալու լուրը: Այս մասին մենք տեղեկանում ենք KUB 23.103 [19, p. 189; 23, № 105; 27, № 17; 11, № 24C; 21, № 191; 31, S. 40-41; 22, pp.147-48, 214] ինթերեն գրված նամակի բովանդակությունից: Նամակն ուղարկել է Թուդիսալիյաս IV-ը, և այն հասցեագրված է Ասորեստանի բարձրաստիճան պալատական [13, p. 58 n. 37] Բարա-ախու-իդդինային: Վերջինս բարձր դիրք է զբաղեցրել նաև Շուլմանու-աշարեդ I-ի արքունիքում և առաջին անգամ հիշատակվում է նրա կառավարման 14-րդ տարում (ըստ Յ. Բլոխի՝ մ.թ.ա. 1257թ. փետրվարի 22-ին)՝ կապված իր որդի Ինա-պի-Աշշուր-լիշիլիմի էպոնիմատնի հետ [13, pp. 58-61, 406-407]: KUB 23.103-ի նամակի համաձայն՝

«1. *Այսպես է ասում Արևս՝ ասա Բարա-ախու-իդդինային.*

2-10. *Քանի որ նրա հայրը մահացավ, և նրա որդին, որը նոր է բարձրացել հայրական գահին, և նրան երիտասարդական եռանդ են վերագրում,*

10. *և ինչպես աստված է տվել նրան սիրտ, նույնիսկ իր հոր ժամանակ[...]*

11. *Նրանք, ովքեր այստեղ են նրա անունից(՞), Ծիլլի-Աշշուրն ու Ամուրրու-շարեդը՝ [պատմեցին] ինձ նրա մասին,*

12. *որ նա հենց նոր նստեց իր հոր գահին, և ինչպես նրան, նույնիսկ ցուլի պես, [...] Եվ նա շարունակում է ասել.*

13. *«Ես ուզում եմ ինչ-որ բան անել, եթե օտար թագավորները թշնամանան ինձ հետ, սպա նրանք կգային իմ դեմ,*

14. *և ես կարող էի որոշակի անուն ձեռք բերել»։ Հիմա շատ [...] Եվ քանի որ նա դեռ չի... հասկապես լեռներում,*
15. *թող տապալվի այն թշնամին, ում դեմ նա գնում է [...] աստծո հրամանով:*
16. *Քանի որ նրա հայրը մահացել է, և նա [նոր է նստել] [իր հոր] գահին, այն արշավը, որի վրա նա գնում է [առաջին] անգամ,*
17. *պետք է լինի այնպիսի արշավ, որի վրա նա վայելի եռակի կամ քառակի թվային առավելություն: Եթե [դա ... ], կամ ինչ-որ ուժեղ դիրքորոշում,*
18. *ապա առաջին անգամ նրանք [...] այս կերպ:*
19. *Բայց այն հողերը, որոնք նրա հայրը նվաճել էր զենքի ուժով [...]*
20. *Որովհետև նրանք ինձ ասում են նույնիսկ այս Բաբանյի երկրի մասին.*
21. *«[...] իսկ լեռները շատ դժվարամատչելի են», հետո եռանդ (՞) ... ինչ-որ բան:*
22. *Եվ քանի որ նա նույնիսկ հիմա շարունակում է ասել [...]:*
23. *Նրանք դա չպետք է անեն: Աստվածներն այսպիսով [...]:*
24. *Իսկ նախկինում ուր էլ գնար, եթե բնակչությունը [...], կամ դա երկրի որոշ գործեր են [...]:»*

KUB 23.103-ի բովանդակությունից տեղեկանում ենք, որ նոր հայրական գահին բազմած Թուկուլտի-Նինուրտա I-ը ցանկանում էր սխրանքներով փառաբանել իր անունը և պատրաստ է պատերազմելու ցանկացածի դեմ: Հետաքրքիր է նաև, որ Թուդխալիյաս IV-ը հավանություն է տալիս և ողջունում երիտասարդ արքայի՝ կարողությունները դրսևորելու ցանկությունը: Հետաքրքիր և, ըստ երևույթին, մինչ այս իրադարձությունը, միաժամանակ աննախադեպ փաստ է, երբ մեկ պետության տիրակալը խորհուրդ է տալիս մյուսին արշավանք կատարել այս կամ այն տարածքների վրա:

Ինչ վերաբերում է Բ/պար/պանախի-Բ/Պար/պիսիին, ապա հնարավոր է, որ երկրանունը խուրրիերեն նշանակում է «լեռնային երկիր կամ լեռնականների/լեռնեցիների երկիր»: Բաբանախիի տեղադրության վերաբերյալ նույնպես հստակություն չկա: Այն, ամենայն հավանականությամբ, գտնվել է Դիյարբեքիից, Ալզիից հարավ-արևելք՝ Արևելյան և Արևմտյան Տիգրիսների միախառնման վայրում, Կաշիյարի լեռներից հյուսիս և, ըստ երևույթին, Կատմուխի երկրի հարևանությամբ<sup>[4, էջեր 77-78; 8, c. 22; 9, cc. 50-51; 30, pp. 190-191; 17, p. 17]</sup>:

Ամեն դեպքում, Թուդխալիյաս IV-ը առաջարկում է ռազմարշավի համար ընտրել այնպիսի մի տարածաշրջան, որտեղ ասորեստանցիները 3-4 անգամ կգերազանցեն հակառակորդին, և երիտասարդ արքան կարող է առավելագույնս ցուցաբերել իրեն: Դեռ ավելին, իր մեկ այլ նամակում՝ KUB 23.92-ում Թուդխալիյաս IV-ը նշում է՝

«1. ... 2. [...] ... 3. *Դեպի [...] ...*: Նրանք մարդկայինի մեջ իսկապես այդպես է: Թող դու նրա փոխարեն ... ]: 4. [...] ... այսինքն՝ դա մահ է նշանակում մարդկային ցեղի համար: Թող դու նրա փոխարեն: 5. [ . . . Աստվածները բարեհաճեցին(՞) նրան, և նա դարձավ Մեծ արքա, և նրա կողմից ... [ . . . ] 6. [ ... նրանք ... ] պատրաստեց [...] և ընդլայնեց/ընդարձակեց ու զենքով նվաճեց Մեծ արքաներին: 7. [...] որտեղ նրանք երեխաներ են ծնում [...] ... 8. [Հայրը(՞) ...], և նրա փոխարեն կնստեցնի որդուն: 9. [ . . . ] Դու եկել էս քո հոր տեղը

(<sup>՝</sup>): *Հիմա պահի՛ր քո հոր սահմանները: 10. [ . . . ] դու էիր/նա կանգնած էր: (Նրա) նման պաշտպանի՛ր (ձեր) սահմանները: 11. [ . . . ] Թույլ մի տվեք, որ նրա համբավը (իմա՛ն անունը) ընկնի 12. [ . . . ] Ինչպես աստվածներն օրհնեցին նրան, այնպես էլ թող օրհնենք*» [27, № 17, pp. 159, 162; 13, p. 59]:

Երբ Թուղխալիյաս IV-ը Թուկուլտի-Նինուրտա I-ին խորհուրդ էր տալիս պաշտպանել իր հոր սահմանները, նա հավանաբար նկատի ուներ Շուլմանու-աշարեդ I-ի մահվան դրությամբ ասորեստանցիների վերահսկողության տակ գտնվող սահմանները, երբ Կաշիյարի (Ժամ.՝ Տուր-Աբդին) լեռան և նրա շրջակայքի տարածքներն ըմբոստացել էին և հրաժարվում էին հարկ վճարել [35; 2]: Եթե խեթերի արքան խոսեր ընդհուպ մինչև Վերին Եփրատ (այս տարածքներն, ըստ երևույթին, դիտարկվում էին որպես Խաթթի վերահսկողության տակ տարածքներ կամ Խաթթիի արևելյան սահման) ընկած տարածքների վերադարձման մասին, Թուղխալիյաս IV-ը դժվար թե իր դժգոհությունն արտահայտեր այդ տարածաշրջան ասորեստանցիների արշավի վերաբերյալ՝ պատճառաբանելով, ինչպես վկայում է KUB 23.103-ը՝ միայն լեռնային շրջաններում ճակատամարտի դժվարություններից ելնելով [13, p. 61 n. 43] :

Ինչպես երևում է վերոհիշյալ երկու նամակների համադրումից, Թուկուլտի-Նինուրտա I-ը ձգտում էր ռազմական նվաճումների ճանապարհով հավասարվել հոր համբավին: Իսկ Թուղխալիյաս IV-ն էլ, իր հերթին, փաստացի փորձում էր խուսափել երիտասարդ հավակնորդ արքայի հետ առճակատումից:

Թուկուլտի-Նինուրտա I-ի արձանագրությունների վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ Ասորեստանի արքան իսկապես ականջալուր է եղել Թուղխալիյաս IV-ի խորհրդին և մ.թ.ա. մոտ 1242/1241թթ. իր առաջին արշավանքն [35, p. 5; 2, էջեր 60-61; 22, p. 357] ուղղել դեպի հյուսիս՝ Ուկումենու (Կուսմանի) [34, p. B4; 30, pp. 222-223; 32, p. 284; 17, p. 70; 9, cc.119-120] և Կուտու [30, pp. 191-193; 32, pp. 138, 220; 9, c.124]: Իսկ այս երկրների դեմ արշավանքի է դրդել վերոնշյալ տարածքների անհնազանդ լինելու հանգամանքը [33, pp. 757-758; և հմմտ.՝ 28, p. 284]՝ «*Այդ ժամանակ նրանք միավորվեցին (<sup>՝</sup>) իմ գորքի դեմ մի դժվարամատչելի վայրում՝ լեռնային կիրճում*» [20, A.0.78.1. Col. II, 21-26; 35, p. 6; 2, էջեր 60-61]:

Եթե ճիշտ ենք հասկանում KUB 23.103-ի հաղորդումների համատեքստը, ապա Թուկուլտի-Նինուրտա I-ը, ըստ երևույթին, ցանկանում էր սկսել իր ռազմարշավները Բաբանախի երկրի նկատմամբ հաղթանակով, որը գտնվում էր Ասորեստանի հյուսիսում: Ակնհայտորեն, Թուղխալիյաս IV-ը, ելնելով իր երկրի սահմանների անվտանգությունից և արևելյան ու հարավարևելյան սահմանների նկատմամբ Ասորեստանի հետագա նկրտումներից, Թուկուլտի-Նինուրտա I-ին խորհուրդ է տալիս իր զենքի ուժն այլ տեղ կիրառել: Սակայն, անտեսելով Թուղխալիյաս IV-ի խորհուրդը, Թուկուլտի-Նինուրտայի I-ը, միննույնն է, արշավում է դեպի Բաբանախի: Պետք է արձանագրել նաև, որ Բաբանախի կատարած ռազմարշավի վերաբերյալ մանրամասն նկարագրությամբ տեքստեր հայտնի չեն:

Այսպիսով, Բաբանախին ասորեստանյան Պապխու ձևով հանդիպում ենք Թուկուլտի-Նինուրտա I-ի արձանագրությունների մեջ [20, A.0.78.1. Col. IV, 30; A.0.78.3., 8;

A.0.78.5., 23; A.0.78.6., 5.; A.0.78.7., 2; A.0.78.8., 1. 8; A.0.78.18., 1. 6; A.0.78.23., 1. 31], որոնցում հանրագումարի է բերում իր առաջին երեք տարվա արշավանքները՝ դրանք սահմանագծելով և մանրամասն նկարագրելով.

«Այն ժամանակ, Տուլսինայից սկսած ... լեռներ, (տարածաշրջան) Շասիլա (և) Մաշխաթ-շարրի քաղաքների միջև՝ Ներքին Չաբի հակառակ ափին, Ջուքուշկու լեռից (և) Լալլար լեռից մինչև Կուտուի հսկայական շրջանը՝ Լուլլունու ամբողջ երկիրը, Պապխու երկրից մինչև Կատմուխի երկիրը (և) ամբողջ Շուբրու երկիրը, Կաշիյարի լեռներից մինչև Նահիրի երկրի սահմանը (և) Մ[ական] երկրի սահմանը, մինչև Եփրատ գետի այն շրջանները, որոնք մեծ աստվածները ինձ հանձնարարեցին: (Իս) բոլոր թշնամիներին մեկ հրամանի ներքո [բերեցի]» [20, A.0.78.1. Col. IV, ll. 24-36; 2, էջ 63]:

Երկրանունը նշելիս գրեթե միշտ հիշատակվում է, որ՝

«8. [ša dabdē ummānāt **Paḫḫī** rapšūti.ME]Š i-na qé-reb tam-ḫa-ri ...»

«8. [ով Պապխիի ընդարձակ բանակի պարտությունը բերեց ճակատամարտում» [20, A.0.78.20., 1. 8; հմմտ.՝ A.0.78.24., 1. 27]

Ինչպես վերն արդեն տեսանք, Թուկուլտի-Նինուրտա I-ը գահ բարձրանալուց հետո ձգտում էր տարածաշրջանում իր ուժը ցուցադրել և ռազմական հաջողությունների միջոցով իր անունը փառաբանել: Սակայն, Խաթթիի արքա Թուդխալիյաս IV-ը խորհուրդ էր տալիս չշտապել և առաջին հերթին ուշադրություն դարձնել երկրի սահմանների անվտանգությանը: Թուդխալիյաս IV-ի «եղբայրական» խորհուրդն իրականում քաղաքական հաշվարկ էր: Ասորեստանը, հաստատվելով Խաթթի արևելյան և հարավարևելյան շրջաններում, որտեղ խեղճերը ստեղծել էին մի շարք քույր-թագավորություններ՝ իրենց վերահսկողության տակ առնելով այդ տարածքներով անցնող առևտրային ուղիներն ուղղակի վտանգ էր ներկայացնում Խեթական պետության տնտեսության և քաղաքական ազդեցության ոլորտների համար:

Վերոնշյալը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Բաբանախի-Պապխուն նվաճվել է արքայի կառավարման երկրորդ կամ երրորդ տարում՝ մ.թ.ա. մոտ 1241/1240թթ. կամ մ.թ.ա. մոտ 1240/1239թթ. Թուկուլտի-Նինուրտա I-ի երկրորդ կամ երրորդ ռազմարշավի ընթացքում:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է նշել, որ չնայած երկար դարեր ի վեր Աշշուրի և Խաթթիի միջև ռազմաքաղաքական առումով բավականին լուրջ տարաձայնությունների առկայությանը՝ մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին երկու երկրների միջև միջպետական հարաբերությունները կարգավորվեցին, նրանց միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ:

Ինչ վերաբերվում է Բաբանախի-Պապխուի խնդրին, ապա այստեղ բախվում էին երկու երկրների շահերը միանգամից: Ինչպես վերը տեսանք, Խաթթի արքա Թուդխալիյաս IV-ն իր «բարյացական» խորհուրդներով ու դիվանագիտական ճանապարհով փորձում էր իր սահմաններից և վերահսկողության տիրույթներից հեռու պահել Ասորեստանի նոր, երիտասարդ ու հավակնոտ արքա Թուկուլտի-Նինուրտա I-ին: Սակայն նույն տարածքների նվաճումը ելնում էր Ասորեստանի տնտեսական ու քաղաքական շահե-

րից, որի հետևանքով էլ այդ տարածքները շուտով, թեկուզ և ոչ հաստատուն, բայց հայտնվեցին Ասորեստանի վերահսկողության տակ:

Թուկուլտի-Նինուրտա I-ի կողմից Բաբանախիի նվաճումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Ասորեստանի արքայի կառավարման առաջին երեք տարիների ռազմարշավերի ընթացքում՝ երկրորդ կամ երրորդ ռազմարշավի ժամանակահատվածում: Իսկ Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման առաջին երեք տարիների ռազմարշավների ժամանակագրությունը հետևյալ տեսքն ունի՝

- ա) 1-ին ռազմարշավը՝ մ.թ.ա. մոտ 1242/1241 թթ. – դեպի Ուկուսենու, Կուսանի և Կուսու,
- բ) 2-րդ ռազմարշավը՝ մ.թ.ա. մոտ 1241/1240 թթ. – դեպի Շարնիդա, Մեխրու և Կատմուխու (ինչպես նաև նվաճվում են Էլխունիան, Բուշշուն և Մումմուն),
- գ) 3-րդ ռազմարշավը՝ մ.թ.ա. 1240/1239 թթ. – դեպի Ալգիի, Ամադանու, Նիխանու, Ալայա, Տեպուրգուն ու Պուրուլումգու[35, pp. 5-9; 2, էջեր 60-63] :

### Գրականություն

1. **Ցականյան Ռ.** *Աշորի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, № 2 (26): 2023: 5-22 էջեր:
2. **Ցականյան Ռ.** *Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1242-1206 թթ.) Նաիրյան արշավանքը* // Լրաբեր հասարակական գիտությունների, № 2: 2023, 57-75 էջեր:
3. **Քոսյան Ա.** *Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը*: Երևան, «Չանգակ-97»: 1999, 264 էջ:
4. **Քոսյան Ա.** *Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր արձանագրությունների)*: Երևան, «Չանգակ-97»: 2004, 168 էջ:
5. **Քոսյան Ա.** *Խեթական պետությունը, Հայաստանի հարակից երկրների պատմություն* // Հատ. 1, իմբ. Ա. Վ. Քոսյան, Երևան: 2013, էջ 174-200:
6. **Քոսյան Ա.** *Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն)*, ՀՀ ԳԱԱ ԱԻ: Երևան, «Քոնփի Փրինթ»: 2022, 252 էջ:
7. **Аветисян Г.** *Государство Митанни (военно-политическая история в XVII-XIII вв. до н.э.)*. Ереван. «Изд. АН АрмССР». 1984, 130 с.
8. **Арутюнян Н.** *Военно-политическая история и вопросы топонимики*. Ереван. «Изд. АН АрмССР». 1970, 474 с. + 1 карт.
9. **Арутюнян Н.** *Топонимика Урарту*. Хурриты и урарты, № 1, АН АрмССР, Инст. востоковедения. Ереван, «Изд. АН АрмССР». 1985. 308 с. + 1 отд. л. карт.
10. **Alexandrov B.** *The letters from Hanigalbat in the Boğazköy archives* // In Taracha, P. (ed.), Proceedings of the eighth international congress of Hittitology, Warsaw: Agade. 2014, 52–76 pp..
11. **Beckman G.** *Hittite Diplomatic Texts*. Writings from the Ancient World № 7. Atlanta: Society of Biblical Literature. 1996, XX+206 P.
12. **Bloch Y.** *The Order of Eponyms in the Reign of Shalmaneser I* // Ugarit-Forschungen, № 40. 2008, 143-178 pp..
13. **Bloch Y.** *Studies in Middle Assyrian Chronology and Its implications for the History of the Ancient Near East in the 13th Century B. C.E.* Ph.D. diss., The Hebrew University of Jerusalem. Jerusalem. 2012, 485p.
14. **Bryce T.** *The Kingdom of the Hittites*. Oxford University Press Inc. New York. 2005, 584 p.
15. **Cancik-Kirschbaum E.** *Die Assyrer: Geschichte, Gesellschaft, Kultur*. München. 2008, 128 p.
16. **Dassow von E.** *Mittani and Its Empire* // The Oxford History of the Ancient Near East. Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford. 2022, 455-528 pp..

17. **Diakonoff I. Kashkai S.** *Geographical Names According to Urartian Texts*. Répertoire géographique des textes cuneiforms, Bd. 9. Répertoire Wiesbaden: L. Reichert. 1981, 127 p.
18. **Frahm E.** *Assyria: The Rise and Fall of the World's First Empire*. Basic Books, New York. 2023, 528 p.
19. **Giorgieri M.** *Das Verhältnis Assyriens Zum Hethiterreich* // in Assur – Gott, Stadt und Land: 5. Internationales Colloquium der Deutschen Orient-Gesellschaft, 18. – 21. Februar 2004 in Berlin. Im Auftrag des Vorstands der Deutschen Orient-Gesellschaft herausgegeben von Johannes Renger. Harrassowitz Verlag, Wiesbaden. 2011, 169-190 pp..
20. **Grayson A.** 1987, *The Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC)*. The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. I. Toronto-Buffalo-London. 1987, XXII-355 p.
21. **Hagenbuchner A.** *Die Korrespondenz der Hethiter*. 2. Teil, Texte der Hethiter № 16. Heidelberg: Carl Winter. 1989, XIV+483p.
22. **Harrak A.** *Assyria and Hanigalbat: A Historical Reconstruction of Bilateral Relations from the Middle of the Fourteenth to the End of the Twelfth Centuries B.C.* Texte und Studien zur Orientalistik, Band 4. Georg Olms Verlag, Hildesheim-Zürich-New York. 1987, XVIII-315 pp., maps.
23. **Hoffner H.** *Letters from the Hittite Kingdom*. Writings from the Ancient World № 15. Atlanta: Society of Biblical Literature. 2009, XVII +450 p.
24. **Kuhrt A.** *The Ancient Near East c. 3000-330 BC*. Vol. I, London-New York. 1995, XXVIII+381p.
25. **Liverani M.** *The Ancient Near East: History, Society and Economy*. Routledge. 2013, 648 P.
26. **Machinist P.** *Assyrians and Hittites in the Late Bronze Age* // in: Mesopotamien und seine Nachbarn. Politische und kulturelle Wechselbeziehungen im Alten Vorderasien vom 4. pp. bis 1. Jahrtausend v. Chr., XXV. Rencontre Assyriologique internationale Berlin, 3. Bis 7. Juli 1978, Nissen H. J., Renger J. (Hrsg.): Berliner Beiträge zum Vorderen Orient, Band 1, Teil 1. Dietrich Reimer Verlag, Berlin. 1987, 265-267 pp..
27. **Mora C., Giorgieri M.** *Le Lettere tra i re ittiti e i re assiri ritrovate a Hattuša*. History of the Ancient Near East/Monographs, № VII. Padova: S.A.R.G.O.N. Editrice e Libreria. 2004, XII+270p.
28. **Munn-Rankin J.** *Assyrian Military Power, 1300–1200 B.C.* // in I. E. S. Edwards; C. J. Gadd; N. G. L. Hammond; S. Solberger (eds.). *The Cambridge Ancient History, Volume II, Part 2: History of the Middle East and the Aegean Region, 1380-1000 BC*. Cambridge pp. University Press. 1975, 274-306 pp..
29. Na'aman N. *Tushratta's Murder in Shuppiluliuma's Letter to Akhenaten (EA43)* // *Abr-Nahrain*, № 33. 1995, pp. 116-118.
30. **Nashef Kh.** *Die Orts- und Gewässernamen der mittelbabylonischen und mittelassyrischen Zeit*. Répertoire géographique des textes cuneiforms, Bd. 5. Wiesbaden: Reichert. 1982. XXVIII + 341 p.
31. **Otten H.** *Ein Brief aus Hattuša an Bābu-ahū-iddina* // *Archiv für Orientforschung*, № 19, 1959-1960, 39-46 pp..
32. **Parpola S.** *Neo-Assyrian Toponyms*, *Alter Orient und Altes Testament* № 6. Neukirchen-Vluyn: Butzon & Bercker. 1970. XXXI + 408 p.
33. **Reculeau H.** *Assyria in the Late Bronze Age* // *The Oxford History of the Ancient Near East*, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford, Oxford University Press. 2022, 707-800 pp..
34. *The Helsinki Atlas of the Near East in the Neo-Assyrian Period*. Ed. By S. Parpola and M. Porter, Neo-Assyrian Text Corpus Project. Helsinki: «Casco Bay Assyriological Institute». 2001, 46 p.
35. **Tsakanyan R.** *The Nairian Campaign of Tukulti-Ninurta I (1242-1206 BC) in the Context of the Conquests in the First Three Years of his Reign* // *Journal of Ancient History and Archaeology*, № 10/1. 2023, 5-9 pp..
36. **Weeden M.** *The Hittite Empire* // *The Oxford History of the Ancient Near East*. Editors: Radner K., Moeller N. and Potts D. T.. Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford, Oxford University Press. 2022, 529-622 pp..
37. **Yamada M.** *The second military conflict between 'Assyria' and 'Hatti' in the reign of Tukulti-Ninurta I* // *Revue d'assyriologie et d'archéologie orientale*, №1 (Vol.105). 2011, 199-220 pp..



References

1. **Tsakanyan R.** The State of Aššur from the Beginning of the III Millennium B.C. to the End of the XV Century B.C. [*Ashuri petut'yuny m.t'.a. III hazaramyaki skzbnerits' minch'ev m.t'.a. XV dari verjery*]// "Scientific Works" of SCAS NAS of Armenia. Gyumri. № 2 (26): 2023 5-22 pp.. (In Armenian)
2. **Tsakanyan R.** The Nairian Campaign of the Assyrian King Tukulti-ninurta I (1242-1206 BC) [*Asorestani arqa Tukulti-ninurta I-i (m.t'.a. 1242-1206 t'.t') Nairyan arshavanqy*] // Herald of Social Sciences. № 2: 2023. 57-75 pp. (In Armenian)
3. **Kosyan A.** The XII Century B.C. Near Eastern Crisis and the Armenian Highland [*M.t'.a. XII dari Merdz'avorarevelyan tch'gnazhamy ev Haykakan lernashkharhy*]. Yerevan, "Zangak-97". 1999. 264 p. (In Armenian)
4. **Kosyan A.** The Toponyms of the Armenian Highland (according to the Hittite cuneiform sources [*Haykakan lernashkharhi tegh'anunnery (yst kh'et'akan sepagir ardz'anagrut'yunneri)*]. Yerevan. "Zangak-97". 168 p. (In Armenian)
5. **Kosyan A.** The Hittite State [*Khet'akan petut'yuny*] //History of Neighbouring Countries of Armenia. Vol. I. Ed. of. A. V. Kosyan. IOS NAS RA. Yerevan. 2013, 174-200 pp.. (In Armenian).
6. The Hittite Kingdom (Political history) [*Khet'akan t'agavorut'yuny (qagh'aqakan patmut'yun)*]. IOS NAS RA. Yerevan. "Copy Print". 2022. 252 p. (In Armenian)
7. **Avetisyan H.** The State of Mitanni (military-political history in the XVII-XIII centuries B.C.) [*Gosudarstvo Mitanni (voenno-politicheskaya istoriya v XVII-XIII vv. Do n.e.)*]. Yerevan. «NAS RA». 1984. 130 p. (In Russian)
8. **Harutyunyan N.** Biainili-Urartu the History of Wars and Politics, and Questions of Place-Name Studies [*Biaynili-Urartu. Voenno-politicheskaya istoriya I voprosy toponimiki*]. Yerevan. «NAS RA». 1970, 474 p. + 1map. ((In Russian)
9. **Harutyunyan N.** The Toponyms of Urartu [*Toponimika Urartu*]. Khurity I Urarty, № 1. IOS NAS RA. Yerevan. 1985. 308 P. + 1 map. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **11. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **23. 03. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Ռուսլան Արշակի ՅԱԿԱՆՅԱՆ՝** պատմ. գիտ. թեկնածու,  
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ  
Էլ. հասցե՝ rooslantsakanyan@gmail.com, <https://orcid.org/> - 0009-0003-6148-0933

**Ruslan Arshak TSAKANYAN:** PhD in History,  
Researcher at the Institute of Oriental Studies NAS, Yerevan, RA  
E-mail: rooslantsakanyan@gmail.com, <https://orcid.org/> - 0009-0003-6148-0933

**Руслан Аршакович ЦАКАНЯН:** кандидат истор. наук,  
научный сотрудник Института востоковедения НАН, Ереван, РА,  
эл. адрес: rooslantsakanyan@gmail.com, <https://orcid.org/> - 0009-0003-6148-0933

ՀՏՂ՝ 93/94 (093)

DOI: 10.52971/18294316-2024.27.1-18

«ԼՈՒԼՈՒ ՑԵՂԵՐԻ» ԵՎ ՈՒԱԶԱ ԵՐԿՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՇՈՒՐՁ

*Սարգիս Գ. Պետրոսյան*

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

*Նախաբան.* Ուրարտուի Արգիշտի I թագավորը (մ.թ.ա. 786-764 թթ.) իր գահակալության հինգերորդ տարում՝ մ.թ.ա. 782 թ., երկու արշավանք է ձեռնարկել Արարատյան դաշտից հյուսիս-արևելք գտնված երկրների դեմ: Առաջին արշավանքի թիրախները եղել են Էթիունի և Կեխունի երկրները, իսկ երկրորդ արշավանքինը՝ ավելի հյուսիս գտնված Ուրուրդա, Ուիշուշի և Խախիա երկրները: Երկու արշավանքների նկարագրությունը թագավորի արձանագրած Խոռխոռյան տարեգրության մեջ ընդմիջվում է Էրեբունի բերդաքաղաքի հիմնադրման հիշատակությամբ: Սրա առնչությամբ էլ Արգիշտին բացատրում է, որ դա արվել է «Բիախնեյե (երկրի) գորությունը լուլուական (բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու համար» (թարգմանությունը և տառադարձությունը՝ այստեղ և հետայսու Հովհ. Կարապետյանի): *Մեթոդներ և նյութեր:* Հոդվածը գրվել է պատմահամեմատական մեթոդաբանության և լեզվաբանական նյութի *ստուգաբանական վերլուծության* միջոցով: *Վերլուծվել* են նաև բերված սեպագիր արձանագրությունների վերաբերյալ այլևայլ հետազոտողների ունեցած կարծիքները և հայերեն տարբեր բառարաններից քաղված՝ «լուլու» բառին արմատակից բառերը: *Արդյունքներ:* Եզրակացության մեջ ամփոփված է բերված են ուսումնասիրության արդյունքները «լուլու» բառի գործածության և ծագման վերաբերյալ: Հուշում բառը «բարբարոսական» իմաստ հետագայում է ստացել, իսկ «թշնամական» նշանակել է միայն այդպիսին դարձած ցեղերի դեմ Ուրարտուի թագավորների ծավալած ռազմական գործողությունների պատճառով: Նրա նախնական նշանակությունը ուղղակի կապի մեջ է եղել ձկնորսության և ձկան պաշտամունքի հետ: Բառի նախնական նշանակությունը եղել է «ջրային կենդանի», «ձուկ, ձկնամարդ և այլն»: Այդ իմաստներով \*լու-ն (կրկնաբանություն է արմատական \*լու-ից) անցել է սոցիալական ոլորտ՝ նշանակելով մարդկային հանրության ձկնորսությամբ զբաղվող

և ձուկ պաշտող սոցիալական խումբ, ապա ստացել ցեղանվանական կիրառություն: Վերջին դեպքում, նա իմաստային սերտ կապ է ունեցել նույնպես «ջրային» բնույթ ունեցող առասպելաբանական *\*վեդուր/\*ուդուր* անվան հետ, որից էլ մերձսևանյան ցեղերի Ueduri/Uduri անունը և Ueduri-Etiuni երկրանունը: Այսպիսով, հողվածը նորույթ է և արդիական է:

**Բանալի բառեր`** *Լուլու, ջուր, ձուկ, Սևանա լիճ, «վիշապ», ձկնամարդ, Ուազա, Էթիունի, Վեդուրի / Ուդուրի:*

**Ինչպես հղել`** Պետրոսյան Ս. «Լուլու ցեղերի» և Ուազա երկրի բնույթի շուրջ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1 (27): 18-30 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.1-18

## ABOUT THE CHARACTER OF THE «TRIBES LULU» AND THE COUNTRY UAZA

*Sargis G. Petrosyan*

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The king of Urartu Argishti I (786-764 B.C.) in the fifth year of his reign, in 782 B.C., undertook two campaigns against the countries located to the north-east of the Ararat valley. The objects of the first campaign were the countries of Etiuni and Kekhuni, and the objects of the second campaign were the countries of Uburda, Vishushi and Khakhia located northerly. The description of the two campaigns in the Khorkhor Chronicle is interspersed with a mention of the foundation of the fortress city Erebuni. On this occasion, Argishti explains that this was done to "strengthen the power of Biainili (country) among the Lulu (barbarian) tribes". **Methods and Materials:** The article has been written using the historical-comparative method and etymological analysis of linguistic material. **Analysis:** The opinions of other researchers regarding the cited cuneiform inscriptions and related words to the word "Lulu" extracted from different Armenian dictionaries were also analysed. **Results:** The study on the use and origin of the word "lulu" is summarised in the conclusion. The word "lulu" later acquired the meaning of "barbaric", and "hostile" became so only because of the military actions of Urartu kings against the tribes of the Lake Sevan coast. Its original meaning was directly related to fishing and fish worship. The primary meaning of the word "lulu" was "water animal", "fish, fish-man, etc". With this meaning *\*lulu* (doubling of the root *\*lu*) passed into the social sphere, denoting a fishing and fish-worshipping social group, and then received an ethnonym. In the latter case it had a semantic close connection with the mythological name *\*vedur/\*udur*, also having a "water" character. The ethnonym of the tribes Ueduri/ Uduri and the choronym of the country Ueduri-Etiuni originated from it. From this viewpoint, the article is newness and relevant.

**Key words:** *lulu, water, fish, Lake Sevan, "vishap", fish-man, Uaza, Etiuni, Veduri/Uduri.*

**Citation:** Petrosyan S. *About the Character of the "Tribes Lulu" and the Country Uaza* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri. 2024. V. 1 (27). 18-30 pp.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-18

## О ХАРАКТЕРЕ «ПЛЕМЕН ЛУЛУ» И СТРАНЫ УАЗА

*Саргис Г. Петросян*

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** Царь Урарту Аргишти I (786-764 до н.э.) на пятом году своего правления, в 782 году предпринял два похода против стран, расположенных к северо-востоку от Араратской долины. Объектами первого похода были страны Этиуни и Кехуни, а объектами второго похода - страны Убурда, Вишуши и Хахиа, расположенные севернее. Описание двух походов в Хорхорской летописи, перемежается упоминанием об основании города-крепости Эребуни. По этому поводу Аргишти поясняет, что это было сделано для «укрепления власти Бианили (страны) среди племен Лулу (варваров)». **Методы и материалы:** Статья написана с использованием историко-сравнительного метода и этимологического анализа лингвистического материала. **Анализ:** Также были проанализированы мнения других исследователей относительно приведенных клинописных надписей и извлеченных из разных армянских словарей родственных слов к слову «лулу». **Результаты:** В заключении подведены итоги исследования об употреблении и происхождении слова «лулу». Слово «лулу» приобрело значение «варварский» позже, а «враждебный» стал таковым только из-за военных действий царей Урарту против племен присеванского региона. Его первоначальное значение было напрямую связано с рыболовством и поклонением рыбе. Первоначальное значение слова было «водяное животное», «рыба, рыболовец и т. д». С этим значением слово \*lulu (удвоение корня \*lu) перешло в социальную сферу, обозначавшую рыболовную и рыбопоклонническую социальную группу, а потом получило племенное применение. В последнем случае оно имело тесную смысловую связь с мифологическим названием \*ведур/\*удур, также имеющим «водяной» характер. От него произошел этноним присеванских племен Уедури/Удури и хороним страны Уедури-Этиуни. С этой точки зрения, статья является новизной и актуальной.

**Ключевые слова:** лулу, вода, рыба, озеро Севан, «вишан», рыболовец, Уаза, Этиуни, Ведури/Удури

**Как цитировать:** Петросян С. О характере «племен Лулу» и страны Уаза. // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2024, Т. 1 (27), 18-30 сс.

DOI: 10.52971/18294316

**ՆԱԽԱԲԱՆ.** Արգիշտի I-ի մ.թ.ա. 782թ. առաջին հյուսիսային արշավանքը սկսվել է հետագա Էրեբունիի տարածքից և ավարտվել Ալիշտու քաղաքի մոտ: Հաղթական թագավորը վերադարձին հիմնադրում է Էրեբունի ամրոցը, որը հետագայում վերածվում է բերդաքաղաքի: Այդ առթիվ թողած իր արձանագրության մեջ Ուրարտուի հզոր թագավորն ասում է, որ Էրեբունին կառուցել է Բիաիներե (երկրի) զորությունը լուլուական ցեղերի մեջ ամրապնդելու համար:

Մեր նպատակն է.

1. Ապացուցել, որ «լուլուական ցեղեր» Ուրարտուի թագավորը կոչում է վերոհիշյալ երկրների բնակիչներին և ոչ թե ներկայիս ՀՀ տարածքի Արարատյան դաշտը ներառած Ուազա երկրի բնակիչներին:

2. Խաղողագործություն-գինեգործության հնագույն կենտրոն այս երկիրը կամովին էր միացել Ուրարտուին, իսկ Արգիշտին այստեղ հիմնադրել էր Էրեբունի-Երևանը:

3.«Լույսի» անվանումը՝ որպես հնաբանություն, արհամարհական երանգով է այստեղ կիրառվել: Նրա «բարբարոսական» իմաստը նկատի է առել ձկնորսություն-ձկնաբուծության և ձկան (ձկնամարդու) պաշտամունքի հետամնացությունը զարգացած տնտեսավարման ձև՝ հողագործություն (դաշտամշակություն ու խաղողագործություն-գինեգործություն) և մարդակերպ աստվածների պաշտամունք ունեցող Ուազայի, ինչպես նաև բուն Ուրարտուի համեմատ:

**Արգիշտիի արձանագրությունները Ուազա երկրում Էրեբունիի հիմնադրման և «լույսների» մասին.**

Արգիշտի I-ի մ.թ.ա. 782թ. առաջին արշավանքի վերջնակետը Ալիշտու քաղաքն էր: Դրանց վերաբերյալ հաղորդումից հետո Ուրարտուի հզոր արքան «Խոռխոռյան տարեգրության» մեջ շարունակում է պատմել. «Խալդյան հրամանով Արգիշթե Մինուայորդին ասում է. «Երեբունե (քաղաքը) կառուցեցի՝ Բիաինեյե (երկրի) գորությունը լույսական (=բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)» [11, էջ 60: 33,N 27]: Գրեթե նույնը նա փորագրել է տվել Էրեբունի բերդի (Արին բերդ հնավայրը) գլխավոր մուտքի մոտ հայտնաբերված բազալտե քարին. «Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին այս ամրոցը հոյակապ կառուցեց: Հաստատեցի Երեբունե անունը՝ Բիաինեյե (երկրի) գորությունը լույսական (=բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)» [11; էջեր 55-56: 33 N138]:

Ինչպես տեսնում ենք, երկու արձանագրություններում էլ Արգիշտին խոսում է «լույսական ցեղերի» (հոգն. թիվ), այլ ոչ թե «լույսական ցեղի» (եզ. թիվ) մեջ Ուրարտուի իշխանությունը ամրապնդելու մասին: Եթե թագավորի խոսքը վերաբերեր Ուազա երկրի բնակչությանը, որի տարածքում էր կառուցվել Էրեբունին, ապա «ցեղ» նշանակող բառը հոգնակի թվով գործածված չէր լինի: Եթե ընդունենք, որ դրա հոգնակի թվով կիրառումը այլևայլ ցեղերի հետ միասին նկատի է առել նաև Ուազա երկրի բնակչությանը, ապա այս դեպքում Արգիշտին մյուս ցեղային երկրների նվաճումը նկարագրելիս ինչու է լռության մատնել Ուազա երկրի նվաճման և նրա բնակչության գոնե ինչ-որ մասի գերեզմանների փաստը: Այս առթիվ ուրարտագետ Մ. Իսրայելյանը նկատել է տալիս, որ «Արին բերդի և Կարմիր բլուրի պեղումներից դեռևս չեն հայտնաբերվել ռազմական բնույթի արձանագրություններ: Մեզ հայտնի չեն նման արձանագրություններ նաև Արմավիրի պեղումներից, այնպես որ նշված վայրերի, մասնավորապես, Էրեբունիի վայրի նվաճման վերաբերյալ մենք ուղղակի վկայություններ չունենք: Դրա մասին լռում է նաև Արգիշտի I-ի տարեգրությունը» [9, էջ 121]:

Մեր կարծիքով, Ուրարտուի թագավորի լռությունը ուներ իր դրդապատճառը: Խոսելիս նա պետք է ընդուներ, որ Ուազան նրա կողմից չի նվաճվել, որ ուազացիները ոչ միայն չեն դիմադրել Արգիշտի I-ին, այլև համագործակցել են նրա հետ ինչպես «լույսական ցեղերի» դեմ իրականացված արշավանքներում, այնպես էլ Էրեբունիի կառուցման աշխատանքներում: Դրանով էին նրանք վաստակել իրենց գլխավոր աստծու պաշտամունքը դավանելու իրավունքը: Չէ՞ որ Արգիշտին նրանց Իվարշային նվիրված

susi տաճար էր կառուցել հենց Էրեբունիում, հավանաբար, նրա պաշտամունքի վայրում: Իսկ դա նշանակում էր Ուազա երկրի սահմաններում Իվարշայի և Խալդիի պաշտամունքների հավասարեցում [11, էջեր 78-79] (եթե ոչ նույնացում): Հայտնի է, որ susi տաճար ունենալու իրավունքը Խալդիի մենաշնորհն էր [33, NN 18, 25; 27; 71; 72; 73]:

Ուազա երկրի՝ Ուրարտուի կազմում ընդգրկվելու կամավոր լինելը փաստում է վերոնշյալներից բացի, նաև այն, որ Ուրարտուի հյուսիսային խոշոր կենտրոնները՝ Էրեբունին, Արգիշտիխինիլին և Թեյշեբահինին գտնվում էին հենց Ուազա երկրի տարածքում [29, c. 426], որը Ուրարտուի հուսալի հենարանը մնաց իր գոյության ամբողջ ընթացքում: Իսկ «Էրեբունին, ըստ երևույթին, երկար ժամանակ ծառայել է որպես ռազմական պատնեշ Սևանի լեռնաբնակ ցեղերի դեմ, ինչպես և ելակետ ռազմական նոր նվաճումների ծավալման համար դեպի նույն Սևանի շրջակայքը,- գրում է Մ.Իսրայելյանը [9, էջ 20]: Հենց այդ ցեղերն էին հեզնական կերպով «լուլուներ» կոչվածները: Նրանք մասն էին կազմում Էթիունի ցեղամիության [34, cc. 190-191] *Վեդուրի-Էթիունի* կամ *Ուդուրի-Էթիունի* հատվածի՝ պաշտոնապես կոչված <sup>I</sup>Uduri-<sup>KUR</sup>Etiuhi կամ <sup>KUR</sup>Ueduri-Etiuni [33, NN 127, 150D, 155D, 160]:

#### Ուազայի բնակչության և Աազա երկրանվան մասին

Ուրարտու դաշնային պետության կազմի մեջ Ուազա երկրի՝ կամավոր մտած լինելու մասին կարող է վկայել նաև Էրեբունիի շինարվեստին նրա բնակչության բերած նպաստը: Ինչպես Կ. Հովհաննիսյանն ու Մ. Իսրայելյանն են նկատել տալիս, Թեյշեբահինիում (Կարմիր բլուր) և Էրեբունիում (Արին բերդ) շինարարները երկու տարբեր չափի միավորներ են կիրառել: Աղյուսի երկարության չափը Թեյշեբահինիում պայմանավորված է եղել ուրարտական կանգունի չափով (մոտ 51,8 սմ) [36, cc. 205-206], իսկ Էրեբունիում քառակուսի աղյուսի չափերը (47,4 x 47,4 x 12,5 սմ) խոսում են կանգունի մեկ այլ չափի մասին [35, c. 103; 9, էջ 29]:

Որ Ուազան ավելի բարձր մշակույթ է ունեցել, քան մերձսևանյան ցեղային երկրները, խոսում է նաև նրա անվանումը՝ \*Aza/Uaza/\*Uaza [33, c. 463]: Տասնամյակներ առաջ այս առիթով Ն. Հարությունյանը գրում էր. «...ուրարտացիները, հավանաբար, \*Aza=? Vaza երկրի մեջ նախապես տեսել են այդ երկրի տնտեսության հիմնական գծերից մեկը, այսինքն՝ vaz-երի երկիր կամ «խաղողի վազերի» երկիր: Դրա հաստատումը, ըստ երևույթին, կարող է ապացուցել խաղողագործության բարձր զարգացածությունը այդ տարածքում՝ ծայրահեղ դեպքում սկսած դեռևս մ.թ.ա. VIII դարից» [30, c. 91, թր. 43]: Այդուհանդերձ, Ն. Հարությունյանը սխալվում է, երբ այս երկրանվան հիմքում տեսնում է ուրարտերեն (նկատի էր առնում ուրարտական սեպագիր արձանագրությունների՝ նախապես *խալդերեն* կոչված լեզուն) չեղյալ \*vaz բառը, որից էլ փոխառյալ էր համարում հայերեն *վազ* և վրացերեն *վազի* նույնիմաստ բառերը: Ընդ որում, Ն. Աճառյանը *վազ*-ին վերագրելով հնդեվրոպական ծագում, համարում է արմատակիցը *վազել* բայի [6, էջ 376]: *Վազ* «խաղողի ուռ» բառն այս դեպքում ծագելու է հ.-ե- \*uegʰ- արմատից, բայց հ.-ե. \*gʰh-> հայ. *զ* անցումը որոշ լեզվաբանների մեջ կասկած է հարուցում: Վերջիններից էր նաև Գ. Ջահուկյանը, որը մեր բառին կա՛մ միջերկրածովյան ծագում էր վերագրում (հմմտ. լատին. baca «պտուղ» և Βάκχος դիցանունը) [26, էջ 310], կա՛մ նրա ար-

մատը բաղարկված էր համարում հ. -ե. \**ueg'* - «աշխույժ, ուժեղ լինել» արմատի հետ [31, c. 265, որ. 136], կա՛մ վերջապես դիտում էր իրանական ծագումով փոխառյալ բառ հայերենում [25, էջ 701]: Ի դեպ, Հ.Աճառյանը շատ ավելի վաղ ցույց էր տվել, որ հ. -ե. \**g'h*-ն հայերենը կարող էր արտահայտել նաև *q*-ի միջոցով՝ ինչպես է *ղէզ, լիզել, ոզնի, տիզ* բառերի դեպքում [3, էջ 376]: Մեր կողմից ավելացնենք *բազում* < հ. -ե. \**bhn g'hu*- բառը [3, էջ 378]: Հայերենում *վազել* բայի և *վազ* «խաղողի ուռ» գոյականի արմատակիցներ լինելու առթիվ Հ. Աճառյանի բերած օրինակներից հիշենք իմաստով ամենամոտ ոռու. ճեր «վազք» և ոճեր (<ո-ճեր) «ընձյուղ» բառերը, իսկ վրաց. *վազի*-ն հայերենից փոխառյալ բառ է [6, էջ 293]:

Սազա երկրանվան «խաղողային» ստուգաբանության մասին են վկայում ինչպես Նոյ նահապետի մասին մեզ հասած աստվածաշնչային և հայկական ավանդազրույցները, այնպես էլ Ուագա երկրի տարածքից հայտնի և «խաղող», «գինի» բառերին իմաստակից տարբեր ժամանակաշրջաններին պատկանող տեղանուններն [21, էջեր 5-10: 23, էջեր 53-56: 18, էջեր 254-256, 257-259] ու ցեղանունները: Վերջինի առթիվ ուշագրավ է Ստրաբոնի (Strabo, XI, 14, 14) հետևյալ հաղորդումը. «Պատմում են նաև թե էնիանները հաստատվել են Ուիտիա և Հայաստանից վերև՝ Աբոսից և Նիբարոսից (որոնք Տավրոսի ճյուղերն են) այն կողմ. սրանցից Աբոսը մոտիկ է այն ճանապարհին, որ տանում է Էկբատան՝ Բարիսի տաճարի առաջով» [27, էջեր 63-65]: *Էնիան*-//հուն. *Aiviān*- ցեղանունը կապ չունի թեսալական նմանահունչ անուն կրող ցեղանվան հետ: Նրա հայկական նախատիպը ունեցել է \**uaini-an* տեսքը, որից հնագույն հուն. \*(F)αινίαν-ը՝ դիզամմայի հետագա սղումով: Մեր ցեղանվան հիմք \**uaini*-ն «գինի» է նշանակում, իսկ *-an*-ը հայերենի հ. -ե. ծագումով հանրահայտ *-ան* վերջածանցն է (հմմտ. *բերան, գերան, խորան, ծորան, կռան* և այլ բառերի համապատասխան վերջածանցները) [25, էջ 796]: Ինչ վերաբերում է քննարկող բառի հիմքային \**uaini*-ին, ապա այն ևս հնդեվրոպական ծագում ունի. հմմտ. հայ. *գինի* և հուն. \*(F)οἶνος, իտեթ. *uiana*, մեհ. լուվ. *wiana*, անգլ. *wine* և այլն, որոնք բոլորն էլ «գինի» են նշանակում:

Ստրաբոնի հաղորդումը մեր \**uainian*- ցեղի՝ «Արմենիայից վերև» (ὄπερθε τῶν Ἀρμενίων) բնակված լինելու մասին պետք է հասկանալ ոչ թե Հայաստան//Արմենիայից, այլ XIII («արմենական») սատրապությունից (Herod. III, 93; III, 94) հյուսիս բնակված լինելու առումով, որովհետև Ստրաբոնը խոսում է իրենից դարեր առաջ եղած ժամանակաշրջանի [12, էջեր 197, 571-572, 576] մասին: Դա հաստատվում է նաև դրան անմիջապես հաջորդած շարադրանքով՝ «Աբոսից և Նիբարոսից այն կողմ» (ὄπερτον Ἄβον καὶ τὸν Νίβαρον), այսինքն՝ այս լեռներից էլ հյուսիս: Իսկ սրանք Միսն ու Մասիս են [28, cc. 56-57]: Արարատյան դաշտի *Ուագա* (<վազ) անունը և նրա տարածքից հայտնի դրան իմաստակից մյուս տեղանունները արգասիքն են Հայկական լեռնաշխարհի շատ շրջաններում հողագործության երկու ձևերի՝ դաշտամշակության և խաղողագործություն-գինեգործության առանձնացման [23, էջեր 59-61]: Այդ նորությունը, նախորդելով լեռնաշխարհում պետական կազմավորումների ստեղծման ժամանակաշրջանին, պայմանավորված է եղել լեռնաշխարհի հնդեվրոպալեզու բնակչությունը ըստ տնտեսամշա-

կուրթային հատկանիշների առանձնացնելու և անվանակոչելու հասարակական պահանջով:

**«Լուրուական ցեղերի» վաղ նախնադարի տնտեսական զբաղմունքի և խնս անվան մասին**

Այդ նույն հասարակական պահանջով էր ստեղծված լինելու նաև «լուրու»-ն՝ նախ որպես սոցիալական խմբի անվանում, որի տնտեսավարման ձևը ձկնորսությունն էր, ապա դարձել էր անասնապահությամբ և ձկնորսություն-ձկնաբուծությամբ զբաղվածների ցեղանուն՝ ի հակադրություն դաշտամշակությամբ և այգեգործությամբ (մասնավորապես խաղողագործություն-գինեգործությամբ) զբաղված հողագործական հանրությունների անվան: Ի դեպ, այդպիսի տարբերությունը, պայմանավորված լինելով տնտեսավարման տարբեր ձևերով, ինչ-որ չափով պահպանվում է նաև այսօր: Հայտնի է, որ Արարատյան դաշտի բնակիչները հիմա էլ իրենց հյուսիսային հարևաններին *սարեցի* են անվանում, իսկ իրենք իրենց՝ *արանցի* [13, էջ 151, ծան. 2]: Վերջինը ծագում է հ.-ե. \*arə- «հերկել, վարել» արմատից՝ -ան վերջածանցով և ունի «հերկող, վարող», այսինքն՝ «հողագործ» իմաստը (չշփոթել այլ ծագում ունեցող *Առան* երկրանվան հետ):

«Վիշապ» կոչված ձկնակերպ կոթողների առկայությունը Սևանա լճի ավազանում խոսում է նրա հնագույն բնակչության՝ ձկնորսությամբ զբաղվելու և ձկան պաշտամունք ունենալու մասին: Բայց դրանցից կան նաև Արագածի լանջերին ու լճառատ Ջավախքում, որը պետք է արգասիքը համարել նույն այդ երևույթի: Ձկնորսության և ձկնաբուծության ժամանակին ունեցած ավելի լայն տարածվածության մասին է խոսում *որս* բառը: Հ. Աճառյանը գրում է. «*Որս* «որսալը, որսորդություն», «որսացած անասունը»... Թերևս բնիկ հայ բառ՝ հնիս. porkos «ձկան որս» ձևից ... Հայերենի մեջ նշանակությունը հետո ընդհանրացած պիտի լինի: Նախաձայն *թ*-ի հետքը պահում է դեռ գվռ. *հորս*» [5, էջ 588]:

Նկատի առնենք, որ Սառցապատումից հետո Հայոցքը միանգամից չսկսվեց, իսկ մեր երկիրը միանգամից չդարձավ խոնավ ու ջերմ կլիմա ունեցող երկիր, որին հատուկ էր (մինչև մ.թ.ա. III հազարամյակի վերջին դարերը) փարթամ բուսականությունը, հետևաբար, նաև որսի կենդանիների առատությունը: Իսկ Սառցապատումից հետո սկսված Հայոցքի առաջին՝ միջանկյալ փուլում երկիրը ջրառատ էր, ձուկը՝ շատ:

Թե ժամանակին ինչքան կարևոր դեր է ունեցել ձկնորսություն-ձկնաբուծությունը հնդեվրոպական հանրության սննդակարգում և պաշտամունքում, վկայում է նախ խեթերի ավանդած խնս բառը, որը նշանակում էր «ծաղկում, բարգավաճում»: Բառը համարվում է փոխառյալ խեթերենում [32, c. 341]: Հմմտ. հայերեն *դուղանակ* «պտղաբեր» (<\*դուղ-ան-ակ) [8, էջ 197, ծան. 58: 25, էջ 483]: Այս բառերի արմատական *լու*-ն (<\*լս) պահպանված է միայն հայերենում՝ նախ *լու՛*, *լու՛*, *լու՛* միջարկության մեջ («ուրախության և ցնծության բացականչություն. կեցցե՛») [4, էջ 210], ապա նաև *լու* բառում՝ «մի տեսակ ծովային ձկան անուն» (հոգն. *լուանք*) [4, էջ 299]: Ըստ այդմ, *լուլու*-ն (<\*լսս) լինելու է հնդեվրոպական նախալեզվի վաղ շրջանում կրկնաբանությամբ ստեղծված բառերից մեկը (հմմտ. մանկական թոթովանքի *մամա, պապա, փափա, կուկու, կակա, նա-*



ևս, տոտո և այլ բառերը), որը ևս ունեցել է «ձուկ» նշանակությունը: Սրանից էլ ունենք «Ղուղակ-ձուկն» (<\*լս և -ակ վերջածանց) [8, էջ 197: 15, էջ 207: 16, էջ 188]:

**Հանիրավի «վիշապ» կոչված ձկնակերպ կոթողների մասին**

Ասվածներից բխում է, որ լուլու կարող էին կոչված լինել ոչ միայն ձուկը, այլև առասպելական ձկնամարդը և նրան ձուկված, «վիշապ» կոչված ձկնակերպ կոթողները: Թերևս այդ մոտեցմամբ և մասնակի թաքուի կիրառմամբ է կյանքի կոչվել ևս(ս)-ի \*լո-տարբերակը, որից ունենք ոչ միայն լոլոզ «սրածայր, պոլոզ» («ոզ վեջածանցի համար հմմտ. գոռոզ, խոխոզ, կոկոզ, ճոլոզ, պոլոզ»), այլև լոլի (<\*լոլ-ի), լոլլոլ (կրկնաբանությամբ) բառերը: Սրանցից երկրորդն ու երրորդը նշանակում են «երկայնահասակ ու նիհար, անշնորհք բարձր հասակով» [15, էջեր 206, 207], որոնք հարմար էին ձկնակերպ հսկա (կան 5 մետրը գերազանցող) կոթողները բնութագրելու համար:

Ժամանակին Ն.Ադոնցը, այդ կոթողների տեսքը նկատի առնելով, գրում էր. «Նախընտրելի է այս հուշարձանները կոչել *ձուկն*, քան *վիշապ*» [2, էջ 21, ծան. 1]: Մ. Աբեդյանը ուսուցանում էր. «Այդ վիթխարի կոթողների «վիշապներ» և «աժդահա» կոչումը կապ չունի նրանց պատկերացրած աստվածության հետ: Նրանք իրենց հսկայական մեծության համար հետագայում են կոչվել վիշապներ կամ աժդահաներ... Թե այդպես է, երևում է նրանից, որ մի ուրիշ տեղում՝ Արագածի լանջին նույնպիսի կոթողներն իրենց վիթխարության համար կոչվել են «Օդուզի գերեզմաններ», այսինքն՝ հսկայի, ազնավորի գերեզմաններ» [1, էջ 153]: Այս հարցում ավելի արմատական դիրքորոշում ունեն Գր. Ղափանցյանը: Նա գրում էր. «Ժողովրդական այս այժմյան «վիշապ» հորջորջումը գործածական դարձավ և որոշ գիտնականների կողմից (Я. Смирнов, Н. Марр, Б. Пиотровский), թեպետ, իհարկե, սա թյուրիմացություն է, որովհետև այժմյան պատահական ժողովրդական ինտերպրետացիան («աժդահա», «վիշապ») կարող է բնավ կապ չունենալ այդ կոթողների իսկական բովանդակության հետ,- մի բան, որ իրավամբ շեշտել է Մ. Աբեդյանը» [13, էջեր 111-112]:

Հիշյալ նշանավոր հայագետներից Ն. Ադոնցը չի ճշգրտել իր դիրքորոշումը «վիշապ» կոթողների հասցեատեր աստվածության վերաբերյալ, բայց քանի դրանք առաջարկում է ոչ թե «վիշապ», այլ «ձուկ» կոչել, ուրեմն, ընդունել է, որ այդ կոթողները ձկան պաշտամունքի հետ սերտ կապ են ունեցել: Մ. Աբեդյանը դրանք համարել է Աստղիկ (սեմ. Դերկետո, Բշտար) դիցուհուն ձուկված կոթողներ [1, էջեր 154-171], իսկ Գ. Ղափանցյանը՝ Արա Գեղեցիկի պաշտամունքի առարկայացումներ [13, էջեր 151-164]: Ընդ որում, Գ. Ղափանցյանի կարծիքով, դրանց պատրաստման ժամանակաշրջանը լինելու էր «մոտավորապես երկու հազար տարի մեր էրայից առաջ» [13, էջեր 152-154 ]: Ըստ երևույթին, մեր աստվածությունը, լինելով հին հնդկական և հին իրանական Ապամ-Նապատ//«Ջրերի զավակ» կոչված աստվածների զուգահեռը [24, էջեր 76-77, 79-81], մինևնույն ժամանակ համարվել է Ամպրոպի աստծու որդին: Այս տեսանկյունից պատահական չէ, որ այս ձկնակերպ կոթողներից մի քանիսն իրենց վերնամասում ունեն Ամպրոպի աստծու խորհրդանիշ ցլազլիսի պատկեր, իսկ Ուրարտուի Ռուսա I թագավորը Սևանա լճի հարավային ափին էր կառուցել ամպրոպային «Թեյշեբա աստծու քաղաքը» [33, N 266; 11, էջեր 84-85]:

Ձկնամարդ աստվածության մայրն, անշուշտ, համարվել է Սևանա լճի անձնավորում դիցուհին (հմմտ. «Սևանա ծոեր» դյուցազնավեպի Ծովինարի կերպարը) [19, էջ 148: 22, էջեր 30-31, 33]: Հայտնի է, որ Սևանա լճին հատուկ ձկները՝ իշխանը, գեղարքունին, կարմրախայտը, կարմիր խայտեր ունեցող ձկներ են: *Արտանիշ* տեղանվան առթիվ մենք խոսել ենք դրա մասին և ստուգաբանել այս տեղանունը [22, էջեր 36-38]: Հայերեն բարբառներն ունեն թրք. փոխառություն հանդիսացող *ալ* «կարմիր» և *չալ* «խատուտիկ» բառերը [14, էջ 15: 17, էջ 7]: Վերջերս մեր ուշադրության առարկան դարձան հարավից Սևանա լիճը թափվող *Արուչալու* (<ալ ու չալ-) գետակի անունն ու նրան սկիզբ տվող *Լուլթազ* (<լուլթազ) լեռնագագաթի անունը (լեռնագագաթը գտնվում է նախկին Վարդենիսի և Մարտունու շրջանների սահմանագլխին) [7, էջ 85]: *Արուչալու*-ն հայերեն *կարմրախայտ* բառի թարգմանությունն է, որն էլ հավանաբար, եղել է գետի հին անունը: Գետը վերնագավառում *Մայրառու* է կոչվել, որը, մեր կարծիքով, այդ անունը կրել է ոչ միայն գետի սկիզբը լինելու պատճառով, այլև առասպելաբանական մայր ձկան պաշտամունքին առնչվելով:

Հայտնի է, որ ձկները ձվադրման համար բարձրանում են դեպի գետերի ակունքները, որտեղ որ ծնվել է իրենց վտառը, այսինքն՝ թվում է, թե իրենց մոր մոտ են գնում: Սա էլ, հավանաբար, տալիս է \**Լուլթազ* անվան ստուգաբանության բանալին՝ «ձկնամայր» (հմմտ. *Մայրառու*): Այսպիսի իմաստի համար հիշենք, որ *թազ* բառը կիրառվել է որպես *թազուհի* բառի հումանիշ [4, էջ 135], և, որ այդպես կոչվում էր նաև մայր մեղուն՝ «փեթակի միակ էգ մեղուն, որ ձու էր ածում» [15, էջ 73; 16, էջ 247]: Սրանց հետ իմաստաբանական-առասպելաբանական սերտ կապի մեջ են նաև մերձսևանյան ցեղերի հավաքական *Ueduri/Uduri*// «Ջրորդի» անվանումը [19, էջ 148] և հայ ժողովրդական հեքիաթների ձկնամարդու կերպարը [10, էջեր 282-287, 303-308, 460-470, 620-622 և այլն; 19, էջեր 148, 150-151: 20, էջեր 27-31]:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Արգիշտի I-ի (մ. թ. ա. 786-764 թթ.) կողմից Էրեբունի-Երևանի հիմնադրման մասին արձանագրության մեջ էթե ասվում է, թե դա արվել է «Բիաինեյե (երկրի) գորությունը լուլուական ցեղերի մեջ ամրապնդելու (համար)», ապա դրա մեջ առկա սպառնալիքը վերաբերում է ոչ թե տեղական բնակչությանը՝ ուազացիներին, այլ նրանց լեռնցի հարևաններին:

- Ո՛չ Արգիշտի I-ը, ո՛չ էլ նրա հետնորդներից որևէ մեկը Արարատյան դաշտի Ուազա երկրի նվաճման մասին ուղղակի կամ անուղղակի կերպով վկայող արձանագրություն չեն թողել, որովհետև այն Ուրարտական թագավորության մեջ ընդգրկվել էր կամովին:

- Որ ուազացիները ոչ թե դիմադրել են, այլ համագործակցել են ուրարտացիների հետ իրենց հարևան մերձսևանյան ցեղերի դեմ մղված պայքարում և իրենց բաժինն ունեցել Էրեբունիի կառուցման մեջ, վկայում է, թեկուզև, նրանց գլխավոր աստված Իվարշայի պաշտամունքի պահպանումը ուրարտական տիրապետության ողջ ժամանակաշրջանում:

- Ուազան տնտեսական և մշակութային առումով ավելի զարգացած երկիր էր, քան մերձսևանյան և հարակից շրջանների «լուլուական ցեղերի» երկրները: Ուազայի տնտե-

սության մեջ գերակշռում էին հողագործության երկու ճյուղերը՝ այգեգործություն-գինեգործությունը և դաշտամշակությունը, իսկ «լուլուական» երկրներում՝ անասնապահությունն ու ձկնորսություն-ձկնաբուծությունը:

- Հնագույն ժամանակներից եկած տնտեսական և մշակութային տարբերություններն են պայմանավորել Սազա (հմմտ. հայ. *վազ* «խաղողի ուռ, որթ») և Լսու (հմմտ. հայ. *դուղակ* <\*Լս-ակ «ձուկն») անվանումների ստեղծումը:

- Սևանա լճի ավազանում և շրջակա երկրներում գոյություն ունեցած ձկան և ձկնամարդ աստվածության պաշտամունքի արդյունքներն են ձկնակերպ «վիշապ» կոչված կոթողները, հայ ժողովրդական հեքիաթների ձկնամարդու կերպարը և մերձսևանյան ցեղերի պաշտոնական *\*վեդուրի/\*ուդուրի* անունը, որից՝ Ueduri-Etiuni երկրանունը:

### Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. **Աբեղյան Մ.** *Երկիր*: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: Հ. 7: Երևան: 1975: 602 էջ:
2. **Ադոնց Ն.** *Հայաստանի պատմություն. ակունքները. X-VI դդ. մ.թ.ա.*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1972: 430 էջ:
3. **Աճառյան Հ.** *Հայերեն արմատական բառարան*: Հ. I: Երևան: ԵՀ հրատ.: 1971: 698 էջ:
4. **Աճառյան Հ.** *Հայերեն արմատական բառարան*: Հ. II: Երևան: ԵՀ հրատ.: 1973: 687 էջ:
5. **Աճառյան Հ.** *Հայերեն արմատական բառարան*: Հ. III: Երևան: ԵՀ հրատ.: 1977: 635 էջ:
6. **Աճառյան Հ.** *Հայերեն արմատական բառարան*: Հ. IV: Երևան: ԵՀ հրատ.: 1979: 674 էջ:
7. **Ասլանյան Ա., Գրգեարյան Հ.** *Հայկական ՄՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան*: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: 1981: 208 էջ:
8. *«Բառգիրք հայոց»*: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի: Երևան: Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան» հրատ.: 1975: 445 էջ:
9. **Իսրայելյան Մ.** *Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (րատ արձանագրական ու հնագիտական տվյալների)*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1971: 199 էջ:
10. *«Հայ ժողովրդական հեքիաթներ»*: Հ. VI: ՀՀ ԳԱԱ հրատ.: Երևան: 1973: 778 էջ:
11. *«Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա»*. *հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը*: Երևան: ԵՀ հրատ.: Հ. 1: 1981: 943 էջ:
12. **Հերոդոտոս** *Պատմություն ինը գրքից*: Թարգմ. Ս. Կրկյաշարյանի: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հր.: 1986: 650 էջ:
13. **Ղափանցյան Գ.** *Արա Գեղեցիկի պաշտամունքը*: Երևան: ՀՄՍՌ ԳԱ հրատ.: 1945: 164 էջ:
14. **Մալխասյանց Ստ.** *Հայերեն բացատրական բառարան*: Հ. I, Երևան: Պետհրատ: 1944: 608 էջ:
15. **Մալխասյանց Ստ.** *Հայերեն բացատրական բառարան*: Հ. II: Երևան: Պետհրատ: 1944: 512 էջ:
16. **Մալխասյանց Ստ.** *Հայերեն բացատրական բառարան*: Հ. III: Երևան: Պետհրատ: 1944: 614 էջ:
17. **Մալխասյանց Ստ.** *Հայերեն բացատրական բառարան*: Հ. IV: Երևան: Պետհրատ: 1945: 646 էջ:
18. **Պետրոսյան Ս.** *«Արարատյան դրախտը» սեպագիր աղբյուրներում // Պատմա-բանասիրական հանդես*: 2009: թիվ 2-3: 249-261 էջեր:
19. **Պետրոսյան Ս.** *Գեղամի, Սիսակի և Վեդուրի-Էթիունի ցեղախմբի պաշտամունքի մասին // «Հայկագուհիներ»*. նվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին: Երևան: ՀՀ ԳԱԱ ԵՀ հրատ.: 2013: 148-152 էջեր:
20. **Պետրոսյան Ս.** *Պատմական ու առասպելաբանականը Վարդգես Մանուկի ավանդազրույցում // ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Հ. XV: Երևան: 2012: 27-31 էջեր:
21. **Պետրոսյան Ս.** *Սիսակ և Նոյ նահապետների մասին հայկական ավանդազրույցների պատմական հենքը // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Հ. VI: Գյումրի: 2003: 5-16 էջեր:

22. **Պետրոսյան Ս.** *Սևանա լճի պաշտամունքը և դրա հետևանք տեղանունները* // «ԼԷՄ». համահայկական հանդես: 2018: թիվ 2: 30-43 էջեր:
23. **Պետրոսյան Ս.** *Չորիս երկրները և հին հայոց մատույնները* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. 18: Գյումրի: 2015: 51-61 էջեր:
24. **Պետրոսյան Ս., Պետրոսյան Ծ., Պետրոսյան Լ.** *«Ջրերի գավակի» պաշտամունքի պրոտագոնիստները և նրանց տեղանունները* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. I: Գյումրի: 1998: 76-83 էջեր:
25. **Ջահուկյան Գ.** *Հայերեն ստուգաբանական բառարան*: Երևան: «Ատդիկ» հրատ.: 2010: 819 էջ:
26. **Ջահուկյան Գ.** *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1987: 747 էջ:
27. **Ստրաբոն** Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան: Երևան: 1940: ԵՀ հրատ.: 124 էջ:
28. **Адонц Н.** *Армения в эпоху Юстиниана*. Изд. второе. Ереван. Изд. Ер. университета. 1971. 526 с.
29. **Арутюнян Н.** *Бийнилли (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики*. Ереван. Изд. АН АрмССР. 1970. 472 с.
30. **Арутюнян Н.** *Новые урартские надписи Кармир-Блура*. Ереван. Изд. АН АрмССР, 1966. 102 с.
31. **Джаукян Г.** *Очерки по истории дописьменного периода армянского языка*. Ереван. АН АрмССР. 1967. 383 с.
32. **Капанцян Гр.** *Историко-лингвистические работы к начальной истории армян*. Ереван. Изд. АрмССР. 1956. 470 с.
33. **Меликишвили Г.** *Уруартские клинообразные надписи* / Вестник древней истории. N 1. Москва. АН СССР. 1960. 502 с.
34. **Мещанинов И.** *Аннотированный словарь урартского (бийнского) языка*. Ленинград. «Наука». 1978. 388 с.
35. **Оганесян К.** *Арин-Берд. Архитектура Эребуни (по материалам раскопок 1950-1959 гг.)*. Ереван. Изд. АН АрмССР. 1961. 103 с.
36. **Пиотровский Б.** *Ванское царство (Урарту)*. Москва. Изд. Восточной литературы. 1959. 260 с.

## References

1. **Abeghyan M.** Works. [Yerker]. Yerevan. AS of ArmSSR. Vol. VII. 1975. 602 p. (In Armenian)
2. **Adonts N.** History of Armenia. The sources. X-VI centuries BC [*Hayast'ani patmut'yun. Akunk'neri. X-VI dd. m.t'.a.*]. Yerevan. "Hayastan" pub. 1972. 430p. (In Armenian)
3. **Acharyan H.** Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. I. 1971. 698 p. (In Armenian)
4. **Acharyan H.** Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. II. 1973. 687 p. (In Armenian)
5. **Acharyan H.** Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. III. 1977. 635 p. (in Armenian)
6. **Acharyan H.** Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. IV. 1979. 674 p. (In Armenian)
7. **Aslanyan A., Grgearyan G.** Concise Dictionary of Geographical Names of the Armenian SSR [*Haykakan SSH ashkharhagrakan anunneri hamarrot barraran*]. Yerevan. AS of the ArmSSR. 1981. 208 p. (In Armenian)
8. "Vocabulary of Armenian language" [*Barrgirk' hayots*]. Yer. "Matenadaran" pub. 1975. 445 p. (In Armenian)
9. **Israelyan M.** History of the fortress-city of Erebuni (based on documentary and archaeological information) [*Erebuni berd-k'aghak'i patmut'yun (yst ardzanagrakan u hnagitakan tyvalneri)*] Yerevan. "Armenia" pub. 1971. 199 p. (In Armenian)
10. "Armenian Folk Tales" [*Hay zhoghovrdakan hek'iat'ner*] Vol. VI. Yer. NAS RA. 1973. 778 p. (In Armenian)

11. "A Reading book of History of the Armenian People" [*Hay zhoghovrdi patmut'yan k'restomatia*]. Vol. I. Yerevan. YU pub. 1981. 943 p. (In Armenian)
12. The Nine books of **History of Herodotus**. Trans. by S. Krkyasharyan. Yerevan, AS of ArmSSR. 1986. 650 p. (In Armenian)
13. **Ghapantsyan G.** Worship of Ara Handsome [*Ara Geghets'iki pashtamunk'y*]. Yerevan. AS of ArmSSR. 1945. 164 p. (in Armenian)
14. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. I. Yerevan. State pub. 1944. 608 p. (In Armenian)
15. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. II. Yerevan. State pub. 1944. 512 p. (In Armenian)
16. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. III. Yerevan. State pub. 1944. 614 p. (In Armenian)
17. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. IV. Yerevan. State pub. 1945. 646 p. (In Armenian)
18. **Petrosyan S.** "The Ararat Paradise" in Cuneiform Sources [*«Araratyan drakhty» sepagir aghbyurne rum*]/Historical-philological journal. 2009. N 2-3. 249-261pp. (In Armenian)
19. **Petrosyan S.** About Gegham, Sisak and about the worship of the tribe of Veduri-Etiuni [*Geghami, Sisaki yev Veduri-Etiuni ts'exakhmbi pashtamunk'i masin*] // Yerevan. NAS of the RA. 2013. pp. 148-152.
20. **Petrosyan S.** The historical and mythological in the legend of Vardges Manuk [*Patmakann u arraspela banakany Vardges Manuki arraspelum*] // "Scientific works" of the Shirak center for armenological studies of the NAS of the RA. Gyumri. N 15. 2012. 27-31pp. (In Armenian)
21. **Petrosyan S.** The historical basis of the legend about patriarchs Noy and Sisak [*Sisak yev Noy nahapetneri masin haykakan avandazruys'neri patmakan henk'y*] // "Scientific works" of the Shirak center for armenological studies of the NAS. Gyumri. N 6. 2003. 5-16 (In Armenian)
22. **Petrosyan S.** The cult of the Lake Sevan and the toponyms sequel of it [*Sevana lch'i pashtamunk'y yev dra hetevank' teghanunnery*] // "Vem" journal. 2018. N 2. 30-43pp. (In Armenian)
23. **Petrosyan S.** The countries Quria and the Old Armenian Cupbearers [*Quria yerkrnery yev hin hayoc matrrvaknery*]/ "Scientific works" of the Shirak center for armenological studies of the NAS. Gyumri. N 18. 2015. 51-61pp. (In Armenian)
24. **Petrosyan S.** Reflection of the cult of the "child of Waters" in several cuneiform toponyms [*'Jreri zavaki' pashtamunk'i artats'olomy sepagrayin mi k'ani teghanunnerum*] // "Scientific works" of the Shirak center for armenological studies of the NAS. Gyumri. N 1. 1998. 76-83pp. (In Armenian)
25. **Jahukyan G.** Armenian etymological dictionary [*Hayeren stugabanakan barraran*]. Yerevan. "Asoghik" pub. 2010. 819 p. (In Armenian)
26. **Jahukyan G.** History of the Armenian language. pre-written period [*Hayots' lezvi patmut'yun. Nakhagrayin zhamanakashrjan*]. Yerevan. AS of ArmSSR. 1987. 747 p. (In Armenian)
27. **Strabo. [Strabon]**. Trans. by H. Acharyan. Yerevan. YU pub. 1940. 124 p. (In Armenian)
28. **Adonts N.** Armenia in the Age of Justinian [*Armeniya v epokhu Yustiniana*]. Yerevan. YU pub. 1971. 526 p. (In Russian)
29. **Arutyunyan N.** Biainili (Uartu). Military and political history and issues of toponymy [*Biaynili (Uartu). Voyemno-politicheskaya istoriya i voprosy toponimiki*]. Yerevan. AS of the ArmSSR. 1970. 472 p. (In Russian)
30. **Arutyunyan N.** New Uartian inscriptions of Karmir-Blur [*Novyye urartskiy nadpisi Karmir-Blura*]. Yerevan. AS of the ArmSSR. 1966. 102 p. (In Russian)
31. **Jaukyan G.** Essays on the history of the pre-written period of the Armenian language [*Ocherki po istorii dopis'mennogo perioda armyanskogo yazyka*]. Yerevan. AS of the ArmSSR. 1967. 383 p. (In Russian)
32. **Kapantsyan Gr.** Historical-linguistic works on the primary history of Armenians [*Istoriko-lingvisticheskiye trudy po nachal'noy istorii armyan*]. Yerevan. AS of the ArmSSR. 1956. 470 p. (In Russian)
33. **Melikishvili G.** The Uruartian cuneiform inscriptions [*Uruartskiy klinopisnyye nadpisi*]. N 1. Moscow. AS of USSR. 1960. 502 p. (In Russian)

34. **Meshchaninov I.** Annotated dictionary of the Urartian (Biaynian) language [*Annotirovanny slovar' urartskogo (biaynskogo) yazyka*]. Leningrad. "Nauka". 1978. 388 p. (In Russian)
35. **Oganesyan K.** Arin-Berd. Architecture of Erebuni (on the materials of excavations of 1950-1959) [*Arin-Berd. Arkhitektura Erebuni (po materialam raskopok 1950-1959 gg.)*]. Yerevan. AS of the ArmSSR. 1961. 103 p. (In Russian)
36. **Piotrovsky B.** The Van kingdom (Urartu) [*Vanskoye tsarstvo (Urartu)*]. Moscow. "Vostochnaya Literatura". 1959. 260 p. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **25. 03. 2024**  
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **08. 04. 2024**  
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Մարգիս Գարեգինի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝** պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ  
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
առաջատար գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

**Sargis Garegin PETROSYAN:** Doctor of Historical sciences, associate professor,  
Leading Researcher at Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA  
e-mail: Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

**Саргис Гарегинович ПЕТРОСЯН:** доктор исторических наук, доцент,  
ведущий н./с. Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА  
эл. адрес: Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2024.27.1-31

ՏԱՅՔԸ XI-XV դդ. (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱԸՐԿ)<sup>1</sup>

*Արկաղի Ա. Ակոպով  
Արմեն Ս. Հայրապետյան*

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. 1001 թ. Դավիթ Կյուրապատի մահից հետո սկսվեց նրա ժառանգության համար պայքարը: Տայքն անցավ Բյուզանդական կայսրությանը, որի կայսր Վասիլ Բ-ն երկրամասը ժամանակավորապես հանձնեց Վրաստանին, սակայն 1022 թ. հաստատեց իր գերիշխանությունը: Հետագա շրջանում Տայքը ենթարկվեց սելջուկ-թուրքական ասպատակությունների: Զաքարյանների օրոք երկրամասն ազատագրվեց սելջուկ-թուրքական լծից և հայտնվեց Վրաստանի կազմում: XIII դ. Տայքն ընդգրկվեց Սամցխեի իշխանության կազմի մեջ, որը երկարատև գոյաբանական պայքարի մեջ մտավ մոնղոլների, ապա թուրքմենական ցեղերի դեմ: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: Վերլուծություն. Աշխատանքում վերլուծվում է հարևանների կողմից Տայքի իշխանության կլանման գործընթացը, ներկայացված են Տայքի դերը X-XV դդ. աշխարհաքաղաքական գործընթացներում և ինքնության պահպանման համար պայքարի ձախողման հետևանքով տայեցիների հայրենագրկման դրսևորումները: Արդյունքներ. Ուսումնասիրության մեջ հստակեցվել է Դավիթ Կյուրապատի ժառանգության բաժանման գործում վրաց-բյուզանդական իմպլեմենտարիզմը, վերլուծվել են այդ գործընթացում Հայաստանի պասիվության պատճառները: Ամփոփվել է Տայքի հայության մի մասի հայրենագրկման և ապագայնացման հետևանքով ձևավորված

<sup>1</sup> The work was supported by the Science Committee of Republic of Armenia, in the frames of the research project № 21T-2A292.

նոր իրականությունը: *Հեղինակների ներդրումը*. Հոդվածը գրվել է հեղինակների համատեղ ջանքերով:

**Բանալի բառեր՝** *Տայք, Դավիթ Կյուրապատ, Վրաստան, Բյուզանդիա, Բագրատ Գ, քաղկեդոնականություն, Սամցխեի իշխանություն:*

**Ինչպես հղել՝** Ակոպով Ա., Հայրապետյան Ա. *Տայքը XI-XV դդ. (պատմական ակնարկ)*, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1(27): 31- 41 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-31

## TAYK IN THE XI-XIV CENTURIES (HISTORICAL REVIEW)

*Arkadi A. Akopov*

*Armen S. Hayrapetyan*

Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** In 1001 after the death of David Kuropalates, the struggle for his inheritance began. Tayk passed into the Byzantine Empire, whose emperor Basil II temporarily ceded the territory to Georgia, but in 1022 established his rule. Later, Tayk was subjected to raids by the Seljuk Turks. During the reign of the Zakaryans, the region was liberated from the Seljuk-Turkish yoke and became part of Georgia. In the XIII century Tayk was included in the Principality of Samtskhe, which engaged in a long ontological struggle against the Mongols and then Turkmen tribes.

**Methods and Materials:** The work uses historical-comparative as well as primary source methods and methods of analysis. **Analysis:** The paper analyzes the process of Tayk absorption by neighbours, presents the role of Tayk in the geopolitical processes of the 10th-15th centuries and manifestations of dispatiation resulting from failures in the struggle to preserve Tayk identity.

**Results:** The study reveals Georgian-Byzantine implementationism in the section of David Kurapatat's heritage and analyzes the reasons for Armenia's passivity in this process. The new reality formed as a result of denationalisation of a part of Tayk Armenians is summarised. **Authors' contribution:** The article was written through the joint efforts of the authors.

**Key words:** *Tayk, Davit Kuropalates, Georgia, Byzantium, Bagrat III, Chalcedonism, Principality of Samtskhe.*

**Citation:** Akopov A., Hayrapetyan A. *Tayk in the XI-XIV centuries (historical review)*. // “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 31- 41pp.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-31

## ТАЙК В XI-XIV ВВ. (ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР)

*Аркадий А. Акопов*

*Армен С. Айрапетян*

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** 1001 г. после смерти Давида Кюрапагата началась борьба за его наследие. Тайк перешел в состав Византийской империи, император которой Василий II временно передал



территорию Грузии, но в 1022 г. установил свое господство. Позже Тайк подвергался набегам турок-сельджуков. Во времена правления Закарян регион был освобожден от сельджукско-турецкого ига и вошел в состав Грузии. XIII веке Тайк был включен в состав княжества Самцхе, вступившего в длительную онтологическую борьбу против монголов, а затем и туркменских племен. Методы и материалы: В работе использованы историко-сравнительный, а также первоисточниковый методы и методы анализа. Анализ: В статье анализируется процесс поглощения Тайка соседями, представлена роль Тайка в геополитических процессах X-XV веков и проявления диспатриации, возникшие в результате неудач в борьбе за сохранение идентичности Тайка. Результаты: В исследовании выявлен грузино-византийский имплементационизм в разделе наследия Давида Курапалата, проанализированы причины пассивности Армении в этом процессе. Обобщена новая реальность, сформировавшаяся в результате денационализации части армян Тайка. Вклад авторов: Статья написана совместными усилиями авторов.

**Ключевые слова:** *Тайк, Давид Курапалат, Грузия, Византия, Баграт III, халкидонство, княжество Самцхе.*

**Как цитировать:** Акопов А., Айрапетян А. *Тайк в XI-XIV вв. (исторический обзор).* //

“Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1(27). 31- 41сс.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-31

**ՆԱԽԱԲԱՆ.** X դ. երկրորդ կեսին Մեծ Հայքի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում մեծ վերելք ապրեց Բագրատունյաց Տայքի իշխանությունը: Վերջինիս Դավիթ Կյուրապաղատ իշխանը, օգտվելով հայ-վրաց-բյուզանդական հակասություններից, ստեղծեց հզոր մի պետություն, որն ընդգրկեց ոչ միայն բուն Տայքը, այլև որոշ տարածքներ հարևան Բարձր Հայք, Այրարատ և Գուգարք նահանգներից: Լինելով անժառանգ՝ կյանքի վերջին տարիներին Դավիթն իր պետությունը կտակեց Բյուզանդական կայսրությանը: «Կյուրապաղատն Դավիթ անժառանգ գլուխ, գրում է Վարդան Արևելցին, տայ անդարձագրով զհայրենիս իւր ի Վասիլն, զՈւխթիսն, զՆամրվուանն, և զքաղաքն Ապահունեաց զՄանծկերտ, և զամենայն ինչս» [9, էջ 93]: Հ. Բարթիկյանի կարծիքով՝ հենց այս գործարքն էլ պատճառ դարձավ նրա վաղաժամ մահվան [3, էջեր 81-92]:

#### **Տայքը XI-XII դարերում**

Ստեփանոս Տարոնեցու վկայությամբ՝ Դավիթ Կյուրապաղատը մահացել է հայտնի 449 թ. Զատիկին՝ 1001 թ. մարտի 31-ին: Ըստ Արիստակես Լաստիվերցու և Մատթեոս Ուռնայեցու՝ վրաց Բլարիոն արքեպիսկոպոսը [Ուռնայեցի, էջ 38], մահաթույն խառնելով պատարագի հաղորդությանը, խմեցրեց Դավիթ Կյուրապաղատին, սակայն տեսնելով, որ թույնը չի ներգործում, խեղդամահ արեց, ինչի համար էլ պատժվեց Վասիլ II-ի կողմից՝ «...վասնզի հայր անուն էր Դավիթ կյուրապաղատ թագաւորին Վասիլն. և վասն այնորիկ կորոյս զնոսա» [15, էջ 3; 12, էջ 38]:

Իսկ ո՞ւմ էր իրականում ձեռնտու ծեր իշխանի մահը: Ի՞նչը ստիպեց նրա թշնամիներին արագացնելու Դավթից ձեռքազատվելու գործը: Ցավոք, սկզբնաղբյուրները խոսում են Դավիթ Կյուրապաղատի միայն մահվան մասին և լռության են մատնում այդ ոճրագործության հետ կապված այլ հանգամանքները: Ի՞նչը կարող էր լինել նրանից ազատվելու համար առիթ, եթե ոչ քաղաքական այն մեծ խաղը, որ սկսել էր Վասիլ Բ կայսրը դեռևս 970-ական թվականներին՝ Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ:

Ենթադրվում էր, որ Կյուրապաղատի մահից հետո Տայքն «օրինական» ճանապարհով կանցնի կայսրությանը: Մակայն Հայոց շահնշահ Գագիկ Ա-ի (990-1020 թթ.) և Դավիթ Բագրատունու սերտ փոխհարաբերությունները խառնեցին կայսեր ծրագրերը: Ստեղծված իրավիճակում Դավթի հանկարծամահ լինելը ապահովագրում էր Բյուզանդիային ավելորդ քաշքշուկներից: Հանգամանքների այսպիսի դասավորության պայմաններում վրաց արքեպիսկոպոս Իլարիոնը դարձավ ընդամենը գործիք Կյուրապաղատի մահը ցանկացողների ձեռքում և անցանկալի վկա, որին Վասիլ Բ-ը շտապեց հեռացնել ասպարեզից՝ թաքցնելու համար գործված ոճիրը [2, էջ 45]:

Դավիթ Կյուրապաղատի մահից հետո Վասիլ Բ-ը եկավ Հայաստան, շրջագայեց նոր տիրույթներով՝ այցելեց Հարթ, Ապահունիք, ապա՝ Տայք, տիրացավ բազմաթիվ գավառների, բերդերի և քաղաքների: Եկեղյաց գավառում նրան դիմավորեցին Տայքի ազատները, ներկայացան նաև Վիրքի թագավոր Բագրատ Գ-ն և նրա հայր Գուրգենը: Վասիլը Գուրգենին շնորհեց մագիստրոսի, իսկ Բագրատին՝ կյուրապաղատի կոչում [26, էջ 57; 16, էջ 270]: Բագրատին շնորհվեցին նաև Դավիթ Կյուրապաղատի տիրույթների մի մասը «ցկյանս օգտագործման»:

1001-1002 թթ. ձմռանը Վասիլ Բ-ի կողմից Կյուրապաղատի ժառանգության «անարդար բաժանումից» դժգոհ Գուրգենը փորձեց Բյուզանդիայից ուժով խլել նաև Տայքի մյուս շրջանները: Իր գորքով նա ռազմակալեց Տայքը, սակայն հուժկու դիմադրության հանդիպեց Տայքի Ուղթիք բերդի մոտ: Գուրգենի դեմ կայսեր կողմից ուղարկվեց Նիկեփորաս Կանիկլեսն իր գորքով, սակայն վրաց-բյուզանդական ուղղակի բախում տեղի չունեցավ, որովհետև բյուզանդական կողմը համաձայնվեց Գուրգենի տարածքային պահանջների հետ [27, էջ 63]: Ըստ Ն. Ադոնցի՝ Գուրգենը ստացավ Տայքի մեծ մասը [1, էջ 24], որը 1008թ. նրա մահից հետո՝ որպես հողային պարգև, հանձնվեց Բագրատ Գ-ին:

Դավիթ Կյուրապաղատի տիրույթների բաժանման ժամանակ, սկզբնաղբյուրների հաղորդմամբ, կայսրին չներկայացավ հայոց Գագիկ Ա-ն: Հայոց թագավորը կայսրին ներկայանալը համարեց փոքրագություն: Իսկ թե ի՞նչն էր Գագիկի համար նվաստացուցիչ՝ Վասիլ Բ-ի մոտ գնալը, թե «կյուրապաղատ» կամ «մագիստրոս» տիտղոսներով «մեծարվելը», որը սիրով ընդունվեց Բագրատ Գ-ի, Գուրգենի և մի քանի հայ մեծամեծների կողմից, պարզ չէ: Հայտնի է, որ 1001 թ. Հայոց շահնշահը զբաղված էր Տաշիր-Չորագետի թագավոր Դավիթ Անհողինի ելույթի ճնշմամբ:

Կյուրապաղատության տիրույթների բռնագավթումը մեծ ազդեցություն ունեցավ Հարավկովկասյան տարածաշրջանի ճակատագրի վրա: Դավիթ Կյուրապաղատի և Գագիկ Ա-ի դաշինքը միակ կենսունակ ուժն էր, որ կարող էր պայքարել Հարավարևմտյան Հայաստանի և Ատրպատականի ամիրայությունների դեմ, ինչպես նաև դիմագրավել Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականությանը:

1008թ. Գուրգենի մահից հետո Տայքը, ինչպես և Դավիթ Կյուրապաղատի մյուս տիրույթները, անցան Բագրատ Գ-ին: Վերջինիս մահից հետո՝ 1014 թ., Վասիլ Բ-ը պահանջեց Բագրատի որդի Գիորգի Ա-ից (1014-1027թթ.) վերադարձնել իր հորը ցմահ օգտագործման տրված տիրույթները: Մակայն Գիորգին՝ «իր մանկական հասակով հպարտացած», պատասխանեց, թե իր հոր ունեցածից մի տուն անգամ չի տա ոչ մեկին

[15, էջ 7]: Այս պատասխանը, բնականաբար, մարտահրավեր էր Վասիլ Բ-ի համար, սակայն հեռատես կայսրը չշտապեց արագորեն լուծելու այս հարցը: Պատճառն այն էր, որ Գիորգի Ա-ն, հանձին հայոց շահնշահ Գագիկ Ա-ի, հզոր դաշնակից ուներ, որի հետ կապված էր նաև ազգակցական կապերով՝ Գիորգիի կինը Վասպուրականի Սենեքերիմ թագավորի և Գագիկ Ա-ի քրոջ դուստրն էր [24, էջ 267]: Գագիկի հետ բախումից խուսափելը կարևոր պատճառ էր, որպեսզի Վասիլը հետաձգեր Կյուրապաղատի ժառանգությանը տիրանալը: Այսուհանդերձ, Գագիկ Ա-ի մահից հետո՝ 1021 թ., կայսրն իր ուժերը շարժում է Արևելք՝ օրակարգում ունենալով Վասպուրականի և Դավիթ Կյուրապաղատի ժառանգության հարցերը:

Բյուզանդական զորքերը բանակում են Կարնո դաշտում: Գիորգիի մոտ ուղարկված բանագնացները, որոնք կայսեր անունից վրաց արքայից հնազանդություն էին պահանջել, վերադառնում են ձեռնունայն: Ավելին, Գիորգիի զորքերը կողոպտում և ավերում են Ուլթիքն իր գեղեցիկ դաստակերտներով, սակայն քաղաքի բնակիչներին ֆիզիկապես չեն վնասում [15, էջ 12]: Ուլթիքից Գիորգի Ա-ի ուժերը նահանջում են Կող, այնտեղից՝ Վանանդ: Կայսրն իր ուժերով հետապնդում է վրաց արքային և 1022 թ. Պաղակացիս (Չլդր) լճի մոտ և Արշարունիքի Շղփա վայրում ջախջախում նրան: Վրաց արքան հաշտություն է խնդրում, որի դիմաց նա իր երեք տարեկան որդուն՝ Բագրատին, պատանդ է տալիս կայսրությանը, Բյուզանդիային զիջում 14 ամրոց և Տայքի, Ջավախքի, Արդահանի ու Բասենի այն հողերը, որոնք պատկանում էին Դավիթ Կյուրապաղատին [23, էջ 63]:

1022 թ. հաղթական պատերազմից հետո Տայքի տարածքում ձևավորվեց վարչատարածքային առանձին միավոր՝ Իբերիա անունով [21, էջեր 91-102]: Նշանակված վերակացուները, ըստ Ա. Լաստիվերցու, գավառը բաժանեցին տուն առ տուն, գյուղ առ գյուղ և ագարակ առ ագարակ [15, էջ 26]:

Ենթադրաբար Բյուզանդիայի հաջորդ քայլը լինելու էր ամբողջ Վիրքի միացումը կայսրությանը: Չի բացառվում նաև, որ Գիորգի Ա-ին ևս առաջարկվել է կտակ գրել հոգուտ Բյուզանդիայի, սակայն վրաց թագավորը չի հնազանդվել:

Գագիկ Ա-ի մահից հետո սկսված գահակալական պայքարի ժամանակ Գիորգիի հանդես եկավ թագաժառանգ Հովհաննես-Սմբատի շահերի պաշտպանությամբ: Այդ պայքարը համընկավ Տայքի համար Վրաստանի և Բյուզանդիայի միջև սկսված պատերազմին, և Հովհաննես-Սմբատ թագավորը՝ ի փոխհատուցումն Գիորգիի ցուցաբերած աջակցության, ռազմական օգնություն ուղարկեց վրաց արքային, ինչն էլ կործանարար հետևանքներ ունեցավ Անիի Բագրատունյաց թագավորության համար:

Վրաստանի պարտությունը վճռեց նաև Անիի Բագրատունյաց թագավորության ճակատագիրը՝ Գիորգիի դաշնակից Հովհաննես-Սմբատն ստիպված եղավ Անին կտակել Բյուզանդիային: Հայոց թագավորի ներկայացուցիչ կաթողիկոս Պետրոս Գետադարձը Տրապիզոնում գտնվող Վասիլ Բ-ին ներկայացավ 1021 թ. դեկտեմբերի վերջերին: Բանակցություններն անցան կայսեր համար ցանկալի հունով: Ընդունվեց այն նույն սկզբունքը, որ իր ժամանակին Դավիթ Կյուրապաղատն էր գործադրել, և որով էլ Վասիլ Բ-ն սկիզբ էր դրել իր արևելյան քաղաքականությանը: Կտակի դիմաց Հովհաննես-

Մմբատը մագիստրոսի կոչում և Անիի ու Մեծ Հայքի ցմահ արքունտոսի պաշտոն ստացավ [25, էջեր 158-160]: Համաձայնության այս կետը պատճառաբանվեց նրանով, որ Հայոց թագավորն անժառանգ էր, ուստի նա իր հոժար կամքով ժառանգ էր կարգում կայսերը [4, էջեր 673-674]:

Այսպիսով, Վասիլ Բ-ի շուրջ հիսունամյա հետևողական քաղաքականության արդյունքում կայսրությունն առանց լուրջ ջանքեր գործադրելու ոչ միայն տիրացավ Տայքին, այլև հող նախապատրաստեց հետագայում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին ևս կայսրությանը միացնելու համար, որն էլ հաջողությամբ իրագործեց 1045 թ.:

Տիրանալով Տայքին՝ Բյուզանդական իշխանություններն այստեղ վարեցին տարիների ընթացքում իրեն արդարացրած քաղաքականություն, այն է՝ պայքարը խոշոր կալվածատիրության դեմ և կրոնական ու ազգային միաձուլում [10, էջ 611]: Այս ծրագրի համատեքստում բյուզանդական տիրապետությունից դժգոհ տայեցի ազնվականության համար գոյատևման խիստ ծանր պայմաններ ստեղծվեցին: Ի դեպ, նույն իրավիճակում հայտնվեց հայ ազնվականությունը Վասպուրականում, Շիրակում և այլուր [11, էջ 17]:

1047-1048 թթ. սկսվեցին սելջուկյան արշավանքները դեպի Հայաստան: Բյուզանդական արքունիքն ի վիճակի չէրավ պաշտպանելու կայսրության արևելյան սահմանները, և Հայաստանը ենթարկվեց սարսափելի ավերածությունների: 1064 թ. Սուլթան Ալփ-Արսլանն ասպատակեց ամբողջ Հյուսիսային Հայաստանը: Սելջուկ հրոսակները ասպատակեցին մինչև Փանազկերտ ընկած տարածքները, ապա հասան մինչև Բաբերդ [23, էջ 72; 15, էջ 97]:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում թուրք-սելջուկներից պարտություն կրելով՝ Բյուզանդիան ստիպված եղավ, ի թիվս այլոց, հրաժարվել նաև Տայքից: Հետագա տասնամյակների ընթացքում այն կովախնձոր դարձավ հզորացած վրացական թագավորության և թուրք-սելջուկների միջև: Այսպես, վրաց Դավիթ Դ Շինարար թագավորի օրոք (1089-1125 թթ.)՝ 1116 թ., Տայքում արյունահեղ բախումներ տեղի ունեցան հայ վրացական ուժերի և թուրք-սելջուկների միջև, որոնք ավարտվեցին դաշնակիցների հաղթանակով: Թշնամին նահանջեց մինչև Բասեն: 1125 թ. հունիսին վրացական զորքերը սելջուկ-թուրքերից գրավեցին Ջավախքը, Կողը, Բասենը և Սպերը, ապա հրի մատնեցին Ուղթիքը (Օլթի) [18, էջ 42]: Մակայն Դավիթ թագավորի մահից շատ չանցած՝ թուրքերը վերահաստատվեցին իրենց նախկին դիրքերում: Պայքարը Տայքի համար շարունակվեց ամբողջ XII դ. ընթացքում, և միայն XIII դ. սկզբին սելջուկների նկատմամբ Ջաքարե և Իվանե Ջաքարյանների տարած հաղթանակներից հետո այն անցավ վրացական թագավորությանը:

### **Տայքը XIII-XV դարերում**

Վրաց տիրապետության հաստատումը նպաստավոր պայմաններ ստեղծեց վրաց էթնիկ խմբերի՝ Տայք ներթափանցելու համար: Այդուհանդերձ, հակառակ պետական հովանավորությանը՝ տարածաշրջանի էթնոժողովրդագրական պատկերի վրա ժողովրդագրական այդ տեղաշարժերն էական ազդեցություն չթողեցին, և գոնե մինչև

XIV դ. երկրամասի բնակչության հիմնական մասը հայերն էին [22, էջեր 159-160]: Այդ է վկայում մեր դաշտային աշխատանքների արդյունքում ձեռք բերած վիմագրական նյութը: Դրանցից մեկում, օրինակ, նշված է. «Թվ. ՈՂԵ (1226 թ.) Ես՝ Գրիգոր, կանկնեցի ի բարեխաւսութիւն) ծ(նողաց իմոց)»<sup>2</sup>:

Տայքի ժողովրդագրական դիմագծի խեղաթյուրման պատասխանատու գործն իր վրա վերցրեց վրաց եկեղեցին: Մինչ հայ-վրացական միացյալ բանակն զբաղված էր Հայաստանի հյուսիսարևելյան գավառների ազատագրմամբ, վրաց եկեղեցին ակտիվորեն առաջ էր տանում քաղկեդոնական գաղափարներն ու զբաղված էր հոգեորոշումով: Ասվածի լավագույն ապացույցը կարելի է համարել Իվանե Զաքարյանի հրաժարումը առաքելականությունից և վրաց Իոանե կաթողիկոսի ձեռամբ քաղկեդոնական ծեսով մկրտվելը [8, էջ 85]:

XIII դ. 20-ական թվականներից սկսած՝ Տայքը ենթարկվեց նախ միջինասիական տիրակալ Ջալալեդդինի, ապա մոնղոլական ասպատակություններին: Վրացական աղբյուրների վկայությամբ՝ մոնղոլական զորքերը Չարմաղանի գլխավորությամբ ասպատակեցին Ջավախքը, Շավշատը, Կղարջքը, Սամցխեն ու Արդահանը, ավերածությունների ենթարկեցին երկիրը, կոտորեցին և գերեցին բնակիչությանը [17, էջ 54]:

Հայաստանին և Վրաստանին տիրացած մոնղոլները ստեղծեցին երկու վարչամիավորներ՝ Մեծ Արմենիա և Գյուրջիստան: Ի դեպ վերջինի մեջ ընդգրկվեցին նաև Հայաստանի հյուսիսարևելյան այն շրջանները, որոնք Թամար թագուհու օրոք (1184-1207 թթ.) անցել էին վրաց տիրապետության տակ [20, էջ 127]:

1266 թ. Թմկաբերդի տեր Սարգիս Ջաղեցին, օգտվելով վրաց-մոնղոլական հակամարտությունից, հիմնեց Սամցխեի ընդարձակ իշխանությունը, որն ընդգրկեց Տաշիրից մինչև Էրզրում ընկած տարածքը [13, էջ 56]: Նորաստեղծ այս իշխանությանը մաս կազմեց նաև Տայքը: Սամցխեի իշխանը կրում էր աթաբեկի տիտղոս: Վրացական աղբյուրներում այն առավել հայտնի է Սաաթաբագո (վրացերեն՝ աթաբեկի երկիր) անունով:

Սամցխեի իշխանության ստեղծման ժամանակաշրջանին է վերաբերում Կիրակոս Գանձակեցու վկայությունը, որը կարևոր է աթաբեկության պատմության առաջին օրերի ուսումնասիրման համար. «Դեպ եղև, զի Արդունն գօրօք բազմօք էր ի կողմանս Վրաց, ընդ նմա էր և Ջաքարէ: Եւ գաղտ յԱրդունէն և այլ գօրացն գնաց Ջաքարէ ի տեսութիւն կնօջ իւրոյ, որ էր առ հօր իւրում Սարգսի՝ իշխանին Ուխտեաց, որ ապստամբ էր ընդ թագաւորին վրաց Դաւթի» [6, էջ 393]: Հուլավուն, իմանալով Ջաքարեի այս քայլի մասին, հրամայում է սպանել նրան. «...տարեալ թաղեցին գնա ի Քոբայրն, զոր առ կին նորա ի Հայոց» [6, էջ 393]: Այս իրադարձություններից հետո մոնղոլները դադարեցին Ջաքարյան տոհմի ներկայացուցիչների նկատմամբ վստահություն տածել [14, էջ 232]:

Սարգիս Ջաղեցուն իշխանության ղեկին հաջորդեց նրա որդի Բեքա Ա-ն (1285-1306 թթ.): Վերջինիս հաջորդի՝ Սարգիս Բ-ի օրոք (1306-1344 թթ.) Սամցխեի աթաբեկությունը հզորացավ: Դրա վառ ապացույցը վրաց Գեորգի Ե Պայծառ (1318-1346 թթ.) թա-

<sup>2</sup> Արձանագրությունն ընթերցելու համար մեր շնորհակալությունն ենք հայտնում վիմագրագետ Ա. Հարությունյանին:

գավորի կողմից Սարգիսին աթաբեկի ժառանգական տիտղոսի շնորհումն էր: Բացի այդ, հենց XIV դ. սկիզբն է դառնում այն բեկումնային ժամանակաշրջանը, երբ աթաբեկությունը ձեռքազատվում է մոնղոլական գերիշխանությունից: Հետագա տարիներին աթաբեկերը ստիպված էին իրենց անկախությունը պաշտպանելու համար պայքարել մերթ կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի, մերթ էլ վրաց թագավորության դեմ, որոնք բոլոր միջոցներով փորձում էին Սամցխեի հայկական իշխանությունն իրենց ազդեցության ոլորտում ընդգրկել ու նրա տարածքին տիրանալ: Շարունակական պատերազմների արդյունքում երկրամասի բնակչության մի մասը կոտորվեց, շատերն էլ արտագաղթեցին: 1341 թ. Տայքի Վարդաշեն գյուղում գրված ավետարանի գրիչը վկայում է. «Եվ եղև փախուստ ամենայն գաւառին, նա ևս քաղաքին միահամուռ՝ քրիստոնէից և իսմայելաց և ամենայն բնակչացն ի ձեռաց Բ. իշխանաց, որոց ոչ է պարտ գրել զանուն նոցա: Եվ ամենայն ոք փախաւ և չուեցին յերկիր աւտար» [5, էջ 327]: Այդուհանդերձ տարաշաշրջանը շարունակում էր պահպանել իր էթնոկրոնական դիմագիծը: Մահմեդական բնակչությունը նախկինի նման կազմում էր չնչին փոքրամասնություն [13, էջ 62]:

Հ. Տաշյանի կարծիքով, Սամցխեի իշխանության կազմի մեջ գտնվող հողերը համեմատաբար ավելի լավ վիճակում էին, քան հայկական մյուս գավառները, քանի որ գտնվում էին քրիստոնյա աթաբեկների ենթակայության ներքո: Չնայած Տայքը ամենանշանավոր եկեղեցիները (Բանակ, Իշխան, Օշկ և այլն) քաղկեդոնական եկեղեցուն էին պատկանում, և հայ ազգաբնակչության մի մասը հայտնվել էր վրացական եկեղեցու հովանու ներքո, այդուհանդերձ հայությունը չէր մոռացել իր լեզուն, «մինչև որ ԺԷ դարուն մահմետականացումն հիմն դրաւ քրիստոնէական ամէն հետքի հետ՝ նաև լեզուի անհետացման» [19, էջ 35]:

Սամցխեի իշխանության տարիներին երկրամասում չհաստատվեց կայուն իրավիճակ: XV դ. սկզբից Տայքը, ինչպես և ամբողջ աթաբեկությունը, հայտնվում են գանազան նվաճողների տեսադաշտում: Լենկ Թեմուրի, նրան հաջորդած Թեմուրյանների և թուրքմենական ցեղերի բախումներն ընդգրկեցին նաև Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանները: Այդ բախումներն ուղեկցվեցին հայ ժողովրդի համար անասելի ողբերգությամբ, սարսափելի ավերածություններով և թալանով [7, էջ 72]: 1404 թ. Իսպանիայի թագավորի դեսպան Կլավիխոն, անցնելով Սպերի և Թորթումի վրայով, այդ տարիների ժողովրդագրական տեղաշարժերի արդյունքները նկարագրել է հետևյալ կերպ. «...բնակչությունն ստվար, մեծամասնությունը նախապես եղել են հայեր, բայց վերջին տարիներին շատ քրիստոնյաներ տեղահանվել են, և իսլամներ են եկել հաստատվել նրանց տեղը» [22, էջեր 159-160]:

XVI դ. սկզբին սկսվում են օսմանյան թուրքերի և Սեֆյան պարսիկների ասպատակությունները, որոնց հետևանքով նկատվում են ժողովրդագրական նոր տեղաշարժեր:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** XI դարի սկզբին ծավալվեց պայքար Դավիթ Կյուրապաղատի ժառանգության համար: Այդ պայքարի մի կողմում Բյուզանդական կայսր Վասիլ Բ-ն էր, մյուս կողմում՝ Վրաստանի թագավոր Բագրատ Գ-ն և իր հայր Գուրգենը: Կայսեր վարած հեռատես և խորամանկ քաղաքականության հետևանքով այդ պայքարին անմասն մնաց հայոց շահնշահ Գագիկ Ա-ը, որն այդ շրջանում ստիպված էր պայքարել

երկրի ներսում Դավիթ Անհողինի անջատողական նկրտումների դեմ: Վասիլ Բ-ի քայլերը հանգեցրին 1022 թ. Տայքի՝ Բյուզանդական կայսրությանը միացվելուն: Վրաց-բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում՝ 11-14-րդ դարերում, լայն թափով շարունակվեց Տայքի հայության քաղկեդոնացման և դրանից բխող ապագայնացման գործընթացը, ինչի հետևանքը երկրամասի հայության մի մասի էթնիկ ինքնագիտացության դիմախեղման դրսևորումներն էին: Այսուհանդերձ, XIV-XV դարերում Տայքի բնակչության մեծագույն մասը կազմում էին առաքելադավան և քաղկեդոնիկ հայերը: Ինչ վերաբերում է մահմեդականներին, ապա նրանք չնչին փոքրամասնություն էին և Տայքում հաստատվել էին միմիայն թուրքմենական ցեղերի ասպատակությունների ժամանակաշրջանում:

### Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ադոնց Ն. *Դավիթ Այրուրպաղատ* / «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ): 2002: 3: 3-37 էջեր:
2. Ալոպով Ա. *Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը*: Երևան: ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ.: 2013: 213 էջ:
3. Բարթիկյան Հ. *Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից*//ՊԲՀ:1970: N 2: 81-92 էջեր:
4. Լեո Հայոց պատմություն: Հ. 2: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1947: 764 էջ:
5. Խաչիկյան Լ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հր.: 1950: 757 էջ:
6. Կիրակոս Գանձակեցի *Պատմություն Հայոց*: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1961: 426 էջ:
7. Կիրակոսյան Գ. *Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում*: Երևան: ԵՊՄՀ հրատ.: 1997: 369 էջ:
8. Հակոբյան Պ. *Հայագիտական ուսումնասիրություններ*: Երևան: ԵՀ հրատ.: 2003: 492 էջ:
9. *Հուսարուն պատմության Վարդանայ Վարդապետի*: Վենետիկ: Ս.Ղազար: 1862: 184 էջ:
10. Մանանդյան Հ. *Երկեր*: Հ. Բ: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1978: 447 էջ:
11. Մանանդյան Հ. *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*: Հ. Գ: Երևան: Հայպետհրատ: 1952: 454 էջ:
12. Մատթեոս Ուռնայեցի *Ժամանակագրություն*: Վաղարշապատ: Ս. Էջմիածնի տպ.: 1898: 448 էջ:
13. Մելքոնյան Ա. *Զավախքը XIX դ. և XX դ. I քառորդին*: Երևան: Զանգակ-97: 2003: 544 էջ:
14. Մուրադյան Պ. *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*: Երևան: ԵՀ հրատ.: 1977: 373 էջ:
15. *Պատմություն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերտցոյ*: Թիֆլիս: Աղանեանցի տպ.: 1912: 191 էջ:
16. *Ստեփաննոսի Տարօնեցոյ Լսողկան պատմություն տիեզերական*: Սանկտ-Պետերբուրգ: Ն. Սկորոխոդովի տպ.: 1885: 437 էջ:
17. *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*: Հ. Բ: Կազմեց Լ. Մելիքսեթ-Բեկը: Երևան: Մելքոնյան ֆոնդի հրատ.: 1936: 168 էջ:
18. *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*: Հ. Գ: Կազմեց Լ. Մելիքսեթ-Բեկը: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1955: 346 էջ:
19. Տաշեան Հ. *Տայք, դրացիք և Խտտրջուր*: Հանդես Ամսօրեա: 1971: N 1-3:
20. Փափազյան Ա. *Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (XVI-XIX դարեր)*: Երևան: Էզեա: 2003: 292 էջ:
21. Арутюнова В. *Из истории северовосточных пограничных областей Византийской империи в 11-ом веке*// ИФЖ. 1972-1. 91-102 сс.
22. Клавихо Р. *Дневник путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406)*. Пер. со старонсп., предисловие и комментарии И. С. Марковой: Москва: изд. Наука. 1990. 210 с.
23. *Летопись Картли*. Перевод, введение и примечание Г.В. Цулая. Тбилиси: Мецниереба. 1982. 112с.

24. **Степаненко В.** *Еще раз о грузинском посольстве в Ани в 1045 г. (к генеологии грузинских и армянских Багратидов и Арирунидов Васпуракана)*// Античная древность и средние века. 2003. Вып. 34. 265–274 сс.
25. **Степаненко В.** *Из истории византийской провинциальной администрации в 11 в.*// Античная древность и средние века. 2008. Вып. 38. 96–113 сс.
26. **Сумбат Давитисдзе.** *История и повествование о Багратионах.* Перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе. Тбилиси: Мецниереба. 1979. 69 с.
27. **Такайшвили Э.** *Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии.* Тбилиси: изд. АН ГССР. 1952. 289 с.

## References

1. **Adonts N.** David Kuropalates [*Davit' Kyuropaghat*]// HPJ, 2002, N 3, 3-37 pp. (In Armenian)
2. **Akopov A.** Tayk: Administrative and Demographic Picture from the XVI Century till the First Third of the XIX Century [*Tayq. varchajhoghovrdagrakan patkery' XVI daric XIX dari I eresnamyaky'*]. Yerevan, Publ. of Institute of History NAS RA, 2013. 213 p. (In Armenian)
3. **Bartikyan H.** Conquest of Armenia by the Byzantine Empire [*Hayastani nvajumy' Byzandakan kaysrut'yan koghmic*] // HPJ, 1970, N 2, 81-92 pp. (In Armenian)
4. **Leo** History of Armenia [*Hoyoc patmut'yun*].V.2. Yerevan:Publ. of AS of ASSR.1947.764p..(In Armenian)
5. **Khachikyan L.** Memoirs of Armenian manuscripts of the 14th century [*ZhD dari hayeren dzer'agreri hishatakaranner*]. Yerevan: Publ. of AS of ASSR. 1950. 757 p. (In Armenian)
6. **Kirakos Gandzaketsi** History of Armenia [*Patmut'yun Hoyoc*]. Yerevan: Publ. of AS of ASSR. 1961. 426 p. (In Armenian)
7. **Kirakosyan G.** Armenia during the invasions of Lank-Tamur and Turkmen tribes [*Hayastany' Lank-T'a-muri ev t'urqmen cegheri arshavanqneri shrjanum*]. Yerevan: publ. of YSPI. 1997. 369 p. (In Armenian)
8. **Hakobyan P.** Armenological studies [*Hayagitakan usumnasirut'yunner*]. Yerevan: YU publ. 2003. 492 p.. (In Armenian)
9. Collection of History by Vardan Vardapet [*Havaqum patmut'ean Vardanay Vardapeti*]. Venice: S. Lazarus. 1862. 184 p. . (In Armenian)
10. **Manandyan H.** Works [*Yerker*]. Vol B. Yerevan: ASSR AS publ. 1978. 447 p.. (In Armenian)
11. **Manandyan H.** An investigative theory of the history of the Armenian people [*Qnnakan tesut'yun hay jhoghovrdi patmut'yan*]. Vol. 3. Yerevan: Haypethrat. 1952. 454 p.. (In Armenian)
12. **Matthew of Edessa Chronicle** [*Zhamanakagrut'yun*]. Vagharshapat: S. Etchmiadzin publication. 1898. 448 p. (In Armenian)
13. **Melkonyan A.** Javakhk in the XIX century and first quarter of XX century [*Javaxqy' XIX d. ev XX d. I qar'ordin*]. Yerevan: Zangak-97. 2003. 544 p.. (In Armenian)
14. **Muradyan P.** The Georgian inscriptions of Armenia [*Hayastani vraceren ard'anagrut'yunnery'*]. Yerevan: YSU publ. 1977. 373 p.. (In Armenian)
15. History of Aristakes Vardapet Lastivertsi [*Patmut'iwn Aristakesay Vardapeti Lastivertts'woy*]. Tiflis. Aghaniants' printing house. 1912. 191 p.. (In Armenian)
16. **Stepannos Taronetsi's** History of Universe [*Step'annosi Taronets'woy Asoghkan patmut'iwn tiyezerakan*]. Saint Petersburg: N. Skorokhodov print. 1885. 437 p. (In Armenian)
17. Georgian sources about Armenia and Armenians [*Vrats' aghbyurnery Hayastani yev hayeri masin*]. Vol 2. Compiled by L. Melikset-Bek. Yerevan: Melkonyan fund publ. 1936. 168 p.. (In Armenian)
18. Georgian sources about Armenia and Armenians [*Vrats' aghbyurnery Hayastani yev hayeri masin*]. Vol 3. Compiled by L. Melikset-Bek. Yerevan: Publ. of AS of ASSR. 1955. 346 p. (in Armenian)
19. **Tashian H.** Tayk, Neighbors and Khotorjur [*Tayq, draciq ev Xotorjur*]. / Handes Amsorea. 1971. N 1-3. (In Armenian)
20. **Papazyan A.** Turkish documents about Armenia and Armenians (XVI-XIX centuries) [*T'urk'akan vave-ragrery Hayastani yev hayeri masin (XVI-XIX darer)*]. Yerevan: Aegean. 2003. 292 p. (In Armenian)



21. **Arutyunova V.** From the history of the northeastern border regions of the Byzantine Empire in the 11th century [*Iz istorii severovostochnykh pogranychnykh oblastey Vizantiyskoy imperii v 11-om veke*] // *HPJ*, 1972, N 1, 91-102 pp. (In Russian)
22. **Clavijo R. G.** Diary of a trip to Samarkand to the court of Timur (1403-1406) [*Dnevnik puteshestviya v Samarkand ko dvoru Timura (1403-1406)*]. Translated from Old Spanish, preface and comments by I. S. Markova. Moscow: Nauka. 1990. 210 p.. (In Russian)
23. Chronicle of Kartli [*Letopis' Kartli*]. Translation, introduction and note by G. V. Tsulaya. Tbilisi: Metsniereba. 1982. 112 p.. (In Russian)
24. **Stepanenko V.** Once again about the Georgian embassy in Ani in 1045 (on the geneology of the Georgian and Armenian Bagratids and Artsrunids of Vaspurakan) [*Yeshche raz o gruzinskom posol'stve v Ani v 1045 g. (k geneologii gruzinskikh i armyanskikh Bagratidov i Artsrunidov Vaspurakana)*] // *Ancient antiquity and the Middle Ages*, vol. 34, 2003, 265–274 pp. (In Russian)
25. **Stepanenko V.** From the history of the Byzantine provincial administration in the 11th century [*Iz istorii vizantiyskoy provintsial'noy administratsii v 11 v*] // *Ancient antiquity and the Middle Ages*, vol. 38. 96–113 pp.. (In Russian)
26. **Sumbat Davitis-dze.** History and narrative about the Bagratians [*Istoriya i povestvovanie o Bagrationah*]. Translation, introduction and notes by M.D. Lordkipanidze. Tbilisi: Metsniereba. 1979. 69 p. (In Russian).
27. **Takayshvili E.** Archaeological expedition to the southern provinces of Georgia in 1917 [*Arheologicheskaja ekspeditsiya v juzhnye provincii Gruzii 1917 goda*]. Tbilisi: Mecniereba. 1952. 289 p. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **31. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **09. 04. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

#### **Տեղեկություններ հեղինակների մասին**

**Արկադի Արտյոմի ԱԿՈՊՈՎ**՝ պատմական գիտ. թեկնածու,  
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների  
կենտրոնի գիտական քարտուղար, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ [arkadone1@gmail.com](mailto:arkadone1@gmail.com), <https://orcid.org/0000-0001-6771-9747>

**Arkadi Artyom AKOPOV**: PhD in history, Scientific Secretary of  
Shirak Center of Armenological Studies of the NAS, Gyumri, RA,  
e-mail: [arkadone1@gmail.com](mailto:arkadone1@gmail.com), <https://orcid.org/0000-0001-6771-9747>

**Аркадий Артемович АКОПОВ**: кандидат истор. наук, ученый секретарь  
Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,  
эл.адрес: [arkadone1@gmail.com](mailto:arkadone1@gmail.com), <https://orcid.org/0000-0001-6771-9747>

**Արմեն Սերգոյի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**՝ պատմական գիտ. թեկնածու,  
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն,  
ԾՊՀ պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ [a.hayrapetyan@shirakcenter.sci.am](mailto:a.hayrapetyan@shirakcenter.sci.am), [//orcid.org/0000-0003-1051-5078](https://orcid.org/0000-0003-1051-5078)

**Armen Sergo HAYRAPETYAN**: PhD in history, Director of the  
Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri,  
Associate Professor of Shirak State University, Gyumri, RA,  
e-mail: [a.hayrapetyan@shirakcenter.sci.am](mailto:a.hayrapetyan@shirakcenter.sci.am), [//orcid.org/0000-0003-1051-5078](https://orcid.org/0000-0003-1051-5078)

**Армен Сергеевич АЙРАПЕТЯН**: кандидат истор. наук, директор  
Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри,  
доцент кафедры истории и правоведения ШГУ, Гюмри, РА,  
эл.адрес: [a.hayrapetyan@shirakcenter.sci.am](mailto:a.hayrapetyan@shirakcenter.sci.am), [//orcid.org/0000-0003-1051-5078](https://orcid.org/0000-0003-1051-5078)

ՀՏԴ՝ 94 (4/9)

DOI: 10.52971/18294316-2024.27.1-42

ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՋՈՒ ԲԱՅԴԵՆԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

*Արտակ Հ. Հովհաննիսյան*

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Հոդվածում ուսումնասիրվում են ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենի քաղաքական մոտեցումը պաղեստինա-իսրայելական հակամարտության նկատմամբ, վերջինիս հիմնական նախաձեռնությունները, դիվանագիտական ռազմավարությունը և տարածաշրջանում խաղաղության և կայունության ձևավորման վրա ունեցած ազդեցությունը: Հենվելով մի շարք աղբյուրների վրա՝ հոդվածում գնահատման փորձ է արվում Պաղեստինյան հակամարտության նկատմամբ Բայդենի մոտեցմանը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ավելի լայն համատեքստում: Հոդվածը նպատակ ունի պատկերացում տալու արդի պատմության ամենաերկարատև և վիճելի հակամարտություններից մեկի լուծման հեռանկարների վերաբերյալ: Մեթոդներ և նյութեր. Հոդվածում օգտագործվում է որակական մեթոդաբանություն՝ հիմնվելով առաջնային և երկրորդական աղբյուրների վրա՝ վերլուծելու Ջո Բայդենի քաղաքական մոտեցումը պաղեստինա-իսրայելական հակամարտության նկատմամբ: Հիմնական աղբյուրները ներառում են պաշտոնական հայտարարություններ, քաղաքական փաստաթղթեր և ելույթներ, որոնք առնչվում են նախագահ Բայդենին և նրա վարչակազմի հիմնական անդամներին: Համեմատական վերլուծության մեթոդով ցույց է տրվում նախորդ վարչակազմերի համեմատ՝ Բայդենի մոտեցման հիմնական միտումներն ու տեղաշարժերը: Վերլուծություն. Պաղեստինա-իսրայելական հակամարտությունը համարվում է ժամանակակից աշխարհի ամենատևական և բարդ խնդիրներից մեկը, որը բնութագրվում է տասնամյակների քաղաքական փակուղիներով, բռնություններով և մարդկային տառապանքներով: ԱՄՆ-ի նախագահական վարչակազմի փոփոխության հետ մեկտեղ առկա է զգալի հետաքրքրու-

թյուն՝ հասկանալու նախագահ Ջո Բայդենի մոտեցումը այս երկարատև հակամարտության լուծման ուղիների հարցում: *Առաջ է քաշվում այն թեզը, որ նախագահ Ջո Բայդենի քաղաքական մոտեցումը պաղեստինա-իսրայելական հակամարտության նկատմամբ արտացոլում է նախորդ վարչակազմերի քաղաքականության շարունակականության և փոփոխությունների խառնուրդ: Մի կողմից Բայդենը վերահաստատել է ԱՄՆ-ի երկարամյա պարտավորությունները Իսրայելի անվտանգության և ինքնապաշտպանության իրավունքի նկատմամբ՝ պահպանելով սերտ երկկողմ կապերը և երկու երկրների միջև ռազմական համագործակցությունը: Բայդենի վարչակազմը նաև աջակցություն է հայտնել հակամարտությունը երկու պետությունների ստեղծման ձևաչափով լուծելու համար: Մյուս կողմից՝ ի տարբերություն Թրամփի վարչակազմի, որը մեծապես իսրայելամետ օրակարգ էր հետապնդում, Բայդենը որդեգրել է ավելի հավասարակշռված դիրքորոշում՝ ձգտելով վերականգնել դիվանագիտական հարաբերությունները պաղեստինյան ղեկավարության հետ: Բացի այդ, Բայդենը մտահոգություն է հայտնել Արևմտյան ափում Իսրայելի բնակավայրերի ընդլայնման առնչությամբ՝ այն անվանելով խաղաղության խոչընդոտ և միջազգային իրավունքի խախտում: Վարչակազմը նաև ազդարարել է իր հակազդեցությունը միակողմանի գործողություններին, որոնք խաթարում են բանակցային կարգավորման հեռանկարները, ինչպիսիք են Իսրայելի կողմից պաղեստինյան տարածքների բռնակցումը կամ միջազգային ֆորումների միջոցով պետականության ճանաչմանը հասնելու Պաղեստինի ջանքերը:*

**Բանալի բառեր՝** *ԱՄՆ, Պաղեստին, Ջո Բայդեն, Իսրայել, Երուսաղեմ, Արևմտյան ափ:*

**Ինչպես հղել՝** *Հովհաննիսյան Ա. ԱՄՆ-ի քաղաքականությունը պաղեստինյան հակամարտության հանդեպ Ջո Բայդենի նախագահության տարիներին // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1(27): 42 - 49 էջեր:*

DOI: 10.52971/18294316-2024.27.1-42

## THE US POLICY TOWARDS THE PALESTINIAN CONFLICT DURING THE PRESIDENCY OF JOE BIDEN

*Artak H. Hovhannisyanyan*

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

### Abstract

*Introduction:* This article examines Joe Biden's policy approach to the Palestinian-Israeli conflict, analyzing key initiatives, diplomatic strategies, and implications for peace and stability in the region. Drawing on a range of primary sources, including official statements, policy documents, and speeches, as well as secondary analyses and scholarly literature, the paper evaluates Biden's approach within the broader context of U.S. foreign policy towards the Middle East. With the change in U.S. presidential administration, there is considerable interest in understanding Joe Biden's approach to addressing this longstanding conflict. *Methods and materials:* This article employs a qualitative methodology, drawing on primary and secondary sources to analyze Joe Biden's policy approach to the Palestinian-Israeli conflict. Primary sources include official statements, policy documents, and speeches delivered by President Biden and key members of his administration. Secondary sources encompass scholarly articles, books, reports, and media analyses that offer insights into U.S. foreign policy towards the Middle East and the Palestinian-

Israeli conflict. *Analysis:* They will focus on identifying key themes, trends, and shifts in Biden's approach compared to previous administrations. Analyses of U.S. foreign policy towards the Middle East have also contributed to understanding the broader context within which efforts to address the conflict unfold. *Results:* President Joe Biden's policy approach to the Palestinian-Israeli conflict reflects a mix of continuity and change from previous administrations. On one hand, Biden has reaffirmed longstanding U.S. commitments to Israel's security and right to self-defense, maintaining close bilateral ties and military cooperation between the two countries. The Biden administration has also expressed support for a two-state solution to the conflict, with Israel and a future Palestinian state living side by side in peace and security. Biden's approach diverges from that of his predecessor, Donald Trump, in several key aspects. Unlike the Trump administration, which pursued a heavily pro-Israel agenda, including recognizing Jerusalem as Israel's capital and endorsing Israeli sovereignty over the Golan Heights, Biden has adopted a more balanced stance, seeking to reengage with the Palestinian leadership and restore diplomatic relations. Biden has expressed concerns over Israel's settlement expansion in the West Bank, calling it a barrier to peace and a violation of international law.

**Key words:** *USA, Palestine, Joe Biden, Israel, Jerusalem, West Bank.*

**Citation:** Hovhannisyan A., *The USA Policy towards to Palestinian Conflict during the Presidency of Joe Biden* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2024.V. 1(27).42- 49pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-42

## ПОЛИТИКА США В ОТНОШЕНИИ ПАЛЕСТИНСКОГО КОНФЛИКТА ВО ВРЕМЯ ПРЕЗИДЕНТСТВА ДЖО БАЙДЕНА

*Артак Г. Оганнисян*

Ширакский государственный университет имени М. Налбандяна, Гюмри, РА

### **Аннотация**

*Введение:* В этой статье рассматривается политический подход Джо Байдена к палестино-израильскому конфликту, анализируются ключевые инициативы, дипломатические стратегии и последствия для мира и стабильности в регионе. Опираясь на ряд первоисточников, включая официальные заявления, политические документы и выступления, а также вторичный анализ и научную литературу, в статье оценивается подход Байдена в более широком контексте внешней политики США в отношении Ближнего Востока. С переменой в администрации президента США возник значительный интерес к пониманию подхода Джо Байдена к разрешению этого давнего конфликта. *Методы и материалы:* В данной статье используется качественная методология, опирающаяся на первичные и вторичные источники для анализа политического подхода Джо Байдена к палестино-израильскому конфликту. Первичные источники включают официальные заявления, политические документы и речи президента Байдена и ключевых членов его администрации. Вторичные источники включают научные статьи, книги, отчеты и анализ средств массовой информации, которые дают представление о внешней политике США в отношении Ближнего Востока и палестино-израильского конфликта. *Анализ:* Они сосредоточатся на выявлении ключевых тем, тенденций и изменений в подходе Байдена по сравнению с предыдущими администрациями. Анализ внешней политики США в отношении Ближнего Востока также способствовал пониманию более широкого контекста, в котором разворачиваются усилия по разрешению конфликта.

*Результаты:* Политический подход президента Джо Байдена к палестино-израильскому конфликту отражает сочетание преемственности и изменений по сравнению с предыдущими администрациями. С одной стороны, Байден подтвердил давние обязательства США по обеспечению безопасности Израиля и праву на самооборону, поддерживая тесные двусторонние связи и военное сотрудничество между двумя странами. Администрация Байдена также выразила поддержку решению конфликта на основе создания двух государств, при котором Израиль и будущее палестинское государство будут жить бок о бок в мире и безопасности. Подход Байдена отличается от подхода его предшественника Дональда Трампа в нескольких ключевых аспектах. В отличие от администрации Трампа, которая преследовала в значительной степени произраильскую программу, включая признание Иерусалима столицей Израиля и поддержку суверенитета Израиля над Голанскими высотами, Байден занял более сбалансированную позицию, стремясь возобновить взаимодействие с палестинским руководством и восстановить дипломатические отношения. Байден выразил обеспокоенность по поводу расширения израильских поселений на Западном Берегу, назвав это препятствием на пути к миру и нарушением международного права.

**Ключевые слова:** США, Палестина, Джо Байден, Израиль, Иерусалим, Западный Берег.

**Как цитировать:** Оганнисян А. *Политика США в отношении палестинского конфликта во время президентства Джо Байдена* // "Научные труды" ИПЦАИ НАН РА. Гюмри. 2024. Т. 1(27). 42 - 49 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-42

**ՆԱԽԱԳԸ.** Նախագահ Բայդենի քաղաքական մոտեցումը պաղեստինա-իսրայելական հակամարտության նկատմամբ բնութագրվում է այս հարցում ԱՄՆ-ի նախագահական վարչակազմերի վարած քաղաքականության շարունակական բնույթով, որին ավելանում է սեփական մոտեցումների համադրությունը: Շարունակականության եական բնութագրերից են Իսրայելի անվտանգության և ինքնապաշտպանության իրավունքի նկատմամբ ԱՄՆ-ի պարտավորությունների վերահաստատումը, ինչպես նաև աջակցությունը Պաղեստինում երկու պետությունների ստեղծման ձևաչափին՝ որպես խնդրի լուծման միջոցի: Սեփական մոտեցումները նախնառաջ Թրամփի վարչակազմի իսրայելամետ օրակարգի, մասնավորապես՝ Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք և Գոլանի բարձունքների նկատմամբ Իսրայելի ինքնիշխանության ճանաչումը<sup>[12]</sup> մասամբ վերանայելն էր: Բայդենը որդեգրեց ավելի հավասարակշռված դիրքորոշում՝ ձրգտելով վերականգնել պաղեստինյան ղեկավարության հետ դիվանագիտական հարաբերությունները:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Բայդենի քաղաքականության հիմնական միտումները Պաղեստինյան հակամարտության հանդեպ:

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.** Պաղեստինա-իսրայելական հակամարտության նկատմամբ Բայդենի քաղաքականության մոտեցումը մի քանի հետևանքների և մարտահրավերների բախվեց: Թեև նրա նախաձեռնություններն ազդարարեցին անցում դեպի ավելի հավասարակշռված և կառուցողական ներգրավվածություն երկու կողմերի հետ, սակայն զգալի խոչընդոտներ են մնում հակամարտության կայուն և արդարացի լուծման հասնելու ճանապարհին:

Բայդենի նախագահության սկզբում թվում էր, թե Մերձավոր Արևելքը մեծ մասամբ հետին պլան է գրավելու ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության օրակարգում: Սակայն

Երուսաղեմի շուրջ զարգացումները և Գազայի դեմ պատերազմը ստիպեցին վերանայել օրակարգը և հստակեցնել հակամարտության նկատմամբ վարչակազմի մոտեցման տարրերը: Հակամարտության վերաբերյալ ԱՄՆ-ի քաղաքականությունը երկար ժամանակ եղել է երկկողմանի ներդաշնակ լուծումների հասնելու փորձ[6, p.25]: Բայդենի վարչակազմի քաղաքականությունը հիմնականում համընկնում է նախկին վարչակազմերի քաղաքականության հետ՝ մի քանի նկատելի տարբերություններով [10]:

Վարչակազմի պաշտոնավարման սկզբում Իրանի միջուկային գործարքը և Եմենի դեմ պատերազմը Մերձավոր Արևելքում առաջնահերթ խնդիրներն էին, իսկ Պաղեստինյան հակամարտությունը ստորադասված էր դրանց: Դա ինչ-որ տեղ զարմանալի էր, քանի որ նախագահ Օբաման իր երդմնակալությունից հետո՝ 48 ժամվա ընթացքում, նշանակեց Ջորջ Միթչելին՝ որպես իր հատուկ բանագնաց՝ ազդարարելով հակամարտությանը վաղաժամ առաջնահերթություն տալու իր մտադրության մասին: Նրանից առաջ նախագահ Քլինթոնը ներկայացրել էր մշտական կարգավիճակի համաձայնագրի հասնելու չափանիշներ՝ հակամարտությունը լուծելու համար[9]: Նախագահ Թրամֆը, որն առաջարկել էր «դարի գործարքը», ԱՄՆ-ի դեսպանատունը տեղափոխեց Երուսաղեմ. փոխեց ԱՄՆ-ի նախկին դիրքորոշումը Արևմտյան ափի իսրայելական բնակավայրերի և Գոլանի բարձունքների նկատմամբ, ներկայացրեց հակամարտության կարգավորման մանրամասն ծրագիր և զգալի քաղաքական կապիտալ ներդրեց տարածաշրջանի և նրա սահմաններից դուրս գտնվող երկրների հետ Իսրայելի հարաբերությունների բարելավման համար [1, էջեր 17-19]: Թեև Թրամֆի պլանը ի վերջո մատնանշեց երկու պետությունների ստեղծման շրջանակը, այն շատ հեռու էր միջազգային հանրության կողմից երկար ժամանակ ընդունված հայեցակարգից[5]: Ի հակադրություն Թրամֆի՝ ձեռնպահ մնալով մանրամասներ առաջարկելուց, Բայդենի վարչակազմը նախապատվությունը տվեց երկու պետությունների ավելի ավանդական ըմբռնմանը:

Միաժամանակ, Բայդենի վարչակազմը խուսափում էր մանրամասն ձևակերպումներից՝ նշելով, որ երկու պետությունների ստեղծումը հակամարտությունը լուծելու միակ ճանապարհն է: Վարչակազմը չմանրամասնեց այնպիսի հիմնական խնդիրներ, ինչպիսիք են Երուսաղեմի կարգավիճակի հարցը, վերջնական սահմանները, փախստականները և անվտանգությունը: Եղան որոշակի ուղերձներ, որ Երուսաղեմի հարցը դեռ «սեղանի վրա» է: Եղան նաև նախազգուշացումներ Իսրայելին, որ նման քայլերը, ինչպիսիք են Արևելյան Երուսաղեմից պաղեստինյան ընտանիքներին վտարելը և այլն, կարող են «ավելի խաթարել երկու պետությունների ստեղծման դժվարին հեռանկարը» և «նոր լարվածություն, հակամարտություն և պատերազմ առաջացնել» [8]:

Բայդենի վարչակազմը ձգտում էր ակտիվորեն համագործակցել պաղեստինցիների հետ կարգավորման ուղղությամբ առաջընթացը գրանցելու համար, վերականգնել հարաբերությունները Պաղեստինի ղեկավարության հետ: Թրամֆի վարչակազմը փակել էր Երուսաղեմում ԱՄՆ-ի հյուպատոսությունը և դադարեցրել էր Պաղեստինի սրամադրվող գրեթե ողջ օգնությունը: Վերադառնալով 1994-ին Պաղեստինի ինքնավարության ստեղծմամբ սկսված ԱՄՆ-Պաղեստին հարաբերությունների դարաշրջանին [11, c. 15]՝ Բայդենի վարչակազմը մասամբ վերսկսեց օգնությունը, և տարածաշրջան

կատարած իր այցի ընթացքում Բլինկենը խնդրեց Իսրայելին թույլ տալ ԱՄՆ-ին՝ վերաբացել հյուպատոսությունը:

Բայդենի վարչակազմը փորձեց ճնշում գործադրել Իսրայելի վրա Գազայի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Սակայն մոտեցումն ավելի քիչ արդյունավետ էր, քան 2012 և 2014 թթ. ԱՄՆ-ի ներգրավվածությունը, երբ Օբաման պետքարտուղարներ Քլինթոնին և Քերիին ուղարկեց տարածաշրջան՝ փորձելով հրադադար հաստատել [4, p. 384]:

Բայդենի վարչակազմը իսրայելցիներին և պաղեստինցիներին դիտարկում էր որպես հավասար իրավունքներ և շահեր ունեցող կողմեր: Բայդենը և նրա վարչակազմի անդամները բազմիցս ասել են, թե ԱՄՆ-ը կարծում է, թե պաղեստինցիներն ու իսրայելցիները «արժանի են անվտանգության, ազատության, հնարավորությունների և արժանապատվության հավասար միջոցների»: Այս հավասարությունը շեղում էր նախկին վարչակազմի մոտեցումից, որը բազմաթիվ հարցեր, որոնք միջազգային հանրության կողմից ճանաչվել են որպես պաղեստինյան իրավունքներ, ներկայացնում էր որպես միայն ձգտումներ: Բայդենի վարչակազմը դեմ էր միակողմանի գործողություններին, որոնք խաթարում էին երկու պետությունների ստեղծման հեռանկարը: Բլինկենի կարծիքով՝ ԱՄՆ-ը դեմ է կողմերից որևէ մեկի ցանկացած քայլին, որը «կա՛մ բռնություն է հրահրում, կա՛մ ... ի վերջո խաթարում է երկու պետությունների ստեղծմանը վերադառնալու հեռանկարը»: Նման քայլերի շարքում նա թվարկեց հրեական բնակավայրերի աճը, ահաբեկիչներին վճարելը [3, p.121]: Այս մոտեցումը էականորեն տարբերվում էր Թրամփի վարչակազմի տեսակետից, որի ծրագրով ոչ մի բնակավայր չէր ապամոնտաժվելու, և Իսրայելին թույլ կտրվեր տարածել իր ինքնիշխանությունը հրեական բոլոր բնակավայրերի վրա: Բայդենը, ըստ տեղեկությունների, բացարձակապես մերժել էր Իսրայելի կողմից Արևմտյան ափի տարածքը միացնելու ապագա պլաններին աջակցությանը: Թրամփի ծրագրի համաձայն՝ Իսրայելին թույլատրվում էր միացնել Արևմտյան ափի 30 %-ը՝ ներառելով բնակավայրերը և Հորդանանի հովիտը [7, p.30]: Բայդենի վարչակազմը հաստատակամ էր Իսրայելի անվտանգությունը պաշտպանելու անհրաժեշտության հարցում, բայց լռել է այդ հարցում Հորդանանի հովտի դերի մասին:

Ինդիքն այն էր, որ Բայդենի վարչակազմը չէր հավատում, որ այժմ հնարավոր են իսրայելա-պաղեստինյան բանակցություններ: Բլինկենը կոնֆլիկտի վերաբերյալ վարչակազմի հաջորդ քայլերը բաժանել էր երեք հստակ հաջորդական փուլերի, որոնք կդառնային կողմերին բանակցային սեղան վերադարձնելու ցանկացած ջանքերի նախադրյալ:

ա. Կենտրոնանալ Գազայի հումանիտար և հրատապ վերականգնման կարիքների վրա, բ. անդրադառնալ Իսրայելի և Պաղեստինի գործողություններին, որոնք կնվազեցնեն լարվածությունը և նվազագույնի կհասցնեն կամ կկանխեն բռնության վերսկսումը, գ. ժամանակի ընթացքում իրականացնել քայլեր՝ մարդկանց կյանքը բարելավելու և արժանապատվության և հույսի զգացում ավելացնելու համար:

Սա ավելի աստիճանական մոտեցում էր, քան նախորդ երկու վարչակազմերինը:

Բայդենի վարչակազմը ձգտում էր համագործակցել այլ շահագրգիռ կողմերի հետ: Չնայած մերձավորարևելյան քառյակի (ԱՄՆ, Ռուսաստան, ԵՄ և ՄԱԿ) արդյունավետությանը վերաբերող հարցերին, այս բազմակողմ կառույցը, որն առաջին անգամ գումարվել էր Ջորջ Բուշ կրտսերի վարչակազմի օրոք, վերսկսեց հանդիպումը [13, c. 50]:

Բայդենի վարչակազմն աջակցում էր նաև Իսրայելի և արաբական երկրների միջև հարաբերությունների կարգավորմանը՝ հայտարարելով, որ աջակցում է Թրամփի վարչակազմի օրոք ստորագրված կարգավորման համաձայնագրերին, որոնք կարող են նպաստել խաղաղության հասնելուն: Տարածաշրջանային համաձայնագրերի հետամուտ լինելը եղել է այս հակամարտության վերաբերյալ ԱՄՆ դիվանագիտության բաղադրիչը, որը սկիզբ էր առել նախագահ Ջորջ Բուշի օրոք՝ Մադրիդյան գործընթացից [2, էջ 29], իսկ 2016 թ.-ից առաջ շարունակվել էր պետքարտուղար Քերիի ջանքերով:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Այսպիսով, կարելի է եզրակացնել որ նախագահ Ջո Բայդենի քաղաքական մոտեցումը պաղեստինա-իսրայելական հակամարտության նկատմամբ ներկայացնում է որոշակի շեղում նախորդ վարչակազմի միակողմանիությունից և իսրայելամետ կողմնակալությունից՝ նախապատվությունը տալով լայն դիվանագիտությանը, բազմակողմանիությանը և երկու պետությունների ստեղծման հանձնառությանը: Թեև Բայդենի նախաձեռնություններն ազդարարում են անցում դեպի ավելի հավասարակշռված և կառուցողական ներգրավվածություն երկու կողմերի հետ, զգալի մարտահրավերներ դեռ մնում են հակամարտության կայուն և արդարացի լուծման հասնելու ճանապարհին: Բայդենի մոտեցման հաջողությունը կախված կլինեք տարբեր գործոններից, այդ թվում՝ Իսրայելի և Պաղեստինի առաջնորդների՝ բարեխղճորեն բանակցելու պատրաստակամությունից, տարածաշրջանային դերակատարների դերից՝ աջակցելու խաղաղության ջանքերին և ավելի լայն աշխարհաքաղաքական դինամիկայից, որը ձևավորում է Մերձավոր Արևելքի քաղաքական օրակարգը:

#### Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Հովհաննիսյան Ա.** *Իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումը Թրամփի նախագահության շրջանում // «ՇՊՀ գիտական տեղեկագիր»:* 2022: Պրակ Բ: 31-39 էջեր:
2. **Հովհաննիսյան Ա.** *ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ:* ՀՀ ԳԱԱ հրատ.: Երևան: 2001: 115 էջ:
3. **Amjad Al. O'Connell Enda, Parkin G.,** "Palestine Water: between Challenges and Realities," in Elizabeth G. Matthews (ed.), *The Israel-Palestine Conflict* (London: Routledge, 2011): 114-138 pp..
4. **Cohen-Almagor R.** "Two-State Solution – The Way Forward", *Annual Review of Law and Ethics*, Vol. 20 (2012): 381- 395; R. Cohen-Almagor, "Breaking the Israeli-Palestinian Deadlock – Two State Solution", *Global Education Magazine: International Day of Peace* (September 21, 2014): 58-63 and "Breaking the Israeli-Palestinian Deadlock", *Retos International*, Vol. 5, No. 11 (2014).
5. Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, September 13, 1993, [www.jewishvirtuallibrary.org/jsource/Peace/dop.html](http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Peace/dop.html); Israeli-Palestinian Interim Agreement on the West Bank and the Gaza Strip, September 28, 1995, available at [http: www. Jewishvir tuallibrary. org/jsource /Peace/interim.html](http://www.Jewishvir tuallibrary. org/jsource /Peace/interim.html), (դիտվել է 31.01.2023):
6. **Giora E.** "Regional Alternatives to the Idea of Two States for Two People", BASA Center Publications (Ramat Gan: Bar Ilan University, 2010, Hebrew) 39 p.; Morris B., "One State, Two States" (New Haven: Yale University Press, 2009, 256p.



7. **Lynch M.** *Jordan's Identity and Interests, Identity and Foreign Policy in the Middle East*, ed. By Shibley Telbami and Michael Barnett, Cornell University Press, Sage house, 2002. 26-58 pp.
8. *Remarks by the President at Cairo University, 6-04-09 The White House.* <https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/remarks-president-cairo-university-6-04-09> (21.10.2022)
9. See The Clinton Parameters – *Clinton Proposal on Israeli-Palestinian Peace*, <https://www.usip.org/sites/default/files/Peace%20Puzzle/10Clinton%20Parameters.pdf>, 03.10.2017, (ղիտվել է 21.12.2023):
10. **Youssef Hesham.** *Biden's Approach to the Israeli-Palestinian Conflict*, [www.usip.org/publications/2021/06/10-things-know-bidens-approach-israeli-palestinian-conflict](http://www.usip.org/publications/2021/06/10-things-know-bidens-approach-israeli-palestinian-conflict) (ղիտվել է 31.01.2024):
11. **Бравин С.** *США и Израиль. К вопросу о ближневосточном урегулировании.* // Вопросы истории.– 1997. № 2.27.
12. **Царегородцева Г.** *Признание Голанских высот как шаг Д. Трампа в историю ближневосточного конфликта* // Россия и Америка в XXI веке. 2020. Выпуск № 1 <https://rusus.jes.su/s207054760009047-8-1/> (дата обращения: 17.11.2023).
13. **Татуров И.** *Роль США в урегулировании арабо-израильского конфликта* // Вестник Всеобщей истории. Тюмень: ТГУ. 2006. № 1. 45-56 сс.

### References

1. **Hovhannisyán A.** Position of The USA Government on the Israeli-Palestinian Conflict During Trump 's Presidency [*Israelapaxestinyan hakamartutyán handep AMN-i karavarutyán dirqoroshumy Trampi naxaghutyán shrjanum*]. Shirak State University, Scientific proceedings, Gyumri 2022,31-38pp. (In Armenian)
2. **Hovhannisyán A.** US policy towards the Israeli-Palestinian conflict [*AMN-i qaxaqakanutyuny israyelapaxestinyan hakamartutyán handep*]. National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, 2001, 115 p.(In Armenian)
3. **Bravin S.** USA and Israel. To the Question of the Middle East Settlement [*SSHA i Izrail. K voprosy o blijnevostochnom uregulirovanii*] // Questions of history. 1997. - No. 2.13-27pp. (In Russian)
4. **Tsaregorodtseva G.** Recognition of the Golan Heights as a step by D. Trump in the history of the Middle East conflict [*Priznanie Golanskih visot kak shag Trampa v istoriyu blijnevostochnogo konflikta*] // Russia and America in the 21st century. 2020. Issue No. 1. (In Russian) <https://rusus.jes.su/s207054760009047-8-1/> (дата обращения: 17.11.2023).
5. **Taturov I.** The role of the United States in the settlement of the Arab-Israeli conflict [*Rol SSHA v uregulirovanii arabo-izraïlskogo konflikta*] // Bulletin of General History. Tyumen: TGU. 2006. No. 1. 45-56pp. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **21. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **26. 03. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

### Տեղեկություններ հեղինակի մասին

**Արտակ Համլետի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**՝ պատմ. գիտ. թեկնածու,  
ԾՊՀ պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե: [artakh76@mail.ru](mailto:artakh76@mail.ru) <https://orcid.org/0000-0002-5078-3862>

**Artak Hamlet HOVHANNISYAN:** PhD in History,  
Associate professor at the Chair of History and Laws of SUSH, Gyumri, RA,  
e-mail: [artakh76@mail.ru](mailto:artakh76@mail.ru) <https://orcid.org/0000-0002-5078-3862>

**Артак Гамлетович ОГАННИСЯН:** канд. исторических наук,  
доцент кафедры истории и права ШГУ им. М.Налбандяна, Гюмри, РА  
эл. адрес: [artakh76@mail.ru](mailto:artakh76@mail.ru) <https://orcid.org/0000-0002-5078-3862>

ԿԱՊԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ 2018 թ.  
ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Աստղիկ Գ. Միմոնյան*  
*Տիգրան Ս. Չաքյան*

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և  
պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Հոդվածը նվիրված է 2018 թ. հնավայրի 6-րդ տեղամասի դամբարաններում պեղված մետաղական գույքին, որը մաքրման, ամրակայման և վերականգնման նպատակով հանձնվել էր «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի վերականգնման լաբորատորիային: Մեթոդներ և նյութեր. Առարկաների մաքրման, ամրակայման համար կիրառվել է մեխանիկական մաքրման մեթոդը, որն ի տարբերություն էլեկտրաքիմիական, քիմիական և այլ մեթոդների, թույլ է տալիս պահպանել առարկայի նախնական տեսքը մաքրման աշխատանքների ժամանակ: Վերլուծություն. Մոտ 100 միավոր առարկա (պատրաստված բրոնզից և ծարիրից) անցել են վերականգնման տարբեր փուլերով (կախված առարկայի վրա տարվող աշխատանքների տիպից, ծավալից, պահպանվածության աստիճանից), կատարվել են առարկաների մաքրում, ախտահանում: Բեկորային առարկաները ամրացվել են հատուկ նյութերի միջոցով, իսկ վերականգնման աշխատանքների ավարտական փուլում կատարվել է առարկաների ամրակայում և լուսանկարահանում: Արդյունքներ. Կատարված համալիր աշխատանքների արդյունքում առարկաները մաքրվել են, ամրակայվել, վերականգնվել և պահպանման համար անհրաժեշտ պայմանների ցուցումով և վերականգնման վկայագրով վերադարձվել պեղող հնագետին: Հեղինակների ներդրումը. Առարկաների մաքրման և վերականգնման աշխատանքներն

իրականացվել են Տիգրան Զաքյանի և Ներսես Մամիկոնյանի<sup>1</sup> կողմից: Առարկաների լուսանկարումը իրականացվել է Տիգրան Զաքյանի կողմից: Մետաղի վերականգնման մեթոդների ուսումնասիրությունը և շարադրումն իրականացվել են Աստղիկ Սիմոնյանի կողմից: Հոդվածի տեքստի մշակումն ու շարադրումն իրականացվել են համահեղինակների (նաև Ներսես Մամիկոնյանի) կողմից:

**Բանալի բառեր՝** Կապան, հնագիտություն, հնագիտական մետաղ, բրոնզ, կոռոզիա, ջերմախոնավային ռեժիմ, վերականգնում, ամրակայում, պահպանություն:

**Ինչպես հղել՝** Սիմոնյան Ա., Զաքյան Տ. Կապանի Շահումյանի դամբարանադաշտում 2018թ. հայտնաբերված մետաղական նյութը և դրա վերականգնման առանձնահատկությունները. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024:

Հ. 1 (27): 50-62 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-50

## THE METAL ARTEFACTS AND RESTORATION FEATURES FROM SHAHUMYAN NECROPOLIS OF KAPAN IN 2018

*Astghik G. Simonyan*

*Tigran S. Zakyan*

“Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations”

SNCO, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** The article is dedicated to the excavated metal artefacts from VI section of the site in 2018, which was over to the restoration laboratory specialists of the “Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations” SNCO for cleaning, conservation and restoration. **Methods and materials:** The mechanical cleaning method was used for cleaning and conservation of the objects, which, unlike electrochemical, chemical and other methods, allows us to preserve the initial appearance of the artefact during the cleaning process. **Analysis:** About 100 objects (made of bronze and antimony) passed through various stages of restoration (depending on the type of the work carried out on the artefact, degree of preservation of artefact), objects were cleaned and disinfected. Fragmentary objects were fixed using special materials, and at the final stage of the restoration work, the objects were conserved and photographed. **Results:** As a result of the complex works, the artefacts were cleaned, conserved, restored and returned to the excavating archaeologist with the indication of the conditions necessary for preservation and the restoration certificate. **Authors contribution:** Tigran Zakyan and Nerses Mamikonyan carried out cleaning and restoration works. The artefacts were photographed by Tigran Zakyan. The study and formulation of metal restoration methods were carried out by Astghik Simonyan. The text of the article was edited by the co-authors (also by Nerses Mamikonyan).

**Key words:** *Kapan, archaeology, archaeological metal, bronze, corrosion, thermo-humidity mode, restoration, conservation, protection.*

**Citation:** Simonyan A., Zakyan T. *The Metal Artefacts and it's Restoration Features from Shahumyan Necropolis of Kapan in 2018.* // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 50-62 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-50

<sup>1</sup> 2016-2021 թթ. աշխատել է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ում, որպես վերականգնող մասնագետ:

МЕТАЛЛИЧЕСКИЕ АРТЕФАКТЫ ОБНАРУЖЕННЫЕ В 2018 Г. В  
ШАУМЯНСКОМ НЕКРОПОЛЕ ГОРОДА КАПАНА  
И ОСОБЕННОСТИ ИХ РЕСТАВРАЦИИ

*Աստիկ Գ. Սիմոնյան*

*Տիգրան Ս. Չաքյան*

“Служба по охране исторической среды и историко-культурных  
музеев-заповедников” ГНО, Ереван, РА

**Аннотация**

**Введение:** Статья посвящена металлическому материалу раскопанному в погребениях 6-го участка в 2018 году, которое было передано сотрудникам реставрационной лаборатории “Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников” ГНО для чистки, консервации и реставрации. **Методы и материалы:** Для чистки и консервации предметов был использован метод механической чистки, который в отличие от электрохимических, химических и других методов позволяет сохранить первоначальный внешний вид объекта во время чистки. **Анализ:** Около 100 предметов (из бронзы и сурьмы) прошли разные стадии реставрации (в зависимости от вида проведенных на предмете работ, от степени сохранности), предметы были очищены и продезинфицированы. Фрагментарные предметы фиксировались с помощью специальных материалов, прошли этап консервации и фотографирования. **Результаты:** В результате комплексных работ предметы прошли этапы чистки, консервации, реставрации. Артефакты возвращаются археологу с указанием условий необходимых для хранения и со свидетельством о реставрации. **Вклад авторов:** Тигран Чакян и Нерсес Мамиконян провели работы по чистке и реставрации. Артефакты фотографировал Тигран Чакян. Изучением и формулировкой методов реставрации металлов занималась Астхик Симонян. Текст статьи редактировали соавторы (в том числе Нерсес Мамиконян).

**Ключевые слова:** Капан, археология, археологический металл, бронза, коррозия, термовлажный режим, реставрация, консервация, хранение.

**Как цитировать:** Симонян А., Чакян Т. Металлические артефакты обнаруженные в 2018г. в Шаумянском некрополе города Капана и особенности их реставрации. “Научные труды”// ИСАИ НАН РА. Гюмри, 2024. Т.1 (27). 50-62 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-50

**ՆԱԽԱԲԱՆ.** Հայաստանյան իրականության մեջ բացակայում է հնագիտական մետաղի և, առհասարակ, հնագիտական իրերի վերականգնմանը/ամրակայմանը վերաբերող գրականությունը: Ուստի հոդվածի շարադրման ժամանակ ուսումնասիրվել է հիմնականում արտասահմանյան գրականությունը: Աշխատանքի նպատակն է ներկայացնել Կապանի Շահումյանի 2018թ. իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերված հնագիտական մետաղյա իրերի վերականգնման մեթոդները, վերականգնման ամբողջ ընթացքը՝ սկսած լաբորատորիա հանձնելուց մինչև առարկայի վերադարձը հնագետին: Հնագիտական առարկաների վերականգնումը Հայաստանում համեմատաբար նոր զարգացող գիտություն է, ուստի կարիք կա մասնագետների կողմից վեր հանել վերականգնման բնագավառում առկա առանձնահատկությունները, ներկայացնել Հա-

յաստանյան հնագիտական հուշարձաններից հայտնաբերված առարկաներին հարմար վերականգնման մեթոդներն ու մոտեցումները:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբերը 2012 թ. (Տ. Ալեքսանյան, Դ.Միրիջանյան և Ա.Գնունի, Գ. Խաչատրյան, Ա. Թադևոսյան) և 2018 թ. (Ա. Գնունի, Լ. Մկրտչյան, Ա. Դավթյան, Հ. Սիմոնյան) սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին հետազոտություններ են իրականացրել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շահումյան բանավանի տարածքում:

Սյունիքի մարզի նախկին Շահումյան բանավանը գտնվում է Կապան մարզկենտրոնից 5 կմ հյուսիս-արևելք, Ողջի գետի ձախ ափին, բլուրների վրա:

Ուսումնասիրությունների ընթացքում մասնակի հետազոտվել է 6 տեղամաս: Պեղումներով բացահայտվել է, որ ուսումնասիրվող տարածքում առկա են բազմաշերտ բնակավայր և դամբարանադաշտ: Դամբարանները հավաստված են 1-ին, 2-րդ, 4-6-րդ տեղամասերի տարածքներում, սակայն, եթե 1-ին և 2-րդ տեղամասերում դրանք մեծապես խաթարված էին միջնադարում արված նոր կառուցապատման պատճառով, ապա 4-6-րդ տեղամասերում դամբարաններն անխաթար էին:

Նշված տարածքում պեղված տասը դամբարաններից մետաղական գույք է փաստվել միայն յոթում: Բրոնզից և ծարիրից պատրաստված մոտ 100 միավոր առարկաները ներկայացված են դաշույնի, ուլունքների, տարբեր տրամաչափի ապարանջանների, օղերի (ականջօղեր և մատանիներ), կոճակների և կախիկների տեսքով:

Դամբարանադաշտում ամփոփված խեցեղենն ու մետաղն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Հայաստանի, և մասնավորապես Սյունիքի համաժամանակյա երկաթի դարյան հուշարձաններում: Նյութը թվագրվում է մ.թ.ա. VIII-VI դդ. [1, էջ 20]:

Հնագիտական առարկաները հնավայրում հայտնաբերվելուց, փաստագրվելուց (անհրաժեշտության դեպքում տեղում կատարվում է ամրակայում) հետո տեղափոխվում են վերականգնման լաբորատորիա, որտեղ առարկան անցնում է վերականգնման անհրաժեշտ փուլերը: Սկզբնական փուլում առարկան ենթարկվում է տեսողական գննության, որի ընթացքում կատարվում է առարկայի վիճակի փաստագրում, գնահատում, ինչն արձանագրվում է տվյալ առարկայի վերականգնման վկայագրում: Հաջորդ փուլում առարկաները մանրամասն լուսանկարվում են, որից հետո սկսվում են առարկայի վերականգնման բուն աշխատանքները:

Արդեն իսկ մաքրված և/կամ վերականգնված ու ամրակայված առարկան լուսանկարվում, չափագրվում և կշռվում է. զուգահեռաբար այս ամբողջ տեղեկատվությունը գրանցվում է տվյալ առարկայի վերականգնման վկայագրի մեջ: Լաբորատոր աշխատանքների ավարտից հետո առարկան համապատասխան ընթացակարգով հանձնվում է հնագետին: Առարկայի ուսումնասիրության ավարտից հետո հնագետը այն համապատասխան ընթացակարգով հանձնում է թանգարան:

**Հնագիտական մետաղե առարկաների մաքրման հիմնական մեթոդները:**

Գոյություն ունեն հնագիտական մետաղը կոռոզիայից մաքրելու մի շարք մեթոդներ: Դրանցից են էլեկտրոլիտային, էլեկտրաքիմիական, քիմիական և մեխանիկական մաքրումը:

Էլեկտրոլիտային մաքրման կարելի է ենթարկել ցանկացած մետաղ, պայմանով, որ առարկայի մետաղական միջուկը պետք է լինի լավ պահպանված: Այս մեթոդը թույլ է տալիս մաքրել մետաղական արտեֆակտը կոռոզիայից՝ դուրս բերելով վերջինս նույնիսկ ճեղքերից:

Էլեկտրոլիտային մաքրումը տեղի է ունենում հետևյալ կերպ: Առարկան հանդիսանում է կատոդ, որին միացվում է էլեկտրական հոսանքի աղբյուրի բացասական դաշտը: Որպես անոդ ծառայում է մետաղական թիթեղը, որը ցանկալի է լինի չժանգոտվող մետաղից: Խորհուրդ չի տրվում օգտագործել ածխային անոդ, քանզի այդ դեպքում առարկայի վրա կհայտնվի դժվար մաքրվող սև թաղանթ: Այնուհետև կատոդն (առարկան) ու անոդը իջեցնում են 5%-ոց նատրիումի հիդրօքսիդի ( $\text{NaOH}$ ) ջրային լուծույթի մեջ: Էլեկտրական շղթայի միացումից հետո կատոդի վրա առանձնանում է ջրածին, իսկ անոդի վրա՝ թթվածին: Կատոդի վրա առաջանում են նպաստավոր պայմաններ վերականգնման գործընթացների համար: Արտանետվող ջրածինը մեխանիկական մեծ ազդեցություն է թողնում, որի արդյունքում կոռոզացված շերտը քայքայվում և անջատվում է բուն մետաղական մակերեսից [4, էջեր 30-31: 3, էջ 60]:

Տարբեր առարկաների համար վերոնշյալ մեթոդով մշակման տևողությունը տարբեր է: Գործընթացը պիտի շարունակել այնքան, քանի դեռ առարկան վերջնականորեն չի մաքրվել կոռոզացված շերտից: Մակայն պետք է հիշել, որ առարկայի մշակման այս տարբերակը մի դեպքում կարող է հաջողությամբ ավարտվել, իսկ մյուս դեպքում՝ վնասել առարկան: Կախված առարկայի քիմիական մաքրությունից, պահպանման միջավայրից, կոռոզիայի բաղադրությունից՝ էլեկտրոլիտային մաքրման մեթոդի արդյունքները կարող են տարբերվել:

Էլեկտրաքիմիական մաքրումը ընթանում է առանց էլեկտրական հոսանքի: Որպես անոդ օգտագործվում է ավելի էլեկտրադրական մետաղ (համեմատած արտեֆակտի մետաղի նյութին)՝ այլումին կամ ցինկ: Մաքրվող առարկան դնում են ապակյա անոթի մեջ, ծածկում են այլումինով կամ ցինկով, ապա ծածկում էլեկտրոլիտով (10%-ոց ծծմբական թթվի ( $\text{H}_2\text{SO}_4$ ) լուծույթ կամ 10%-ոց նատրիումի հիդրօքսիդի լուծույթով ( $\text{NaOH}$ )՝ բացված ջրով): Արդյունքում բրոնզի կանաչավուն կոռոզիան փոխարինվում է շագանակագույն նստվածքով, որը հեշտությամբ մաքրվում է խոզանակով [3, էջ 60]:

Ըստ մետաղի պահպանվածության աստիճանի՝ կիրառվում են քիմիական մաքրման տարբեր տեսակներ: Օրինակ՝ մետաղական առարկան իջեցնում են կալիումի ( $\text{KOH}$ ) կամ նատրիումի ( $\text{NaOH}$ ) հիդրօքսիդի 10%-ոց ջրային լուծույթի մեջ, ապա տաքացնում մինչև  $70^\circ\text{C}$ -ի, այնուհետև առարկան լվանում թորած ջրով: Այս գործողություններից հետո առարկան իջեցնում են տրիլոն Բ-ի ( $\text{C}_{10}\text{H}_{14}\text{N}_2\text{Na}_2\text{O}_8$ ) 10%-ոց ջրային լուծույթի մեջ, որը սկզբում դառնում է երկնագույն, ապա՝ կապույտ: Այնուհետև առարկան լվանում են թորած ջրով, որից հետո կրկնում են տրիլոն Բ-ի լուծույթով մաքրումն այնքան, մինչև հեղուկը դադարի կապտել [3, էջ 59-60]:

Մեխանիկական մեթոդի դեպքում առարկաները որևէ կերպ չեն ենթարկվում քիմիական, էլեկտրական մշակման: Այս պարագայում առարկաների վրա առաջացած գոյացությունները (կոռոզիա, հողի կարծր շերտ, կրային նստվածքներ) հեռացվում են

ձեռքի գործիքների և բոր մեքենայի միջոցով: Ձեռքի գործիքներ են հանդիսանում ակնաբուժական, ստոմատոլոգիական և վիրաբուժական տարատեսակ գործիքներ, ինչպես նաև՝ առարկայի վերականգնման աշխատանքի առանձնահատկություններով պայմանավորված այլ, այդ թվում՝ ինքնաշեն գործիքներ: Բոր մեքենայի փափուկ մետաղական և չոր ռետինե գլխիկները մեխանիկական մաքրման հիմնական գործիքներից են:

Մեխանիկական մեթոդը, ի տարբերություն մնացածների, առավել անվտանգ է առարկաների նախնական տեսքը պահպանելու առումով: Մասնավորապես, եթե էլեկտրոլիտային, քիմիական կամ էլեկտրաքիմիական մեթոդների դեպքում կոռոզիան հեռացնելիս առարկան կարող է ստանալ մետաղի կտորի տձև տեսք, ապա մեխանիկական մեթոդի դեպքում առարկայի վրա կարող են մնալ կոռոզիայի հետքեր, բայց այն կպահպանի իր նախնական կամ դրան մոտ տեսքը: Այս դեպքում կարևոր է առարկայի ախտահանման, չորացման և ամրակայման գործընթացը, ինչը թերի կատարելու դեպքում չի կանգնեցի կոռոզիոն գործընթացները, որոնք էլ կշարունակեն քայքայել մետաղը: Մեխանիկական մաքրման մեթոդից բացի՝ նշված մյուս մեթոդները նպատակահարմար է կիրառել այն առարկաների դեպքում, որոնք լավ են պահպանել իրենց մետաղական միջուկը, ինչը ստուգելու համար անհրաժեշտ են լրացուցիչ, մասնավորապես՝ ռենտգեն սարքավորումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մեր լաբորատորիայում հնագիտական մետաղը մաքրվում է միայն մեխանիկական մեթոդով:

**Կապանի Շահումյան քանավանի 2018 թ.-ին պեղված դամբարանում հայտնաբերված հնագիտական մետաղի վերականգնման ընթացքը**

Բրոնզից պատրաստված առարկաները ձեռքի գործիքներով մաքրելուց հետո մշակվել են բոր մեքենայի փափուկ մետաղական գլխիկով, այնուհետև ախտահանվել են էթիլ սպիրտով (96%-ոց բժշկական սպիրտ) և չորացվել ինֆրակարմիր լամպի լույսի ճառագայթների ներքո: Ըստ չափերի ու ծավալի՝ առարկաները ինֆրակարմիր լույսի տակ պահվել են 2-ից մինչև 6 ժամ, որից անմիջապես հետո ամրակայվել են Acryloid B72 (Paraloid B72) տեսակի նյութի 3%-ոց լուծույթով, որն անհրաժեշտության դեպքում ացետոնի օգնությամբ կարելի է մաքրել առարկայի մակերեսից: Վերջինիս կիրառումն ընդունված է միջազգային պրակտիկայում ևս [2, էջ 356]: Կոտրված առարկաների բեկորները միմյանց են ամրացվել մետաղի համար նախատեսված հատուկ սոսնձով:

Ծարիրից պատրաստված 36 միավոր ոսպածև ուլունքահատիկները լվացվել են բժշկական սպիրտով, որից հետո մանրադիտակով երևացող կարծր գոյացությունները մաքրվել են վիրաբուժական դանակի (սկալպելի) օգնությամբ [աղ. 4, № 4]: Այս մեթոդով են մաքրվել նաև մետաղական գտածոների հետ լաբորատորիա բերված սերդոլիկից և մածուկից պատրաստված ուլունքահատիկները:

Պեղված յոթ դամբարաններից ընդհանուր առմամբ հայտնաբերվել են տասներեք միավոր բրոնզե ապարանջաններ, որոնք պատված էին կոռոզիայի, կարծրացած հողի ու կրային նստվածքների հաստ շերտերով [աղ. 1]: Առարկաները ամբողջական են, լավ են պահպանվել դրանց մետաղական միջուկն ու ազնվաթաղանթը:

Իրենց տրամաչափերով, հաստությամբ ու ձևով միմյանցից էականորեն տարբերվում են բրոնզե օղերը [աղ. 2]: Բրոնզե բարակ լարից պատրաստված օղերը խստագույնս ենթարկվել են կոռոզիայի քայքայիչ ազդեցությանը, և մեխանիկական մաքրման ընթացքում դրանցից երկուսի եզրերը կոտրվել են: Կոտրված հատվածները առանձին-առանձին մաքրելուց հետո ամրացվել են միմյանց և ամբողջացրել այդ առարկաները: Համեմատաբար հաստ բրոնզե լարից և թիթեղից պատրաստված օղերի մետաղական միջուկը, ինչպես նաև ազնվաթաղանթը պահպանվել են գրեթե ամբողջությամբ:

Բրոնզե կոճակներ բացվել են դամբարաններից միայն երկուսում [աղ. 3, № 1, 2]: № 4 դամբարանից հայտնաբերված երեք կոճակները ամբողջությամբ պատված էին կոռոզիայի հաստ շերտով, որոնց մետաղական միջուկը գրեթե չէր պահպանվել: Ուշագրավ է այս դամբարանի հնամարդաբանական նյութի ուսումնասիրման փուլում հնամարդաբան Հասմիկ Միմոնյանի կողմից կմախքի պարանոցային ողերի հատվածում գտնված բրոնզե կոճակը, որը, ի տարբերություն այս դամբարանից հայտնաբերված մյուս մետաղական առարկաների, իր մակերեսին ամբողջությամբ պահպանել է ազնվաթաղանթը [աղ. 3, № 2]: Մեկ այլ բրոնզե ամբողջական կոճակ՝ պատված կոռոզիայի հաստ շերտով [աղ. 3, № 1], հայտնաբերվել է № 6 դամբարանից:

№ 4 դամբարանից հայտնաբերվել է բրոնզե դաշույն, որի ամբողջ մակերեսը պատված էր թույլ արտահայտված կոռոզիայի շերտով, իսկ մի երեսը՝ նաև կարծրացած հողի շերտով [աղ. 4, № 1]:

№ 6 դամբարանից հայտնաբերվել են երկու գույգ բրոնզե գնդաձև ուլունքահատիկներ [աղ. 4, № 2, 3], որոնցից մի գույգը կոռոզիայի արդյունքում զոդվել էր [աղ. 4, № 2]: Վերջիններս մաքրման ընթացքում անջատվել են իրարից: Սրանցից գատ՝ հայտնաբերվել են նաև բրոնզե բարակ լարից պատրաստված զսպանակաձև երկու ուլունքահատիկներ [աղ. 4, № 5], իսկ մի զսպանակաձև ուլունքահատիկ էլ կոռոզիայի հետևանքով զոդվել էր բրոնզե թիթեղից պատրաստված պայտաձև առարկաներից մեկի բեկորին [աղ. 3, № 3], որը մաքրման ընթացքում առանձնացվել է, և ի վերջո բոլոր յոթ միավոր ուլունքահատիկներն էլ ամբողջությամբ մաքրվել և ամրակայվել են:

Բրոնզե բարակ թիթեղից պատրաստված պայտաձև առարկաները (հավանաբար կախիկներ) երեքն են [աղ. 3, № 3]: Վերջիններս հանդես են գալիս երեքական բեկորներով, և միայն մեկն է, որ ամբողջացել է: Սրանցից երկրորդը ամբողջացել է մասամբ, մասնավորապես, բացակայում է մի եզրը, իսկ վերջինի միջնամասից բացակայում է մի ամբողջ հատված: Այս առարկաների մետաղական միջուկը գրեթե չի պահպանվել, և դրանց մակերեսները ամբողջությամբ պատված են կոռոզիայի հաստ շերտով, որը հնարավորինս մաքրվել է և ամրակայվել:

№ 8 դամբարանից հայտնաբերված չորս միավոր ապարանջանները [աղ. 3, № 5], ըստ պեղող հնագետ Արտակ Գնունու բանավոր հաղորդման, հայտնաբերվել են բրոնզե բարակ լարից կցորդիչով միմյանց ամրացված վիճակում: Կցորդիչը հայտնաբերվել է 3 բեկորներով, որոնց մակերեսները պատված էին կոռոզիայի շերտով: Վերջիններս առանձին-առանձին մաքրելուց հետո ամրացվել են միմյանց և ամբողջացրել առարկան [աղ. 3, № 4]:



### Հնագիտական մետաղի պահպանությունը

Հնագիտական մետաղե առարկաները հետագա վնասներից զերծ պահելու առաջին նախապայմանը կայուն ջերմախոնավային ռեժիմի ապահովումն է դրանց պահպանման և/կամ ցուցադրման տարածքներում: Ջերմաստիճանի կտրուկ տատանումների հետևանքով առաջանում է կոռոզիոնային, ինչն էլ նպաստում է կոռոզիայի ակտիվացմանը: Մետաղների պահպանման համար լավագույն ջերմաստիճան համարվում է 14-16<sup>0</sup>-ը՝ ըստ Ցելսիուսի սանդղակի: Խոնավությունը համապատասխան տարածքներում չպետք է գերազանցի 50%-ը, իսկ 10%-ից ցածր լինելու դեպքում մետաղե առարկաները չափից ավելի չորացման են ենթարկվում, որն էլ հանգեցնում է դրանց փխրունությանը:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Կատարված համալիր աշխատանքների արդյունքների հիման վրա կարող ենք փաստել, որ Կապանի նախկին Շահումյան բանավանի տարածքում գտնվող դամբարանադաշտից հայտնաբերված հնագիտական մետաղը հիմնականում լավ է պահպանել իր մետաղական միջուկը, իսկ կոռոզիայի ազդեցությունը առարկաների վրա տեղային բնույթ է կրում:

Մետաղական միջուկի համեմատաբար լավ պահպանվածությունը հնարավորություն է տալիս կիրառելու նշված մեթոդներից յուրաքանչյուրը, սակայն ընտրված մեխանիկական մաքրման մեթոդը այս դեպքում ևս ցույց է տալիս իր արդյունավետությունը: Ընտրված մեթոդի կիրառումը մեզ հնարավորություն տվեց զերծ մնալու առարկայի մակերեսի ամբողջականության խաթարումից:

### Գրականություն

1. **Գնունի Ա., Մկրտչյան Լ.** *Կապանի Շահումյան տեղամասի դամբարանադաշտի պեղումները* // Սյունիքի պատմամշակութային ժառանգությունը, Միջազգային գիտաժողով՝ նվիրված Գլաձորի համալսարանի հիմնադրման 735- ամյակին: Երևան-Եղեգնաձոր: 2019: 17-20 էջեր:
2. **Patel A.** *Conservation of Archaeological Metal Artifacts -Emphasizing on Copper/Bronze, Heritage* // Journal of Multidisciplinary Studies in Archaeology 2. Department of Archaeology. 2014. 347-358 pp.
3. **Кимеева Т., Окунева И.** *Основы консервации и реставрации археологических и этнографических музейных предметов.* Кемерово: Изд.-во "КемГУКИ". 2009. 252 с.
4. **Шемаханская М.** *Реставрация металла (методические рекомендации).* Москва: Изд.-во "ВНИИР". 1989. 155 с.

Աղյուսակ 1

1



2



3



4



Աղյուսակ 2



Աղյուսակ 3




## Աղյուսակ 4

1



2



3



4



5



References

1. **Gnuni A., Mkrtchyan L.** Excavations of Kapan's Shahumyan site necropolis [*Kapani Shahowmyan teghamasi dambaranadashti pegoymnery*] //Historical and cultural heritage of Syunik, International conference dedicated to the 735<sup>th</sup> anniversary of the founding of Gladzor University. Yerevan-Yeghegnadzor. 2019. 17-20 pp.. (In Armenian)
2. **Patel A.** Conservation of Archaeological Metal Artifacts -Emphasizing on Copper/Bronze, Heritage //Journal of Multidisciplinary Studies in Archaeology 2. Department of Archaeology. 2014. 347-358 pp.
3. **Kimeeva T.** Basics of conservation and restoration of archaeological and ethnographic museum objects [*Osnovy konservacii i restavracii arheologicheskikh i jetnograficheskikh muzejnyh predmetov*]. Kemerovo. "KemSUCA" publ. 2009. 252 p. (In Russian)
4. **Shemakhanskaya M.** Metal restoration (methodological recommendations) [*Restavracija metalla*]. Moscow. "AURIR" publ. 1989. 155 p. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **26. 02. 2024**  
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **03. 03. 2024**  
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Աստղիկ Գագիկի ՄԻՄՈՆՅԱՆ՝** «ՊԱԹ և ՊՄ պահպանության ծառայության»  
ԹԱՎ բաժին–լսրոբաստորիայի վերականգնող մասնագետ, Երևան, ՀՀ,  
Էլ. huugե՝ ast.simonyan@yahoo.com <https://orcid.org/0009-0008-2808-9314>

**Astghik Gagik SIMONYAN:** Restoration Specialist of MIR Department  
Laboratory, “Service for the Protection of HE and CMR” SNCO, Yerevan, RA,  
e-mail: ast.simonyan@yahoo.com <https://orcid.org/0009-0008-2808-9314>

**Астхик Гагиковна СИМОНЯН:** Реставратор отдела-лаборатории реставрации  
музейных предметов, “Службы по охране ИС и ИКМЗ” ГНО, Ереван, РА,  
эл. адрес: ast.simonyan@yahoo.com <https://orcid.org/0009-0008-2808-9314>

**Տիգրան Սամվելի ՉԱՔՅԱՆ՝** «ՊԱԹ և ՊՄ պահպանության ծառայության»  
ԹԱՎ բաժին–լսրոբաստորիայի բաժնի պետ, Երևան, ՀՀ,  
Էլ. huugե՝ t.zaqyan@gmail.com <https://orcid.org/0000-0001-7168-5316>

**Tigran Samvel ZAKYAN:** Head of MIR Department-Laboratory,  
“Service for the Protection of HE and CMR” SNCO, Yerevan, RA,  
e-mail: t.zaqyan@gmail.com <https://orcid.org/0000-0001-7168-5316>

**Тигран Самвелович ЗАКЯН:** Зав. отдела-лаборатории реставрации  
музейных предметов, “Службы по охране ИС и ИКМЗ” ГНО, Ереван, РА,  
эл. адрес: t.zaqyan@gmail.com <https://orcid.org/0000-0001-7168-5316>

ՀՏԴ՝ 801.8

DOI: 10.52971/18294316-2024.27.1-63

**ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒՉԱՆԴԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՅՍՕՐ  
(Ղարձվածաբանական միավորների քննություն)**

**Գուրգեն Կ. Խաչատրյան**

Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Վանաձոր, ՀՀ

**Մերգո Ա. Հայրապետյան**

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Գրաբարի բառապաշարի հարստացման ներքին հնարավորություններից են տվյալ ժամանակահատվածի բարբառների և ընդհանուր խոսակցական հայերենի բառային միավորները, որոնցից տարբեր ստեղծագործողներ (մասնավորապես հայ մատենագիրները) օգտվել են տարբեր չափով: Փավստոս Բուզանդն այն մատենագիրներից է, որի «Պատմութիւն Հայոց» երկն առանձնանում է տվյալ ժամանակահատվածի խոսակցական հայերենին բնորոշ դարձվածաբանական միավորների հաճախադեպությամբ: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրության ընթացքում գերազանցապես կիրառել ենք համեմատության, վերլուծության և նկարագրական մեթոդները: Քննության ենք առել Բուզանդի երկում հանդիպող մի շարք դարձվածաբանական միավորներ: Վերլուծություն. Փավստոս Բուզանդի երկում կիրառված որոշ դարձվածքներ ոչ թե հեղինակային նորակազմություններ են, այլ խոսակցական շերտի բառապաշարին բնորոշ լեզվական միավորներ, որոնք ինչպես գրաբարում, այնպես էլ մեր օրերում ծառայում են իբրև գրավոր կամ բանավոր գրական խոսքի ոճավորման միջոց: Արդյունքներ. Խնդրոտ առարկա դարձվածաբանական միավորները թեև ունեն առնվազն 1700-ամյա հնություն, սակայն աչքի են ընկնում բառիմաստի կենսունակությամբ, շնորհիվ որի էլ, արտահայտության պլանում լրիվ կամ մասնակի փոփոխության ենթարկվելով, գործածական են նաև ժամանակակից հայերենում: Հեղինակների ներդրումը. Գ. Խաչատրյանը մասնակցել է հոդվածի «Ամփոփում», «Նախաբան», «Եզրահանգում» բաժինների ու

առաջին անգամ առաջ քաշված տեսական դրույթի շարադրման և հոդվածի ձևավորման աշխատանքներին, «Ամփոփումը» թարգմանել է ռուսերեն ու անգլերեն և քննության առել բուն բովանդակության թիվ 1, 2, 5, 7, 8, 9, 11 դարձվածաբանական միավորները: Ս. Հայրապետյանը մասնակցել է հոդվածի «Ամփոփում», «Նախաբան», «Եզրահանգում» բաժինների և առաջին անգամ առաջ քաշված տեսական դրույթի շարադրման ու հոդվածի ձևավորման աշխատանքներին, ինչպես նաև քննության է առել բուն բովանդակության թիվ 3, 4, 6, 10 դարձվածաբանական միավորները:

**Բանալի բառեր՝** դարձվածք, վերլուծական բարդություն, արտահայտության և բովանդակության պլաններ, գրաբար, բարբառ, խոսակցական հայերեն, ժամանակակից հայերեն:

**Ինչպես հղել՝** Խաչատրյան Գ., Հայրապետյան Ս. *Փալստոս Բուզանդից մինչև այսօր (դարձվածաբանական միավորների քննություն)*,//ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»:Գյումրի, 2024: Հ. 1 (27): 63-77 էջեր: DOI:10.52971/18294316-2024.27.1-63

## FROM FAUSTUS OF BYZANTIUM TO THE PRESENT DAY (An Examination of Phraseological units)

*Gurgen K. Khachatryan*

State University after H. Tumanyan, Vanadzor, RA

*Sergo A. Hayrapetyan*

Shirak Center of Armenological Studies of NAS, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** One potential method of enhancing the lexicon of Grabar (Old Armenian) involves incorporating vocabulary units from the dialects of the era and everyday spoken Armenian, which various authors (particularly Armenian chroniclers), have employed to varying degrees. Faustus of Byzantium stands out among these chroniclers, with his work “History of Armenia” notable for its frequent use of phraseological unit’s characteristic of the spoken Armenian of that era.

**Methodology and materials:** This study employs methods of comparison, analysis, and description to examine over a dozen phraseological units found in Byzantium’s poetry. **Analysis:** Some phrases used in Faustus of Byzantium’s work are not author’s neologisms but linguistic units typical of spoken language, which have served as a means of stylizing written or oral literary speech both during Grabar and nowadays. **Results:** Despite being at least 1,700 years old, the phraseological units in question are notable for their enduring lexical significance, enabling their usage in modern Armenian even after undergoing full or partial changes in expression.

**Authors contribution:** G. Khachatryan contributed to the writing of the "Summary", "Introduction", "Conclusion" sections of the article and the theoretical proposition put forward for the first time as well as the formation of the article. The author has translated the “Summary” from Armenian into Russian and English and has analyzed N 1,2, 5, 7, 8, 9, 11 phraseological units. S. Hayrapetyan contributed to the "Summary", "Introduction", "Conclusion" sections of the article and the theoretical proposition put forward for the first time, and as well the formation of the article by examining N 3, 4, 6, 10 phraseological units.

**Key words:** *phrase, analytical complexity, expression and content plans, Grabar, colloquial Armenian, Modern Armenian.*



**Citation:** Khachatryan G., Hayrapetyan S. *From Faustus of Byzantium to the Present Day (an Examination of Phraseological Units)*. // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(26). 63-77 pp. DOI:10.52971/18294316-2024.27.1-63

## ОТ ФАВСТОСА БУЗАНДА ДО СОВРЕМЕННОСТИ (Изучение фразеологических единиц)

*Гурген К. Хачатрян*

Государственный университет им. О. Туманяна, Ванадзор, РА

*Серго А. Айрапетян*

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** Один из возможных методов расширения словарного запаса Грабара (древнеармянского) предполагает включение словарных единиц из диалектов той эпохи и повседневного разговорного армянского языка, которые различные авторы (особенно армянские летописцы) использовали в разной степени. Среди этих летописцев выделяется Фавстос Бузанд, чья работа «История Армении» отличается частым использованием фразеологизмов, характерных для разговорного армянского языка той эпохи. **Методология и материалы:** В исследовании методами сравнения, анализа и описания рассмотрено более десятка фразеологизмов, встречающихся в работе Бузанда. **Анализ:** Некоторые фразы, использованные в творчестве Фавстоса Бузанда, представляют собой не авторские неологизмы, а типичные для разговорной речи лингвистические единицы, служившие средством стилизации письменной или устной литературной речи как во времена Грабара, так и в наши дни. **Результаты:** Несмотря на давность написания текста, не менее 1700 лет, рассматриваемые фразеологизмы отличаются своей непреходящей лексической значимостью, что позволяет использовать их в современном армянском языке даже после полных или частичных изменений выражения. **Вклад авторов:** Г. Хачатрян внес вклад в написание разделов «Аннотация», «Введение» «Заключение» и в изложение впервые выдвинутой теории, а также в формирование статьи, перевел «Аннотацию» с армянского на русский и английский языки и проанализировал фразеологические единицы N 1, 2, 5, 7, 8, 9, 11. С. Айрапетян внес вклад в написание разделов «Аннотация», «Введение» «Заключение» и в изложение впервые выдвинутой теории, а также в формирование статьи, проанализировал фразеологические единицы N 3, 4, 6, 10.

**Ключевые слова:** фраза, аналитическая сложность, экспрессивный и содержательный планы, Грабарь, разговорный армянский язык, современный армянский язык.

**Как цитировать:** Хачатрян Г., Айрапетян С. *От Фавстоса Бузанда до современности (изучение фразеологических единиц)*. // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1 (27). 63-77 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-63

**ՆԱԽԱԲԱՆ.** Փալստոս Բուզանդը 5-րդ դարի այն մատենագիրներից է, որի երկն առանձնանում է բարբառային և ընդհանուր խոսակցական<sup>1</sup> տարրերի ակնհայտ առա-

<sup>1</sup> Հ. Անառնյանը, օրինակ, դրանք համարում է ենթաբարբառային շերտի տարրեր [ԱՃ, 125]:

տությամբ<sup>2</sup>: Հատկապես հաճախադեպ են վերլուծական կազմությամբ բայերը, որոնց շարքում դարձվածաբանական միավորների թիվն անցնում է մի քանի տասնյակից: Ասվածի մասին առաջին հերթին վկայում են՝ ա) այդ միավորների վերլուծական կազմությունը և բ) այն, որ դրանք հեղինակային նորակազմություններ չեն, քանի որ մասամբ հանդիպում են նաև 5-րդ դարի այլ հեղինակների երկերում ու թարգմանական գրականության մեջ: Հատկապես նկատի ունենք այն դարձվածաբանական միավորները, որոնք հարադիր բայեր են՝ կազմված տարբեր հոլովներով ու նախդրավոր կապակցություններով արտահայտված հարադիրներով և ակտիվ բառաշերտի բայերով. *ահ՝ երկիւղուկս արկանեմ, ակն ածեմ/առնում/դնեմ/ունիմ, ընդ միտ/զմտաւ ածեմ, ունկն/աշխարհի միտս/ի մտի դնեմ* և այլն<sup>3</sup>:

Հոդվածում նպատակ է հետապնդվում քննելու Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» երկի որոշ դարձվածաբանական միավորներ, որոնք թեև առանձնանում են բացառիկ կամ սակավ կիրառությամբ, սակայն արտահայտության պլանում լրիվ կամ մասնակի փոփոխության ենթարկվելով՝ գործածական են նաև մեր օրերում:

Ուսումնասիրության սկզբնաղբյուր են ծառայել Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» երկը (ՓԲ), վերջինիս թարգմանությունը (ՓԲՊՀ) և գրաբարի ու ժամանակակից արևելահայերենի ու արևմտահայերենի որոշ բառարաններ: Ժամանակակից հայերենի մասին տեսական դրույթները հիմնավորել ենք ԱՐԵՎԱԿ-ից քաղված բնագրային օրինակներով:

Քննության ընթացքում կիրառել ենք այնպիսի մեթոդներ (վերլուծական, նկարագրական, համեմատության, վիճակագրական և այլն), որոնք, անշուշտ, նպաստել են հարցն առավել խորությամբ ուսումնասիրելուն:

**ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.** Փավստոս Բուզանդի երկում գործածված որոշ դարձվածաբանական միավորներ առկա են նաև ժամանակակից հայերենի բառապաշարում, որոնցից են՝

1. **Յակն գամ,** որի միակ օրինակը ՆՀԲ-ն քաղել է Բուզանդի երկից «անկանիլ ընդ ակամբ. երևել աչաց, աչքի տակ ինկնալ, աչիցը երևնալ» իմաստներով [ՆՀԲ1, 24; ԳԴԲ, 203]՝ .... ինքն Շապուհ .... արշաւակի անցանէր առ կանանովն. եւ որ *յակն գային*, մի մի ի նոցանէ .... տանէր առ ինքն (ՓԲ): Մտ. Մալխասյանցն իրավացիորեն թարգմանել է. «.... և որոնք որ աչքին դուր էին գալիս ....» (ՓԲՊՀ, 273):

<sup>2</sup> Պատահական չէ, որ Բուզանդի պատմության բառապաշարի այդ շերտը 5-րդ դարում բարբառների գոյության հարցի շուրջ 19-րդ դարավերջից ծավալված բանավեճերում առանձնակի կարևորություն ունի: Միանգամայն տեղին է Դ. Հովնանեանի դիտարկումն այն մասին, թե Բուզանդի և Փարպեցու երկերում «... ամենէն աւելի կը գտնուին նոյն ժողովրդական կամ ընտանեկան բարբառոյն հետքերն» [ԴՀ, 11]: Վ. Առաքելյանը և հոդվածիս համահեղինակ Գ. Խաչատրյանը հանդես են եկել խնդրո առարկա հարցը ներառող գիտական զեկուցումով [ԱՎԽԳ, 15-16]:

<sup>3</sup> Հատկանշական է, որ Բուզանդը վերլուծական կազմությամբ բառեր է գործածում նույնիսկ այն դեպքում, երբ գրաբարում առկա են դրանց նույնարմատ համադրական համանիշները [ԱՎԽԳ, 15], ինչպես՝ *ամբաստան յինիմ*, փիս.՝ *ամբաստանեմ, երդումն տամ*, փիս.՝ *երդում, գոյժ արկանեմ/տամ*, փիս.՝ *գուժեմ, արգել արկանեմ*, փիս.՝ *արգելեմ, աւար հարկանեմ/առնում*, փիս.՝ *աւարեմ, աշխար առնեմ*, փիս.՝ *աշխարեմ, աշխատ առնեմ*, փիս.՝ *աշխատեմ* և այլն: Հավելենք, որ նշված միտումը առավել ակներև է հետագա դարերի հեղինակների երկերում:

*Յակն գամ* դարձվածքի «աչքին (դուր) գալ» իմաստը նույնությամբ պահպանվել է նաև ժամանակակից հայերենում, սակայն գրաբարյան *յակն* նախդրիվ տրականն արդի հայերենում արտահայտվում է տրական հոլովով՝ *աչքին գալ*: Այն տեղ է գտել ՀԲԲ-ում, որում «աչքին դուր գալ, հաճելի լինել»-ը նշվում է որպես երկրորդական իմաստ [ՀԲԲ1, 29]: Նույն կերպ է վարվում նաև ՀԼԴԲ-ն՝ իմաստը մեկնաբանելով «դուր գալ, հավանել» [ՀԼԴԲ, 51]<sup>4</sup>: Օրինակ՝ Ո՛չ կինն էր այժմ իր *աչքին գալիս*: Ո՛չ կին, ո՛չ վայելքն իր արքայական (ՀՇ): - .... Միհրանը նրա՛ն ուզեց, ուրիշ ոչ մի աղջիկ Միհրանի *աչքին չի՛ գա* (ԳՄԱԱ) և այլն: Նկատենք, որ ԱՐԵՎԱԿ-ում մեզ հանդիպած նմանօրինակ բոլոր նախադասությունները ժխտական կազմություն ունեն, սակայն խոսակցական լեզվում գործածական են նաև նմանատիպ դրական կառույցներ:

**2. *Ըստ ակն անկանիմ***, որը ՆՀԲ-ում առանձնացվել է որպես դարձվածաբանական միավոր՝ «հազիւ երևիլ. ծածկիլ յաչաց. աչքի երևնալ չերննալ» իմաստներով [ՆՀԲ1, 24]: Բուզանդի երկում գործածվել է մեկ անգամ՝ .... իսկ գունդն մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթայիւն. մինչ զի նայէր թագաւորն եւ տեսանէր զի *ըստ ակն անկանէին*, մինչ զի ոչ երեւէին թագաւորին նշանքն Մուշեղի (ՓԲ): Ստ. Մալխասյանցը թարգմանել է «... աչքից թաքնվեց» (ՓԲՊՀ, 299), սակայն իր հեղինակած բառարանում, *աչքից* (աչքէ, աչիչ) *ելնել, ընկնել* դարձվածքին տեղ տալով հանդերձ, նշում է միայն «Վայելած նախկին համակրությունը կորցնել, ասելի դառնալ» իմաստը [ՀԲԲ1, 202]:

Նկատենք, սակայն, որ *ըստ ակն անկանիմ* դարձվածքի «տեսադաշտից անհետանալ» իմաստը պահպանվել է նաև ժամանակակից հայերենում: *Ըստ* նախդիր-*հայցական հոլովով* կազմված հարադիրն այստեղ արտահայտվում է բացառական հոլովով (*աչքից*), իսկ բայական բաղադրիչը ենթարկվել է պատմական հնչյունափոխության (*ընկնել-անկանել*)՝ *աչքից ընկնել*<sup>5</sup>: Ասվածը վկայվում է միայն ՀԼԴԲ-ում՝ որպես *աչքից ընկնել* դարձվածքի երկրորդական իմաստներից մեկը՝ «տեսադաշտից անհետանալ, այլևս չերևալ» նշանակությամբ, որը հիմնավորվում է Հ. Թումանյանի ստեղծագործություններից քաղված միակ օրինակով՝ Բայց շատ չըքաշեց, անտառի խորքում Սարերը դարձյալ *աչքիցըստ ընկան*, Ու սկսեցի կորցընել ճամփան [ՀԼԴԲ, 54]<sup>6</sup>: Ահա նաև մեզ հանդիպած միակ օրինակը (ի դեպ, թարգմանության հեղինակը նույնպես Հ. Թումանյանն է)՝ Դե՛հ, իմ նավակ, մենք սլանանք, Ծովի վերա փրփրադեզ, Ուր որ կուզես, հոգ չէ, գնանք, Միայն հայրենիք չըտանես: Ողջո՛ւյն. ողջո՛ւյն մութ ալիքներ. Եվ, երբ *աչքիցս ընկնէիք*, Ողջո՛ւյն, խուղե՛ր, անապատնե՛ր... Բարի գիշեր, հայրենի՛ք (Թ):

<sup>4</sup> Հմմտ. նաև Լոռու խոսվածքին բնորոշ *աչքումը/աչկումը գալ* («հավանել»), որը ժամանակին առանձնացրել է Հր. Աճառյանը [ՀԳԲ, 119]:

<sup>5</sup> Հմմտ.՝ Էն անձանոթ աղջիկը էլ ետ *աչքիցս թոսալ* ու, կարծես թե՛ էս ձեր տանձենուն բարձրացավ... (ԹՓ):

<sup>6</sup> Նկատենք, որ մի շարք դարձվածաբանական միավորներ արդի հայերենում գրեթե դուրս են եկել գործածությունից: Այդպիսին է, օրինակ, Լոռու խոսվածքում դեռևս հազվադեպ գործածվող *աչքումը դնել* (աչքում դնել) դարձվածքը՝ «որևէ առարկա կորցնել, ջարդել, փչացնել» իմաստներով, ինչպես՝ Հոր թանգանոց ժամացույցը *աչքումը դրուց*: Այդ նույն ճանապարհին է նաև *աչքից ընկնել* դարձվածքը՝ «տեսադաշտից դուրս մնալ, տեսադաշտում չերևալ» իմաստով:

Արդի հայերենում *աչքից ընկնել* դարձվածքի «Վայելած նախկին համակրությունը կորցնել, ատելի դառնալ» իմաստն ընկալվում է ոչ միայն խոսքի մեջ, այլև խոսքից դուրս, մինչդեռ «տեսադաշտից անհետանալ, այլևս չերևալ» իմաստն ընկալվում է միայն խոսքային իրադրությամբ, ինչը պայմանավորված է տվյալ իմաստի մթագնմամբ:

**3. Յաչաց հանել**, որը Բուզանդի երկում «անհաճոյ առնել» իմաստով գործածվել է մեկ անգամ՝ .... եւ խնդրէր նա հնարս հնարել, *հանել* զնա *յաչաց* թագաւորին Պարսից, զի փոխանակ նորա ինքն լիցի սիրելի (ՓԲ): Որպէս դարձվածաբանական միավոր առանձնացվել է Նոր հայկազյանում [ՆՀԲ1, 267, հմմտ. ԳԴԲ, 208]:

*Յաչաց հանել* դարձվածքը մասնակի փոփոխությամբ գործածվում է նաև ժամանակակից հայերենում. գրաբարյան *յաչաց* հոգնակի բացառականով հարադրի փոխարեն հանդես է գալիս *աչքից* եզակի բացառականը: Վկայվել է ՀԲԲ-ում [ՀԲԲ1, 202], ապա՝ ՀԼԴԲ-ում՝ «Նույնն է՝ *աչքից գցել*» նշումով և բացառիկ օրինակով՝ Հերբ ո՞նց աչքից չհաներ նրան ....» [ՀԼԴԲ, 54]: Հմմտ. նաև *աչքէն հանել* («այլ ևս չսիրել»), որը Հ. Աճառյանը նկատում է Նոր Նախիջևանի և Պոլսի բարբառներում («Ալ ինձի աչքէն հաներ է») [ՀԳԲ, 122]:

**4. Բան ի գետին ոչ անկանիս**, որը գործածվել է «խոսքը կատարվել» իմաստով՝ Եւ առն Աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվադակի կատարեցաւ զի ամենեւին *բան ի գետին ոչ անկանէր* առն Աստուծոյ (ՓԲ):

Ժամանակակից հայերենում *բան ի գետին ոչ անկանիս* դարձվածքի *բան* բաղադրիչի փոխարեն գործածվում է մերօրյա համանիշը (*խոսքը*), *ի նախդիր + հայցական հոլով* կազմված բաղադրիչն արտահայտվում է առանց *ի* նախդրի՝ *գետին* հայցական հոլովով, իսկ բայական բաղադրիչը ենթարկվել է պատմական հնչյունափոխության՝ *ընկնել < անկանել*: Օրինակ՝ Քավորն իր գրկած սանի հոգևոր հայրն է, .... հոր *խոսքը գետին* չպիտի ընկնի (ՊՊՍՎ): Իմ քեֆով են շարժվում, իմ *խոսքը գետին չի ընկնում* ... (Գ): Այսպես՝ աստծո մարդու ասածները կատարվեցին, .... որովհետև աստծո մարդու *ոչ մի խոսքը գետին չէր ընկնում* (ՊԶՊ)<sup>7</sup>:

Նշենք, որ *բան ի գետին (ոչ) անկանիս*-ը այն դարձվածաբանական միավորներից է, որոնք ժխտական կազմությամբ արտահայտում են դրական, իսկ դրական կազմությամբ՝ ժխտական իմաստ:

**5. Ի գլուխ հանել**, որը Բուզանդի երկում հանդիպում է մեկ անգամ «ավարտել, վերջացնել, ի կատար ածել», «զլուխ հանել» իմաստով [ՆՀԲ1, 562]<sup>8</sup>՝ .... գայր արտաքուստ դահճապետն Երազմակ, մտանէր ի խորանն արքունի, սկսանէր պատմել՝ զի *ի գլուխ հանի* կատարեցի, ասէ, զամենայն զիրամանս արքունի (ՓԲ)<sup>9</sup>: Ստ. Մալխասյանցը նշված դարձվածքը թարգմանել է միայն *կատարեցի* համանիշով՝ «Արքունի բոլոր հրամանները կատարեցի, ասաց .... » (ՓԲՊՀ, 189): Հետագայում լեզվաբանն իր հեղինակ-

<sup>7</sup> *Խոսքը գետին ընկնել* կամ *չընկնել* դարձվածքը հանդիպում է միայն ՀԼԴԲ-ում [ՀԼԴԲ, 291]:

<sup>8</sup> Հմմտ. ԳԴԲ, 117, որում նշվում է «զլուխ բերել, վերջացնել, ավարտել» իմաստը:

<sup>9</sup> Գրաբարի, այսպես կոչված, դասական շրջանում *ի գլուխ հանել* դարձվածքը գործածվել է նաև թարգմանական երկերում և, ինչպես կարելի էր ենթադրել, Ղազար Փարպեցու պատմության մեջ [ՆՀԲ1, 562]:

կա՞ծ բառարանում նշված դարձվածքը բերել է անփոփոխ՝ հենց *ի գլուխ հանել* կազմությամբ՝ «գլուխ բերել, վերջացնել, ավարտել» իմաստով [ՀԲԲ1, 446]:

*Ի գլուխ հանել* դարձվածքը ժամանակակից հայերենում հանդիպում է մինչև անցյալ դարակեսերը, ընդ որում, ավելի հաճախ՝ արևմտահայերեն մամուլում: Ահավասիկ մեկ-երկու օրինակ՝ ....նա անգոր է գտնում յուր նպատակն *ի գլուխ հանել* .... (ՊՊՊ): Արդ, այժմ մեր միջոցներովը *ի գլուխ պիտի հանենք* Սարտարապատի ջրանցքին ձեռնարկը (Ա1927): Օդանաւային ձեռնարկներ, որոնք ցարդ կարելի չէր իրագործել, .... մօտ առենէն կարելի պիտի ըլլայ *ի գլուխ հանել* (Ա1929): .... գերազանցապէս կարելոր է եւ անոր երկրորդ գալուստը *ի գլուխ հանելու* համար .... (Մ1933) և այլն: Հետագա բառարանները հիշյալ դարձվածքը բերում են առանց *ի* նախդրի, դիտում բազմիմաստ՝ նշելով «հասկանալ, կողմնորոշվել» «կռահել» հիմնական և «ավարտել, վերջացնել, ի կատար ածել» երկրորդական իմաստները [ԱՀԲԲ, 244, ԺՀԲԲ, 416, ՀԼԴԲ, 156]<sup>10</sup>, որոնցից վերջինը ժամանակակից հայերենում ավելի սակավ գործածություն ունի, ինչպես՝ Դավիդը գնահատեց արտոնագիրը, կլիենտուրան ու թերթը, առանց զբաղվելու գործիքներով, նա մտածեց, որ կարող կլինի գործը *գլուխ հանել*, և համաձայնվեց այդ պայմաններին (ՕԲ): Ինքն իր անձնական միջոցներով փորձած է *գլուխ հանել* այդ գործը, սակայն, դժբախտաբար, առիթը չէ ունեցած իրականացնելու իր փափաքը (Հ1): Մաղթենք որ կարենաք այդ գործն ալ, ինչպէս միշտ՝ ձեռնհասօրէն, *գլուխ հանել* (Հ2):

**6. Յրնչացք բանաւ**, որը Բուզանդի երկում գործածվել է մեկ անգամ՝ Եւ նշանակիր մի ի Մերուժանայ իբրեւ ետես զԱրտաւազոն, *յրնչացք երաց*. զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմուրուս, երեսօք գեղեցիկ (ՓԲ): ՆՀԲ-ն *ունչք* բառահոդվածում, *յրնչացք բանաւ*-ից *բացի*, բերում է նաև մի քանի հոմանիշ դարձվածաբանական տարբերակներ՝ *ունչ* կամ *ունչս առնել՝ ունել՝ ընկենում, յրնչաց քերել* [ՆՀԲ2, 552]: Սրանք բոլորը «թիրել գունչս արհամարհանօք. ծաղր՝ այպն առնել, եպերել» իմաստներով հանդիպում են 5-րդ դ. հայ հեղինակների (Ագաթանգեղոս, Ղազար Փարպեցի, Եգնիկ Կողբացի) և հետագա դարերի պատմիչների ու թարգմանական երկերում:

Մերօրյա խոսակցական հայերենում և բարբառներում նշված իմաստներով հանդիպում են *բերանը բաց անել՝ բանայ; բերանը՝ ռեխը՝ սեպերը բաց անել՝ բացել* հոմանիշ դարձվածաբանական միավորները՝ «իբրև արհամարհանքի՝ ծաղրի՝ նսեմացման արտահայտություն՝ ծիծաղել՝ քմծիծաղել, անդուր ծիծաղել, պարսավել, ծաղրել», որոնք նախ առանձնացրել է Ստ. Մալխասյանը [ՀԲԲ1, 361, ՀԲԲ4, 159, 201], հետագայում՝ նաև ՀԼԴԲ-Ն [Էջեր 117, 511, 519]: Ահավասիկ համապատասխան օրինակներ՝ Ով ասես, մեզ վրա պտի *բերանը բաց անի* («պարսավել, ծաղրել») (ԽԱ): «Ընկեր» չեկիստը *ռեխը բացում է*. «Կալենց, չփորձես ուրանալ, երեկ դուն (քեֆի ժամանակ, իր «ընկերներու» շրջապատում) «Մեր հայրենիքն» ես երգել» (ԱԶԳ): *Սեպերդ ինչի՞ էս բաց արել*,—

<sup>10</sup> *Գլուխ հանել* դարձվածքը հիմնական իմաստով գործածվելիս հայցական հոլովով խնդրի փոխարեն ենթադրում է պահանջում է բացառականով խնդիր՝ Ինչո՞ւ այսքան տկար եղավ Միտքը մարդու և անկար. Ոչ եկողից *գլուխ հանեց*, Ոչ մեկնողին արեց ճար (ՎՄ):...և դրանից հետո թողել էր, որ աղջիկն ինքը գլուխ հանի *անեն ինչից* .... (ՄՍՌ):

բարկացավ Միմոնը, իսկ նա դարձյալ ծիծաղում էր (ՀՄԱԱ): — Գևորգը խոսի, ցավ չի, թող խոսի ... Դո՛ւ ինչի ես սեպերդ բաց անում (ԽՀ):

**7. Թալանամ ի ծաղուէ**, որը «անչափ երկար ծիծաղել» իմաստով միակ անգամ գործածվել է Բուզանդի երկում՝ ....ամենեքեան առ հասարակ հանդերձ թագաւորան թալացեալ էին ի ծաղուէ (ՓԲ): Այն տեղ է գտել ՆՀԲ-ի *թալանամ* բառահոդվածում [ՆՀԲ1, 791], սակայն չի առանձնացվել իբրև դարձվածաբանական միավոր [հմմտ. նաև ԳԴԲ]:

Ժամանակակից հայերենում գրաբարի *թալանալ* բաղադրիչի փոխարեն, որը, այլ իմաստներից բացի, նշանակում էր նաև «թուլանալ», ունենք հենց *թուլանալ* բայը, իսկ *ծաղր* (տվյալ դեպքում «ծիծաղ») հարադրի բացառականի փոխարեն՝ հենց *ծիծաղ* բառի բացառականը: Միաժամանակ կատարվել է նաև հարադրի և բայական բաղադրիչի շարադասական փոփոխություն՝ *ծիծաղից թուլանալ*, որը «անչափ շատ ծիծաղել, երկար ու բարձրաձայն ծիծաղել, հռռալ» իմաստներով առանձնացվել է իբրև դարձվածաբանական միավոր [ՀԼԴԲ, 303]: Օրինակ՝ Եվ Դուլին .... ստիպում էր Վարենկային *ծիծաղից թուլանալ*, երբ երրորդ ու չորրորդ անգամ միշտ նոր զավեշտական հավելումներով պատմում էր .... (ԼՏ): — Ո՛ւ՛ֆ, — այս անգամ իսկապես սարսափած գոռաց Ջաքարը և *ծիծաղից թուլացավ*: — Բ՛նչ ես ասում, Աննա, ի՞նչ ես ասում, — միննույն ժամանակ կանչեց Էմման և նույնպես *ծիծաղից թուլացավ* (Ն-ԴԶ):

Ավելին՝ 19-20-րդ դդ. գեղարվեստական արձակում հանդիպում են նշված դարձվածքի բարբառային վկայություններ նույնպես՝ *ծիծաղու թիլանալ թուլանալ*, որը բանավոր խոսքում հաճախակի գործածվող դարձվածաբանական միավորներից է, ինչպես՝ .... տեսնողը *ծիծաղու թիլանում ա* (ՊՊՄՎ): — Օխա՛յ, ասում էին հնձվորները, մի բաղնիս արժի: Մենք *ծիծաղու թուլանում էինք* (ԴԴՊ) և այլն:

**8. Չլուելոյն առնեմ**, որը ՆՀԲ-ն թեև չի առանձնացնում իբրև դարձվածաբանական միավոր, սակայն բերում է բնագրային երկու նախադասություն: Դրանցից առաջինը՝ *չսեմ* բառահոդվածի «անսովոր» խոնարհվող բայաձևերի շարքում, որը քաղված է թարգմանական գրականությունից՝ Չգթամք, այլ *չլուելոյն առնեմք* գաղափարանս նոցա և մեկնաբանվում է «չլսելոյ, կամ իբր ոչ լուեալ» [ՆՀԲ1, 906], երկրորդը՝ *չլուեալ* առանձին բառահոդվածում, որում վկայվել է Փավստոս Բուզանդի երկի միակ օրինակը՝ .... բայց թագաւորն Պապ ի չքմեղս լինելով՝ *չլուելոյն առնէր*, իբրեւ թէ իւր չիցէ գործեալ զայն (ՓԲ) և մեկնաբանվում է որպես ռամկօրէն «*չլսելու զարկաւ, չիլսեցի կըսէր*» իմաստով [ՆՀԲ2, 576, հմմտ. ԳԴԲ, 239]: ԱԲ-ն թեև *ԼՍԵՄ* բառահոդվածի ներքո «*Չլսելոյն կամ Չլուելոյն առնեմ*»-ը դիտում է դարձվածաբանական առանձին միավոր [ԱԲ, 362], սակայն, կրկնելով ՆՀԲ-ին, *չլուելոյն առնեմ* տարբերակը բերում է նաև *ՉԼՈՒԵԱԼ* առանձին բառահոդվածում:

Նշված դարձվածքը 5-րդ դարում արտահայտվել է «Ժխտական կազմութայմբ անցյալ դերբայի տրականով հարադիր – *առնեմ* բայական բաղադրիչ» մասնակաղապարով և նշանակում է «ձևացնել, թե չի կատարում՝ չի կատարել՝ չկատարեց տվյալ գործողությունը»: *Չլուելոյն առնեմ* դարձվածքը տվյալ դեպքում նշանակում է «չլսելու էր տալիս, ձևացնում էր, թե չի լսում»:

Ժամանակակից գրական հայերենը ժառանգել է վերը նշված մասնակաղապարը, որն ըստ էության ժխտական կառույց է, սակայն որոշակի փոփոխությամբ. անցյալ դերբայի տրականով հարադիրն այստեղ արտահայտվում է ժխտական կազմությամբ անորոշ դերբայի անորոշ տրականով, իսկ բայական բաղադրիչն արտահայտվում է ոչ թե *անել<առնել*, այլ *տալ* բայով: Գերազանցապես հանդիպում են *չլսելու տալ*, *չտեսնելու տալ*, *չնկատելու տալ* իրացումները, սակայն տվյալ դեպքում բերենք մեզ հետաքրքրող *չլսելու տալ* կապակցությամբ օրինակներ՝ — Ներս բեր,— *չլսելու տվեց* վերջին խոսքը Մարդպետը (ԴԴ): Օրիորդն անտարբեր էր դարձել ամեն ինչի նկատմամբ, *չլսելու էր տալիս* նրա հարցերը (ՋԴՔ): .... բայց Աննան *չնկատելու տվեց* (ՋԴՄ-Ն) և այլն:

Հետաքրքրական է, որ ժամանակակից հայերենում գործածական է նաև նշված մասնակաղապարի ոչ միայն ժխտական, այլև դրական տարբերակը՝ այս անգամ «ձևացնել՝ փորձել կատարել որևէ գործողություն» իմաստով՝ արտահայտված անորոշ դերբայի տրականի և *անել* բայական բաղադրիչի կապակցությամբ, որի բաղադրիչները հնչյունափոխվել են (գրաբարի որոշիչ հոդով տրականն այժմ գործածվում է անորոշ առմամբ, իսկ *առնեն* բայի կազմում կատարվել է հնչյունի անկում՝ *անել<այնել<առնել* անցմամբ):

Ժամանակակից հայերենում դրական կազմությամբ նմանօրինակ վերլուծական կազմությունները բնորոշ են ժողովրդախոսակցական բառաշերտին և գեղարվեստական արձակում ըստ անհրաժեշտության գործածվում են որպես խոսքի ոճավորման միջոց: Օրինակ՝ Կոստավ *քար վերցնելու արեց*, .... հետո էլ քարով իսկապես խփեց.... (ՀՄՏ): Տղան մի պահ *կանգնելու արեց*, դեմքը շրջեց դեպի կինն ու շարունակեց գնալ (Ա.ՎԱԸ):

Դժվար չէ ենթադրել, որ նշված մասնակաղապարի թե՛ դրական և թե՛ ժխտական տարբերակները ժամանակակից հայերենին են ժառանգվել գրաբարից, որում, սակայն, ըստ անհրաժեշտության վկայվել են միայն ժխտական կազմություններ:

**9. Հաց գործել**, որը «հաց շինել, հացի՝ ճաշի՝ հյուրասիրության պատրաստություն տեսնել» իմաստով մեկ անգամ հանդիպում է Բուզանդի երկում՝ .... ապա զօրավարն Յունաց *հաց* մեծապես *գործեալ* յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա (ՓԲ):

ՆՀԲ-ում այս դարձվածաբանական միավորը գտնում ենք *հաց* բառահոդվածում, սակայն ոչ թե Փալատոս Բուզանդի երկից, այլ ճառընտիրներից քաղված հետևյալ վկայությամբ՝ *Հաց* մեծ *գործեալ* էր և սեղան յորինեալ [ՆՀԲ2, 70]:

*Հաց գործել* դարձվածքը ժամանակակից հայերենին է անցել *գործել*-ին փոխարինած *շինել*, *պատրաստել*, *սարքել* բայական բաղադրիչներով՝ *հաց շինել՝ պատրաստել՝ սարքել*: Դրանցից միայն առաջին երկուսն են տեղ գտել բառարաններում, մասնավորապես՝ *հաց շինել*-ը [ՀԲԲ, 76, ԺՀԲԲ, 1679], մինչդեռ *հաց սարքել* դարձվածքը, որը լայնորեն տարածված է ժողովրդախոսակցական լեզվում և գեղարվեստական արձակում գործածվում է որպես խոսքը ոճավորելու միջոց, բառարաններում չի հիշատակվում: Ահավասիկ համապատասխան օրինակներ՝ Դե գնա, գնա *հաց սարքիր*, թե չէ փոքրիս մեջ մկներն սկսել են պար գալ ... (ՄՄ): Գնալուց առաջ *հաց սարքեցի* նրա համար

(ԶԲ): Ասում եմ՝ երեխեք ջան, եկեք, տուն մտեք, *հաց սարքեմ*, հաց կերեք, հանգստացեք (ՀՄՏՄՀ)<sup>11</sup>:

**10. *Ըստ չափ անցանեմ***, որը Բուզանդի երկու գործածվել է երկու անգամ՝ Ել լցան գանձիք քաղցր եւ զինու եւ զարդու եւ քաղում աւարաւ եւ անչափ մեծութեամբ, եւ հարստացան *անցին ըստ չափ* (ՓԲ)<sup>12</sup>: Եւ եղև իբրև անցին գառանցին ի զինւոյն՝ *ըստ չափ անցանելով*<sup>13</sup>, եւ թագաւորն Վարազդատ պահէր գանձն ի զինւոյն (ՓԲ):

*Ըստ չափ անցանել*-ը որպէս դարձվածաբանական միավոր չի առանձնացվել ո՛չ ՆՀԲ-ում և ո՛չ էլ ԱԲ-ում<sup>14</sup>: ԳԴԲ-ն, առանձնացնելով հանդերձ, բերում է ավելի ուշ շրջանի (X դ.) վկայություն [ԳԴԲ, 100]:

*Ըստ չափ անցանել*-ը գործածվում է նաև ժամանակակից հայերենում<sup>15</sup>, սակայն *նախդիր+հայցական հոլով* կապակցությամբ հարադիրն արտահայտվում է առանց նախդրի՝ *չափը*, իսկ բայական բաղադրիչը ենթարկվել է *անցնել<անցանել* պատմական հնչյունափոխության: Օրինակ՝ Բայց, երևի ինքն էլ զգալով, որ *չափն անցավ*, հանկարծ զսպեց ծիծաղը .... (Ն-ԴՄ): Երբ նա տեսավ, որ ես *չափն անցնում եմ*, դարձավ վերապահ և զգուշավոր (ԳՄ):

**11. *Զսեանս կոխեմ***, որը գործածել է Բուզանդը «ցանկանալ՝ փորձել ներս մտնել» իմաստով՝ .... եւ վասն չարեաց նորա .... ոչ համարձակէր նմա *զսեանս* եկեղեցոյն *կոխել*, եւ ոչ մտանել նմա ի ներքս (ՓԲ): Բուզանդի երկու խոսքը եկեղեցու շէմի մասին է, որը Ստ. Մալխասյանցը թարգմանել է «շենքը ոտք դնել» (ՓԲՊՀ, 329):

*Զսեանս կոխեմ*-ը ՆՀԲ-ում, ԱԲ-ում և ԳԴԲ-ում չի առանձնացվել որպէս դարձվածաբանական միավոր: Այսուհանդերձ, այն գործածական է նաև ժամանակակից հայերենում: Վկայվում է միայն ՀԼԴԲ-ում՝ «տունը գնալ, տուն մտնել, այցելել» իմաստներով [ՀԼԴԲ, 461]: Բայական բաղադրիչն այստեղ հանդես է գալիս առանց փոփոխության, մինչդեռ *զսեանս* անեզական հայցականն արտահայտվում է *շենք*<sup>16</sup> հնչյունափոխված տարբերակի եզակի հայցականով՝ *շենքը կոխել*: Օրինակ՝ —Դե թող քու ոտը Վանո-բեգի *շենքը կոխի* ու տես, թե զուխդ քանի տեղից եմ կոտրում (ՄԴԿ): — ... ես չար և անօգուտ գործերի համար ձեր *շենքը չեմ* կոխել, պատասխանեց պարոն Վասակյանը (ԸՄ): Բախտի օր կլինի այն օրը և այն ժամը, երբ դու իմ տան *շենքը կկոխես* (ՀՄՅԵ):

Նկատենք նաև, որ թեև ՀԼԴԲ-ում և մյուս բառարաններում չի նշվում, սակայն ժամանակակից հայերենում գործածական է *շենքը կոխել* դարձվածքի *շենք կոխել* գուրգաձևը նույնպես՝ .... և ժպտաց փորձված, վայելքի *շենք կոխած*, վայելքից չհագեցած

<sup>11</sup> Հմմտ. նաև ժամանակակից հայերենի *հաց շինել* դարձվածաբանական միավորը [ՀԼԴԲ, 354]:

<sup>12</sup> Ստ. Մալխասյանցը թարգմանել է «... և չափից դուրս հարստացան» (ՓԲՊՀ, 219)

<sup>13</sup> Ստ. Մալխասյանցը թարգմանել է «... և չափից դուրս խմեցին» (ՓԲՊՀ, 301):

<sup>14</sup> ՆՀԲ-ում *չափս* հարադրով նշվում է այլ դարձվածք՝ *Ընդ* ամենայն *չափս էանց* [ՆՀԲ2, 573]:

<sup>15</sup> Ստ. Մալխասյանցը բառարանում բերում է *չափն անցնել* և *չափն անց կացնել* համանիշ ձևերով («պատշաճության սահմանից դուրս գալ, ծայրահեղության հասնել») [ՀՀԲ4, 18]: Նրան կրկնում են հետագա բառարանները՝ նշելով, համապատասխանաբար, «պատշաճության սահմանից դուրս գալ, ծայրահեղության հասնել», «չափից անցնել» [ԺՀԲ4, 132] և «պատշաճության սահմանից դուրս գալ, ծայրահեղության հասնել» [ՀԼԴԲ, 488] իմաստները:

<sup>16</sup> ՆՀԲ-ն *շեն* ձևն իրավացիորեն համարում է «ռամկօրէն» [ՆՀԲ2, 704]:



էգի ժպիտով (ԱՎԱԸ): Ֆաշիստ խաբեբան ճշում է ռիտով՝ «Հեյ նայի՛ր, Ռուսը ձեր *շենն է կոխում*» (ԱՎ): Սրանց ոտը պետք է կոտրվեր, որ մեր *շենը չէին կոխեր* (ԽԱ):

Սույն հոդվածի շրջանակներում առաջին անգամ ներկայացվում ու մեկնաբանվում է նաև արդի հայերենի ներքին փոխառություններին սերտորեն առնչվող մի իրողության՝ *ներքին պատճենումների* վերաբերյալ մեր տեսական դրույթը:

*Բառապատճենում* կամ *պատճենում* եզրույթի բոլոր սահմանումներում կարևորվում է նրա՝ օտար լեզուներից կատարված լինելու հանգամանքը և գնահատվում է որպես արտաքին փոխառության մի տեսակ (մենք այն պայմանականորեն անվանում ենք *արտաքին պատճենում*): Սակայն հաշվի առնելով Գ.Ղափանցյանի այն մոտեցումը, ըստ որի՝ բառապատճենման առումով խոսքը վերաբերում է ոչ միայն նոր, այլև «*հին հասկացություններին* (ընդգծումը-հեղ.)», կարծում ենք, որ նույն կերպ կարելի է գնահատել նաև ժամանակակից հայերենի ներքին փոխառություններին սերտորեն առնչվող, պայմանականորեն ասած, *ներքին պատճենումները*: Արտաքին և ներքին պատճենումների տարբերությունն այն է, որ եթե առաջինի դեպքում որևէ լեզու (օրինակ՝ ժամանակակից հայերենը) ուղղակիորեն վերցնում է օտար լեզվի հին կամ նոր պատրաստի բառը, դարձվածաբանական միավորը, արտահայտությունը և այլն<sup>17</sup> և այն արտահայտում սեփական միջոցներով, ապա ներքին պատճենման դեպքում որևէ լեզու (օրինակ՝ ժամանակակից հայերենը) ներքին փոխառության դաշտում ուղղակիորեն վերցնում է նույն լեզվի մեկ այլ ենթաշրջանի (օրինակ՝ գրաբարի կամ միջին հայերենի) կամ գոյաձևի (օրինակ՝ արևմտահայերենի, խոսակցական հայերենի կամ բարբառների) պատրաստի բառի, դարձվածաբանական միավորի, արտահայտության (և այլն) արտահայտած «հին հասկացությունն» ու կառուցվածքը, սակայն դրանք արտահայտում է նոր՝ արդեն իր իսկ միջոցներով: Այլ կերպ ասած՝ ներքին պատճենման դեպքում, օրինակ, գրաբարից (տվյալ դեպքում փոխառու լեզվից) փոխառյալ բառը պարզապես թարգմանվում է փոխառու լեզվի (տվյալ դեպքում ժամանակակից գրական հայերենի) բառերով կամ բաղադրությունների բաղադրիչ միավորներով:

Ըստ Հ. Պետրոսյանի՝ պատճենումը լինում է լրիվ (լիակատար) կամ մասնակի (կիսապատճենում)<sup>18</sup>: Լրիվ (լիակատար) կամ մասնակի (կիսապատճենում) են նաև ներքին պատճենումները: Այսպես՝ ժամանակակից հայերենի *ծիծաղից թուլանալ* կայուն բառակապակցությունը պետք է համարել *լրիվ ներքին պատճենում*, քանի որ այն գրաբարի *ի ծաղուէ թալանամ* նույնպես կայուն բառակապակցության պատճենումն է ժամանակակից գրական հայերենի կաղապարատարների միջոցով: Մինչդեռ ժամանակակից հայերենի *հաց սարքել* դարձվածաբանական միավորը պետք է համարել *մասնակի ներքին պատճենում* կամ *կիսապատճենում*, քանի որ այն ըստ էության գրաբարի *հաց գործեմ* դարձվածաբանական միավորի արդիհայերենյան համանիշն է, որի բա-

<sup>17</sup> Գ. Ղափանցյանը բերում է նաև ածանցավոր կազմությունների պատճենման օրինակներ, որոնցից է գրաբարի *սպացույց* բառը՝ հունարենից՝ *απόδειξον* [տե՛ս ԴԸԼ, 347]:

<sup>18</sup> [տե՛ս ՀԲ, 515]: Ըստ Ա. Մարգարյանի՝ «բառապատճենում» և «կիսաբառապատճենում» [տե՛ս ՄԺՀԼԲ, 210]:

դադրիչներից մեկը (*hug*) փոխառվել է նույնությամբ, իսկ մյուսը (*գործել*)՝ պատճենվել է (*սարքել*):

Ինչպես արտաքին պատճենումներն են բաղադրյալ կազմություններ, այն է՝ համադրական կամ վերլուծական բարդություններ, կայուն բառակապակցություններ և այլն, այնպես էլ՝ ներքին պատճենումները:

Խոսքը մասնավորապես ոչ թե այն բարդ բառերի, կայուն բառակապակցությունների և դարձվածաբանական միավորների մասին է, որոնք մեզ են հասել, օրինակ, գրաբարից՝ պատմական զարգացման ընթացքում քերականական ինչ-ինչ փոփոխություններ կրելով, ինչպես՝ *զլուխ հանել*<*ի զլուխ հանել*, *չափն անցնել*<*ըստ չափ անցանել* և այլն, այլ այն միավորների մասին, որոնց հիմնական բաղադրիչներից մեկը կամ երկուսը (բոլորը) հանդես են գալիս բաղադրիչների նոր, հնին համարժեք կառուցվածքով՝ որպես կանոն, պահպանելով փոխառյալ միավորի իմաստը նույնպես: Օրինակ՝ *հացի կանչել*<*ի հաց կոչել*, *խոսքը գետին ընկնել*<*բան ի գետին անկանիս*, *խոսքը գետին զցել*<*բան ի գետին արկանել*, *հաց զցել*<*հաց արկանել*, *հոր փորել*<*հոր հատանել* և այլն:

Մեր այս մոտեցումը հիմնավորվում է այն տրամաբանությամբ, որ եթե գոյություն ունեն բառապաշարի հարստացման ներքին ու արտաքին միջոցներ, որոնցից են ներքին և արտաքին փոխառությունները, և եթե արտաքին փոխառությունների մի մասը փոխառու լեզուն (տվյալ դեպքում ժամանակակից հայերենը) վերցնում է բառապատճենմամբ, ապա պատճենում պիտի համարել նաև ներքին փոխառությամբ ձեռք բերված այն միավորները, որոնց իմաստն արդեն արտահայտվում է ժամանակակից հայերենի բառապաշարի տարրերով: Իսկ եթե ներքին փոխառության բաղադրիչները ժամանակակից հայերենում պահպանվել են նույնությամբ կամ ենթարկվել ընդամենը քերականական և/կամ հնչյունական փոփոխությունների, ապա դրանք չպետք է համարել ներքին պատճենում: Օրինակ՝ գրաբարյան *հաց դնել* (ՆՀԲ1, 70)՝ Եւ *եղին հաց* առաջի նոցա ուտել (Օսնդ., ԲՂ, 33) և ժամանակակից հայերենի *հաց դնել*՝ Տունը որ .... խաղաղվեց, նոր բերին փեսի, խեչախապոր առաջը *հաց դրին* (ՊՊՄՎ) դարձվածքներից վերջինը մեր օրերն է հասել առանց բաղադրիչների փոփոխության:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Փալստոս Բուզանդի երկում որոշակի շերտ են կազմում դասական գրաբարի բառապաշարից տարբերվող բառային միավորները, մասնավորապես՝ վերլուծական կազմությամբ բայերը, որոնցից շատերը դեռևս 5-րդ դարում գործածվում էին նաև որպես դարձվածաբանական միավորներ: Վերջինների մի մասը հետագա դարերում դուրս է մնացել հայերենի բառապաշարից, մինչդեռ որոշ դարձվածքներ, արտահայտության պլանում կրելով տարբեր կարգի փոփոխություններ, հասել են մինչև մեր օրեր:

Այդ բառերի՝ դեռևս 5-րդ դարում որպես դարձվածաբանական միավոր գործածելու փաստն ինքնին վկայում է, որ դրանք ոչ թե հեղինակային նորակազմություններ են, այլ հայ ժողովրդի լեզվամտածողությանը հարազատ բառեր, որոնք առանձնանում են բառիմաստի կենսունակությամբ. ունեն առնվազը 1700-ամյա հնություն, ինչի մասին վկայում են նաև նրանց փոխաբերական իմաստ(ներ)ը: Ասվածի մասին են վկայում նաև

այդ բառային միավորների վերլուծական կազմությունն ու այն հանգամանքը, որ նրանք այդպես էլ չեն բարձրացել գրական մակարդակի և թե՛ 5-րդ դարում, թե՛ մեր օրերում կրում են խոսակցական լեզվի կնիք՝ ծառայելով որպես խոսքի ոճավորման միջոց:

**Գրականություն և համառոտագրությունների ցանկ**

1. ԱՄՆԲ–Սարապետոյեան Ռ. *Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան*, «Տիգրան Մեծ» հր.: Երևան: 2011:
2. ԱԲ – Ալգերեան Մ., Ճելալեան Գ. *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ: 1865:
3. ԱՀԲԲ – Աղայան Է. *Արդի հայերենի բացատրական բառարան*, Երևան; 1976:
4. ԱՃ – Աճառյան Հ. *Հայոց լեզվի պատմություն*, Երեւան: 1951:
5. ԱՎԽԳ – Առաքելյան Վ., Խաչատրյան Գ., *Ժողովրդախոսակցական լեզվի տարրերը Բուզանդի երկրում / Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, Չեկուցումների դրույթներ, Yerevan: 1987: 15-16 էջեր:*
6. ԳԳԲ – Ղազարյան Ռ. *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, Երևան: 2012:
7. ՂԼԼ – Ղափանցյան Գ. *Ընդհանուր լեզվաբանություն*, հ. I, Երևան, 1939:
8. ՄԺՀԼԲ – Մարգարյան Ա. *Շամանակակից հայոց լեզու, Բառագիտություն*, Երևան, 1997.
9. ԺՀԲԲ – *Շամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հ. 1-4: Երևան: 1969-1980:
10. ՀԲ – Պետրոսյան Հ. *Հայերենագիտական բառարան*, Երևան, 1987:
11. ՀԲԲ 1,2,3,4 – Մալխասեանց Ստ. *Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4*: Երևան: 1944-1945:
12. ՀԳԲ – Աճառեան Հ. *Հայերեն գաւառական բառարան*, Թիֆլիս: 1913: 1144 էջ:
13. ՀԼԴԲ – Սուքիասյան Ա., Գալստյան Ս. *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Երևան: 1975:
14. ՂՀ – Հովհաննէան Ղ. *Հնուագոտայիւնք նախնեսց ռամկօրէնի վերայ*, Վիեննա: 1897:
15. ՆՀԲ 1,2 – Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Ալգերեան Մ. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2*: Վենետիկ: 1836-1837:

**Օգտագործված բնագրերի և համառոտագրությունների ցանկ**

- ՓԲ** – Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց: Ս. Պետերբուրգ: 1883:
- ՓԲՊՀ** – Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Բնագիրը՝ Բ. Պատկանեանի: Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն. Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի: Երևան: 1987:
- ԱՐԵՎԱԿ-ից՝ Ա1927** – «Արաքս», 1927.01.02, №4
- Ա1929** - «Արաքս», 1929.06.22, №26
- ԱԶԳ** – «Ազգ», 2005.05.14, №87
- ԱՎ** - «Ավանգարդ», 1941.08.13, №190
- ԱՎԱԸ** - Արտակ Վարդագարյան, «Արյան ընթացքը»
- Գ** - «Գլաձոր», 1993.07.16, №24
- ԳՄ** - Գուրգեն Մահարի, «Սիրո մրմունջներ, երգիծական պատմվածքներ»
- ԳՄԱԱ** - Գուրգեն Մահարի, «Այրվող այգեստաններ»
- ԴԳ** - Դերենիկ Դեմիրճյան, «Մեսրոպ Մաշտոց»
- ԴԴՊ** - Դերենիկ Դեմիրճյան, «Պատմվածքներ»
- ԴԴԵՊ** - Դեմիրճյան Դերենիկ, «Երգիծական պատմվածքներ և ֆելիետոններ»
- ԶԲ** - Զորի Բալայան, «Զգրված օրենք»
- ԶԳՄ - Ն** - Զարգանդ Դարյան, «Մայաթ-Նովա»
- ԶԴԲ** - Զարգանդ Դարյան, «Բառուղիներ», մաս 2
- ԶԽ** - Զորայր Խալափյան, «Ջերմանց միխթարություն»
- Թ** – Թարգմանություններ

- ԹԲ** - Թաթուլ Բոլորյան, «Երկինքն աստղի ծաղկաման»  
**ԹՓ** - «Թարգմանություններ և փոխադրություններ»  
**ԼՏ** - Լև Տոլստոյ, «Աննա Կարենինա, մաս 2»  
**ԽԱ** - Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի»  
**ԽՀ** - Խաչիկ Հրայան, «Ուրցի մարան», «Ռոմանտիկներ»  
**Հ1** - «Հորիզոն», 1983.08.22, №13  
**Հ2** - «Հորիզոն», 1983.10.10, №20  
**ՀՄԱԱ** - Հրանտ Մաթևոսյան, «Աշնան արև»  
**ՀՄՏ** - Հրանտ Մաթևոսյան, «Տաշքենդ»  
**ՀՄՏՄՀ** - Հրայր Մաթևոսյան, «Տուն մոր համար»  
**ՀԾ** - Հովհաննես Ծիրազ, «Բիրլիականներ, հայրենականներ, փոքր պոեմներ»  
**ՀՍՅԵ** - Հենրիկ Սենկևիչ, «Յո՞ Երթաս»  
**Մ1933** - «Մշակ», 1933.04.07, №753  
**ՄԳ** - Մուշեղ Գալշոյան, «Պատմվածքներ»  
**ՄԴԿ** - Մաթևոս Դարբինյան, «Կիկոսը»  
**ՄՄ** - Մկրտիչ Մարգարյան, «Քաջ Նազար»  
**Ն-ԳՄ** - Նար-Գոս, «Մահը»  
**Ն-ԳՉ** - Նար-Գոս, «Չազունյան»  
**ՊՊՊ** - Պերճ Պոռոշյան, «Պատմվածքներ»  
**ՊՊՍՎ** - Պերճ Պոռոշյան, «Սոս և Վարդիթեր»  
**ՍՍՌ** - Սևրա Սևան, «Ռոդոսյոն, Ռոդոսյոն..»  
**ՎՄ** - Վահագն Մուղնեցյան, «Բանաստեղծություններ և պոեմներ»  
**ԲՄ** - Բաֆֆի, «Սարի»  
**ՕԲ** - Օնորե դը Բալզակ, «Խորտակված պատրանքներ» (Դիտվել է 13-20.11.2023)

## References

1. **Saqapetoyan R.** Western Armenian -Eastern Armenian New Dictionary, [Arevmtahayeren-arevelahayeren nor barraran] “Tigran Mets” Pub., Yerevan. 2011. (In Armenian)
2. **Augerian M.** Chelalian G., Handbook Dictionary of the Haygazean Language, [Arddzern barraran haykazean lezui], Venice, 1865 (In Armenian).
3. **Aghayan E.** Explanatory Dictionary of Modern Armenian, [Ardi hayereni bats'atrankan barraran] Yerevan. 1976. (In Armenian)
4. **Acharyan H.** The History of the Armenian Language, [Hayots' lezvi patmut'yun] Yerevan. 1951. (In Armenian)
5. **Arakelyan V., Khachatryan G.** Elements of the Colloquial Language in Buzand's Works / [Zhoghovrdakhosakts'akan lezvi tarrery Buzandi yerkm], Second International Conference on Armenian Studies, Thesis of Reports, Yerevan. 1987. 15-16 pp.. (In Armenian)
6. **Ghazaryan R.** Phraseological Dictionary of the Grabar, [Grabari dardzuatsabanakan barraran] Yerevan RA NAS "Gitutyun" publ.. 2012. (In Armenian)
7. **Ghapanstyan G.** General Linguistics, [Yndhanur lezvabanut'yun], V. 1, Yerevan, 1939, (In Armenian)
8. **Margaryan A.** Modern Armenian, Lexicology [Zhamanakakits' hayots' lezu, Barragitut'yun], Yerevan, 1997, (In Armenian)
9. *Explanatory Dictionary of the Modern Armenian Language*, [Zhamanakakits' hayots' lezvi bats'atrankan barraran], National Academy of Sciences of the Republic of Armenia Language Institute named after Hr. Acharyan, no. 1-4, Yerevan Yerevan. 1969-1980. (In Armenian)
10. **Petrosyan H.** Armenological Dictionary, [Hayerenagitakan barraran], Yerevan. 1987. (In Armenian)
11. **Malkhaseants St.** Armenian Explanatory Dictionary, [Hayeren bats'atrankan barraran], V. 1-4, Yerevan, 1944-1945, (In Armenian)

12. **Acharean Hr.** Armenian Provincial Dictionary, [*Hayeren gawarrakan barraran*], Tiflis 1913. 1144 p. (In Armenian)
13. **Suqiasyan A., Galstyan S.** Phraseological Dictionary of the Armenian Language [*Hayots' lezvi dardz-vatsabanakan barraran*], Yerevan, 1975 (In Armenian)
14. **Hovnanean Gh.** Research on Ancestor's History [*Hayots' lezvi dardz-vatsabanakan barraran*], Vienna, 1897 (In Armenian)
15. **Avetiqyan G., Syurmlean Kh., Avgeran M.** New Wordbook on Haygazean Language [*Nor barrgirk' haykazean lezui*], V., 1-2, Venice, 1836-1837. (In Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **16. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **14. 04. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Գուրգեն Կիպրոնի ԽԱՉԱՏՐՅԱՆ**՝ բան. գիտ. դոկտոր,  
Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի  
և գրականության ամբիոնի պրոֆեսոր, Վանաձոր, ՀՀ,  
Էլ. հասցե՝ [gxachatryan@yahoo.com](mailto:gxachatryan@yahoo.com), orsid:ID-0009-0009-2870-1443

**Gurgen Kipron KHACHATRYAN**: Doctor of Philology,  
Professor at the Chair of the Armenian Language and Literature,  
State University after H. Tumanyan, Vanadzor, RA,  
e-mail: [gxachatryan@yahoo.com](mailto:gxachatryan@yahoo.com), orsid:ID-0009-0009-2870-1443

**Гурген Кипронович ХАЧАТРИАН**: доктор филол. наук,  
профессор кафедры армянского языка и литературы  
государственного университета им. О.Туманяна, Ванadzor, РА,  
эл. адрес: [gxachatryan@yahoo.com](mailto:gxachatryan@yahoo.com), orsid:ID-0009-0009-2870-1443

**Սերգո Արտուշի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**՝ բան. գիտ. դոկտոր,  
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի առաջատար գիտաշխատող,  
ԾԳՀ հայոց լեզվի և գրակ. ամբիոնի պրոֆեսոր, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ [serhayr@mail.ru](mailto:serhayr@mail.ru), orsid.org/0009-0000-0427-0823

**Sergo Artush HAYRAPETYAN**: Doctor of Philology,  
Leading Researcher at Shirak Center for Armenological Studies of the NAS RA,  
Professor at the Chair of the Armenian Language and Literature, SUSH, Gyumri, RA  
e-mail: [serhayr@mail.ru](mailto:serhayr@mail.ru), orsid.org/0009-0000-0427-0823

**Серго Артушевич АЙРАПЕТЯН**: доктор филол. наук, ведущий  
научный сотрудник Ширакского центра АИ НАН,  
профессор кафедры армянского языка и литер. ШГУ, Гюмри, РА,  
эл. адрес: [serhayr@mail.ru](mailto:serhayr@mail.ru), orsid.org/0009-0000-0427-0823

ՀՏԴ՝ 81:39

DOI: 10.52971/18294316-2024.27.1-78

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԴՐԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ  
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՍԻՊԵՐԻ  
(Տարժամանակյա հայեցակետ)

Հայիկ Մ. Խաչատրյան

Խ.Արտվյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, Երևան, ՀՀ

Անփոփում

Նախաբան. Ժամանակի ընթացքում լեզվի համակարգում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք ընթանում են լեզվական համակարգի տարբեր մակարդակներում: Այդ կարգի փոփոխություններ կարելի է ցույց տալ նաև լեզվի բառային մակարդակում, որտեղ արձանագրվել է վերլուծականությունից անցում համադրականության: Ձևափոխության այդ փոփոխությունների տիրույթում զգալի տեսակարար կշիռ ունեն հին հայերենի *ի, առ, ընդ* և *ըստ* նախդիրները, որոնք արդի հայերենյան բաղադրությունների արտահայտության պլանում ունեն ածանցական արժեք, ինչպես՝ *հանձին, դեպի, արընթեր, առանձին, առերես, ընդհուպ, ըստորում* և այլն: Մեթոդներ և նյութեր: Ուսումնասիրությունն իրականացվել է *փոխակերպական մեթոդի* և նրա եղանակների գործադրմամբ, կիրառվել է նաև հետազոտության տարժամանակյա հայեցակետը: Ուսումնասիրության նյութ են ծառայել գրաբարի նախդրավոր կապակցություններն ու դրանց բնագրային կիրառությունները հին հայերենի մատենագրական հուշարձաններում: Վերլուծություն: Վերլուծական կառույցները դիտարկվում են հին հայերենի մակարդակում, որի իրողությունները կարող են համեմատության եզրեր դառնալ արդի հայերենի բառային կազմի գուգադրական քննության համար: Հետազոտական նյութի վերլուծությունն ու նախդիրների բառակազմական արժեքի վիճակա գրությունը ցույց է տալիս, որ դիտարկված նախդիրների գործառական հաճախականությունը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ *առ, ընդ, ի* և *ըստ*: Արդյունքներ: Դիտարկվող կառույցների գուգադրական քննությունը ցույց է տալիս, որ լեզվի տարժամանակյա դիտվածքում համատիպ իրողություններն ունեն տարբեր կարգի մեկնաբանություն՝ շարահյուսական կա-

ույցներ (հին հայերենում) և բաղադրություններ (արդի հայերենում): Այդ կարգի կառույցների բովանդակության և արտահայտության պլանների հարաբերակցված ուսումնասիրությունը կարող է բացահայտել լեզվի տարբեր գոյավիճակների բառակազմական տիպաբանության բնութագիրը:

**Բանալի բառեր՝** փոխակերպում, սերիչ կաղապար, նախդիր, նախդրավոր կառույց, բանակազմական տիպ, վերլուծական կառուցատիպ, համադրական կառուցատիպ:

**Ինչպես հղել՝** Խաչատրյան Լ. Հին հայերենի նախդրավոր վերլուծական կառույցների փոխակերպումը համադրական կառուցատիպերի, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» : Գյումրի: Հ. 1(27): 2024: 78-89 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.1-78

## THE TRANSFORMATION OF PREPOSITIONAL STRUCTURES OF OLD ARMENIAN INTO SYNTHETIC STRUCTURAL TYPES (Diachronic approach)

*Lalik M. Khachatryan*

Linguistics Research Laboratory Kh. Abovyan ASPU, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** The work refers to the phenomenon of transformation and is based on the theories available in the professional literature. The article examines the transformations of analytical structures with prepositions *ի, առ, ընդ, ըստ* in Ancient Armenian, which are considered synthetic structures in Modern Armenian. **Methods and materials:** The investigation was carried out based on the transformative method as well as the diachronic approach. The transformations of analytical forms with prepositions into synthetic structures are given in a systematic way. **Analysis:** The phenomenon of transformations is interpreted by the original evidence of different forms of the language, the relationship between the expression and content plans of the analytical and synthetic structures is explained at the lexical and syntactic levels. **Results:** The study of the path of transformation from prepositional analytical constructions to agglutination during the history of language is essential within the scopes of historical lexicology and word-building of the Armenian language.

**Key words:** *transformation, generative pattern, preposition, prepositional structure, word-building type, analytical structure, synthetic structure.*

**Citation:** Khachatryan L.M. *The Transformation of Prepositional Structures of Old Armenian into Synthetic Structural Types*, // Scientific works of SCAS NAS RA. Gyumri, 2024.V. I (27).

78-89 pp. 10.52971/18294316-2024.27.1-78

**ТРАНСФОРМАЦИЯ ПРЕДЛОЖНЫХ АНАЛИТИЧНЫХ  
КОНСТРУКЦИЙ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА В  
СИНТЕТИЧНЫЕ КОНСТРУКЦИИ  
(Диахронический аспект)**

*Լալիկ Մ. Խաչատրյան*

Лаборатория лингвистических исследований АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА

**Անոտացիա**

**Введение:** Работа относится к явлению трансформации и основана на теориях, имеющихся в профессиональной литературе [11, с. 565]. В статье рассматриваются трансформации аналитических конструкций с предлогами *ի, տը, ընդ, ըստ* в древнеармянском языке, которые считаются синтетическими конструкциями в современном армянском языке (3, с. 272; 10, с. 139).

**Методы и материалы:** Работа проводилась с использованием трансформационного метода и его приёмов, также использовалась диахроническая точка зрения. В систематизированном виде даны преобразования древнеармянских аналитических форм с предлогами в синтетические конструкции. **Анализ:** Явление трансформации интерпретируется подлинными фактами различных форм языка, отношение между выразительным и содержательным планами аналитических и сопоставительных структур разъясняется на лексическом и синтаксическом уровнях. **Результаты:** Как показывают языковые факты, изменения такого рода повлияли и на словообразовательный уровень языка – оформляя аффиксально-синтетические образования. Важность изучения перехода от аналитичности к агглютинации подчеркивается в сферах исторической лексикологии и в историческом словообразовании языка.

**Ключевые слова:** трансформация, генеративная модель, предлог, аналитическая конструкция, предложная конструкция, словообразовательный тип, аналитичность, синтетичность.

**Как цитировать:** Խաչատրյան Լ. Մ. *Трансформация предложных аналитических конструкций древнеармянского языка в синтетические конструкции*, // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри. 2024. Т. 1 (27). 78-89 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-78

**ՆԱԽԱԲԱՆ.** Աշխատանքը վերաբերում է փոխակերպման իրողությանը և կատարված է մասնագիտական գրականության մեջ առկա տեսությունների հիման վրա [11, էջ 565]: Հոդվածում դիտարկվում են հինհայերենյան *ի, տը, ընդ, ըստ* նախդիրներով վերլուծական կազմությունների փոխակերպումները, որոնք արդի հայերենում դիտվում են համադրական կառուցատիպեր (3, էջ 272: 10, էջ 139):

Համակարգված ձևով տրված են հինհայերենյան նախդիրներով վերլուծական ձևերի փոխակերպումները համադրական կառուցատիպերի իրողությունը մեկնաբանված է լեզվի տարբեր գոյավիճակների բնագրային վկայություններով, բացատրված է վերլուծական և համադրական կառույցների արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցությունը բառային և շարահյուսական մակարդակներում:

Վերլուծականությունից համադրական տիպի անցման ուղու ուսումնասիրությունը կարևորվում է լեզվի պատմական բառագիտության և պատմական բառակազմության առումներով:



**ԲՈՎՍՂԱԿՈՒԹՅՈՒՆ.** Հայերենի տարժամանակյա դիտվածքում փոխակերպման յուրահատուկ գործընթաց են ապրել որոշ բայական կապակցություններ (բայակապակցություններ), որոնց բաղադրիչները ժամանակի ընթացքում միաձուլվել և դարձել են ամբողջական՝ բաղադրյալ բայեր, օրինակ՝ առ կայծ մերձիլ > *առկայծել*, ընդ բերան հարկանել > *ըմբերանել*, ընդ գիրկն առնուլ > ընդգրկել, ընդ ձեռն տալ > *ընձեռնել*, ընդ կրուկ դառնալ > *ընկրկել*, ընդ գուճս հարկանել > *ընկճել*, քարամբ կոծել՝ ծեծել > *քարկոծել*, ակն արկանել > *ակնարկել*, ակն ածել > *ակնածել*, ունկն դնել > *ունկնդրել* և այլն [1, էջեր 184 – 189]:

Բայական այդ կապակցությունների մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն նախդիրներով վերլուծական կապակցությունները, որոնք ժամանակի ընթացքում վերածվել են համադրական կառույցների՝ տարբեր խոսքիմասային արժեքներով:

Դիտարկենք այդ կառույցները:

ա. Ի նախդիրով կապակցությունների փոխակերպումներ

Հին հայերենում *ի* նախդիրը եզակի տրականի հետ արտահայտում է եզակի ներգոյական հոլովի իմաստ՝ ի անձին – յանձին (անձի մեջ), հոգնակի հայցականի հետ՝ հոգնակի ներգոյականի իմաստ՝ ի անձինս – յանձինս (անձերի մեջ) [7, էջ 38]: Օրինակ՝

Ո՞րչափ ևս առաւել ձեզ արժան է, որ զբոլոր աշխարհս ունիք յիշխանութեան մեծի, հոգ *յանձին* տանել (Եղ., 172): Ոմանք գնոյն իսկ ցանգութիւն գիշութեան պոռնկութեան կատարէին *յանձինս* իւրեանց (Բուզ., 29):

Արդի հայերենում *հանձին* և *հանձինս* բառերում *ի* ձևույթի նախդրային արժեքը չի գիտակցվում. բառաձևերի բառական ու քերականական իմաստները մթագնել են, և այդ բառերը գոյականից անցել են կապերի շարքը<sup>1</sup>: Օրինակ՝ Ես *հանձին նրա* ճանաչեցի մի արիական քաղաքական գործչի (ԺՀԼԲԲ): *Հանձինս* մեր *պատմիչների*՝ հինգերորդ դարը մեզ է ներկայանում իր ամբողջ հասարակական-քաղաքական վայրիվերումներով (Մամուլ):

Հին հայերենում *ի* նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է գործիական հոլովի իմաստ<sup>2</sup>: Հմմտ. ի անուն – (յանուն). անունով, ի օգուտ (յօգուտ)– օգուտով, արդի հայերենում այդ բառերը կապեր են՝ «համար» նշանակությամբ, որոնց կառուցվածքում նախդրային արժեքը չեզոքացել է: Օրինակ՝

Սովորեցրիք... մարդկությանը պայքարի *Հանուն* ազատ, երջանկաբեր *աշխարհի* (ԱԻ, 2, 8): Ինչո՞ւ են նետվում, ի՞նչ թոհուրեհում, *Հանուն* ի՞նչ *բանի* կյանքերն են գոհում (ՊՍ, Ա, 358):

Արդի հայերենի *դեպի*, *բացի* կապերը ծագել են հին հայերենի նախդրային կապակցություններից՝ նախդրի խնդրի գեղջման հետևանքով. Ի նախդիրը պատկանել է ոչ

<sup>1</sup> Հին հայերենի որոշ կառույցներում Ի ձևույթն ընդգծված կերպով ունի նախդրային արժեք, հմմտ. Եւ մեք ... հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և գյօրինիչ, զի մեզ *ի պէտս* են և կարգչին իւրեանց *ի փառս* (Եզն., 14): Ի պէտս են - «կարիքների համար են», ի փառս են - «փառքի համար են»:

<sup>2</sup> Հմմտ. *ի+հայցական կառույցի* իմաստը. Եւ երդնու Շապուհ արքայ *յարեզակն* և *ի ջուր* և *ի կրակ* (Բուզ., 107)՝ (Եվ երդվում է Շապուհ արքան *արեզակով*, *ջրով* և *կրակով*):

թե *դեպ, բաց* նախադրություններին, այլ հայցական և բացառական հոլովներով արտահայտված խնդիրներին: Հմմտ. *դեպ ի տուն, դեպ ի լեռան, բաց ի նոցանե, բաց ի շինականե*: Հմմտ. Եւ եղև երկիրն փարաւոնի, *բաց յերկրե* (ի երկրե) քրմացն (Ծնն., ԽԵ, 22): Մի է Աստուած, և չիք այլ ոք *բաց ի նմանե* (Եղ., 29): *Դեպ ի մեզ* դիմեալ գան (Փարպ., 129)<sup>3</sup>:

Ժամանակի ընթացքում Ի ձևույթը ձուլվել է նախադրությանը և կորցրել նախորային արժեքը, և արդի հայերենում ունենք *դեպի, բացի* (ստուգաբանորեն) բաղադրյալ կապերը, որոնց կառուցվածքում Ի նախդրի գործառական դերը չեզոքացել է<sup>4</sup>: Հմմտ.

Բայց Աթիլյան և ոչ մի պահ Դադար չառած խուժեց *դեպի* Չքնաղ *ափերը* Վենետի (ԱԻ, 2, 148): Եվ *բացի խինդից* և առատ *բերքից*, մեկ-մեկ էլ մարդու... հոգւերից երգի (ՊՄ, Ա, 194):

բ. *Առ նախդիրով կապակցությունների փոխակերպումներ*

Հին հայերենում *առ* նախդիրը տարբեր հոլովների հետ արտահայտում է քերականական գանազան իմաստներ: Այսպես, հայցականի հետ այն արտահայտում է ուղևորման իմաստ՝ *առ ինքն* վերլուծական ձևով հանդես գալով իբրև *կոչել, բնակել, կուտել, գալ, հավաքել* և նմանատիպ բայերի լրացում: Օրինակներ.

Հրամանաւ արքունի կոչեաց *առ ինքն* զՍահակ սուրբ եպիսկոպոսն Ռշտունեաց (Եղ., 129): Զսուրբ վկայն իւր փոխեալ *առ ինքն* բնակեցոյց (Փարպ., 132): Եվ ինքն գնաց ի քաղաքն իւր փութանակի, կուտել *առ ինքն* զգօրս հայոց (Խոր., 169):

Ժամանակի ընթացքում *առ* նախդիրը ձուլվել է խնդրին, և վերլուծական ձևը հանդես է գալիս *առինքն* համադրական ձևով. վերջինս կախյալ բառակազմական հիմք է *առինքնել* բառի արտահայտության պլանում: *Առ* նախդիրն անանցական արժեքով պահպանում է նախնական ուղղության իմաստը, ինչպես՝ *առինքնել* - «դեպի իրեն գրավել՝ ձգել», *առինքնում* - «դեպի իրեն գրավելը՝ ձգելը» [5, էջ 28-34]: Օրինակ.

Ինձ *առինքնում էր* երիտասարդն ու գեղեցիկը (ԺՀԼԲԲ):

*Առ* նախդիրը հին հայերենում տրական հոլովի հետ արտահայտում է դադարման գաղափար. *առ անձին* նշանակում է «ինքն իր հետ, միայնակ լինել», հմմտ. Իւրաքանչիւր ոք *առ անձին* է քուրմ և պաշտօնեայ (Խոր., 249):

Ժամանակակից հայերենում գրաբարյան վերլուծական կառույցն արդեն համադրական կազմություն է՝ *առանձին*՝ ած./մկբ. նշանակություններով՝ «հատուկ, յուրահատուկ. անջատ, մեկուսի, գատ»: Օրինակ. 1. ած. Եվ վաղ թե ուշ դու պիտի ապրեիր Քո *առանձին* կյանքով (ՊՄ, Գ, 163): 2. մկբ. Դու ապրել ես կա՛մ այլոց հետ, կա՛մ *առանձին* (ՊՄ, Ա, 248):

*Առ* նախդիրը *ընթեր* մակբայի հետ հին հայերենում արտահայտում է «մերձ, մոտ» տեղի-տարածական նշանակություն և հանդես է գալիս ինչպես վերլուծական, այնպես էլ համադրական կառուցատիպերով: Հմմտ. *Առ ընթեր* գորդիսն մատուցեալ ի

<sup>3</sup> Գրաբարում «հանդեպ, դեպի» իմաստն արտահայտվում է նաև *դեպ* նախադրությամբ՝ տրականով խնդրառությամբ. Փախեան իւրաքանչիւր *դեպ* երեսաց իւրեանց (Խոր., 37): Յորժամ կշիռ *դեպ* արեգական պատահիցէ՝ յայնժամ իաւարի արեգակն (Եգն., 201):

<sup>4</sup> Իբրև գրաբանարանություն՝ երբեմն *դեպ* նախադրությունն արդի հայերենում գործածվում է առանց Ի նախդրի, հմմտ. Ու սուրաց հանց նա *դեպ* *Առյուծաբերդ*, Ազնանց հնուց բերդ (ԱԻ, 2, 87):

տեղի սպանմանն... կատարե՛ գկամս արքայի հանդերձ ամենայն ազգատոհմին (Խոր., 141): Երկու առիծունք կային *առընթեր ձեռացն* (Գ. Թագ., Ժ, 19):

Հին հայերենի *առընթեր* համադրական կազմությունն անցել է արդի հայերենին՝ նախկին իմաստներով, ինչպես՝ Հայրենիքի *սահմաններին առընթեր* Ոստիները մեր չարամիտ դավ են նյութում օր-գիշեր (ԱԻ, 2, 7): Եվ նա փոխարեն գորավարին մեծ՝ Տեղ տվեց նրան *առընթեր գահի* (ԱԻ, 2, 134):

*Առ* նախդիրը *հասարակ* գոյականի հայցական հոլովի հետ վերլուծական ձևով հին հայերենում արտահայտում է «ընդհանուր, հավասար, հավասարապես, մեկտեղ, միաբան» հատկանշային իմաստներ: Օրինակներ.

Եվ պարսաւորքն *առ հասարակ* դիպադեղունք, և շերտաւորքն ի սոււեր և ի տեգ նիգակի վառեալք (Խոր., 72): Որով հնար է... շահել գոգիս...կանանց *առ հասարակ* (Փարպ., 14): Ապա *առ հասարակ* անկանէին առաջի նորա (Բուզ., 3):

Հին հայերենի վերլուծական կազմությունն արդի հայերենում հանդես է գալիս համադրական ձևով՝ արտահայտելով «ամբողջապես, ընդհանրապես, սովորաբար» հատկանշային իմաստներ: Օրինակներ. Շատ էլ ծույլ է, ինչպես *առհասարակ* երգիչները (ՀԹ, III, 95): Ճակատն *առհասարակ* հո համբույրի տեղ չէ՞ (ՊՍ, Ա, 339):

*Առ ձեռն* նախդրավոր կապակցությունը հին հայերենում նշանակում է «պատրաստ, պատրաստական, դյուրին, հեշտ»: Հմմտ.

*Առ ձեռաց* կորովությունն զնիգակն ընդ բերան արկաներ գորավարին Մանուէլի (Բուզ., 204): Չո՞ր հիւղ *առ ձեռն* դնիցեն Աստուծոյ (Եզն., 25):

Արդի հայերենում ունենք *առձեռն* համադրական կազմությունը՝ բառիմաստի ընդլայնմամբ. 1. «դյուրամատչելի, դյուրակիր» (1865 թվականին Վենետիկում վերահրատարակվում է «*Առձեռն* բառարան հայկազգեան լեզուի» նշանավոր բառարանը՝ Մկրտիչ Ավգերյանի հեղինակությամբ): 2. «Առկա, կանխիկ» (*Առձեռն* արտարժույթ):

*Առ այժմ* նախդրավոր վերլուծական կազմությունը հին հայերենում արտահայտում է «մինչև այս պահը, այս պահից սկսած. հիմա» մակբայական իմաստներ: Հմմտ.

Դու *առ այժմ* երթ, և յորժամ ժամ լիցի, կոչեցից գքեզ (Գործ., ԻԴ, 25): *Առ այժմ* զիս՝ ըդ օրէն է մեզ գնալ (Ագաթ., 130): *Առ այժմ*, այսպէս ասէ (Ագաթ., 267):

Արդի հայերենում հինհայերենյան վերլուծական կազմությունը հանդես է գալիս համադրական կազմությամբ՝ *առայժմ*, պահպանելով նախնական իմաստները, հմմտ.

Թագավորն ապրած կենա. իմ Շաղափը *առայժմ* ցերեկով մնալու է իսկական շաղափ (ՀԹ., III, 249): Ես խոսքեր ունեմ քեզ համար պահված... Որ *առայժմ* ինքս էլ չեմ գտել (ՊՍ, Ա, 506):

*Առ* նախդիրը տեղանիշ գոյականի հայցական հոլովի հետ արտահայտում է տեղի՝ տարածության իմաստ՝ խնդրի հետ կազմելով վերլուծական կառույց՝ մակբայական նշանակությամբ, ինչպես՝ *առ ափն*. «ափին, ափի մոտ»: Հմմտ.

Եւ դիպեցան միմեանց *առ ափն* ծովու Բզնունեաց (Բուզ., 17): Մածեալք բնակեալք էին իբրև զաւագ *առ ափն* ծովու բազմութեամբք (Բուզ., 111): Կարգէր և կազմէր զճակատն...*առ ափն* Տղմուտ գետոյն (Եղ., 116): Խաղայ գայ անթիւ բազմութեամբ *առ ափն* գետոյն, որ Կուրն կոչի (Ասող., 171):

Արդի հայերենում ունենք համաձայնավոր *առափնյա* «ափի մոտ, մերձափնյա» կազմությունը, որի սերող հիմքը հինհայերենյան *առ ափն* նախդրավոր կառույցն է: *Առափնյա* բառն արդի հայերենում բնորոշվում է հատկանշային (ածականի) արժեքով: Հմմտ .

Ծիծաղախիտ Վանա ծովի Փոքրիկ գյուղից *առափնյա*, Ծովն է մտնում գաղտագողի Ամեն գիշեր մի տըղա (ՀԹ, I, 275):

Գ.Ջահուկյանը *առափնյա*, *առժամանակյա*, *առօրյա* կազմությունների *առ-* ածանցը դիտարկում է այն ձևությունների շարքում, որոնք «գործածվում են միայն տարասեռ կադապարներում, և որոնցով կազմված բառերը կարող են մեկնաբանվել որպես նախաձանց-վերջաձանցավոր կազմություններ» [12, էջ 191: 8, էջեր 98-99: 9, էջեր 287-288]:

*Առ* նախդիրը հին հայերենում *ժամանակ* բառի հայցական հոլովի հետ կազմում է վերլուծական կառույց՝ «ներկա պահին, նույն պահին» իմաստով: Օրինակներ. Ամենայն իրատ *առ ժամանակն* ոչ ուրախութեան թուի, այլ՝ տրտմութեան (Եբր., ԺԲ, 11): *Առ ժամանակ* մի խաղաղացաւ երկիրս հայոց ( Բուզ.,16): Մի յետ կատարելոյ փորձութեանն ի բաց եկաց ի նմանէ սատանայ *առ ժամանակ* մի (Ղեւ., 81):

Արդի հայերենում *առժամանակ* համադրական կազմությունը նախնական իմաստի նկատմամբ ցուցաբերում է որոշակի տարբերություն՝ «որոշ ժամանակով, ժամանակավորապես»: Հմմտ. Գյուղացիք սովորական աշխատանքներին տվին իրենց, և ճամփի հարցն *առժամանակ* քնեց (ԺՀԼԲԲ):

*Առ* նախդիրը *երես* բառի հայցական հոլովի հետ կազմում է *առ երես* նախդրավոր կապակցությունը՝ «երեսանց, արտաքուստ» մակբայական նշանակությամբ, հմմտ .

Ոչ երբեք ի մարդկանէ ելեալ պայն՝ եթէ *առ երես* արարած իցէ (Եզն., 99):

Արդի հայերենում վերլուծական այդ կապակցությունն անկախացել է համադրական կառուցատիպով՝ *առերես*, որ ունի «ոչ սրտանց, ձևական, ցուցադրաբար» նշանակություններ, ինչպես՝ Նա, որ դեռ հոգին պահել էր այնպես Տակավին զվարթ, գուցե *առերես* (ՀԹ, II, 209):

Ինչպես ցույց է տալիս լեզվական իրողությունների քննությունը, վերլուծականությունից համադրական բարդության անցած կապակցությունների մեջ զգալի կշիռ ունեն *առ* նախդրով կապակցությունները, իսկ *ի*, *բաց*, *դէպ* նախդիրներով կառույցներն այս մարզում նվազ հաճախականություն ունեն:

գ. *Ընդ նախդիրով կապակցությունների փոխակերպումներ*

Հին հայերենի *ընդ* նախդիրով կազմված որոշ վերլուծական կապակցություններ (մակբայներ) արդի հայերենում անցել են համադրական կառուցատիպերի՝ պահպանելով մակբայական արժեքը [4, էջեր 228-229: 2, էջեր 273-274]: Այդ կառույցներից են՝ *ընդ դէմ*, *ընդ առաջ*, *ընդ հուսպ*, *ընդ հանուր*, *ընդ սմին*, *գիրկ ընդ խառն* (*լինել*) և այլն: Հմմտ *Ընդ դէմ*–«դեմ, հակառակ»–Ոչ կարեմք *ընդ ճշմարտութեան դէմ* գործել ինչ (ՆՀԲ, 1, 767):

Արդի հայերենում՝ 1. «դեմ, վրա» - Եվ հարձակվեցի *ընդդէմ* թշնամուն (ՀԹ, I, 84): 2. «հակառակ» - Եվ մենք, *ընդդէմ* մեր իսկ կամքին, Պատվեր տըվինք մեր բանակին (ՀԹ., I, 332):

*Ընդ* նախդիրը *հանուր* ածականական բաղադրիչի հետ («բոլոր, ամեն») կազմում է հարադրություն՝ *ընդ հանուր* վերլուծական կառուցատիպով, որ հին հայերենում գոր-

ծածվում է նաև համադրական ձևով՝ հետևյալ նշանակություններով. 1.«ամենուրեք, առհասարակ»: Հմտ. Այս կառույցը զարմանալիք ... յամենայն կողմանս վարզին և *ընդհանուր* արշալին (Եգն., 18): 2.«ընդհանրական, տիեզերական, բոլոր, ամենայն». Աղաղակեմք ի *ընդհանուր* ամենայն արարածոց տեսակս՝ ասելով՝ օրհնեցեք ամեայն գործք տեսոն գտեր (ՆՀԲ, 1, 771):

Արդի հայերենում *ընդհանուր* բառը համադրական կազմություն ունի. բազմիմաստ է<sup>5</sup>. 1.«Բոլորին վերաբերող, բոլորի վրա տարածվող». Թե նոր գոհ է պետք *ընդհանուր* գործին՝ այդ ո՞ւմ եք փնտրում, Ես արդեն հո՛ կամ (ՊՍ, 1, 377): 2.«Միասին, միասնական, համատեղ. Հյուսիսային և հարավային իշխանությունները միացել են և *ընդհանուր* ուժով Դվնո վրա են գալիս (Մուր., ԺՀԼԲԲ): 3.«Բարձրագույն, գլխավոր». Առաջին տեղը կանգնած էր Մուշեղ Մամիկոնյանը՝ Հայոց գորքերի *ընդհանուր* հրամանատարը (Բ, Ս., 356):

*Ընդ առաջ* – հին հայերենում՝ «առջևը, դիմացը». – Եւ ահա նա ելցէ *ընդ առաջ* քո (Ելք, Դ, 14): Թեոդոս կայսր ոչ կամեցաւ *ընդ առաջ* նորա ելանել պատերազմաւ (Եղ., 7):

Արդի հայերենում՝ *ընդառաջ* – 1.մակբայ. «առաջ, առաջակողմը» – Մերթ դեպ ետև կը թեքի, մերթ ալ դեպի *ընդառաջ* (ԴՎ, ԺՀԼԲԲ): 2. կապ՝ ուղղության իմաստով. Թոշում են երգերս նրան *ընդառաջ* (ՀԹ, 1, 152):

*Ընդ հուս* մակբայը հին հայերենում վերլուծական կառուցատիպի է՝ նախադրավոր կապակցություն, և նշանակում է «իսկույն, անմիջապես. շուտով, հետզհետե»: Հմտ.

Ապա սպաս տան Տեառն դարձցի ի Բաբելոնէ այժմ *ընդ հուս* (Երեմ., ԻԷ, 16):

Արդի հայերենում ունի համադրական կառուցատիպ՝ *ընդհուս*՝ բազմիմաստ նշանակություններով. 1.«Անմիջապես, իսկույն». Նայվածքը հազիվ ընդգրկած՝ արշավն *ընդհուս* կը սպասեր (ԴՎ, ԺՀԼԲԲ): 2. «Մերձենալու աստիճան». Ժայռերն *ընդհուս* մոտեցել էին իրար (ՄԽ, ԺՀԼԲԲ):

*Գիրկ ընդ խառն լինել* վերլուծական կապակցությունը հին հայերենում նշանակում է «գրկախառնվել. գոտեմարտել», ինչպես՝ Յորժամ *գիրկ ընդ խառն լինիցի* (Յուդա ընդ Յիսուսի) ի համբուրել գնա, յայնժամ արկեցեն ի նա ձեռս (ՆՀԲ, 1, 558):

Հինհայերենյան *գիրկ ընդ խառն* բայական հարադրությունը ժամանակակից հայերենում հանդես է գալիս բաղադրիչների միաձույլ գրությամբ՝ *գիրկընդխառն*՝ «գրկախառնված, իրար գրկած» մակբայական նշանակությամբ, ինչպես՝

Մեծ ու փոքր *գիրկընդխառն* գետնին վրա կքաշկոտվին (ՏՉ, ԺՀԼԲԲ)<sup>6</sup>:

*դ. Ըստ նախադիրով կապակցությունների փոխակերպումներ*

Հին հայերենի *ըստ* նախադիրով վերլուծական կապակցությունները նվազ հաճախականություն են դրսևորում փոխակերպական գործընթացում. հինհայերենյան կառույցները արդի հայերենում հիմնականում պահպանել են նախկին (վերլուծական) կա-

<sup>5</sup> Ընդհանրապես, բազմիմաստության բնագրային բոլոր վկայությունները նոր բան չի ավելացնում համադրական կառուցատիպի բառերի արտահայտության պլանին. հետևաբար հարկ չենք համարում բնագրային օրինակներ բերել դիտարկվող բառի բոլոր իմաստների համար:

<sup>6</sup> Արդի հայերենում նույն բաղադրյալ հիմքով ունենք *գիրկընդխառնվել*, *գիրկընդխառնություն* և *գիրկընդխառնում* կազմությունները:

ռուցատիպը, ինչպես՝ *ըստ իս, ըստ ամնայնի, ըստ էութեան, ըստ այսմ՝ այդմ՝ այնմ, ըստ արժանւոյն* և այլն:

Այնուամենայնիվ, *ըստ* նախդիրով որոշ կապակցություններ անցել են համադրական կառուցատիպի՝ բաղադրիչների ձուլման կամ կրկնվող արմատներից մեկի բացթողման հետևանքով: Այսպես, հին հայերենում՝ *ըստ որում, ըստ երևոյթին, ըստ ինքեան, ըստ մասնեայ* նախդրավոր կապակցություններ են՝ վերլուծական կառույցներ: Հմնտ.

Բարերար է, *ըստ որում* աստուած է. ահագին է (ՆՀԲ, 1, 787): Չատեցաւ յայլոցն, և ներողութիւն եղև նմա՝ *ըստ ինքեան* ագանել (ՆՀԲ, 1, 885):

Ժամանակակից հայերենում այդ կազմությունները հանդես են գալիս բաղադրիչների միաձույլ գրությամբ և դիտվում են համադրական բարդություններ՝ *ըստորում, ըստինքյան, ըստերևոյթին, ըստմասնյա* և այլն:

Արմատակրկնությամբ և *ըստ* նախդիրով որոշ վերլուծական կազմություններ արդի հայերենում ձեռք են բերել համադրական կառուցատիպ՝ առաջին բաղադրիչի բացթողման (զեղչման) միջոցով, ինչպես՝ *ամ ըստ ամի > ըստամյա, օր ըստ օրէ > ըստօրյա* և այլն:

*Ըստ* նախդիրով հինհայերենյան որոշ համադրական կազմություններ արդի հայերենում հանդես են գալիս նույն կառուցատիպով՝ կրելով հնչյունական որոշակի փոփոխություն, ինչպես՝ *ըստանձնել > ստանձնել, ըստգտանել > ստգտանել, ըստգտանք > ստգտանք* և այլն:

Ժամանակակից հայերենի նախաձանցավոր կազմություններում հանդիպող գրաբարյան նախդիրները մենք անվանում ենք «նախդրային ածանցներ»՝ ելնելով այն հանգամանքից, որ մի դեպքում՝ դրանց մի զգալի մասը մթագնել ու ձուլվել է արմատին (առույգ, զանցանք), մյուս դեպքում՝ պահպանել է բառակազմական արժեքը (ընդդեմ, ընդհանուր, առերես, առայժմ և այլն) [6, էջ 52]:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Լեզվի տարժամանակյա դիտվածքում նրա բառային մակարդակի մեջ տեղի են ունենում որոշակի գործոններով պայմանավորված փոփոխություններ, որոնք կարող են փոխել բառերի արտահայտության պլանը: Այդ կարգի փոփոխություն է վերլուծական կառույցների փոխակերպումը համադրական (կցական) տիպի, որ կարելի է ցույց տալ հին հայերենի և արդի հայերենի բառային կազմերի զուգադրական քննությունից:

Վերլուծականությունից համադրական տիպի անցումը տարժամանակյա գործընթաց է, որ տարածվում է նաև հին հայերենի նախդրավոր որոշակի կապակցությունների վրա, որոնք լեզվի հին շրջանից փոխանցվել են արդի հայերենին և հանդես են գալիս բառային անկախ արժեքով. այլ կերպ ասած՝ շարահյուսական կառույցներն անցել են բառային մակարդակ: Լեզվի տարժամանակյա դիտվածքում կենսունակ բառակազմական արժեք ունեն *ի, առ, ընդ* և *ըստ* նախդիրները, որոնք հին հայերենում խնդիրների հետ կազմում են վերլուծական ձևեր:

Այդ կարգի փոխակերպումներից են՝ *ի անձին > հանձին, ի անձինս > հանձինս, առ ինքն > առինքն(ել), առ անձին > առանձին, առ ընթեր > առընթեր, առ հասարակ >*

*առհասարակ, առ ժամանակ > առժամանակ, առ երես > առերես, ընդ դէմ > ընդդէմ, ընդ առաջ > ընդառաջ, ընդ հուպ > ընդհուպ, ընդ հանուր > ընդհանուր, ըստ որում > ըստորում, ըստ ինքեան > ըստինքյան* և այլն:

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, այդ կարգի փոփոխություններն ազդել են լեզվի բառակազմական մակարդակի վրա՝ տարժամանակյա դիտվածքում առաջ բերելով մասնիկավոր-համադրական կազմություններ:

Վերլուծականությունից համադրական տիպի անցման ուղու ուսումնասիրությունը կարևորվում է ժամանակակից հայերենի բառակազմական տիպաբանության բնութագրման առումով:

## **ԲՆԱԳՐԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ**

(համառոտագրություններով)

### **ա) Հինհայերենյան բնագրեր**

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909:

Ասողիկ – Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885:

Բուզ. – Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913

Եզն. – Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ. – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:

Խոր. – Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

Ղեւ. – Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս.Պետեր., ի տպարանի Ի.Սկորոխո-րովի, 1887:

Փարպ. – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփլիս, 1904:

### **բ) Աստվածաշնչի համառոտագրություններ**

Գ Թագ. – Թագաւորութեանց Գ

Գործ. – Գործք Առաքելոց

Եբր. – Թուղթք Պաւղոսի Առաքելոյ առ Եբրայեցիս

Երեմ. – Երեմիա

Ծնն. – Գիրք Ծննդոց

### **գ) Արդիհայերենյան հեղինակների հապավումներ**

ԱԻ – Ալ. Իսահակյան, Բանաստեղծություններ, հ. 2, Եր., 1950:

ԴՎ – Դ. Վարուժան (Ըստ ԺՀԼԲԲ):

ՀԹ – Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր., 1969:

Մուր. – Մուրացյան, Երկեր, հ. Ա, Եր., 1970:

ՊՍ – Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր., 1972-1973:

ՍԽ – Ս. Խանգաղյան (Ըստ ԺՀԼԲԲ):

ՏՉ – Տ. Չոլկյուրյան (Ըստ ԺՀԼԲԲ):

Ը – Ըաֆֆի, Սամվել, Եր., 1969:

### **դ) Բառարաններ**

1. Առձեռն բառարան հայկազեան լեզուի (ԱԲ), Երկրորդ տպագրություն, Վենետիկ, Ի Մուրք Ղազար, 1865:

2. ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, 1969 – 1980:

3. Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրություն Թադեոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1895:
4. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), Երկասիրություն երից վարդապետաց, Գ.Աւետիքեան, Խ.Սիւրմէլեան, Մ.Աւգերեան, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836 -1837:

**d) Dictionaries**

1. Handbook of the Haikaznian language, Second edition, Venice, Saint Lazarus, 1865.
2. Explanatory dictionary of the Modern Armenian language, volumes 1-4, 1969 - 1980.
3. Concordance of Old and New Testaments, by Thaddeus Astvatsaturian Arapkertsy, Jerusalem, 1895.
4. A new dictionary of the Haikazian language, by G. Avetikian, Kh. Surmelian, M. Augerian, vv. A-B, Venice, in the printery of St. Lazarus, 1836-1837.

**Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն**

1. **Աբեղյան Մ.** *Հայոց լեզվի տեսություն*: Երևան: «Միտք» հրատ.: 1965: 699 էջ:
2. **Աբրահամյան Ա.** *Գրաբարի ձեռնարկ*: Երևան: «Լույս» հրատ.: 1976: 558 էջ:
3. **Աղայան Է.** *Հնդհանուր և հայկական բառագիտություն*: Երևան: ԵՂ հրատ.: 1984: 370 էջ:
4. **Բագրատունի, Ա.** *Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց*: Սուրբ Ղազար: Վենետիկ: 1852: 744 էջ:
5. **Գյուրջինյան, Դ.** «Առ նախորի բառակազմական արժեքը» // *Լրաբեր հասարակական գիտությունների*: N 3: Երևան: 1987: 28-34 էջեր:
6. **Խաչատրյան Լ.** *Բառակազմական և ձևաբանական կադապարները ժամանակակից հայերենում*: Երևան: «Զանգակ – 97» հրատ.: 2011: 272 էջ:
7. **Խաչատրյան Լ., Թոսունյան Գ.** *Գրաբարի դասագիրք*: Երևան: «Զանգակ–97» հրատ.: 2004: 383 էջ:
8. **Խաչատրյան Լ. Լ.** *Ղեռնդ Վարդապետի «Պատմություն» երկի լեզուն*: Երևան: Copy Print LLC հրատ.: 2022: 188 էջ:
9. **Հովսեփյան Լ.** *Գրաբարի բառակազմությունը*: Երևան: ՀՀ ԳԱԱ հրատ.: 1987: 375 էջ:
10. **Պետրոսյան Հ.,** *Հայերենագիտական բառարան*, Երևան: «Հայաստան» հրատ.: 1987: 686 էջ:
11. **Զահուկյան Գ.** *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*: «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ.: Երևան: 1974: 587 էջ:
12. **Զահուկյան Գ.** *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*: «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ.: Երևան: 1989: 319 էջ:

**References**

1. **Abeghyan M.** Theory of the Armenian language [*Hayots' lezvi tesut'yun*], Yerevan: "Mitk" publ., 1965. 699 p. (in Armenian)
2. **Abrahamyan A.** A course of Old Armenian [*Grabari dzer'nark*], Yerevan: "Luys" publ., 1976. 558 p. (in Armenian).
3. **Aghayan E.** General and Armenian vocabulary. [*Yndhanur yev haykakan barragitut'yun*]. Yerevan: YU publ., 1984: 370 p. (in Armenian)
4. **Bagratuni A.** Armenian grammar according to developments, [*Hayerēn k'erakanutiun i pets zargats'elots'*], Venetik, 1852. St. Lazar. 744 p. (in Armenian)



5. **Gyurjinyan D.** The lexical value of the preposition Առ [*Arr nakhdri barrakazmakan arzhek'y*], Lraber hasarakakan gitut'yunneri, "ՀՀ GAA Gitut'yun" publ., Yerevan. 1987: v. 3, 1987. N 3, pp. 28-34. (in Armenian)
6. **Khach'atryan L., Tosunyan G.** A course of Old Armenian [*Grabari dasagirk'*], Yerevan, "Zangak-97" publ., 2004. 383 p. (in Armenian)
7. **Khach'atryan L.** Lexical and morphological patterns in Modern Armenian, [*Barrakazmakan yev dzevabanakan kaghaparnery zhamanakakits' Hayerenum*], Yerevan. "Zangak 97" publ., 2011. 272 p. (in Armenian)
8. **Khachatryan L.** The language of the work "History" by Ghevond Vardapet. [*Ghevond Vardapeti «Patmut'awn» yerki lezun*]. Yerevan. Copy Print LLC publ., 2022. 188 p. (in Armenian)
9. **Hovsepyan L.** Grabar vocabulary. [*Grabari barrakazmut'yuny*]. Yerevan. "ՀՀ GAA" publ., 1987. 375 p. (in Armenian)
10. **Jahukyan G.** Fundamentals of Modern Armenian theory, [*Zhamanakakits' hayereni tesut'yan himunk'nerč*], Yerevan. "Haykakan SSH GA" publ., 1974. 587 p. Yerevan. (in Armenian)
11. **Jahukyan G.** The semantics and word formation of Modern Armenian, [*Zhamanakakits' hayots' lezvi imastabanut'yun ev barakazmut'yun*], Yerevan. "Haykakan SSH GA" publ., 319 p. (in Armenian)
12. **Petrosyan H.** Armenology Dictionary. [*Hayerenagitakan barraran*]. Yerevan. «Hayastan»6 publ., 1987. 686p. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **17. 02. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **11. 03. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Լալիկ Մնացականի ԽԱՉԱՏՐՅԱՆ՝** բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀԽՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, Երևան, ՀՀ,  
Էլ. հասցե՝ [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru), [orcid.org/000-0002-2107-6210](https://orcid.org/000-0002-2107-6210)

**Lalik Mnazakan KHACHATRYAN:** Doctor of Philology, Professor,  
Head of Linguistics Research Laboratory of ASPU, Yerevan, RA,  
e-mail: [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru), [orcid.org./000-0002-2107-6210](https://orcid.org/000-0002-2107-6210)

**Лалик Мнацаканович ХАЧАТРЯН:** доктор филол. наук, профессор,  
Зав. лаборатории лингвистических исследований АГПУ, Ереван, РА,  
эл. адрес: [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru), [orcid.org./000-0002-2107-6210](https://orcid.org/000-0002-2107-6210)

ՀՏԴ՝ 81՝ 37

DOI: 10.52971/18294316-2024.27.1-90

Հ.-Ե. \*(S)Ս(E)- «ԿՏՐԵԼ, ԾԱԿԵԼ» ԱՐՄԱՏԻՑ ՍԵՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ  
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Հովհաննես Լ. Չաքարյան*

«Տաթև» գիտակրթական համալիր, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

*Նախաբան.* Հոդվածը նվիրված է հ.-ե. \*(s)ս(e)- «կտրել, ծակել» պարզական արմատից անմիջականորեն սերված մի շարք այնպիսի բառերի կամ արմատների ստուգաբանությանը, որոնք գրային հայերենում սկսվում են վ-, գ- կամ աւ- հնչյուն(ներ)ով: *Մեթոդներ և նյութեր.* Ստուգաբանությունները կատարված են հնչյունական, բառակազմական, իմաստային վերլուծությունների հիման վրա, ներքին ու արտաքին վերականգնումների և պատմահամեմատական հետազոտության եղանակների կիրառմամբ: Օգտագործված են ինչպես հանրահայտ ստուգաբանական բառարաններում ու հետազոտություններում, այնպես էլ հայերենի բարբառային բառարաններում ընդգրկված նյութերը: *Վերլուծություն.* Հնդեվրոպաբանության մեջ ընդունված է այն կարծիքը, թե հայերենի վ- սկզբնահնչյունով բառերը բնիկ չեն՝ բացառությամբ մեկ տասնյակ բառերի, որոնք համարվում են կանոնից շեղումներ: Սույն հոդվածում, սակայն, բացահայտված է վ- սկզբնահնչյունով բնիկ հայերեն բառերի ծագման օրինաչափությունը, որի հիման վրա կատարված են նոր ստուգաբանություններ: *Արդյունքներ.* Հոդվածի շրջանակներում առաջարկված են հետևյալ բառերի նոր ստուգաբանությունները. *վարսել, վարսամ, աւեր, վտառանք, վիրապ, վիհ, վախ, վնաս, վտանգ, վթար, գայթ, վրէպ, գամ, գայլիկոն, գչիր, վիատ* և այլն:

**Բանալի բառեր՝** *հայոց լեզու, հ.-ե. նախալեզու, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, ձայնդարձ, ածանց, սահող s, \*ս ձայնորդ, փոխառություն:*

**Ինչպես հղել՝** Չաքարյան Հ., Հ.-Ե. \*(s)ս(e)- «կտրել, ծակել» արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024: Հ. 1 (27): 90 - 101 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-90

## THE ETYMOLOGY OF SEVERAL ARMENIAN WORDS DERIVED FROM PIE ROOT \*(S)U(E)- «TO CUT, TO PIERCE»

*Hovhannes L. Zakaryan*

"Tatev" Center of Research and Education, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** The article is devoted to the etymology of a number of Armenian words or roots that derived from the PIE root \*(s)u(e) - “to cut, to pierce” and in written Armenian begin with the sound(s) վ-, գ- or տլ-. **Methods and materials:** Etymological research were carried out on the basis of phonetic, lexical, semantic levels, using methods of internal and external reconstructions and comparative-historical methods. Materials included in well-known etymological dictionaries and studies, as well as in dictionaries of Armenian dialects, were used. **Analysis:** In Indo-European studies it is generally accepted that the Armenian words with the initial sound վ- are non-original, with the exception of about a dozen words that are considered deviations from the norm. The present article reveals the regularity of the origin of native (inherited) Armenian words with the initial sound վ-, due to which new etymologies are put forward. **Results:** Within the framework of the research we suggest new etymological approaches to the following words: վարսել, վարսամ, տեր, վտառանք, վիրապ, վիհ, վախ, վնաս, վտանգ, վրար, գայթ, վրէպ, գամ, գայլիկոն, գչիր, վիստ etc.

**Key words:** Armenian, PIE, root variants, initial sound, determinative, vowel gradation, affix, s-mobile, sonorant \*u, loanword.

**Citation:** Zakaryan H. *The Etymology of Several Armenian Words Derived from PIE Root \*(s)u(e)- «to Cut, to Pierce»*, // «Scientific works» of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 90-101 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-90

## ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВ, ВОЗНИКШИХ ОТ ПИЕ КОРНЯ \*(S)U(E)- «РЕЗАТЬ, КОЛОТЬ»

*Оганес Л. Закарян*

Научно-образовательный комплекс "Татев", Ереван, РА

### Аннотация

**Введение:** Статья посвящена этимологии ряда армянских слов или корней, которые возникли от ПИЕ корня \*(s)u(e)- «резать, колоть» и в письменном армянском языке начинаются со звука (звуков) վ-, գ- или տլ-. **Методы и материалы:** Этимологии осуществлены на основе фонетического, лексического, семантического анализов, с использованием методов внутренней и внешней реконструкций и историко-сравнительного исследования. Используются материалы, включенные в известные этимологические словари и исследования, а также в словари армянских диалектов. **Анализ:** В индоевропеистике общепринято мнение, что в армянском языке слова с начальным звуком վ- являются неисконными, за исключением примерно десятка слов, которые считаются отклонениями от нормы. В настоящей статье, однако, вскрывается закономерность происхождения исконно армянских слов с начальным звуком վ-, благодаря чего предлагаются новые этимологии. **Полученные результаты:** В рамках статьи предлагаются новые этимологии следующих слов: վարսել, վարսամ, տեր, վտա-

ռանք, վիրապ, վիհ, վախ, վնաս, վտանգ, վրթար, գայթ, վրեպ, գամ, գայլիկոն, գշիր, վիատ, վավեր, վստահ, հաւատ, հավաստ, հաւասար, ապաւէն և ռ. ժ.

**Ключевые слова:** армянский язык, ПИЕ язык, корневые варианты, начальный звук, детерминатив, чередование, аффикс, s-mobile, сонорный звук \*y, заимствование.

**Как цитировать:** Закарян О. *Этимология некоторых армянских слов, возникших от ПИЕ корня \*(s)u(e)- «резать, колоть»*. // «Научные труды» IIIЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1(27). 90-101 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-90

**ՆԱԽԱԲԱՆ.** Հոդվածը նվիրված է հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» պարզական արմատից անմիջականորեն սերված մի շարք այնպիսի բառերի կամ արմատների ստուգաբանությանը, որոնք գրային հայերենում սկսվում են վ-, գ- կամ աւ- հնչյուն(ներ)ով:

Ստուգաբանությունները կատարված են հնչյունական, բառակազմական, իմաստային վերլուծությունների հիման վրա, ներքին ու արտաքին վերականգնումների և պատմահամեմատական հետազոտության եղանակների կիրառմամբ: Օգտագործված են ինչպես հանրահայտ ստուգաբանական բառարաններում ու հետազոտություններում, այնպես էլ հայերենի բարբառային բառարաններում ընդգրկված նյութերը:

Հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» պարզական արմատի տարալեզու ածանցյալների մի խումբ ստուգաբանված է և տեղ է գտել հանրահայտ բառարաններում [15: 14]: Դրանց թվում կան մի քանի հայերեն բառեր (տե՛ս ստորև): Մակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ կան նույնարմատ չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված հայերեն ևս մի շարք բառեր, որոնց հայտնաբերումն ու ստուգաբանությունը կամ ճշգրտումը կարևոր ու արդիական են հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով: Այդ բառերի ստուգաբանությունն էլ հոդվածի նորույթն է:

#### **Ինդրի դրվածքը և հետազոտության նպատակը**

Ինչպես հայտնի է, հ.-ե. \*u (w) ձայնորդը հայերենում բառամիջում և բառավերջում վերածվել է առավելապես վ/ւ, գ կամ ու հնչյունների (\*diw- >տիւ, \*awed- >աւետ, \*g<sup>w</sup>ow- >կով, \*owi-pa- >հովիւ, \*g<sup>w</sup>owio- >կոզի, \*rew- >արեգ, \*bhyt- >բույթ, \*ty >դու ևն) [4, էջեր 488-494]:

Ինչ վերաբերում է բառակազմին, ապա հայերենագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ այդ դիրքում հ.-ե. \*u- ձայնորդը վերածվել է միայն գ-ի կամ ու-ի (չկա բացատրություն, թե ինչու չէր կարող վերածվել վ-ի), իսկ վ-ով սկսվող հայերեն բառերը իբրև թե փոխառություններ են մեծ մասամբ իրանական աղբյուրներից [12, էջ 557-558: 2, էջ 318]: Կասկածի ենթարկելով կարծրատիպի վերածված այդ կարծիքը՝ առաջադրել ենք այն վարկածը, որ վ սկզբնահնչյունով հայերեն բառերի մեծագույն մասի հայերեն հնագույն ձևերում այդ վ-ն եղել է ոչ թե սկզբնահնչյուն, այլ հաջորդել է հետագայում ընկած թույլ սկզբնաձայնավորին կամ սահող \*s-ին, այսինքն՝ իրականում եղել է բառամիջյան \*u ձայնորդ, որի զարգացման օրինաչափ արդյունքներից մեկն է վ/ւ-ն: Այս վարկածը հիմնավորող մի շարք ստուգաբանություններ արդեն ներկայացրել ենք մեր մի քանի հոդվածներում [6: 8 ևն]: Սույն հոդվածում շարունակել ենք այդ աշխատանքը մասնավորապես հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատից սերված հայերեն նյութի առնչությամբ:

Քննարկվող հայերեն բառերի շարքում կան հոմանիշներ (վարսել – գամել, վետ «ծակ» – վտառ «անցք», վնաս – վթար, վիրապ – վիհ – վախ «անդունդ», վերք – վրին «վերք», գերծանել «ածիլել» – վիրալ «սափրել», գայլիկոն – գչիր «շաղափ», վախ «ահ» – վտանգ, գայթ «սխալ» – վրեպ, որոնց միջև փորձել ենք գտնել նաև ծագումնաբանակապ կապեր, մինչդեռ դրանք մինչ այժմ բխեցվել են միանգամայն տարբեր աղբյուրներից:

**Հետազոտության ընթացքը և արդյունքները**

Հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատը գիտական աղբյուրներում ներկայացված է տարբերակներով՝ № 1944, սյեր-4 «կտրել, ծակել», № 2069, \*uā-1, uō-, uə- «խփել, խոցել, վիրավորել», № 2070, \*uen- «խփել, խոցել, վիրավորել», № 2133, \*uel-8 «պատռել, վերք; գողանալ», № 2168, \*uer-7 «պատռել, ճղել», № 2217, \*urēg-, urōg-, urəg- «կտրել, փշրել, ջարդել» [15], \*swer- «թարախակալել (վերք)», \*swergh- «հիվանդ լինել, տառապել», \*wrañ- «վերք», \*wrağ'h- «փուշ, ասեղ» [14], \*werəg-, \*wreğ'- «ծակել, կտրել» [17, peзaтb] նև:

Նշված արմատից սերված են համարվում հայ. **վերք** «1. խոց, կեղ, 2. Վնասվածք, 3. (հնցծ.) թարախ, շարավ» (որից՝ **վիրավոր** «խոցված, վնասված») <\*(s)u(e)- «կտրել, ծակել» [13, էջ 710-711]<sup>1</sup>, **վանդել** «1. ոչնչացնել, ավերել, 2. հիվանդանալ» [15, № 2070, \*uen- «խփել, խոցել, վիրավորել»]<sup>2</sup>, **(հ)երգիծանել** «1. պատռել, կտրել, ճեղքել, պայթեցնել, 2. գծել, նշան անել, 3. կծել, 4. (փխբ.) նախատել, ծաղրել, 5. սաստիկ ցավ զգալ» <\*րգէծ- <\*գրէծ- <\*ureid-s- <\*uer-<sup>3</sup>, **գերծ-** «1. ածիլված (զուլիսը), 2. ցավ» (որից՝ **գերծանել, գերծուլ** «ածիլել, մազերը կտրել») <\*uerd-s- <\*uer-<sup>4</sup> [15, № 2168, \*uer-7 «պատռել, ճղել»: 13, էջ 158, 222], **երկ** «ջանք, գործ, գուն»<sup>5</sup>, **երկն-** «ծննդյան ցավեր»<sup>6</sup> [14, \*swergh- «հիվանդ լինել, տառապել», **երիթ (իրիթ)** «մեծ սեպ» <\*urit- \*uer- «պատռել, ճեղքել» [13, էջ 225] բառերը:

<sup>1</sup> **վերք** բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել՝ \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատից ծագած ձևերի հետ նմանությունը համարելով պատահական [3, հ. 4, էջ 336-337]: Wiktionary-ն ըստ Օլսենի համարել է փոխառություն իրանական ենթադրյալ \*vaiða- ձևից [16, վերք], որ համոզիչ չէ:

<sup>2</sup> **վանդել** բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել, իսկ Պոկոռնիի կարծիքը մերժել է «վ-ի պատճառաւ» [3, հ. 4, էջ 304]: Գ. Չահուկյանը նույնպես մերժել է Պոկոռնիի կարծիքը նախաձևի «սկզբնական \*u-ի պատճառով» և կասկածով համարել է իրանական փոխառություն՝ համեմատելով *վանել - vānītan* «նվանել, ընկնել» ենթադրյալ առնչության հետ [13, էջ 703]: Ի դեպ, այս բառը Հ. Աճառյանը և Գ. Չահուկյանը դիտարկել են որպես բազմիմաստ՝ «1. վանել, հալածել, 2. ավերել, ոչնչացնել, 3. Հիվանդանալ, ցավով բռնվել», իսկ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն տալիս է «1. պատել, պաշարել, կաշկանդել (վանդակով), 2. հաղթահարել, 3. վտանգել, տկարացնել, հիվանդացնել» իմաստները (5, վանդել): Թերևս պետք է ընդունել եռակի համանունություն՝ **վանդել 1** «վանել, հալածել, հաղթահարել», **վանդել 2** «պատել, պաշարել, կաշկանդել (վանդակով)» և **վանդել 3** «1. ավերել, ոչնչացնել, 2. Հիվանդանալ, ցավով բռնվել»: Տվյալ դեպքում գործ ունենք 3-րդ համանունի հետ:

<sup>3</sup> Հ. Աճառյանը վերականգնել է \*երգէծ- <\*րգէծ- <\*գրէծ- <\*wreğ'- նախաձևեր [3, հ. 2, էջ 43] նկատի ունենալով, որ Պոկոռնիի բառարանում այդ բառը երկրորդ անգամ հանդիպում է որպես № 2217, \*urēg-, urōg-, urəg- «կտրել» արմատի ածանցյալ: Այս արմատը թերևս նախորդների տարբերակ է:

<sup>4</sup> Հ. Աճառյանը **գերծ** արմատը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող [3, հ. 1, էջ 545]:

<sup>5</sup> **երկ** բառը Հ. Աճառյանը և Գ. Չահուկյանը համարել են փոխառություն իրանական ենթադրյալ մի ձևից [3, հ. 2, էջ 58: 13, էջ 226]:

<sup>6</sup> **երկն-**ը Հ. Աճառյանը, ըստ Մեյեի, կապել է **երկ-նչիլ** (<\*dui- \*duei-«վախենալ») բայի հետ [3, հ. 2, էջ 65]: Գ. Չահուկյանը, ըստ Պոկոռնիի, կապել է հ.-ե. \*ed-uōn- \*ed- «ուտել» արմատի հետ [13, էջ 227]:

Այլ լեզուների նույնարմատ զուգահեռները տրված են ստորև՝ առանձին բառերի ստուգաբանության առիթներով:

Այս արմատից կարելի է բխեցնել նաև **վարսել**, **վարսամ**, **աւեր**, **վիտել**, **վտառանք**, **վիրապ**, **վիհ**, **վախուտ**, **վախ**, **վրին**, **վնաս**, **վտանգ**, **վթար**, **գայթ**, **վրեպ**, **գամ**, **գայլիկուն**, **գչիր**, **վիրալ**, **վհաստ**, **երեթ** և այլ բառեր, որոնք պարունակում են «ծակել, կտրել, խփել» և/կամ «վնասել» իմաստային բաղադրիչը: Քննենք դրանք:

**Վարսել (վասել)** «գամել՝ մխել՝ խրել (հողի մեջ), մեխել (պատին)» (որից՝ **վարսաւորել** «գամել, մեխել», **վարսանգ** «սանդի տոռն, թակ») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել [3, հ. 4, էջ 325: 13, էջ 708]: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք այդ բառը կապել հ.-ե. *\*(s)u(e)-* «կտրել, ծակել» արմատի հետ՝ **վարս-ել** <*\*(s)uor-k'-* <*\*(s)uor-r-* <*\*(s)u(e)-* «կտրել, ծակել», որտեղ *\*k'*-ն և *\*r*-ն աճականներ են:<sup>7</sup>

**Վարսամ** «գավազան, փայտ, բիր, ցից» բառը Հ. Աճառյանը երկմտելով նմանեցրել է պարսկ. *barsam* «բարսմունք, ճյուղերի կապոց» ծիսական բառի հետ [3, հ. 4, էջ 325]: Գ. Ջահուկյանը կասկածով համաձայն է այս կարծիքին [13, էջ 708]: Սակայն այս բառը թե՛ ձևով և թե՛ իմաստով նման է վերոհիշյալ **վարսանգ** «սանդի տոռն, թակ» բառին (**-անգ** ածանցի համար հմմտ. *ժլ-անգ «փերթ», պահ-անգ, դրաս-անգ, ժառ-անգ* ևն): Ուստի առաջարկում ենք **վարս-ամ** <*\*(s)uor-k'-* <*\*(s)uor-r-* <*\*(s)u(e)-* «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ *\*k'*-ն և *\*r*-ն աճականներ են (**-ամ/-ում/-ում** ածանցի համար հմմտ. *խար-ամ, խաշ-ամ, թառ-ամ, խորշ-ում, խոր-ում «չոր խտտի խրձիկ», կնգ-ում* ևն):

**Աւեր** «1. քանդված, կործանված, փչացած, 2. (բրբռ.) վնաս, չարիք, 3. վատ, քուռ, 4. անբան, ապաշնորհ» [9, հ. Ա, էջ 114] բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ *\*avēr-* ձևից [3, հ. 1, էջ 359-360]: Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին [13, էջ 101]: Wiktionary-ն համարել է իրանական փոխառություն՝ համեմատելով պարթևերեն *\*wyrn* «ավերակ, կործանում», պահլ. *\*wyl'n'*, պարսկ. *virān* «ամայացնել, ավերել» ձևերի հետ և առանց նախաձև նշելու [16, աւեր]: Սակայն նկատի ունենալով վերոհիշյալ **վանդել** «ոչնչացնել, ավերել» բառի հետ իմաստային կապը և այն, որ **աւեր** արմատը լայն տարածում ունի բարբառներում և ավելի բազմազան իմաստներով, քան նշվում է իրանական ձևերի համար, առաջարկում ենք հ.-ե. նախալեզվից անմիջական ծագման վարկած՝ **աւեր** < **ա-վեր** <*\*(s)ue-r-* <*\*(s)u(e)-* «կտրել, ծակել» բանաձևով, որտեղ *\*r*-ն աճական է, **ա-**ն՝ նախահավելված: Կարելի է ենթադրել նաև, որ հ.-ե. *\*(s)u(e)-* արմատը պարզապես ունեցել է *\*(a)u(e)-* տարբերակ: Ի դեպ, որոշ բարբառներում **ավեր**-ին զուգահեռ կա **վերան** «ավերակ, քարուքանդ, ամայի» բառը [ՀԼԲԲ, Զ, 55], որ թերևս իրոք փոխառություն է պարսկ. *viran* «ավերել» ձևից:<sup>8</sup>

**Վէտ** «1. ծակ, փոս, ական, 2. դանակով ճեղքած նշան մարմնի վրա, ցոռում» (որից՝ **վիտել** «ցտել, դաջել, ծակել, ճեղքել (մարմինը, մաշկը, նաեւ պատը)») բառը Հ.

<sup>7</sup> Այլալեզու նույնարմատ իմաստային զուգահեռներից հիշենք՝ մ.իռ. *fracc* «ասեղ», լիտվ. *rāža-s* «քիստ», *raži-s* «ստև» [14, *\*wrāg'h-* «փուշ, ասեղ»], ռուս. *pezatʹ* «կտրել, ծակել, հերձել, փորագրել» (<*\*werəg'-*, *\*wrēg'-* «ծակել, կտրել») [17, *pezatʹ*]:

<sup>8</sup> Մ. Մախապյանը **վերան**-ը համարել է փոխառություն թուրքերենից [11, հ. 4, էջ 338], որն իր հերթին փոխառված է պարսկերենից [16, *viran*]:

Աճառյանը և Գ. Ջահուկյանը ներկայացրել են վլետ «ծփանք, ալիք» բառի<sup>9</sup> հետ բաղադրված խառնված, չնայած ակնհայտ է, որ դրանք համանուններ են, և կենտրոնացել են միայն «ծփանք» իմաստի վրա [3, հ. 4, էջ 336: 13, էջ 710]: Փաստորեն վլետ «ծակ, ցտում» հնացած բառը մնացել է անտեսված, չստուգաբանված: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք այդ բառը ևս կապել հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատի հետ՝ վլետ <\*(s)uēi-d- <\*(s)u(e)- «կտրել, ծակել», որտեղ \*d-ն աճական է:<sup>10</sup>

**Վտառ** «մարմնի վրայի անցք (բերան, ականջ, քթանցք, հետանցք ևն)» (որից՝ **վտառանք** «կնոջ հետույք՝ երաստան») հնացած բառը<sup>11</sup> Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 4, էջ 351]: Գ. Ջահուկյանը համարել է իրանական փոխառություն ենթադրյալ \*vi-tarr-ձևից, որը համեմատել է **վտար-ել** «վանել, վոնդել» (<իրան. vi-tar «վրայից անցնել») համանուն բառի հետ [13, էջ 714]: Բայց իմաստային առումով սա համոզիչ չէ: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք այդ բառը ևս կապել հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատի հետ՝ **վտառ** <\*(s)u-տա <\*(s)uē-d- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանական բանաձևով, որտեղ \*d-ն աճական է (-**տա/-իտ/-ուտ** ածանցի համար հմմտ. *մաճ-տա, մաց-տա, պայծ-տա, ցանց-տա, կայտ-տա, կայտ-իտ, կնճ-իտ, ծակ-ուտ, ճմ-ուտ, ակն-ուտ* ևն):<sup>12</sup>

**Վիրապ** «1. խոր փոս, գուբ, ցամաք հոր, 2. գետնափոր բանտ, զնդան» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 4, էջ 343]: Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական փոխառություն՝ «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ [13, էջ 712]: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք այդ բառը ևս կապել հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատի հետ՝ **վիր-ապ** <\*(s)uēr- <\*(s)uē-r- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանական բանաձևով, որտեղ \*r-ն աճական է (-**ապ/-իպ/-եպ/-էպ** ածանցի համար հմմտ. *կաճ-ապ (բուս.), կար-ապ, խծ-ապ «վրակար», խծ-իպ «1. եղունգի փուշ, 2. խծապ», կլ-էպ, կճ-էպ, ծլ-էպ, խծ-էպ, ստ-էպ* ևն):<sup>13</sup>

**Վիհ (վիրի)** «1. անդունդ, խորություն, խոր փոս, գուբ, 2. երկրի պատռվածք, խոր-խորատ, գահավանդ, 3. (փխբ.) անջրպետ, 4. (փխբ.) գերեզման, դժոխք» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 4, էջեր 339-340]: Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական փոխառություն՝ «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ [13, էջ 711]: Ելնելով **վիր-ապ** բառի հետ իմաստային առնչությունից՝ առաջարկում ենք **վիհ** բառը ևս կապել հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատի հետ՝ **վիհ** <վիր-հ <\*(s)uēr-ti- <\*(s)uē-r-

<sup>9</sup> Այս **վլետ** «ալիք, ծփանք» համանունի ստուգաբանությունը տե՛ս [6, էջ 39]:

<sup>10</sup> Այլալեզու նույնարմատ իմաստային զուգահեռներից հիշենք՝ անգլ.-սաքս. *sweord*, հ.իսլ. *sverð* (<\*(s)wer-ða-) «կտրող՝ խոցող զենք» [15, № 1944, sver-4], մ.կիմր. *gweint* «ես ծակեցի», *gwant*; *gwān* «դանակահարություն», կոռն. *yth ym-wanas* «հարվածել է», *gwane* «ծակել» [15, № 2070, wen-], հուն. *ρόγυνος* «կտրել, խախտել, կտրել», *ρόγεις*, լեթ. *rožis* «ճեղքում, պոկում», լիտվ. *rėžiu, rėžti* «կտրել, ձևել, ճեղքել, պատռել, խազ, ակոս», *ráizau, ráizyti* «կտրվածք», ռուս. *Резать* «կտրել, մորթել, փորագրել» [15, № 2217, րեճ-, րոճ-, րաճ-]:

<sup>11</sup> Սրա համանուններն են՝ **վտառ** «անասնախումբ, ձկնախումբ» և **վտառ-ել** «հասանել» [3, հ. 4, էջ 714]:

<sup>12</sup> Հմմտ. կիմր. *chwarren* «զեղձ» (<\*(s)uorsinā) [15, № 1944, sver-4]:

<sup>13</sup> Այլալեզու նույնարմատ իմաստային զուգահեռներից հիշենք՝ անգլ.-սաքս. *wrōtan* «փորել, քանդել», շվեդ. *pröta, ruta* «փորել», հ.հնդկ. *pra-vraska-* «կտրվածք», հուն. *ρόνη* «խարտոց, քերիչ», անգլ.-սաքս. *writan* «փորել» [15., № 2168, \*uer-7]:

<\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանական բանաձևով, որտեղ \*r-ն աճական է, \*-ti-ն՝ ածանց (հմմտ. բահ <\*բարհ <\*bhər-ti- [13, էջ 113]):

**Վախ (վահ)** «անդունդ, գահավեժ տեղ» (որից՝ վախուտ «ափափա, դժվարանցանելի ժայռոտ տեղ») հնացած բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 4, էջ 294]: Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական փոխառություն՝ «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ [13, էջ 701]: Այստեղ թերևս գործ ունենք վիհ հոմանիշի ձևափոխությունների (տարբերակների) հետ՝ ի-ա ձայնդարձային և հ-ի<sup>14</sup> հերթագայական անցումներով (*վիհ > վահ > վահ*):

**Վախ (վահ)** «երկյուղ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 4, էջ 294-295]: Գ. Ջահուկյանը կասկածով ենթադրել է իրանական փոխառություն՝ համեմատելով պարսկ. bāk բառի հետ և հիշելով պախ-, պակ- հոմանիշ արմատները՝ որպես վախ-ի հնարավոր տարբերակներ [13, էջ 701]: Նա վերջիններիս համար նույնպես ենթադրել է իրանական ծագում՝ առանց սկզբնաղբյուր մատնանշելու [13, էջ 616]: Կարելի է ենթադրել, որ դրանք բառարգելի (տարբերի) պատճառով վախ «երկյուղ» բառի կամայական ձևափոխություններ են: Իսկ վախ (վահ) «երկյուղ» բառը, կարծում ենք, նույնարմատ համանուն է վախ (վահ) «անդունդ» բառին: Այդպես մտածելու տեղիք են տալիս մ.բ.գերմ. sorge «1. վախ, մտահոգություն, 2. վիշտ, 3. վտանգ» [14, \*swergh- «հիվանդ լինել, տառապել», հ. լիտվ. veluokas «վախկոտ» [15, № 2133, \*uel-8 «պատռել, վերք; գողանալ»] բառերը: Հետևաբար առաջարկում ենք վախ < վահ <\*վարի <\*(s)uər-ti- <\*(s)uē-r- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ \*r-ն աճական է, \*-ti-ն՝ ածանց (հմմտ. վիհ բառի վերոհիշյալ ստուգաբանությունը):

**Վրին** «վերք» հնացած բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ \*vrin ձևից: Դա հաստատելու համար վկայակոչել է քրդ. brin «վերք» բառը [3, հ. 4, էջ 353]: Գ. Ջահուկյանը համաձայն է այս կարծիքին [13, էջ 715]: Սակայն քրդերեն բառը կարող է պարզապես հայերեն բառի նույնարմատ ցեղակիցը լինել՝ ինքնուրույն ծագումով: Ուստի առաջարկում ենք վրին <\*վիր-ին <\*(s)uēr- <\*(s)uē-r- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ \*r-ն աճական է (-ին/-ան/-ոն ածանցի համար հմմտ. դարբ-ին, ոստ-ին, եղև-ին, գլ-ան, փակ-ան, արգել-ան, ոլոր-ան, ծամ-ոն, գլղ-ոն, կթ-ոն, դղ-ոն են):<sup>15</sup>

**Վնաս** «1. կորուստ, տուժում, տուգանք, 2. ձախողում, փորձանք, չարիք, աղետ, 3. մարմնական վնասվածք» (որից՝ վնասել «1. վիրավորել, խեղել, 2. փչացնել, խափանել, 3. կորուստ պատճառել») բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ \*vinās «մեղք, հանցանք, ոճիր, պակասություն» (<\*vi «ցած» + nać- «վնասել» հ.-ե. <\*nek’-, \*nok’- «կործանվել, ոչնչանալ») կազմությունից [3, հ. 4, էջեր 346-347]: Գ. Ջահուկյանը կրկնել է նույնը [13, էջ 713]: Wiktionary-ն համարել է փոխառություն իրանական gonāh ձևից [16, վնաս]: Սա չի կարող ստույգ լինել, քանի որ

<sup>14</sup> Հ – իւ անցման համար հմմտ. պահլվկ – պահլվկ, հեղձ – խեղղ ևն:

<sup>15</sup> Այլալեզու նույնարմատ իմաստային զուգահեռներից հիշենք՝ ռուս. рана <\*նախապավ. \*rana <\*vrana «վերք», սանսկ. vraná «վերք», այր. varrē «վերք, պատռվածք» [16, рана], անգլ. wound «վերք, վիշտ, խոցել, վիրավորել, ցավեցնել», նախագերմ. \*wundō «վերք, խոց» [16, wound]:



իրանական աղբյուրից հայերեն փոխառություններին բնորոշ չէ *q > վ* անցումը: Դարձյալ փորձելով հարցերը լուծել հայերենի շրջանակներում՝ առաջարկում ենք **վնաս** <\*(s)uē-n-ak'- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ \*n-ն աճական է, \*-ak' >-աս-ը՝ ածանց (հմմտ. *մաղ-աս* «լորձ»):<sup>16</sup>

**Վտանգ** «սպառնալիք, աղետի՝ փորձանքի՝ վնասի հնարավորություն, ռիսկ, երկյուղալի դրություն, վախ» բառը Հ. Աճառյանը, ըստ Հյուբշմանի, համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ \*vitang (< հ.պրս. \*vitanka- «1. նեղություն, վտանգ, դժբախտություն, 2. տազնապ, երկյուղ» <vi- «ցած» + tanč «սեղմել, ճնշել, նեղել») ձևից [3, էջ 4, էջ 350]: Գ. Ջահուկյանը [13, էջ 714] և Wiktionary-ն [16, վտանգ] կրկնել են նույնը: Սակայն նկատի ունենալով վերոհիշյալ **վախ** բառի հետ իմաստային ընդհանրությունը՝ կարելի է բառը հայերենի շրջանակներում համարել ածանցավոր՝ արմատը անմիջականորեն բխեցնելով հ.-ե. նախաձևից՝ **վտանգ** <\*(s)uē-d- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» բանաձևով, որտեղ \*d-ն աճական է (-անգ ածանցի համար հմմտ. *ծլ-անգ* «փերթ», *պահանգ*, *ժառանգ*, *դրասանգ*, *վարսանգ* և այլն):

**Վթար** «1. վտանգ, 2. վնաս, խափանում, շարքից դուրս գալը, 3. վնասվածք, ավերում, խաթարում, 4. աղետ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են հավաստի ստուգաբանություն չունեցող [3, հ. 4, էջ 337: 13, էջ 711]: **Վտանգ** բառի հետ իմաստային ընդհանրությունից ելնելով՝ առաջարկում ենք **վթար** <\*(s)uē-t-āro- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ \*t-ն աճական է (\*-ero/-āro >-ար ածանցի համար՝ հմմտ. *արդար*, *հարմար*, *մոլար*, *երկար*, *դալար*, *գալար* և այլն [տե՛ս 13, էջ 800]):

**Գայթ (գիթ)** «1. սայթաքում, սխալ, մոլորություն, 2. խոչ, խուրթ, 3. ծուղակ» (որից՝ **գայթել** «1. սայթաքել, սոթ տալ, 2. սխալվել, մոլորվել, շեղվել», **գայթոտ** «սխալական», **գայթակղել (գայթագղել)** «մոլորեցնել, սխալեցնել, խելքից հանել», **գէթ** (բրբռ.) «վնաս, հանցանք», **անգէթ** (բրբռ.) «անվնաս», **գիթվոր** (բրբռ.) «մեղապարտ, հանցավոր», **գթել** «սայթաքել, մոլորվել, սխալվել, կործանվել», **կթոտ** (բրբռ.) «գայթող, դողդոջուն, սկար, թույլ», **կթոտել (գթոտել)** «սկարանալ, թուլանալ ծավվել (ոտքերը)», **գթգթան** «դողդոջուն, դողդոջացող» [11, հ. 1, էջ 434])<sup>17</sup> բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 1, էջեր 510-511]: Գ. Ջահուկյանը կասկածով կապել է հ.-ե. \*uoi-(h)-՝ <\*uei- «պտտել, ծռել» արմատի հետ [13, էջ 148]: Սակայն նկատի ունենալով հուն. *ἀάω* «մոլորեցնել, խախտել, վնասել», *ἀᾶ-τη* > *ᾶτη* «մոլորեցում, վնաս, մեղք», *ἀτηρός* «մոլորեցված» [15, № 2069, \*uā-1, uō-, uō- «խփել, խոցել, վիրավորել», ռուս. *хворый* «հիվանդոտ, վատառողջ» [14, \*swer- «թարախտել», մ.ս.գերմ. *wlame* «թուլություն» [15, № 2133, \*uel-8 «պատռել, վերք; գողանալ»]

<sup>16</sup> Այլալեզու նույնարմատ գուգահեռներից են՝ ռուս. *вред* «վնաս» [17], *вредить* «վերք, թարախապալար», *вередить* «վերքը բորբոքել», սերբ.-խորվ. *вријед* «վնասվածք», չեխ. *vřed*, սլովակ. *vred*, լեհ. *wrząd*, վ.լուժ. *břod*, ն.լուժ. *fod*, լատվ. *ap-virde*, «թարախապալար», հ.բ.գերմ. *warza*, հ.իսլ. *warta*, ն.բ. գերմ. *Warze* «գորտնուկ, կոծիծ», հ.հնդկ. *várdhati* «աճում է», ավեստ. *xvara-* «վերք, խոց», հ.բ. գերմ. *swēran* «հիվանդանալ» [17, *вред*], նախապալվ. \*verčь «1. վերք, խոց, 2. վնաս, 3. քեն, դի, չարակամություն» [16, *вред*]:

<sup>17</sup> Թվում է **գայթ**-ի հետ է կապված նաև **որոգայթ** «ծուղակ, թակարդ» բառը, սակայն դրա ճիշտ կազմությունն է **որոգ**-այթ (<\*ro-՝ \*reu- պատռել, քանդել, փորել») [13, էջ 608]:

նույնարմատ բառերը՝ կարելի է դրանց ընդհանուր  $*(s)u(e)-$  «կտրել, ծակել» նախաձևից բխեցնել նաև այս բառը՝ **գայթ**  $<*(s)u(i)-t-$  կամ  $*(s)u(i)-t-$   $<*(s)u(e)-$  ստուգաբանական բանաձևով, որտեղ  $*t-$ ն աճական է:

**Վրեպ** «1. սխալ, թյուր, ծուռ, խտտոր, շեղ, 2. դատարկ, թափուր» (որից՝ բրբռ. **որեպ** «հագուստի շեղ կտրված ձևը», **վրիպել** «սխալվել, մոլորվել, գայթել») բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն պահել. ենթադրյալ  $*virep$  ձևից [3, հ. 4, էջ 353]: Գ. Ջահուկյանը համաձայն է այս կարծիքին [13, էջ 715]: Նկատի ունենալով, որ սա իմաստային սերտ առնչություն ունի վերոհիշյալ **գայթ** բառի հետ՝ հնարավոր ենք համարում դրանց նաև ծագումնաբանական կապը և առաջարկում **վրեպ**  $<*$ վիր-էպ  $<*(s)uē-$   $<*(s)u(e)-r-$   $<*(s)u(e)-$  «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ  $*r-$ ն աճական է (**-էպ/-սպ** ածանցի համար տե՛ս վերը՝ **վիրասպ** բառի առիթով):

**Գամ** «բևեռ, մեխ, չիվի» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 1, էջեր 507-508]: Գ. Ջահուկյանը այս բառը նույնացրել է դրա **գամ** «ելք, հնար, միջոց, հենարան, հենակետ, կովան, անգամ, հեղ» համանունի հետ և, հետևելով Հյուբշմանին, կասկածով համարել «փոխառություն իրանական աղբյուրից, հմմտ. ավ.  $gāma$ , մ. պ.  $gām$  «քայլ». իրանական բառը կարող էր ունենալ հայերենին մոտ իմաստ» [13, էջ 147]: Այս ստուգաբանությունը եթե կարող է ընդունելի լինել երկրորդ համանունի համար («ելք, հնար...»), ապա իմաստային առումով հարմար չէ առաջինի դեպքում («մեխ, բևեռ»): Ուստի, նկատի ունենալով այս բառի բնիմաստում «ծակել» բաղադրիչի առկայությունը, առաջարկում ենք **գամ**  $<*(s)u-m-$   $<*(s)u(e)-$  «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ  $*m-$ ն աճական է:

**Գայլիկոն (գելիկան)** «ծակելու գործիք, շաղափ, գչիր» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 1, էջ 513]: Գ. Ջահուկյանը կասկածելի է համարել հ.-ե.  $*uel-$  «պտտել, ոլորել» արմատի հետ կապը, սակայն այլ առաջարկ չի արել [13, էջ 148]: Նկատի ունենալով, որ թեև կասկածով, բայց վերոհիշյալ  $*(s)uer-$  «կտրել, ծակել» արմատից է բխեցվում նախապլավ.  $*svērdēlo$  (որից՝ ռուս.  $сверло$  «գայլիկոն») հոմանիշը [15, № 1944,  $*suer-$  4: 17,  $сверло$ ]՝ առաջարկում ենք **գայլ-իկ-ոն**  $<*(s)u(i)-l-$  կամ  $*(s)u(i)-l-$   $*(s)u(e)-$  «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ  $*l-$ ն աճական է, **-իկ-ը** և **-ոն** -ը՝ ածանցներ (**ոն/-ան/-ին**-ի համար տե՛ս վերը՝ **վրին** բառի առիթով):<sup>18</sup>

**Գչիր** «գայլիկոն, շաղափ» բառը Հ. Աճառյանը ենթադրել է (*երկարթի գրչոք* «գրիչներով» (*ծակոտեցին*) > *գչոք* սխալագրություն և դրանից հետագարձ վերականգնամբ *գչիր* ձևի գոյացում [3, հ. 1, էջեր 599-600]: Դրան համաձայն է Գ. Ջահուկյանը [13, էջ 174]: Բայց սա չապացուցված ենթադրություն է: Հետևաբար, նկատի ունենալով **գայլիկոն** բառի հետ հոմանշությունը, առաջարկում ենք **գչիր**  $<*$ գիչ-իր  $<*(s)uē-k^w-$   $<*(s)u(e)-$  «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ  $*k^w-$ ն աճական է<sup>19</sup> (**-իր/-ար/-որ/-ուր** ածանցի համար հմմտ. *թմ-իր, մոծ-իր, խտ-իր, գալ-ար, հաճ-ար, պղտ-որ, տկճ-որ, խանձ-ուր* «խանձիլ», *մր-ուր* են):

<sup>18</sup> Այլ գուգահեռներից՝ հմմտ. մ.բ.գերմ.  $swērt$ , հ.իսլ.  $svērd$  «թուր» [17,  $сверло$ ]:

<sup>19</sup> Արմատավերջի չ-ի համար հմմտ. **գոչ**  $<*$ uok<sup>w</sup>-io- [13, էջ 168]: Այս դեպքում  $*-io$  ածանց չենք ենթադրում, քանի որ առկա է **-ին** ածանց, որի **ի-**ն նույնպես կարող էր  $*k^w>$ չ անցման պատճառ դառնալ:

**Վիրալ (վիրայել)** «խուզել, սափրել, մազ կտրել» բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբեր-մանին, համարել է փոխառություն պահել. *vīrāyam < vīrāstan* «հարդարել» ձևից [3, հ. 4, էջ 343]: Գ. Ջահուկյանը համաձայն է այս կարծիքին [13, էջ 712]: Առաջարկում ենք, որպես վերոհիշյալ **գերծուլ** բառի հոմանիշի՝ այս բառի բնիկ հայկական ծագման վարկած՝ **վիր-ալ** <\*(s)uēr- <\*(s)uē-r- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանական բանաձևով, որտեղ \*r-ն աճական է (**վիրալ-ել** տարբերակի դեպքում առկա է **-այ** ածանց, որի համար հմմտ. *առարկ-այ, հիմ-այ, արք-այ, ան-ուղղ-այ, ան-զգ-այ, մոր-այ, յոր-այ* են [տե՛ս 10, էջեր 88-89]):

**Վհաստ** «1. հուսահատ, հույսը կտրած, 2. (հնցծ.) լքված» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 4, էջ 345]: Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական փոխառություն՝ «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ [13, էջեր 712-713]: Նկատի ունենալով այս բառի բնիմաստում «կտրել» բաղադրիչի առկայությունը՝ առաջարկում ենք **վհաստ** <\*(վ)h-ատ <\*(վ)h-հ- <\*(s)uēr-ti- <\*(s)uē-r- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանությունը, որտեղ \*r-ն աճական է, \*-ti-ն՝ ածանց, որի մասին տե՛ս վերը՝ **վիհ** բառի առիթով (**-ատ** ածանցակերպի համար հմմտ. *խրամ-ատ, խորխոր-ատ, կիս-ատ, պոչ-ատ, քն-ատ, հեր-ատ, գուն-ատ* են): **Վհաստ** բառում «հատել» իմաստային բաղադրիչի կրկնության համար հմմտ. *խրամատ* (*խրամ* [*<\*khrəm-`\*(s)ker-* «կտրել» [13, էջ 354]] + *ատ* «հատել, կտրել»), *կիսատ* (*կէս* [*<\*skē-k- <\*skeu- <\*sek-* «կտրել, հատել» [7]] + *ատ* «հատել, կտրել»), *վերամբարձ* (*վեր+ամ+բարձ* <\*(b)hərg'h- «վեր, բարձր» [13, էջ 121]), *վայրէջք* (*վայր* «վար, ցած, ներքև» + *էջք* «ցած գնալը, ներքևելը»), *խելամիտ* (*խելք* և *միտք* հոմանիշներ են) և այլ իմաստային կրկնավորները:

**Երէթ (երեթ)** «հալումաշ, ծուրած, դժգույն, նիհար, ցամաքած, խեղճ ու կրակ, ապականյալ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [3, հ. 2, էջ 52]: Գ. Ջահուկյանը, հիմնվելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ի տված «ճեղքված, ճաքճքած» (՞) իմաստի վրա {5, երէթ} (որը Հ. Աճառյանը համարել է կամայական ու անտեղի), կասկածով կապել է հ.-ե. \*krei-t-՝ \*(s)ker- «կտրել» արմատին [13, էջ 224]: Կարծում ենք՝ ավելի հավանական է այս բառի ձևային առնչությունը վերոհիշյալ **երիթ** բառի հետ և իմաստային ընդհանրությունը վերոհիշյալ **կթոտել** «տկարանալ», **վանդել** «հիվանդանալ» բառերի հետ՝ **երէթ (երեթ)** < եր-էթ/-էթ <\*(u)er-eit-<sup>20</sup> <\*(s)uē-r- <\*(s)u(e)- «կտրել, ծակել» ստուգաբանությամբ, որտեղ \*r-ն աճական է, **-էթ/-էթ/-իթ/-աթ/-ոթ/-ութ**-ը՝ ածանց (հմմտ. *փայթ-էթ, եր-իթ, կնճ-իթ, կող-կող-իթ, գավ-իթ, խրճ-իթ, փայթ-աթ-ել, փոթ-ոթ, սոռ-ոթ-այ, խարխու-ութ, մո-ութ*): Ընդ որում՝ **երէթ** բառի «ճեղքված, ճաքճքած» կասկածելի իմաստը ևս լիովին տեղավորվում է ստուգաբանական այս վարկածի մեջ:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ**. Այսպիսով ներկայացրինք հայերեն մի շարք բառեր (**վարսել, վարսամ, աւեր, վիտել, վտառանք, վիրապ, վիհ, վախուտ, վախ, վրին, վնաս, վտանգ, վթար, գայթ, վրէպ, գամ, գայլիկոն, գչիր, վիրալ, վհաստ, երէթ** և այլն, որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ վիճարկելի ստուգաբանությամբ, կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունային, ձևային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվել են այդ բառերի ստուգաբանության նոր վարկածներ, որոնց հա-

<sup>20</sup> Այստեղ առկա է ք սկզբնահնչյունի անկում, մի երևույթ, որ բնորոշ է հ.-ե. նաև այլ լեզուների, հմմտ. վերը՝ ծանոթություն 7, 10, 13:

մաձայն՝ դրանք սերված են հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատից: Դրանցից սերված հայերեն բառերը կազմում են հոմանիշային խմբեր (**վարսել – գամել, վէտ «ծակ» – վտառ «անցք», վնաս – վթար, վիրապ – վիհ – վախ «անդունդ», վերք – վրին, գերծանել – վիրալ, գայլիկոն – գչիր, վախ «ահ» – վտանգ, գայթ – վրէպ**), որոնք առնչվում են իմաստային հանրության կապերով: Դրանց միջև փորձել ենք տեսնել նաև ձևային-ծագումնաբանական ընդհանրություն՝ հիմնավորելով դա ներքին ու արտաքին համեմատություններով և ստուգաբանական բանաձևմներով: Հատկանշական է, որ հոդվածում որպես հ.-ե. ծագման բնիկ հայերեն բառեր ներկայացվածներից մի քանիսը **վ սկզբնահնչյունով են (վարսել, վարսամ, վիտել, վտառանք, վիրապ, վիհ, վախուտ, վախ, վրին, վնաս, վտանգ, վթար, վրէպ, վիրալ, վհատ)**, և դա օրինաչափ երևույթ է, այլ ոչ թե շեղում:

### Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աղայան Է.**, *Բառարձանական և ստուգաբանական հետազոտություններ*: Եր.: ՀԳԱ հրատ.: 1974: 168 էջ:
2. **Աճառյան Հ.**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 1: Երևան: Հայպետհրատ: 1940: 357 էջ:
3. **Աճառյան Հ.**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4: Երևան: ԵՊՀ հրատ.: 1971-1979: 2705 էջ:
4. **Աճառյան Հ.**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6: Երևան: ՀԳԱ հրատ.: 1971: 846 էջ:
5. **Աւետիսեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, *Նոր բառգիրք հայկազնան լեզուի*, հհ. 1-2: Վենետիկ: 1836-1837: 2235 էջ:
6. **Չաքարյան Հ.**, *Հայերենի վ- սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մասին // «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» (գիտական հոդվածների ժողովածու)*: Երևան: «Գիտություն»: 2019: Էջեր 34-45:
7. **Չաքարյան Հ.**, *Կեղեքել, խողխողել, քակ(տ)ել, կէս և մի քանի այլ բառերի ստուգաբանություն // «Արդի հայերենագիտության խնդիրները» խորագրով առցանց գիտաժողով*, ՀԳԱ ԼԻ: Երևան: 2020 / [http://language.sci.am/sites/default/files/hovannes\\_zakaryan.pdf](http://language.sci.am/sites/default/files/hovannes_zakaryan.pdf) (դիտվել է 30.08.2023):
8. **Չաքարյան Հ.**, *Հ.-ե. \*(a)u(e)- արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն // «Հայերենագիտական առցանց գիտաժողով»*, ՀԳԱ ԼԻ: Երևան: 2021 / [http://language.sci.am/sites/default/files/zakaryan\\_hovhannes\\_0.pdf](http://language.sci.am/sites/default/files/zakaryan_hovhannes_0.pdf) (դիտվել է 21.07.2023):
9. *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Է: Երևան: «Գիտություն»: 2001-2012: 2792 էջ:
10. *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 2: Երևան: ՀԳԱ հրատ.: 1975: 384 էջ:
11. **Մալխասեանց Ս.**, *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4: Երևան: ՀՍՍՌ պետ. հրատ.: 1944-1945: 2409 էջ:
12. **Ջահուկյան Գ.**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*: Երևան: ՀԳԱ հրատ.: 1987: 748 էջ:
13. **Ջահուկյան Գ.**, *Հայերեն ստուգաբանական բառարան*: Երևան: «Ասողիկ»: 2010: 820 էջ:
14. **Nikolaev S.** *Database of Indo-European etymology* / <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=data\ie\piet&first> (դիտվել է 24.09.2022):
15. **Pokorny J.** *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959 / <http://dnghu.org/indoeuropean.html> (դիտվել է 24.09.2022) :
16. *Wiktionary* / <https://en.wiktionary.org/wiki> (դիտվել է 30.01.2024):
17. *Викисловарь* / <https://ru.wiktionary.org/wiki> (դիտվել է 30.01.2024):

### References

1. **Aghayan E.** Lexicological and Etymological Studies [*Baraqnakan yev stugabanakan hetazotuthyunner*], Yerevan, Arm. SSR AS Press, 1974, 168 p. (In Armenian)
2. **Atsharyan H.** History of the Armenian language [*Hayoc lezvi patmuthyun*], vol. 1, Yerevan, ASSR State Press, 1940, 357 p. (In Armenian)

3. **Atsharyan H.** Armenian Root Dictionary [*Hayeren armatakan bararan*], vol. 1-4, Yerevan, YSU Press, 1971-1979, 2705 p. (In Armenian)
4. **Atsharyan H.** Complete Grammar of the Armenian Language [*Liakatar qerakanuthyun hayoc lezvi*], vol. 6, Yerevan, Arm. SSR AS Press, 1971, 846 p. (In Armenian)
5. **Avetiqaean G., Siwrmelean Kh., Awgerean M.** A New Dictionary of the Haikazian Language [*Nor bargirq haykazean lezui*], vol. 1-2, Venice, 1836-1837, 2235 p. (In Armenian)
6. **Zakaryan H.**, About Indo-European Origin of the Armenian Initial Sound վ- [*Hayereni v- skzbnahnyuni hndevropakan tsagman masin*] // «Contemporary problems of the historical study of the Armenian language» (Collection of Scientific Articles), Yerevan, «Gituthyun», 2019, pp. 34-45. (In Armenian)
7. **Zakaryan H.** Etymology of Armenian Words կնդկել, խոդխոդել, քակ(ս)ել, կէս and Several Other Words [*Kegheqel, khoghkhoghel, qak(t)el, kes yev mi qani ayl bareri stugabanuthyun*] // Online conference entitled "Problems of Modern Armenology", NAS RA LI, Yerevan, 2020 / [http://language.sci.am/sites/default/files/hovannes\\_zakaryan.pdf](http://language.sci.am/sites/default/files/hovannes_zakaryan.pdf) (In Armenian)
8. **Zakaryan H.** Etymology of Some Armenian Words Derived from PIE Root \*(a)u(e)- [*H.-ye. \*(a)u(e)-armatic servats hayeren mi qani bareri stugabanuthyun*] // «Armenological Online Conference», NAS RA LI, Yerevan, 2021/[http://language.sci.am/sites/default/files/zakaryan\\_hovhannes\\_0.pdf](http://language.sci.am/sites/default/files/zakaryan_hovhannes_0.pdf) (In Armenian).
9. A dialect dictionary of the Armenian language [*Hayoc lezvi barbarayin bararan*], vol. 1-7, Yerevan, «Gituthyun», 2001-2012, 2792 p. (In Armenian)
10. Historical Grammar of the Armenian Language [*Hayoc lezvi patmakan qerakanuthyun*], vol. 2, Yerevan, Arm. SSR AS Press, 1975, 384 p. (In Armenian)
11. **Malkhaseanc S.** Armenian Explanatory Dictionary [*Hayeren bacatrakan bararan*], vol. 1-4, Yerevan, ASSR State Press, 1944-1945, 2409 p. (In Armenian)
12. **Jahukyan G.** History of the Armenian Language. Prescriptive Period [*Hayoc lezvi patmuthyun. Nakhagravin zhamanakashrjan*], Yerevan, Arm. SSR AS Press, 1987, 748 p. (In Armenian)
13. **Jahukyan G.** Armenian etymological dictionary [*Hayeren stugabanakan bararan*], Yerevan, «Asoghik», 2010, 820 p. (In Armenian)
14. **Nikolaev S.** Database of Indo-European etymology / <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first>
15. **Pokorny J.** *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959 / <http://dnghu.org/indoeuropean.html>
16. Wiktionary / <https://en.wiktionary.org/wiki>
17. Викисловарь [Wikislovar] / <https://ru.wiktionary.org/wiki> (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **16. 02. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **20. 03. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Հովհաննես Լևոնի ՉԱԶԱՐՅԱՆ՝** բան.գիտ. թեկնածու, դոցենտ,  
«Տարբև» ԳԿՀ լեզվաբանության բաժանմունքի ղեկավար, Երևան, ՀՀ,  
Էլ. հասցե՝ [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com), <https://orcid.org/0009-0000-8168-7622>

**Hovhannes Levon ZAKARYAN:** PhD in Philology, Associate Professor,  
the Head of Linguistic Department of "Tatev" C RE, Yerevan, RA,  
e-mil: [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com), <https://orcid.org/0009-0000-8168-7622>

**Оганес Левонович ЗАКАРЯН:** кандидат филол. наук, доцент,  
руководитель лингвистического отдела НОК "Татев", Ереван, РА,  
эл. адрес: [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com), <https://orcid.org/0009-0000-8168-7622>

ՀՏԴ՝ 82.09

DOI: 10.52971/18294316-2024.27.1-102

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑԱԾ ՀՈԳՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ» ՊՈԵՄՈՒՄ

*Արա Ս. Զարգարյան*

ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

*Նախաբան.* «Լոռեցի Սաքո» պոեմում Հովհաննես Թումանյանը ներկայացնում է մարդու հոգեբանական դրաման: Ստեղծագործության ստեղծման նախահիմքում նաև մանկական հասակում լսած միջական պատմություններն են: Կենսագրական մի շարք տարրեր ևս ներթափանցում են պոեմի ստեղծման ակունքները: Թումանյանի պոեմը գաղափարական և այուժետային զուգահեռներ ունի Ն. Գոգոլի և Ալ. Պուշկինի մի շարք ստեղծագործությունների հետ: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել են գուգադրական, հոգեբանական, հոգեվերլուծական և կենսագրական մեթոդներ: Իրականացվել է նաև տարբեր բնագրերի համեմատություն: *Վերլուծություն.* Հոդվածում ուսումնասիրվել են հատկապես պոեմի գլխավոր կերպարի՝ Լոռեցի Սաքոյի հոգեբանական անկման պատճառները: Կերպար-միջավայր զուգահեռներով ներկայացվում են նաև ազդեցությունները: Մի շարք հատվածների վերլուծության հիմքում Բուրդուլի Շտայների գաղտնագիտական մեթոդներն են: *Արդյունքներ.* Թումանյանի «Լոռեցի Սաքո» պոեմի գլխավոր հերոսը դառնում է լռության ողբերգության կրողը: Լռությունը խախտվում է ձայնով, իսկ ձայնն այնկողմնային աշխարհից այսկողմնային աշխարհ անցած հոգուն է պատկանում: Մա հաստատվում է նաև Գոգոլի և Պուշկինի մի շարք ստեղծագործություններում: Լռության խախտմամբ սահմանվում է այնկողմնային աշխարհ անցման բանաձևը:

**Բանալի բառեր՝** *Լոռեցի Սաքո, Թումանյան, Գոգոլ, Պուշկին, մարդ, հոգի, մեկուսացում, մահ, Կաֆա:*

Բնչպես հղել՝ Զարգարյան Ա. Մարդկային մեկուսացած հոգու ողբերգությունը Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սարոն» պոեմում, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1(27): 102-112 էջեր: DOI:10.52971/18294316-2024.27.1-102

## THE TRAGEDY OF THE ISOLATED HUMAN SOUL IN HOVH. TUMANYAN'S POEM "SAKO FROM LORI"

*Ara S. Zargarian*

Institute of Literature named after M. Abeghyan of NAS, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** Hovhannes Tumanyan presents the psychological drama of man in the poem "Sako from Lori". Mythical stories heard in childhood are also the basis for the creation of the work. A number of biographical elements also permeate the origins of the poem. Tumanyan's poem has ideological and plot parallels with a number of works by Nikolai Gogol and Alexander Pushkin. **Methods and materials:** Comparative, psychological, psychoanalytic and biographical methods were used in the work. A comparison of different originals was also carried out. **Analysis:** The article examines the reasons for the psychological decline of the main character of the poem, "Sako from Lori". The parallels were drawn within the frame of character-environment. Rudolph Steiner's cryptographic methods are the basis of the analysis of a number of passages. **Results:** The main character of Tumanyan's poem "Sako from Lori" becomes the bearer of the tragedy of silence. The silence is broken by the sound, and the sound belongs to the soul that has passed from the other world to this world. This is also confirmed in a number of works by Gogol and Pushkin. By breaking the silence, the formula for passing to the other world is defined.

**Key words:** *Sako from Lori, Tumanyan, Gogol, Pushkin, man, soul, isolation, death, Kafka.*

**Citation:** Zargaryan A. *The Tragedy of the Isolated Human Soul in the Poem "Sako from Lori" by Hovh. Tumanyan.* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 102-112 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-102

## ТРАГЕДИЯ ИЗОЛИРОВАННОЙ ЧЕЛОВЕЧЕСКОЙ ДУШИ В ПОЭМЕ ОГАННЕСА ТУМАНЯНА «САКО ИЗ ЛОРИ»

*Ara S. Zargarian*

Институт литературы имени М. Абегамяна НАН, Ереван, РА

### Аннотация

**Введение:** Оганес Туманян представляет психологическую драму человека в поэме «Сако из Лори». Он рассказывает читателю мифические истории, услышанные в детстве. В истоках стихотворения пронизывает ряд биографических элементов. Поэма Туманяна имеет идейные и сюжетные параллели с рядом произведений Николая Гоголя и Александра Пушкина. **Методы и материал:** В работе использовались сравнительный, психологический, психоаналитический и биографический методы. Также было проведено сравнение разных оригиналов. **Анализ:** В статье рассматриваются причины психологического упадка главного героя поэмы «Сако из Лори». Сцены произведения представлены в виде параллелей между персо-

нажем и окружением. Криптографические методы Рудольфа Штайнера легли в основу анализа ряда отрывков. *Результаты*: Главный герой поэмы Туманяна «Сако из Лори» становится носителем трагедии молчания. Тишина нарушается звуком, а звук принадлежит душе, перешедшей из потустороннего мира в этот мир. Это подтверждается в ряде произведений Гоголя и Пушкина. С нарушением молчания определяется формула перехода в потусторонний мир.

**Ключевые слова:** *Сако из Лори, Туманян, Гоголь, Пушкин, человек, душа, изоляция, смерть, Кафка.*

**Как цитировать:** *Заргарян А. Трагедия изолированной человеческой души в поэме Ованеса Туманяна «Сако из Лори».* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1 (27). 102-112 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-102

**ՆՍՈՒՄԱՐՆ.** Հովհաննես Թումանյանի մի շարք ստեղծագործություններին բնորոշ դրամատիզմը իր բացառիկ դրսևորումն է ստացել «Լոռեցի Սաքո» պոեմում: Այնտեղ մարդու հոգեբանական դրաման է, որտեղ կա իրական, տեսանելի միայն մեկ կերպար: Սակայն Թումանյանը կարողանում է տեսանելիի և թվացյալ անտեսանելիի բախմամբ կերտել մի մեծ հոգեբանական դրամա: Ընդհանրապես 1890-ականների Թումանյանի միտքն ու գրիչը առավել թաթախված էին հատկապես բանահյուսության ու ժողովրդական պատմությունների մեջ: Այդ պատմությունները միայն ազդակներ են, որոնցից այն կողմ ստեղծվում էր այլ աշխարհի ու ստեղծագործական գաղափար: Իր ինքնակենսագրական հուշերում Թումանյանը շարադրում է, որ ստեղծագործության գրման համար ազդակ հանդիսացել է իրական մի պատմություն [4, էջ 498]: Այստեղ գործում է նաև Կառլ Գուստավ Յունգի աշխատության մեջ [13] սահմանված այն միտքը, ըստ որի՝ որքան էլ հեղինակը ծրագրի գրել ինչ-որ ստեղծագործություն, այնուամենայնիվ ինչ-որ պահի ստեղծագործությունն ինքն է սկսում թելադրել հեղինակին: Պոեմի ստեղծման նախնական հիմքը մանկական ու աշակերտական տարիներին լսած պատմություններն են [4, էջ 498]: Պոեմի վրա Թումանյանը ընդմիջումներով աշխատեց մի ամբողջ տասնամյակ, պոեմը կրեց փոփոխություններ. կրճատվեցին ու ավելացան էջեր: Այստեղ Թումանյանն իր գաղափարին հավատարիմ էր. «Գրողը Աստծո պես պետք է լինի, իր նյութից ստեղծի այնպիսի մարմին, ինչպես Աստված կավից է կերտել մարդուն» [3, էջ 107]: Ոչ միայն այս, այլև այլ գործերում Թումանյանի հերոս-կերպարներն այնքան կատարյալ են, ամուր, որ երբեմն կարողանում են դուրս ցատկել ստեղծագործությունից և առաջ կանգնել տվյալ երկում առկա գաղափարից ու բովանդակությունից: Պոեմը քննադատվեց, որով ևս պայմանավորված էր փոփոխությունը: Թումանյանի ամենամեծ քննադատը Ղազարոս Աղայանն էր, որի համար այդպես էլ անհասկանալի էր մնում Սաքոյի խելագարությունը: Ընթերցելով պոեմի առաջին տարբերակը [4, էջ 171]՝ նկատելի է դառնում, որ Թումանյանի կերտած կերպարն այնքան էլ համոզիչ չէր, և Սաքոյի խելագարությունը անտրամաբանական էր թվում, որը հետագայում խոստովանում է Թումանյանը, վերամշակում պոեմը և խոստովանական նամակ [3, էջ 105] գրում Ղազարոս Աղայանին: Այս հողվածով փորձ է կատարվում վերլուծել Թումանյանի «Լոռեցի Սաքո» ստեղծագործությունը՝ զուգահեռելով Պուշկինի և Գոգոլի մի շարք գործերի հետ:



Համեմատական վերլուծությունը կատարվում է գրականագիտական նոր գործիքակազմերով: «Լոռեցի Սաքոն»-ն դառնում է միայնության միֆական գոհը:

**Ձայնի և լռության ողբերգությունը Թումանյան, Պուշկին, Գոգոլ գուգառներում**

Ստեղծագործության վերլուծության առաջին մակարդակում տեսնում ենք չար ուժերի ու սատանայականի բախումը Սաքոյի ներսի ու դրսի աշխարհներում: Այդ պայքարը մասնակիորեն նաև մանուկ Թումանյանի ներսում ձևավորված պայքարի վերակենդանացումն է արդեն իսկ հասուն տարիքում: Մանուկ հասակից քրիստոնյա, եկեղեցուն մոտ կանգնած երեխայի գիտակցության մեջ առավել մեծ ազդեցություն կարող է թողնել սատանայականի աներևույթ գոյությունը: Եվ հատկանշական է, որ պոեմի հետագա ընթացքում մենք հստակ տեսնում ենք քրիստոնեական գաղափարներն ու խորհրդանշաններ, որոնք արդեն իսկ բարու և չարի պայքարի ճանապարհ են հարթում: Իր աշխատություններից մեկում<sup>[1]</sup> Մանուկ Աբեղյանը խոսում է սնահավատական գրույցների մասին, որում ընդգծում է, որ հմայական աղոթքների հետ կապված սնահավատական գրույցներին հավատում էին և՛ պատմողները, և՛ լսողները: Նրանք հավատում էին նաև այդ պատմությունների իրական լինելուն: Եվ տեսականորեն երբ այդ պատմությունների կիզակետում կանգնած է երեխան, ապա նրա կողմից այդ պատմությունների իրավացի լինելը գնահատվում է հարյուր տոկոսով: Հենց այդ կետում էլ սկսվում է բախումը: Ստեղծվում է դրամայի համար մի միջավայր, որտեղ մարդն է բնության մեջ՝ միայնակ: Բնության մեջ մարդու և բնության ուժերի, այս դեպքում՝ չարքերի ու սատանաների հանդիպման ու բախման լավագույն օրինակ տալիս է նաև Ալեքսանդր Պուշկինը: Թումանյանի համար Պուշկինը մի յուրահատուկ համակարգ էր, որն իր հաստատուն կառուցվածքով կարողացավ մասնակիորեն «նպաստել» Թումանյանի բանաստեղծի կերտմանը: Թումանյանի համար Պուշկինը մեծություն էր անգամ կյանքի վերջին օրերին. «Ինձ վրա շատ է ազդել Պուշկինի թաղումը. ձյունոտ դաշտ, մի սահնակ, մեջն էլ դագաղ, ու քշողն էլ չգիտի, թե ում է տանում, քշում է» [5, էջ 292]: Պուշկինի գործերում ևս տեսնում ենք սատանայականն ու չար ուժիների հարաբերակցությունը մարդկանց հետ, հոգիներում: Երկուսն էլ, սովորով իրենց ազգային բանահյուսությունից ու ժողովրդական պատմություններից, չէին կարող շրջանցել այս թեմաները: Թե՛ հայկական և թե՛ ռուսական մշակութային միջավայրում առկա են չար ուժերի՝ սատանայականի մասին պատմությունները: Ռուդոլֆ Շտայների ձևակերպմամբ՝ նրանք և նրանց պատմությունները ձևավորվեցին միջավայրի ազդեցությամբ. «Պարզ է, որ մարդու կյանքն ամենատարբեր ուղղություններով հարաբերություններ ունի շրջապատի հետ, բնակավայրի, որտեղ նա զարգանում է» [9, էջ 123]: Այդ միջավայրի ազդեցության ծնունդ էր նաև Պուշկինի «Սատանաներ» բանաստեղծությունը: Սակայն, մինչև երկու հեղինակների ստեղծագործությունների համեմատական վերլուծությանն անցնելը, տեսնենք Թումանյանի հերոսի՝ Սաքոյի մեջ ինչպե՞ս է զարգանում դրաման: Բնապատկերների նկարագրությունից անմիջապես հետո Թումանյանը ներկայացնում է Սաքոյի ներսի ու դրսի աշխարհների անհամաձայնությունը: Նախ նրա ահարկու և ուժեղ արտաքինը, որը հետո կամաց-կամաց ոչնչանում է, և անգամ պատկերային համակարգում մենք տեսնում ենք Սաքոյի անկումը: Միայնության մեջ գտնվողը՝ մեկուսացածը,

սկսում է հիշել հին զրույցները, ու միայնակ մարդու մտածումները կարճ ժամանակ հետո երևան են հանում մտքեր, պատկերներ ու գաղափարներ: Մեկուսացման ժամանակ հղացած միտքը կծնի կա՛մ հանճարեղը, կա՛մ այլանդակը: Միայնության զրոսանքի ու մտքի ծնունդ էր Նիցշեի «Զրադաշտը». «Իր նամակներում և նախնառաջ «Ecce homo»-ի՝ «Զրադաշտ»-ին վերաբերող գլխում Նիցշեն հավաստում է, որ գրքի հիմնական գաղափարներից մինչև նրա «հերոսի» կերպարի ձևավորումը ութ օր է տևել. նա պատկերում է իր միայնակ զրոսանքները Ռապալոյի ծովածոցում, Չիավարիի և Պորտոֆինոյի միջև 1882-1883 թթ. ձմռանը» [8, էջ 16]:

Թումանյանի պոեմի վերլուծական մակարդակի առաջին համակարգում միայնության արդյունքում գաղափարական կերպարների՝ երևակայական հերոսների ծննդի արդյունքը համարենք սատանայական ուժերի ծնունդ: Ընդհանրապես միայնության ժամանակ մարդու մտքի երկարատև որոնումները հաճախ կարող են կանգնեցնել փակուղու առաջ՝ աբսուրդի: Միայնության մտածումների աբսուրդային ծննդի օրինակ է Թումանյանի «Կիկոսի մահը» ստեղծագործության մեջ Կիկոսի երևակայական ծնունդն ու մահը: «Լոռեցի Սաքո» պոեմում կերտվեցին կերպարներ, որոնք շատ արագ գործի անցան: Նախ ամենասկզբում Թումանյանը Սաքոյի միայնության պատճառների որոնման հիմքում առաջ է քաշում մի կարևոր նախադասություն, երբ խոսում է Սաքոյի ընկերոջ գնալու պատճառների մասին.

*Ա՛ղ էր հարկավոր ոչխարի համար,  
Ուզեց գոքանչի ձվածե՛ղ ուտել,  
Թե՛ նշանածին շատ էր կարոտել,- [4, էջ 18]:*

Թումանյանը մեկ տողով ընդգծում է Սաքոյի ընկերոջ՝ նշանածին կարոտելու փաստը: Իսկ Սաքոյի կողակցի մասին ոչ մի խոսք չկա: Ֆրոյդյան բանաձևը գործեց ի նպաստ այն ուժերի, որ փորձում էին Սաքոյին դուրս քաշել իր ներքին հոգեբանական համակարգից: Գրեթե նմանատիպ մոդել մենք տեսնում ենք նաև Հակոբ Օշականի «Պաղտո» պատմվածքում, որտեղ որբ ու կիսախենթ տղան (Այստեղ Պաղտոյի որբությանը ևս ընդգծվում է միայնության այլակերպված մոդելը) սիրահարվում է Պետրոսյանների տան աղջկան և հոգեկան տառապանքներից մահանում է: Այստեղ տառապանքները գաղտնի էին, տեսնում ու զգում էր միայն հերոսը: Ընդհանրապես կանացիության արխետիպային համակարգն ունի նաև իր բացասական կողմերը: Թումանյանի մի շարք գործերում տեսնում ենք կանացի կերպարի բացասական դրսևորումներ: Հոգեբան Էրիկ Նոյմանն իր աշխատություններից մեկում [12] ընդգծում է կնոջ արխետիպի բացասական կողմերը: Ըստ որի՝ կինն իրեն է ենթարկում իր կամքը, նա կարող է մարդուն կախարդել և ստիպել, որ նա հետադիմի և արդյունքում կազմահյուծվում է իր հոգեբանական համակարգում: Կանացի գայթակղությունից գատ՝ մենք չարքերի կողմից տեսնում ենք Սաքոյին դուրս քաշելու այլ միջոց ևս. նրան փորձում են գայթակղել մահացու մեղքերով: Մատանաներն իրենց հերթին գայթակղում էին որկրամոլության մեղքին բնորոշ կոչերով՝ «Ինձ մոտ արի՛ ձվածեղ անեմ...Ինձ մոտ արի՛ բլիթ տամ...», ինչպես նաև կնոջ գայթակղությամբ՝ «Էս աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա»: Այս դիվային հարձակման արդյունքում Սաքոն կարողանում է սկզբում ինչ-որ կերպ դիմադրություն

ցույց տալ: Նա շատ արագ չի հանձնվում և փորձում է դիվային այս հանդեսին մասնակից չլինել, սակայն տեսնելով, որ հերոսն իրենց չի միանում, սատանաները իրենք են փորձում ներս մտնել ու դուրս հանել նրան: Թումանյանը պոեմում հերոսի հոգեբանական վիճակն ու այդ վիճակի անկումը ցույց է տալիս նաև շրջապատող իրերով: Նախ՝ փակ տարածք, որտեղ հերոսն էր, ինչ-որ պահի դառնում է արդեն գրավյալ տարածք: Չարքերը կարողանում են ներս սողոսկել՝ դուռը բացելով: Այսկերպ երևում է թիրախային անառիկ թվացող կետը, որտեղ իրականացված գրոհի արդյունքում այն ճեղքվածք է ունենում և դառնում գրավյալ տարածք: Եվ սատանայական ուժերի կողմից գայթակղությամբ դուրս է բերվում հերոսը, սակայն հետաքրքիրն այն է, որ Լոռեցի Սաքոյի կերպարում Թումանյանը ներկայացնում է մասնակի անհնազանդություն, քանի որ հետագա տողերում ներկայացվում են Սաքոյի վազքն ու չարքերի կողմից օձե մտրակների հարվածները: Սատանայական կերպարները նաև անհասկանալի են՝ ովքե՞ր են, ի՞նչ կերպարանք ունեն և ի՞նչ ցեղից են: Նրանք կարծես դեռ չձևավորված չար ուժեր լինեն, որոնք հանդես են գալիս թուրք կանանց, հարսանքավորների կերպարներով: Նրանց դեռ հստակ չկազմավորումը փաստում է իրենց ստորերկրյա էակներ լինելը: Այդ համոզմանը մեզ բերում է Ռուդոլֆ Շտայները. «Ֆիզիկական փուլերում մարդկային էակները, ինչպես և ստորին արքայությունների էակները, ներկայանում են այնպես, ասես անձկուն, անինքնուրույն կերպարների մեջ նախապատրաստել են այն, ինչ նրանք պիտի դառնան ավելի ուշ, երկրային ժամանակներում, ավելի ինքնուրույն կերպի մեջ» [9, էջ 196]: Այստեղ սատանայական կերպարների անինքնուրույնությունը կապակցված է իրենց խմբային գործողությանը, իսկ ստորերկրյա էակներ լինելու համար հստակ դիմագիծ տալիս է Թումանյանը, որը նշում է այս դիվային հանդեսի գտնվելու վայրը՝ ձոր, որտեղ հենց պոեմի սկզբում ազդարարվում է գիշերվա կեսին չարքերի խմբվելը: Պուշկինն իր «Սատանաներ» բանաստեղծությունում ներկայացնում է մարդու կողմից հարձակման ենթարկվելը: Ինչպես Թումանյանի դեպքում, այնպես էլ այստեղ սատանայական խմբերի գործողության հիմքում պարն է ու երաժշտությունը.

*Այլանդակ ու անհատնեղի,  
Ճերմակ դաշտում անսահման,  
Մեզ շուրջկալել, պար են գալիս  
Տերևների պես աշնան:  
Ո՞վ է նրանց առաջ մղում,  
Ի՞նչ ձայներ են մորմոքի,  
Հարագատի դի՞ն են թաղում,  
Թե՞ պսակ է վիուկի: [11, էջ 224]*

Սատանայական շուրջպարի գրեթե նույն տեսարանը կա նաև Թումանյանի պոեմում: Պուշկինի մոտ դաշտով ընթացող կառքը հանկարծակի տեսնում է սատանայական պարը, որտեղ դարձյալ անդրաշխարհային սիմվոլն է՝ ձորակը: Եվ եթե Թումանյանի պարագայում սատանաները Սաքոյի մտավոր ու հոգեկան աշխարհը տակնուվրա անելուց հետո են նրան հասցնում այդ վիճակին, Պուշկինի մոտ կերպարի ու սատանաների միջև բախումը մնում է անհայտ: Վերջին տողում է միայն հեղինակը ընդգծում հե-

րոսի հոգեբանական կազմաբանդումը. «Չա՛ր ոռնոցով ու տրտունջով իմ խեղճ սիրտը գալարում»: Պուշկինի մոտ մարդու մտածմունքների արդյունքում առաջացած սատանայական երևույթների առկայության այլ օրինակներ ևս կան: Դրանցից են «Ջրահեղձը» բանաստեղծությունն ու «Դագադագործը» պատմվածքը: «Ջրահեղձը» բանաստեղծությունն ինքնին աղերսներ ունի «Լոռեցի Սաքո» պոեմի հետ: Երկու դեպքում էլ միտքն ու մտածմունքը ծնում է սատանայական ուժերի թվացյալ, իրական և անիրական ներկայություն: Պուշկինի դեպքում մտովի կազմավորված սարսափելի միջավայրի համար գոյություն ունի ազդակ՝ գետի ափից հանված դիակը: Թումանյանի մոտ դա կազմավորվում է պատմությամբ: Այստեղ ևս շրջապատող միջավայրը տալիս է ապագա պատմության պատկերային կոլորիտը: Պուշկինի բանաստեղծության դեպքում միջավայրը, դիակի առկայությունը հանգիստ չէին տալիս գյուղացուն: Այս միայնությունը ստիպում է մտածել ամեն ինչի մասին: Մտորումների հետևանքով գյուղացու ներաշխարհում ծնվում է վախի մթնոլորտ, որով պայմանավորված՝ նա դառնում է հոգեբանորեն խոցելի, իսկ չարը՝ սատանան, արդեն իսկ իր առաջ ունի խոցմանը պատրաստ հոգի.

*Գիշերն ուժգին բուք վեր կացավ,*

*Գետն էլնում է, որոտում... .*

*Մարիսը արդեն էրվեց, հանգավ*

*Լուռ ու ծխոտ խրճիթում:*

*Ողջ քնած են: Անքուն պառկած*

*Միտք է անում գյուղացին... .*

*Բուքն ոռնում... մին էլ հանկարծ*

*Լուսամուտը բախեցին... : [11, էջ 224]*

Այստեղ ևս փակ համակարգում՝ տանը, գյուղացուն այցի են գալիս չար ուժերը: Պուշկինը բնապատկերներով և փոքր դետալներով ներկայացնում է միջավայրը, և այդ միջավայրի հանրագումարով ծնվում է վախի մթնոլորտը: Ակնհայտ է, որ մեր քննարկած ստեղծագործություններում առկա է լուսինը՝ Ռուդոլֆ Շտայները տալիս է նաև նմանատիպ հոգիների կապն ու զարգացումը լուսնի, ինչպես նաև լուսնային համակարգի հետ: Շտայների բանաձևերից մեկը տեղադրելով Պուշկինի ստեղծագործության մեջ՝ մենք տեսնում ենք նաև ոգեաշխարհի առանձին իրադարձությունների և էակների միջև կապի հաստատումը: Եվ վերգայական իրադարձությունների և էակների միջև կապի հաստատման համար պետք է ներքին խորասուզում՝ մտածմունք: Այդ մտածմունքը առկա է նաև Պուշկինի այս տողերում.

*Ամբոխվեցին մտքերը մութ.*

*Մինչև լույսը նա դողում,*

*Մինչև լույսը լուսամուտը*

*Բախում էին ու բախում... : [4, էջ 40]*

Պուշկինի հերոսին՝ գյուղացուն մտքերն ուղեկցում էին հենց սկզբից և շարունակվում են նաև դիակին հանդիպելուց հետո: Ներքին խորասուզումը ստեղծեց կապ ոգեաշխարհի հոգիների հետ. «Ով ձեռք է բերում ոգեկան աշխարհը դիտարկելու ունակություն, կարող է հասնել նրան, որ դիտարկի այդտեղ ընթացող առանձին պրոցես-

ները: Նա ունակ է դառնում կապ հաստատելու մարդկանց հետ, որոնք մահվան ու նոր ծննդյան միջև ապրում են ոգեկան աշխարհում»: [9, էջ 394]: Հարկ է միայն ավելացնել, որ Շտայների նշած մարդը մեզ մոտ չար ոգու՝ մահացածի կերպարին համարժեք է, քանի որ Շտայները նաև խոսում է չար ոգիների ճանապարհորդության մասին: Ներքին խորասուզման մեջ գտնվող մարդու համար սատանայականը երբեմն տեսանելի է նաև պատկերային և սեռային մի շարք այլ համակարգերում: Մասնավորապես՝ նմանատիպ մոդել առկա է հատկապես Ն. Գոգոլի մի շարք ստեղծագործություններում, որոնց հիմքում առկա են կենսագրական մի շարք իրադարձություններ: Ն. Գոգոլի ու կանանց հարաբերությունների մասին շատ քիչ ու մշուշոտ տեղեկություններ կան: Գոգոլը կանանց ընդունում էր որպես կախարդների, որոնք արատավոր են և չունեն հոգի: Այդ ամենը հանդիպում ենք նրա մի շարք ստեղծագործություններում: «Վիյ» երկում նա Կիևի առևտրական կանանց համարում էր կախարդուհիներ: Կախարդ կանանց թեման շարունակելով՝ նա նշում է նաև, որ գիտության մարդիկ բազմիցս նշել են, որ կախարդ կանայք պոչ ունեն: Կանացի գեղեցկության մասին Գոգոլը խոսում է միայն մի քանի նամակներում, որոնցից մեկը գրել է իր մորը: Այդ նամակում Գոգոլը խոստովանում է. «Ես նրան կանվանեի հրեշտակ, սակայն այդ բառն իմը չե»: Եվ այդպես էլ չի խոստովանում, թե ում է սիրահարվել: Այս ամենի ընդհանրացումը նա տալիս է իր «Խելագարի հիշատակարանը» երկում, որտեղ նշում է, որ կանայք նողկալի են և հավիտյան սիրահարված են սատանային: Այս ամենի ընդհանրացումը մենք տեսնում ենք Գոգոլի «Վիյ» ստեղծագործությունում, որտեղ Վիյը՝ ստորգետնյա գանձերը պահող հոգիների ղեկավարը, ստեղծագործության վերջում իր շքախմբով եկեղեցում հարձակում է գործում փիլիսոփա Խոմայի դեմ. «Միևնույն ժամանակ նա լսում էր, թե ինչպես պիղծ հոգիները այս ու այն կողմ էին նետվում նրա շուրջը՝ փորձելով կպչել նրան թևերի ու գարշելի պոչերի ծայրերով: ...Եվ բոլորը՝ ինչ կար-չկար, հարձակվեցին փիլիսոփայի վրա: Անշունչ գլորվեց նա գետնին և հենց նույն պահին վախից հոգին փչեց» [2, էջեր 241-242]: Գոգոլի մոտ ևս եկեղեցում մահացած աղջկա հետ գտնվող փիլիսոփան կործանվում է սատանայական աղմուկից ու ճիչերից: Ի դեպ, սատանայական պարն ու աղմուկը միանգամից վերանում են այն ժամանակ, երբ կանչում է աքաղաղը: Եվ մեկ իրականությունից անցումը դեպի մեկ այլ իրականություն տեղի է ունենում աքաղաղի կանչով: Այդ աքաղաղը հետագայում Կաֆկայի մոտ դառնալու էր ավելի եվրոպական ու ժամանակակից՝ զարթուցիչ, որի ձայնից էլ սկսվում է Զամգայի ամբողջ խելագար ողբերգությունը: Գոգոլն ինքը «Վիյ»-ում արված ծանոթագրություններում նշել է. «Ամբողջ այս վիպակը ժողովրդական ավանդություն է» [2, էջ 321]: Նա ընդգծում է, որ գրել է այնպես, ինչպես լսել է և ոչինչ չի փոխել: Գոգոլը նույնպես փաստում է, որ աշխատել է ժողովրդական բանավոր խոսքի և պատմության հետ: Վերադառնալով «Լոռեցի Սաքոն» պոեմին՝ հարկ է նշել, որ Սաքոյի դրամատիզմի հաջորդ մակարդակը Միրենների առկայությունն է: Կախարդ-գեղեցկուհիները կախարդում և գայթակղեցնում էին մարդկանց: Միրենների հետ հանդիպումից հետո կենդանի է մնացել Ողիսևար: Արգոնավորդները նույնպես կարողացել են բարեհաջող անցնել Միրենների կողքով, քանի որ իրենց հետ էր Օրփեոսը, որն իր երգով կարողանում է շեղել արգոնավորդների ուշադրությունը, և արգոնավորդ-

ները բարեհաջող անցնում են Սիրենների կղզու մոտով: Թե՛ Ողիսեսի, թե՛ արգոնավորդների դեպքում, երբ նրանք կարողանում են ողջ դուրս գալ Սիրենների մոտից, Սիրենները իրենց նետում են ջուրը և կերպարանափոխվում, դառնում ժայռեր: Սակայն Լոռեցի Սաքոյի մասին խոսելիս մենք բացառապես կենտրոնանաք Ողիսեսի շուրջ: Ողիսեսը Կիրկեի խորհրդով իր ուղեկիցների ականջները պատում է մումով և հրամայում, որ իրեն կապեն նավի կայմից: Եվ Ողիսեսը առաջինն էր, որ լսում է Սիրենների երգն ու ողջ մնում: Ողիսեսին Սիրենները իրենց մոտ կանչում և գայթակղում էին գրեթե այն նույն ձևով, որով Լոռեցի Սաքոն էր լսում նրանց ձայնը.

*«Մեզի եկուր ամենագովդ Ողիսես,  
Աքայեցւոց մեծ պարծանք, նա՛ւրդ կեցուր,  
Որպէս զի մեր ձայնը լըսես, զի ոչ ոք  
Հոսկէ անդին չի՛ անցեր սեւ իր նաւով  
Առանց բընաւ լըսելու ձայնն անուշակ  
Որ կելլէ մեր բերնէն, յետոյ կախարդուած  
Եւ հմտացած շատ բաներու՝ կը մեկնի» [7, էջ 248]:*

Նույն այս հնչյուններով, գայթակղիչ ձայնով ու կանչով Թումանյանի պոեմում դեպի իրենց էին կանչում չար ոգիները, դեպի իրենց գիրկն էին կանչում Սաքոյին.

*— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,  
Արի մեզ մոտ հարսանիք,  
Տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք գալի՛  
Սիրո՛ւն, ջահել հարսն-աղջիկ [4, էջ 20]:*

Բնականաբար այլ բան է, երբ Սիրենների գայթակղիչ երգը լսում է Ողիսեսը, որ կարողանում էր կովել աստվածների դեմ, և այլ բան է, որ այդ երգի հնչյունները լսում էր լեռներում ծվարած մի հովիվ: Չնայած որ պոեմի վերջին հատվածներում մենք տեսնում ենք որոշակի դիմադրություն, սակայն Սաքոյի վերջնական կործանումը Թումանյանը տալիս է մութ գիշերվա մեջ նրա խելագար վագրով: Ֆրանց Կաֆկան Սիրենների մասին իր պարադոքսում կազմաբանում է այս աստվածության՝ ողիսեսյան գաղափարն ու տալիս է իր ընթերցումն ու մեկնաբանությունը: Կաֆկան արդեն իսկ վերնագրում տալիս է այս աստվածության պարադոքսալ կարգավիճակը՝ «Սիրենների լռությունը»: Ըստ Կաֆկայի՝ Ողիսեսը Սիրեններին դեմ հանդիպման գնում էր մանկական լուծումով՝ մեղրամում և շղթա. «Բայց Սիրենները ունեին մի ավելի սարսափելի զենք, քան երգը: Դա նրանց լռությունն է: Ու թեև չի պատահել, որ նրանք լռեին, բայց կարելի է ենթադրել, որ եթե նրանց երգից ինչ-որ մեկը փրկվել էր, ապա լռությունից ոչ ոք չէր փրկվի անկասկած» [6, էջ 323]: Կաֆկան քանդում է Սիրենների երգի մասին առասպելը և նշում, որ Ողիսեսին ուղղակի թվում էր, որ նրանք երգում են, սակայն իրականում նրանք լռել էին, և հենց այդ թվացյալ վիճակն ու Սիրենների լռությունն էր, որ փրկեց Ողիսեսին: Ողիսեսը դարձավ միակը, ով կարողացավ անցնել նրանց կողքով: Ճիշտ է, նրա կողքին կարելի է դնել նաև Մոֆոկլեսին, ով նշում էր, որ Սիրեններն իրեն պատմել են Հադեսի օրենքը, և անհնար է պատկերացնել, որ այդ մտերմությունը զուտ սահմանվել է գրույցի մակարդակում՝ առանց երգի, սակայն Սիրենների դեմ հաղթանակով Ողի-

սևսը դարձավ միակն ու բացառիկը՝ անգամ Կաֆկայի աչքերում և գնահատմամբ: Եվ եթե Կաֆկայից առաջ բոլորը ներկայացնում էին Ողիսեսի ուժն ու կարողությունը, ապա Կաֆկան Ողիսեսին բնորոշում էր այսպես. «...անմեղորեն ուրախացած իր մանկական հնարամտությամբ, գնում էր սիրենների ընդառաջ» [6, էջ 323] : Թումանյանի պոեմը Կաֆկայի բանաձևով ընդգծում է, որ Լոռեցի Սաքոյին թվացյալ տեսիլքները կա՛մ Սիրենների երգն էին, կա՛մ էլ նրանց լռությունը: Երկու դեպքում էլ կերպարը գնում էր դեպի կործանում: Նա դուրս եկավ իր ներաշխարհից ու քայլեց դեպի մահը:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Ուսումնասիրելով Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմը՝ տեսնում ենք, որ Սաքոն դառնում է լռության ողբերգության կրողը: Լռությունը խախտվում է ձայնով, իսկ ձայնն այնկողմնային աշխարհից այսկողմնային աշխարհ անցած հոգուն է պատկանում: Սույն մոդելը սահմանվում է նաև Գոգոլի և Պուշկինի մի շարք ստեղծագործություններում: Լռության խախտմամբ սահմանվում է այնկողմնային աշխարհ անցման բանաձևը: Իսկ Սիրենների հաղթահարելը դառնում է նոր ժամանակների միջ:

### Գ ր ա կ ա ն ո լ յ ո ն

1. **Աբեղյան Մ.** *Երկեր, Ա հատոր*, Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1966: 640 էջ:
2. **Գոգոլ Ն. ԵՇ.** *Հատոր 2*, Երևան: Հայպետհրատ: 1953: 323 էջ:
3. **Թամրազյան Հ.** *Հովհաննես Թումանյան բանաստեղծը և մտածողը*, Երևան: Նաիրի հր.: 1995, 508 էջ:
4. **Թումանյան Հ., ԵԼՇ, հատոր 3**, Երևան: ԳԱ հրատ.: 1989: 542 էջ:
5. **Թումանյան Ն.** *Հուշեր և գրույցներ*, Երևան: Լույս հրատ.: 1969: 334 էջ:
6. **Կաֆկա Ֆ.** *Պատմվածքներ և աֆորիզմներ*, Երևան: Անտարես: 2019: 475 էջ:
7. **Հոմերի Ողիասկան**, Վենետիկ: Սուրբ Ղազար հրատ.: 1924: 703 էջ:
8. **Նիցշե Ֆ.** *Այսպես խոսեց Չրադաշտը*, Երևան: Անտարես հրատ.: , 2015: 435 էջ:
9. **Շտայներ Ռ.** *Գաղտնագիտություն*, Երևան: Սարգիս Խաչենց Փրինթինգ հրատ.: 2016: 402 էջ:
10. **Պուշկին Ա.** *Բանաստեղծություններ*, Երևան: Հայպետհրատ: 1940: 254 էջ:
11. **Տարոնցի Ս.** *Բանաստեղծություններ և թարգմանություններ*, Երևան: Հայպետհրատ: 1942: 551 էջ:
12. **Нойманн Э.** *Великая Мать*, Москва. Издательство Питер. 2012. 426 с.
13. **Юнг К.** *Об отношении аналитической психологии к поэтико-художественному творчеству*, М. Изд. Московского университета. 1987. 178 с.

### R e f e r e n c e s

1. **Abeghyan M.** Creations, Volume A [*Erker, hator 1*]. Yerevan, USSR Publishing House, 1966, 640 p.. (In Armenian)
2. **Gogol N.** Creations, Volume 2 [*Erkeri liakatar joxovacu, hator 2*]. Yerevan, Haypethrat, 1953, 323 p.. (In Armenian)
3. **Tamrazyan H.** "Hovhannes Tumanyan the Poet and the Thinker"[*Banastexcy ev mtacoxy*]. Yerevan, Nairi Publishing House, 1995, 508 p.. (In Armenian)
4. **Tumanyan H.** Creations, volume 3, [*ELJ Hator 3*], Yerevan. GA ed., 1989, 542 p.. (In Armenian)
5. **Tumanyan N.** "Memories and Conversations", [*Husher ev zruycner*] Yerevan. Luys Publishing House. 1969. 334 p.. (In Armenian)

6. **Kafka F.** "Stories and Aphorisms", [*Patmvacqner ev aforizmner*] Yerevan. Antares. 2019. 475 p.. (In Armenian)
7. **Homer's** "Odyssey", [*Vodisakan*] Venice, Surb Lazar ed.. 1924. 703 p.. (In Armenian)
8. **Nietzsche F.** "Thus spoke Zarathustra", [*Ayspes xosec Zradashty*] Yerevan. Antares ed.. 2015. 435 p.. (In Armenian)
9. **Steiner R.** "Privacy", [*Gaxtnagitutyun*] Yerevan, Sargis Khachents Printinfo publishing house. 2016. 402 p. (In Armenian)
10. **Pushkin A.** "Poems". [*Banastexcutyunner*] Yerevan. Haypethrat. 1940. 254 p. (In Armenian)
11. **Tarontsi S.** "Poems and Translations", [*Banastexcutyunner ev targmanutyunner*] Yerevan. Haypethrat. 1942. 551 p.. (In Armenian)
12. **Nojmann E.** The Great Mother [*Velikaja Mat*]. Moscow. Peter Publishing House. 2012. 426 p. (In Russian)
13. **Yung C.** On the relation of analytical psychology to poetic and artistic creation [*Ob otnoshenii analiticheskoye psixologii k poeticheskomu i xudojestvennomu tvorchestvu*]. Moscow, Moscow State University Publishing House. 1987. 178 p. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **25. 02. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **20. 03. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Արա Սմբատի ՋԱՐԳԱՐՅԱՆ**՝ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,  
Էլ. huugն՝ zargaryanara1994@gmail.com, [https://orcid id: 0000-0002-0087-5232](https://orcid.id:0000-0002-0087-5232)

**Ara Smbat ZARGARYAN**: Junior researcher at the M. Abeghyan  
Institute of Literature NAS., Yerevan, RA,  
e-mail: zargaryanara1994@gmail.com, [https://orcid id: 0000-0002-0087-5232](https://orcid.id:0000-0002-0087-5232)

**Ара Смба́тович ЗАРГА́РЯН**: младший научный сотрудник  
Института литературы имени М. Абе́гяна НАН, Ереван, РА,  
эл-адрес: zargaryanara1994@gmail.com, [https://orcid id: 0000-0002-0087-5232](https://orcid.id:0000-0002-0087-5232)



ԲԺՇԿԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆԱՑՄԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Հենրիետա Վ. Սուրիայան*

Հայաստանի պետական բժշկական համալսարան, Երևան, ՀՀ

*Հովհաննես Լ. Չաքարյան*

«Տաթև» գիտակրթական համալիր, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

*Նախաբան.* Հոդվածը նվիրված է լեզվական համակարգի համասեռության մի մասնավոր դրսևորմանը՝ բառապաշարի մաքրությանը (բժշկագիտության լեզվի օրինակով) և դրա ապահովման նպատակով փոխառությունների հետևողական հայերենացման անհրաժեշտության խնդրին: *Մեթոդներ և նյութեր.* Հետազոտությունը կատարված է բժշկության ոլորտից վերցված հայերեն, անգլերեն և ռուսերեն համարժեք բառակազմական հարացույցների զուգադրական քննության եղանակով: Նյութը քաղված է բժշկագիտական բացատրական երկլեզու և բազմալեզու բառարաններից: *Վերլուծություն.* Բառակազմական հարացույցները տարբեր չափերով ու արդյունավետությամբ են իրականանում տարբեր լեզուներում: Տարալեզու բառակազմական հարացույցների քննությունը ցույց է տալիս, որ հայերենը իր լեզվական համասեռության շնորհիվ կատարյալ է ամբողջական, ինքնաբավ և ապահովում է հասկացական ու լեզվական համակարգերի համաձևություն: Մինչդեռ ռուսերեն և անգլերեն հարացույցները իրենց անհամասեռության պատճառով թերի են (կան բաց վանդակներ), ոչ ճկուն, անմիօրինակ, երկիմաստություններով, համանուններով, կադապարից շեղվող ձևերով, անհարկի հոմանիշներով ու տարբերակներով լի: Թերություններն առաջանում են հիմնականում փոխառությունների հետևանքով: *Արդյունքներ.* Այս համեմատական քննությունը ցույց է տալիս, որ բժշկության, ինչպես և ցանկացած այլ բնագավառի եզրույթաբանություն, անհրաժեշտ է առավելագույնս հայերենացնել: Դրանից կշահեն հայոց լեզուն, Հայաստանի բժշկագիտության ոլորտն ու բժշկական կրթության համակարգը, հայախոս հանրու-

թյունը: *Հեղինակների ներդրումը*. Տարբեր լեզուների բառակազմական հարացույցների այսպիսի գուցադրական քննությունն էլ հենց հեղինակների ներդրումն է:

**Բանալի բառեր՝** *հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն, բառակազմական հարացույց, գուցադրական քննություն, բառակազմական կաղապար, համաձևություն, փոխառություն, պատճենում, լեզվի ինքնամաքում:*

**Ինչպես հղել՝** Սուքիասյան Հ., Չաքարյան Հ. *Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024: Հ. 1(27): 113-128 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-113

## THE NECESSITY OF THE ARMENIZATION OF MEDICAL TERMS

*Henrietta V. Sukiasyan*

State Medical University of Armenia, Yerevan, RA

*Hovhannes L. Zakaryan*

"Tatev" Center of Research and Education, RA

### Abstract

**Introduction:** The article is devoted to the study of the homogeneity of the linguistic system: the purity of the vocabulary (using the example of the language of medicine) and the need for consistent Armenization of borrowings in order to ensure this. **Methods and materials:** The research was carried out by the method of contrastive examination of Armenian, English and Russian equivalent word-formation paradigms taken from the field of medicine. The material is taken from explanatory bilingual and multilingual medical dictionaries. **Analysis:** The word-formation paradigms in different languages are implemented in different measures and effectiveness. A contrastive study of Armenian, English and Russian equivalent word-formation paradigms, taken from the field of medicine, shows that the Armenian language, thanks to its linguistic homogeneity, is a perfect, holistic, self-contained and provides an isomorphism of conceptual and linguistic systems. While the Russian and English paradigms due to heterogeneous are incomplete (there are gaps), inflexible, non-uniform, full of ambiguities, homonyms, unwanted synonyms and variants, and deviations from the word-formation models. Disadvantages are primarily a consequence of loan words. **Results:** This contrastive study shows that the terminology of medicine, like any other field, needs maximum Armenization. The Armenian language, the field of medicine and the medical education system of Armenia, and the Armenian-speaking community will benefit from this. **Authors' contribution:** This kind of contrastive examination of word-formation paradigms of different languages is the contribution of the authors.

**Key words:** *Armenian, Russian, English, derivational paradigm, comparative analysis, word-formation model, isomorphism, loan word, calque, language self-cleaning.*

**Citation:** Sukiasyan H., Zakaryan H. *The Necessity of the Armenization of Medical Terms.* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 113-128 pp.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-113

## НЕОБХОДИМОСТЬ АРМЕНИЗАЦИИ МЕДИЦИНСКИХ ТЕРМИНОВ

*Գերիета В. Сукиасян*

Государственный медицинский университет Армении, Ереван, РА

*Օգանես Լ. Закарян*

Научно-образовательный комплекс "Татев", Ереван, РА

### Аннотация

**Введение:** Статья посвящена частному проявлению однородности языковой системы: чистоте лексики (на примере языка медицины) и необходимости последовательной арменизации заимствований для ее обеспечения. **Методы и материалы:** Исследование проводилось методом сопоставительного изучения армянских, английских и русских эквивалентных словообразовательных парадигм, взятых из области медицины. Материал взят из толковых двуязычных и многоязычных медицинских словарей. **Анализ:** Словообразовательные парадигмы в различных языках осуществляются в разной мере и разной эффективностью. Анализ разноязычных эквивалентных словообразовательных парадигм, взятых из сферы медицины, показывает, что армянский язык благодаря своей языковой однородности является совершенным, целостным, самодовлеющим и обеспечивает изоморфизм понятийных и лингвистических систем. В то время как парадигмы русского и английского языков из-за своей неоднородности являются неполными (имеются лакуны), негибкими, не единообразными, полны двусмысленностей, омонимов, нежелательных синонимов и вариантов, отклонений от словообразовательных моделей. Недостатки в основном являются следствием заимствований. **Полученные результаты:** Этот сопоставительный анализ показывает, что терминология медицины, как и любой другой области, нуждается в максимальной арменизации. От этого выиграют армянский язык, сфера медицины и система медицинского образования Армении, армяноязычная община. **Вклад авторов:** Такого рода сопоставительное исследование словообразовательных парадигм разных языков является вкладом авторов.

**Ключевые слова:** армянский язык, русский язык, английский язык, словообразовательная парадигма, сопоставительный анализ, словообразовательная модель, изоморфизм, заимствование, калька, самоочистка языка.

**Цитирование:** Сукиасян Г, Закарян О. *Необходимость арменизации медицинских терминов.* // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1(27). 113-128 сс.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-113

**ՆԱԽԱԲԱՆ.** Հոդվածը նվիրված է լեզվական համակարգի համասեռության մի մասնավոր դրսևորմանը՝ բառապաշարի մաքրությանը (բժշկագիտության լեզվի օրինակով) և դրա ապահովման նպատակով փոխառությունների հետևողական հայերենացման անհրաժեշտության խնդրին:

Հոդվածում հայերեն, անգլերեն և ռուսերեն բառակազմական հարացույցներից բաղադրված մի քանի համարժեք եզրույթային մանրահամակարգերի զուգադրությամբ փորձ է արվում պարզելու իմաստային ընդհանրական կաղապարների ու դրանց բառային իրացումների համաձևության (իզոմորֆիզմի), բառակազմական միջոցների կիրառման արդյունավետության, հարացույցների ներքին համակարգվածության աստի-

ճանը նշված լեզուներում: Քննարկվում են նաև եզրույթաշինության այն սկզբունքները, որոնք ապահովում են մանրահամակարգերի համաձևությունը, միասնականությունը, միանշանակությունը:

Հետազոտությունը կատարված է բժշկության ոլորտից վերցված հայերեն, անգլերեն և ռուսերեն համարժեք բառակազմական հարացույցների գուգադրական քննության եղանակով: Նյութը քաղված է բժշկագիտական բացատրական երկլեզու և բազմալեզու բառարաններից [1: 3: 4: 5: 10: 11]:

### **Հետազոտության ընթացքը և արդյունքները**

Աշխարհում կան բազմաթիվ լեզուներ՝ զարգացման տարբեր մակարդակներով: Ամեն լեզու մի բարդ համակարգ է՝ իր օրինաչափություններով, առանձնահատկություններով: Լիարժեք կարող են կիրառվել այն լեզուները, որոնք առավել զարգացած են և ունեն առավել համասեռ համակարգ:

Որևէ տեղեկույթ մի լեզվից մյուսը փոխանցելու համար կատարվում է թարգմանություն: Լեզվի համասեռությունը պահպանելու նպատակով թարգմանությունը պետք է կատարվի լիարժեք, այսինքն՝ ամբողջ խորությամբ, մինչև վերջին բառը: Լիարժեք թարգմանությունը դյուրին գործ չէ: Հարկ է լինում հաճախ ստեղծել նոր բառեր, կիրառել բառակազմական ու քերականական նորանոր հնարքներ:

Հատկապես բառաստեղծումը պահանջում է լուրջ ջանքեր և մեծ հմտություն: Դրանց անբավարարության դեպքում թարգմանությունը լինում է ոչ լիարժեք, մի շարք բառեր թարգմանվելու փոխարեն տառադարձվում են: Այս կերպ թարգմանության լեզուն թարգմանվող լեզվից կատարում է փոխառություններ, որոնք կարող են լինել դիպվածային (մեկանգամյա) կամ բազմակի օգտագործման: Վերջիններս երկարատև գործածության դեպքում կարող են դառնալ տվյալ լեզվի բառապաշարի բաղադրիչ:

Սակայն փոխառությունները, որպես կանոն, լինում են ժամանակավոր (*ռևոլյուցիա, սիստեմ, աբիտուրիենտ, արոնենտ, ալգորիթմ, ամնիստիա, բազաժ, օնլայն, լոմբարդ* ևն)՝ մինչև տվյալ լեզվի միջոցներով համարժեք նորակազմության ստեղծումն ու տարածումը (*հեղափոխություն, համակարգ, դիմորդ, բաժանորդ, քայլաշար, համաներում, ուղեբեռ, առցանց, գրավատում*):

Փոխառությունը կարող է լինել ոչ միայն թարգմանչի թերացման, այլև լեզուների կենդանի շփման, երկլեզվության հետևանք, երբ օտար բառը այնքան ծանոթ է դառնում լեզվակիրներին, որ ազատ գործածվում է նաև նրանց լեզվում: Սակայն լեզուների շփումն էլ հարատև երևույթ չէ, և լեզվավիճակի փոփոխության դեպքում փոխառությունները, որպես կանոն, դառնում են հնաբանություններ ու դուրս մղվում փոխառու լեզվից (*բեզարեյ, դուշման, դոնադ, խաբար, խովլայթ, դոստ, վախտ, գավտրիկ, ուժին, պերերիվ* ևն):

Լինում են նաև մշակութային փոխառություններ, երբ նորահայտ երևույթը կամ նոր ապրանքը իր նորաստեղծ անվան հետ տարածվում է այլ լեզվական հանրությունում (*ստադիոն, իկեբանա, կոմպյուտեր, պրինտեր, սլայդ, սամակատ* ևն) մինչև այս կամ այն լեզվում սեփական համարժեք նորակազմության ստեղծումը (*մարգարաշտ, ծաղկահարդարում, համակարգիչ, տպիչ, սահիկ, ինքնագնաց*):

Լինում են նաև լեզվամշակութային նորաձևությամբ պայմանավորված փոխառություններ, որոնք առժամանակ գործածվում են, մինչև հնաձև դառնալը և լեզվից դուրս մղվելը (*պրիվետ, նիուժելի, խոխմա, նագլի, սյուրպրիզ, չառ, բայ-բայ, օքեյ, լանչ, թոփ, հիթ, ռեյթինգ, իմիջ, մեսիջ, էքսկլյուզիվ, սուպեռ* ևն):

Փոխառությունները հաճախ էլ ունենում են քաղաքական պատճառներ: Կայսերապետական ծավալապաշտ տերություններն ու ազգերը իրենց լեզուները տարածելու նպատակով կիրառում են հատուկ լեզվաքաղաքականություն, որի դրսևորումներից է իրենց լեզուներից կատարվող փոխառությունների խրախուսումն ու պարտադրումը ենթակա լեզուներին: Համապատասխան երկարատև քարոզչությունը ենթակա լեզուների կրողներին և հատկապես լեզվագետ մասնագետներին (թարգմանիչներին, լեզվաբաններին) հաճախ դարձնում է այնքան մոլորված ու օտարամոլ, որ նրանք վերածվում են ծավալապաշտ լեզուների և դրանցից կատարվող փոխառությունների անկեղծ ջատագովների՝ չգիտակցելով, որ այդպիսով գործում են սեփական լեզվի շահերի դեմ:

Ահա թե ինչու կայսերական բռնատիրության ենթարկված ժողովուրդների մեջ բավական մեծ թիվ են կազմում օտար, հատկապես կայսերական լեզուներից (ռուսերենից, անգլերենից ևն) փոխառությունների կողմնակիցները: Նրանք իրենց արդարացնելու համար շահարկում են կայսերական քարոզչությունից յուրացրած մի շարք ձեռնարկական (մանիպուլատիվ) հնարքներ, մասնավորապես «մաքրամոլություն» և «միջազգային բառ» քաղաքական հակազիտական պիտակները: Դրանցից առաջինով փորձում են վարկաբեկել լեզվական համակարգի համասեռությունը պահպանել ջանացողներին, երկրորդով արդարացնում են իրենց օտարամոլ դիրքորոշումը:

Ահա այս ներքին՝ հինգերորդ շարասյունն է, որ պարբերաբար ելույթներ է ունենում փոխառությունների հայերենացման դեմ: Նրա, այսպես կոչված, փաստարկները ամբոխավարական ու ամբոխահաճ են և առավելապես հիմնված վատ սովորույթի պահպանման բնագրական ձգտման վրա: Այսինքն՝ տվյալ պահին գործուն ու տարածված փոխառություններին ընտելացած անհատներն ու մասնագիտական հանրությունը հաճախ ծուլանում ու զլանում են հայերեն նոր բառեր սովորել և գերադասում են պահպանել լեզվական այն ճահիճը, որի մեջ են իրենք: Օրինակ՝ մարզիկները, վարորդները, հեռուստաաշխատողները, ծրագրավորողները ունեն օտարաբանություններով խճողված մասնագիտական ժարգոններ, որոնցից հրաժարվելու համար ջանքեր են պետք, և բնական է նրանց դիմադրությունը: Թեև պետք է նկատել, որ նրանց գրավոր և պաշտոնական-հրապարակային խոսքը անհամեմատ մաքուր է լինում: Նրանք մեծ մասամբ գիտեն իրենց գործածած օտարաբանությունների հայերեն համարժեքները, սակայն բավականաչափ ընտելացած չեն դրանց, որպեսզի լիովին հրաժարվեն օտարաբանություններից:

Սակայն հայ լեզվական հանրության մեջ կա նաև դրան հակադիր մեկ այլ բնագոյ, որը պայմանավորված է հայերենի ինքնամաքրման համակարգային միտումով: Ընդհանրապես բնության և հասարակության մեջ ամեն համակարգ ձգտում է լինել համասեռ՝ օտարածին տարրերից զերծ: Դա համընդհանուր օրենք է, որ այս կամ այն չափով գործում է նաև լեզվական համակարգերում:

Լեզուների հատկապես բառապաշարը բաց ու խոցելի համակարգ է և վերոհիշյալ պատճառներով հաճախ է ենթարկվում արտաքին հարձակումների ու ներխուժումների: Անտեր լեզուները դրա հետևանքով հաճախ խեղճանում են, ճնշվում ու ի վերջո մեռնում: Մինչդեռ սեփական արժեքները գնահատող ու հարգող ազգերն ու պետությունները հատուկ լեզվաքաղաքականություն են մշակում և կառույցներ ստեղծում իրենց լեզվի համասեռությունն ու ինքնատիպությունը պահպանելու նպատակով: Այդպիսի երկրներ են, օրինակ, Ֆրանսիան, Ֆինլանդիան, Չեխիան, Ճապոնիան, Թուրքիան:

Հայ իրականության մեջ էլ մշտապես եղել է գրական լեզուն անաղարտ պահելու ձգտումը: Պետականության առկայության դեպքում դա նաև սահմանակարգային (ինստիտուցիոնալ) բնույթ է ստացել: Օրինակ՝ 5-րդ դարում մի խումբ գիտնականներ հատուկ ջանքեր էին գործադրում հայերենի բառակազմական համակարգը զարգացնելու, այլ ժողովուրդների գիտական միտքը մաքուր հայերենով արտահայտելու ուղղությամբ: Արդյունքում մշակվեց ու հարստացավ հատկապես նախածանցների ենթահամակարգը, ստեղծվեցին ու կիրառության մեջ դրվեցին մեծ թվով հայերեն նորակազմություններ (*ապացույց, առձեռն, արտադրյալ, բաղաձայն, դերանուն, բացատրել, գերազանց, ենթադրել, հակադիր, համադաս, մակարդակ, հարատև, նախագիծ, ներգործել, շողկաս, շարունակ, պարագա, ստորաքարշ, վաղեմի, վերլուծել, տարածել, տրամադրել, փոխանցել* ևն): Չնայած լեզվաշինական այդ դպրոցը նոր ժամանակներում կոչվեց *հունարան* [12, էջեր 75-86], սակայն դա ըստ էության ամենաարդյունավետ հայկաբան դպրոցն է, որ մենք երբևէ ունեցել ենք: Այժմ էլ՝ խորհրդային տարիներից ի վեր, գործում են պետական հատուկ կառույցներ և հաստատված սկզբունքներ հայերենի մաքրությունն ու ինքնատիպությունը պահպանելու և զարգացնելու նպատակադրումով [8]: Իսկ 1993-ից սկսած՝ ունենք լեզվական օրենսդրություն: Հետևաբար հայերեն խոսքում հայերեն բառի անհարկի փոխարինումը օտար համարժեքով ոչ միայն անհավատարմություն է ազգային արժեքներին ու պետական խորհրդանիշ հայոց լեզվին, այլև օրինազանցություն է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների առումով:

Հատկանշական է մեր իրականության մեջ առկա լեզվամաքրման վերոհիշյալ բնագոյը, որ դրսևորվում է հատկապես գրավոր լեզվում ու գրական խոսքում օտարաբանություններից խուսափելու ձգտման ձևով: Իհարկե, սա վիճակագրական օրինաչափություն է. միաժամանակ կան թե՛ լեզվի մաքրության ջատագովներ, թե՛ օտարամուկներ: Սակայն ընդհանուր առմամբ նկատելի է հայերենի ինքնամաքրման միտումը, որի շնորհիվ շարունակաբար հայացվում են բազմաթիվ փոխառություններ, զանգվածաբար կանխվում է շատ ու շատ օտար բառերի ներթափանցումը մեր լեզվի մեջ: Արդյունքում մեր գրական լեզուն աչքի է ընկնում իր համասեռությամբ ու ինքնատիպությամբ:

Սակայն լեզուն անընդհատ փոփոխվող ու զարգացող համակարգ է, և նրա անխաթարությունը պահպանելու զգոնությունը երբեք չպետք է կորցնել: Չնայած կիրառվող ջանքերին՝ վերոհիշյալ պատճառներով մեր բառապաշարում կան ու շարունակում են հայտնվել փոխառություններ, որոնք սպասում են հայերենացման իրենց հերթին: Եվ քանի որ դրանց ընտելացած անձինք հաճախ ընդվզում են հայերենացման այդ բնական գործընթացի դեմ, երբեմն էլ խոչընդոտում այդ ընթացքը, ուրեմն կարիք կա ևս մեկ ան-

**Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը**

գամ հիմնավորելու մեր լեզվի բառապաշարի հայերենացման անհրաժեշտությունը բժշկական եզրույթների օրինակով:

Բժշկության և ընդհանրապես առողջապահության ոլորտի բառապաշարը հատումներ ունի կենսաբանության, մասնավորապես կազմախոսության, բնախոսության, կենդանաբանության, բուսաբանության, ծագումնագիտության (գենետիկայի), հոգեբանության, մարմնակրթության, սննդաբանության, ինչպես նաև տարրաբանության (քիմիա) և գործիքաբանության հետ:

Բժշկագիտության մի բավական ընդարձակ ու բազմակիրառելի ենթաօլորտ է դեղագիտությունը: Դեղերը՝ որպես նյութեր, ունեն իրենց տարրաբանական կամ բուսաբանական անվանումները: Սակայն հանրությունը դեղերը տեսնում է հիմնականում որպես ապրանքներ, որոնցից ամեն մեկն ունի իր ապրանքային անվանումը: Վերջինս փաստորեն հատուկ անուն է, ենթակա չէ թարգմանության և ընդամենը կարող է տառադարձվել: Քանի որ մեր իրականության մեջ դեղերի մեծ մասը ներմուծված է, դրանց անվանումները օտարալեզու են՝ հիմնականում կազմված հունալատինական բաղադրիչներով, և տպավորություն է ստեղծվում, թե բժշկության ոլորտում գերիշխում են փոխառությունները: Մինչդեռ իրականությունն այլ է: Եթե մի կողմ թողնենք դեղերի ապրանքային անվանումները, ապա մնացած ենթաօլորտներում գերիշխում են հայերեն բառերը: Ավելին, գործում են բառակազմական կաղապարներ, ածանցներ, ածանցակերպներ, արմատներ, որոնցով արդյունավետորեն սերվում են բառակազմական հարացույցներ, որոնք աչքի են ընկնում իրենց համասեռությամբ, կանոնավորությամբ, խիստ օրինաչափությամբ, խնայողությամբ, ճկունությամբ, ընկալելիությամբ, թափանցիկությամբ, ինքնաբավությամբ: Ահա այդպիսի հարացույցի մի նմուշ (տե՛ս Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Բժշկագիտական եզրույթների հարացույցի նմուշ (հայերեն)**

յարդ	յարդաբորբ	յարդախտ	յարդաբան	յարդախտաբան	յարդաբույժ
երիկամ	երիկամաբորբ	երիկամախտ	երիկամաբան	երիկամախտաբան	երիկամաբույժ
արգանդ	արգանդաբորբ	արգանդախտ	արգանդաբան	արգանդախտաբան	արգանդաբույժ
արյուն	-	արյունախտ	արյունաբան	արյունախտաբան	արյունաբույժ
ուղեղ	ուղեղաբորբ	ուղեղախտ	ուղեղաբան	ուղեղախտաբան	ուղեղաբույժ
նյարդ	նյարդաբորբ	նյարդախտ	նյարդաբան	նյարդախտաբան	նյարդաբույժ
երակ	երակաբորբ	երակախտ	երակաբան	երակախտաբան	երակաբույժ
սիրտ	սրտաբորբ	սրտախտ	սրտաբան	սրտախտաբան	սրտաբույժ
թոք	թոքաբորբ	թոքախտ	թոքաբան	թոքախտաբան	թոքաբույժ
հոդ	հոդաբորբ	հոդախտ	հոդաբան	հոդախտաբան	հոդաբույժ
մաշկ	մաշկաբորբ	մաշկախտ	մաշկաբան	մաշկախտաբան	մաշկաբույժ
մկան	մկանաբորբ	մկանախտ	մկանաբան	մկանախտաբան	մկանաբույժ

Առաջին սյունակում հայերենի հիմնական բառազանձին պատկանող պարզ բառեր են, մյուսներում՝ դրանցից կանոնավորապես սերած ածանցյալներ՝ բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր եզրույթներ: Կարևորն այն է, որ կաղապարը միասնական է, և դրանից մազաչափ անգամ շեղում չկա: Կա միայն մեկ բաց վանդակ, դա էլ այն պատճառով, որ համապատասխան *արյունաբորբ* հիվանդություն գոյություն չունի: Հարացույցում ամեն ինչ համակարգված է, համասեռ ու կանոնավոր: Բոլոր բառերը փոխկա-

պակցված են ոչ միայն իմաստով, այլև ձևով ու կառուցվածքով: Դրանք ինքնըստինքյան բխում են մեկը մյուսից և հատ-հատ հիշվելու կարիք չունեն: Այս 72 բառին տիրապետելու համար պետք է իմանալ ընդամենը բառակազմական մեկ կաղապար, 12 արմատ և 5 ածանցակերպ:

**Աղյուսակ 2. Բժշկագիտական եզրույթների հարացույցի նմուշ (ռուսերեն)**

печень	гепатит	гепатоз, гепатопатия	гепатолог	гепатопатолог	гепатотерапевт
почка	нефрит	нефроз, нефропатия	нефролог	нефропатолог	нефротерапевт
матка	метрит	метроз, метропатия	-	метропатолог	метротерапевт
кровь	-	гематопатия, гематоз, гемопатия	гематолог	гематопатолог	гемотерапевт
мозг	энцефалит	энцефалоз, энцефалопатия	энцефалолог, невролог	энцефалопатолог	энцефалотерапевт
нерв	неврит	невроз, невропатия	невролог	невропатолог, нейропатолог	нейротерапевт <i>невротерапевт</i>
вена	флебит	венопатия, варикоз	флеболог, венолог	венопатолог, флебопатолог	флеботерапевт, венотерапевт
сердце	кардит	кардиоз, кардиопатия	кардиолог	кардиопатолог	кардиотерапевт
легкое	пневмония, пневмонит, пульмонит	пульмопатия, пневмопатия	пульмонолог, пневмонолог, пневмолог	пневмопатолог, пульмопатолог	пульмотерапевт, пневмотерапевт
сустав	артрит, ревматизм	артроз, артропатия	артролог	-	-
кожа	дерматит	дерматоз, дерматопатия	дерматолог	дерматопатолог	дерматотерапевт
мышца	миозит	миопатия	миолог	миопатолог	миотерапевт

Այժմ պարզենք վիճակը ռուսերենում (տե՛ս Աղյուսակ 2): Այստեղ առաջին սյունակում նույնպես ռուսերենի հիմնական բառազանձին պատկանող պարզ բառեր են: Սակայն մյուս սյունակներից ոչ մեկում դրանցից սերած բառեր չկան: Բոլորը հունալատիական բաղադրիչներով կազմություններ են՝ երբեմն մասամբ ռուսերենին հարմարեցված (гепатография նն): Միայն երկրորդ սյունակում որպես հոմանիշներ կարող են լինել ռուսերեն բառակապակցություններ (воспаление печени նն), ինչպես հայերենում (*յարդի բորբոքում* նն)՝ այն տարբերությամբ, որ *յարդաբորբ*-ը *յարդի բորբոքում*-ի սեղմված՝ համադրական տարբերակն է՝ նույն արմատներով, իսկ ռուսերենում гепатит-ը ձևային ոչ մի կապ չունի *воспаление печени*-ի հետ: Փաստորեն կա կտրուկ խզում առաջին սյունակի ռուսերեն համագործածական բառերի և մնացած եզրույթների միջև: Սա մեծ թերություն է հայերենի համեմատ: Եթե հայերենում բոլոր եզրույթները թափանցիկ և ինքնըստինքյան հասկանալի են առաջին սյունակի հայերեն համագործածական բառերի վրա հիմնված լինելու շնորհիվ, ապա ռուսերենում այդ միասնությունն ու թա-



փանցիկությունը չկան: Փոխառյալ հիմքի վրա կազմված եզրույթները ոչ թե անգիր հիշելու, այլ գիտակցաբար ճանաչելու համար պետք է իմանալ, օրինակ, որ гепатит բառը կազմված է լատիներեն hepar «յարդ» բառի սեռական հոլովի hepatitis ձևի hepat- հիմքից (կամ հունարեն ἥπαρ «յարդ» բառի սեռական հոլովի ἥπατος ձևի ἥπατ- հիմքից) և «բորբոքում» նշանակող -ит ածանցից, որը նույնպես փոխառություն է լատիներենից (-itis), դա էլ իր հերթին՝ հունարենից, որտեղ նշանակել է «-ային»՝ «վերաբերող»: Այս ամենը իմանալու համար բժիշկներին լատիներեն են սովորեցնում, այսինքն՝ ռուսերեն իմանալը բավարար չէ, պետք է ևս մեկ լեզու սովորել այսպիսի փոխառյալ եզրույթները հասկանալու համար, քանի որ ռուսաց լեզվի համակարգի մեջ ներմուծված է այդ համակարգի համասեռությունը խախտող մի օտար ենթահամակարգ: Հայերենն իր համակարգի համասեռության շնորհիվ երկրորդ՝ օգնական լեզվի կարիք չի գգում, և սա մեծագույն առավելություն է (որը, ցավոք, ոչ բոլորն են գիտակցում): Սա նշանակում է, որ հայերեն եզրույթները ճանաչելիության և գիտակցման առումով մատչելի են ոչ միայն բժշկական կրթություն ստացածներին, այլև ցանկացած գրագետ հայախոսի: Ուրեմն հայերենը ժողովրդավար լեզու է՝ ռուսերենի, անգլերենի և մի շարք այլ լեզուների համեմատ, որոնցում խիստ անջրպետներ կան բառապաշարի մասնագիտական և համագործածական շերտերի միջև, և մասնագիտական լեզուները նեղ մասնագետների մենաշնորհն են, մինչդեռ հայերենում մասնագիտական մաքուր հայերեն տարբերակները բավական հանրամատչելի են:

Ռուսերեն այս հարացույցը այլ թերություններ էլ ունի: Շատ են անհարկի տարբերակները, որոնք երբեմն փորձ է արվում իրարից սահմանազատելու (гепатоз / гепатопатия նն), սակայն անհետևողականորեն և անհաջող, որի պատճառով մի շարք բառաձևեր գրեթե անգործածական են (метроз, энцефалоз, кардиоз նն) կամ հարացույցային իմաստից շեղված (гематоз, варикоз նն): Անգամ կան բաց վանդակներ: Կան բառակազմական կաղապարից շեղումներ (пульмонит՝ փոխանակ пульмит-ի, миозит՝ փոխանակ миит-ի նն): Երբեմն անհարկի փոխվում է բառակազմական հիմքի արմատը (флебит, րայց венпатия), կամ առաջանում են գուգաձևեր (флеболог//венолог, пневмонит//пульмонит, невропатолог//нейропатолог նն): Հստակ չեն վերջին երեք սյունակների իմաստային և գործառական սահմանները, որի պատճառով մի շարք բառեր մնում են անգործածական՝ փոխարինվելով հարևան սյունակի լծորդ ձևով (энцефалолог-ի և энцефалотерапевт-ի փոխարեն՝ энцефалопатолог, կամ՝ венпатолог-ի և венотерапевт-ի փոխարեն՝ флеболог նն): Դա հանգեցնում է այդ բառերի բազմիմաստության և կիրառական երկիմաստության: Միայն невролог, невропатолог, *невротерапевт եռյակն է համեմատաբար հստակ տարբերակմամբ կիրառվում: Մնացած դեպքերում հազվադեպ կիրառելի են հատկապես վերջին սյունակի բառերը, որոնք նշանակում են «տվյալ հիվանդության բժիշկ»:*

*Օտար (մերթ լատիներեն, մերթ հունարեն) բաղադրիչների ոչ թափանցիկության պատճառով հաճախակի են եզրույթների տարբերակումները՝ երբեմն իրար հակասող մեկնաբանություններով: Օրինակ՝ пульмонолог-ը և դրա հոմանիշ пневмонолог-ը, որ հավասարապես նշանակում են «թոքաբան», երբեմն ներկայացվում են որպես*

«ընդհանրապես շնչառական ուղիների մասնագետ»: Մինչդեռ հայերենում բառերի թափանցիկության շնորհիվ ամեն ինչ շատ ավելի հստակ է ու միանշանակ, ուստի բացառվում են կամայական մեկնաբանությունները:

**Աղյուսակ 3. Բժշկագիտական եզրույթների հարազույցի նմուշ (անգլերեն)**

liver	hepatitis, hepatitis	hepatosis, hepatopathy	hepatologist	hepatopathologist	Hepatotherapist
kidney	nephritis	nephrosis, nephropathy	nephrologist	nephropathologist	Nephrotherapist
uterus, matrix, womb	metritis	metropathy, metropathia	-	metropathologist	Metrotherapist
blood	-	hematopathy, hematosi	hematologist, haematologist	hematopathologist	Hemotherapist
brain	encephalitis	Encephalosis, encephalopathy	encephalologist, neurologist	encephalopathologist	Encephalotherapist
nerve	neuritis	neurosis, neuropathy	neurologist, neuropathist	neuropathologist	neuro therapist, neurotherapist
vein	phlebitis	venopathy, varicose vein	phlebologist, venologist	phlebopathologist, venopathologist	venotherapist, phlebotherapist
heart	carditis	cardiopathy, cardiosis	Cardiologist	cardiopathologist	Cardiotherapist
lung	pneumonitis, pneumonia	pulmopathy, pneumopathy	pulmonologist	pulmopathologist	pulmotherapist, pulmo-therapist, pulmo therapist
joint	arthritis, rheumatism	arthrosis, arthropathy	Arthrologist	arthropathologist, rheumatologist	Arthrotherapist
skin	dermatitis	dermatosis, dermatopathy	dermatologist	dermatopathologist	dermatotherapist, dermal therapist
muscle	myositis, myitis, sarcitis	myopathy	myologist	myopathologist	Myotherapist

Անգլերենի պարագայում պատկերը գրեթե նույնն է, ինչ ռուսերենում (տե՛ս Աղյուսակ 3): Պատճառն էլ նույնն է՝ համատարած փոխառությունների չարաշահումը:

Թվում է՝ իրավիճակը պիտի փոքր-ինչ բարվոք լինի ֆրանսերենում, իտալերենում, իսպաներենում, ռումիներենում ևն, որոնց համար լատիներենը նույնն է, ինչ մեզ համար գրաբարը: Սակայն հենց լատիներենում շատ բան վերցված է հունարենից: Այսպես՝ *pulmo* «թոք» արմատը լատիներեն է, սակայն դրա հումանիշ *pneumo-* հիմքը հունարեն *πνεύμων*-ից է: «Լյարդ» նշանակող *hepat-* հիմքը հունարենից է, որ անձանոթ է ռոմանական լեզուներին (ֆր. *foie*, իտ. *fegato*, իսպ. *higado*, ռումին. *ficat*): «Երիկամ» նշանակող *neph-* հիմքը հունարենից է, որ նույնպես անձանոթ է ռոմանական լեզուներին (ֆր. *rein*, իտ. *rene*, իսպ. *riñón*, ռումին. *rinichi*): Օրինակները կարելի է շարունակել: Մի բան պարզ է, որ ամենաշահեկան վիճակում հայերենն է: Իսկ մեր խնդիրն այն է, որ կարողանանք օգտվել այդ առավելությունից, այլ ոչ թե օտարներին ընդօրինակելով՝ խրվենք խառնալեզվության ճահիճի մեջ:

Հայերենը բոլոր բնագավառներում ունի այս առավելության հնարավորությունը, եթե այդ բնագավառների մասնագետները զբաղվել են այս հնարավորության իրացմամբ, այլ ոչ թե գնացել ամենահեշտ, բայց արատավոր ճանապարհով՝ օտար բառերը

հայացնելու փոխարեն պարզապես տառադարձելով: Դա հեշտ է տվյալ պահին միայն, սակայն անհամար դժվարությունների տեղիք է տալիս հետագայում՝ հայերեն տառերով գրված այդ օտար բառերը հայերեն խոսքի մեջ կիրառելիս:

Շարունակելով փոխառությունների և դրանց հայերեն համարժեքների համեմատությունը՝ նկատենք, որ փոխառությունները առաջին հայացքից նախընտրելի են թվում նրանց, ովքեր դրանց արդեն ծանոթ են այլ լեզուներից:

Իրավիճակը շրջադարձորեն փոխվում է, երբ խնդրին նայում ենք **մատաղ սերունդների** դիտանկյունից: Առաջին անգամ տվյալ հասկացությանը հայերեն գրակաության միջոցով ծանոթացողի համար անհամեմատ **նախընտրելի է հայերեն բառը**, քան փոխառությունը ինչ-որ անծանոթ կամ կիսածանոթ լեզվից: Նախընտրելի է, քանի որ հայերեն բառը փոխառության համեմատ ապահովում է, ինչպես նշեցինք, **ինքնըստինքյան հասկանալիություն, դյուրին յուրացում**, խնայողություն, ինչպես նաև լեզվական համակարգին հարմարվածություն, ազգային միասնություն: Քննարկենք այս կետերը առանձին-առանձին:

1. **Ինքնըստինքյան հասկանալիություն:** Նորակազմ բառերը իրենց արդեն ծանոթ բաղադրիչների շնորհիվ **թափանցիկ** են, այսինքն՝ ի սկզբանե ունեն **հասկանալիության որոշակի ներուժ**, ինչից զուրկ են փոխառությունները:

Դա պատկերացնելու համար համեմատենք հետևյալ բառերը.

վիտամին – կենսանյութ,

էմպատիա – հուզակցություն,

կոնցենտրատ – խտանյութ,

անեմիա – սակավարյունություն,

տրանսպլանտացիա – փոխպատվաստում,

միոկարդ – սրտամկան,

ադենոմա – գեղձուռուցք են:

Փոխառություններն ինքնին և ի սկզբանե ոչինչ չեն հուշում և կարող են հասկանալի դառնալ միայն համարժեք հայերեն բառերի կամ դրանց բառակապակցական բացատրությունների օգնությամբ: Այսպես՝ **գինգիվիտ**-ը պետք է հասկանալ ու հիշել որպես «լնդերի բորբոքում՝ **լնդաբորբ**», **ֆունգիցիդ**-ը՝ «սունկ սպանող նյութ՝ **անկասպան**», **դիետոլոգ**-ը՝ «ճիշտ սնվելու մասնագետ՝ **սննդաբան**» և այլն: Հետևաբար այսպիսի փոխառությունները հայերենում միանգամայն ավելորդ են՝ անհարկի:

Օտարամուտ բառերը ոչ թափանցիկ լինելու պատճառով հայերեն խոսքում և հայախոսի գիտակցության մեջ, ըստ էության, դժվար վերծանվող ծածկագրեր են, մութ բծեր, որ զգալիորեն քողարկում կամ աղավաղում են տեղեկույթի իմաստը: Մինչդեռ հայերեն բառերը իմաստ են ճառագում և լուսաբանում խոսքի բովանդակությունը՝ դրանով նպաստելով անհատի և հանրության գիտակցման խորությանը, վերլուծական կարողություններին, մտածական ստեղծարարությանը: Այսպես՝ խորհրդային տարիներին մեր լեզվում գործածվող **գեղք** և **հիմն** փոխառյալ բառերը ինչ-որ անորոշ հասկացություններ էին արտահայտում՝ «պետական խորհրդանիշ-պատկեր» և «պետական արարողակարգային հանդիսավոր երգ»: Երբ հետխորհրդային տարիներին դրանք փոխա-

րինվեցին *զինանշան* և *օրհներգ* հայերեն բառերով, նոր միայն հասկանալի դարձավ դրանց էությունը: Հասկացանք, որ զինանշանը պետության կամ համայնքի նախ և առաջ ռազմական ուժը խորհրդանշող պատկեր է՝ արծվի, առյուծի, վագրի, ցուլի, լեռան, արևի, հրանոթի, վահանի տեսքով են, իսկ օրհներգը հենց բառացիորեն օրհնության երգ է տվյալ պետության, համայնքի, հաստատության կամ այլ երևույթի վերաբերյալ: Սա նշանակում է, որ հայերեն բառերը հայախոսի համար ընդհանուր առմամբ անհամեմատ ավելի իմաստալից են, քան օտարածին բառերը:

Ի դեպ, ճապոնական գիտատեխնիկական հրաշքը բացատրվում է նաև ճապոնեների մաքրությամբ ու ինքնաբավությամբ: Նմանատիպ բացատրություն ունի նաև ֆիննական կրթական համակարգի բարձրակարգությունը:

2. **Դյուրին յուրացում:** Բնականաբար բառը որքան թափանցիկ է, այնքան լավ է տպավորվում և արագ յուրացվում: Մինչդեռ դրանց օտար համարժեքները, ինքնըստինքյան հասկանալիության հատկությունից միանգամայն գուրկ լինելով, յուրացվում են ոչ թե **տրամաբանորեն**, այլ գուտ **մեխանիկորեն** և հավելյալ ջանքերի հաշվին: Օրինակ՝

- խթանիչ – դոպինգ,
- վնասվածք – տրավմա,
- կաթոցիկ – պիպետկա,
- ատամուսկր – դենտին,
- անզգայացում – անեսթեզիա,
- ախտորոշում – դիագնոզ,
- հանգստաբեր – տրանկվիլիզատոր են:

3. **Խնայողություն:** Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այն դրույթը, որ փոխառության փոխարեն նորակազմությունների կիրառումը խնայողության միջոց է: Այդ կերպ լեզուն և մեր հիշողությունը ազատագրվում են տասնյակ հազարավոր օտար բառերից, որոնք ունեն արմատների արժեք և **առանձին-առանձին** հիշվելու կարիք: Մինչդեռ նորակազմությունները, ինքնաբերաբար բաղադրվելով հայտնի **կադապարներով**, հայտնի **արմատներից** ու **ածանցներից**, ինքնըստինքյան հասկանալիության շնորհիվ հիշողությունը ծանրաբեռնում են աննշան չափով: Հետևաբար օտար բառերը միանգամայն **ավելորդ բեռ** են լեզվի և հիշողության համար:

4. **Լեզվական համակարգին հարմարվածություն:** Այս չափանիշը կարելի է դիտարկել որպես **քերականական** հարմարվածություն, **բառակազմական** սերողունակություն, **հնչույթային** համապատասխանություն, **արտասանական** հարազատություն: Մրանցից առավել կարևորը բառակազմական սերողունակությունն է:

Համեմատենք *էնցիա* և *հույզ* բառերը: *Հույզ*-ը ոչ միայն ավելի կարճ է, այլև արտադրողական է՝ սերողունակ: Նրանից ինքնաբերաբար կազմվում են բազմաթիվ բաղադրյալ բառեր (մոտ 50՝ ըստ բառարանների):

Մինչդեռ *էնցիա*-ից գրեթե ոչ մի բառ չի կազմվում, հետևաբար հարկ է լինում փոխառել դրա օտարալեզու ածանցյալներ՝ *էնցիոն*, *էնցիոնալ*, *էմոտիվ*, որպեսզի դրանցից մի կերպ կազմվեն մի քանի նոր բառեր՝ *էնցիոնալացում*, *էնցիոնալություն*, *էմոցիոնալորեն*:

Իսկ հայերեն կազմություններից շատերը և հատկապես բայերը անփոխարինելի են: Ուստի օտար բառը նախընտրողը ստիպված է լինում իրար կողքի գործածել, օրինակ, *էնոցիա*-ն և *հուզվել*-ը: Բայց այդ պատճառով մթագնում է դրանց իմաստային կապը, և քողարկվում է ծագումնաբանական առնչությունը՝ *էնոցիա – հուզվել* (հմմտ. *հույզ – հուզվել*):

Սերողունակ բառերից արդեն պատրաստի կաղապարներով ինքնըստինքյան ստացվում են **բառակազմական հարացույցներ** (համակարգեր), կամ այդ բառերը ներառվում են համակարգերի մեջ և լեզվակրի միտքն ու **հիշողությունն ազատում** մեծաքանակ ածանցյալներ կազմելու, իմաստով հարաբերակից բառեր գտնելու ջանքերից: Այս հատկությունը, որպես կանոն, բնորոշ չէ փոխառություններին, որոնք **ամլացնում** են բառակազմական կաղապարները, **հաշմում** ու ավերում բառակազմական համակարգերը, **աղճատում** ու խճողում հարացույցները:

Հայերենի այս **ինքնաբավությունից** շահում է լեզուն ինքը՝ ձեռք բերելով բառակազմական համակարգի **ճկունություն**, իմաստային դաշտերի **համակարգվածություն**, այլ լեզուներից **անկախություն**:

**5. Ազգային միասնություն:** Հայերը ցրված են աշխարհով մեկ: Ամեն երկրում հայերենը կրում է տեղի պետական լեզվի ազդեցությունը (թուրքերենի, արաբերենի, պարսկերենի, հունարենի, ֆրանսերենի, իսպաներենի, ռուսերենի կամ անգլերենի), նրանից փոխառություններ կատարում:

Այդ պատճառով ռուսահայի հայերենը դժվարհասկանալի է սիրիահայի համար, ֆրանսահայինը՝ թուրքահայի համար և այլն: Հետևաբար պետք է խուսափել փոխառություններից և զբաղվել **համազգային համաձայնեցված բառակերտմամբ**, որպեսզի հայերենը առավել չմասնատվի ու չճյուղավորվի, միասնական լինի ազգի համար:

Լեզվի սեփական միջոցների վրա հիմնված նորակազմությունները դրսևորումներն են լեզվի ներքին պահանջի, իրացումներն են այդ լեզվի՝

- **ինքնամաքրման,**
- **համակարգայնացման,**
- **բանականացման,**
- **միասնականացման,**
- **խնայողության միտումների** [2: 6: 7: 14: 15: 9]:

Մինչդեռ փոխառությունները հետևանք են՝

- արտաքին **ազդեցությունների ու ճնշումների**, ինչպես նաև՝
- մասնագետների՝
- **նախապաշարվածության,**
- **անկարողության,**
- **ծուլության,**
- **վերասերված լեզվազգացողության ու ճաշակի:**

Փոխառություններին համարժեք հայերեն միջոցներ գտնելու ուղիներն են.

- **նոր բառի ստեղծում,**
- **օտար բառի պատճենում,**

- եղած բառին նոր իմաստի հավելում,
- հնացած բառի գործառական թարմացում,
- մոռացված բառի վերակենդանացում,
- բառակապակցության վերածում հապավման և այլն:

Հայերեն նոր բառ փնտրողը ի վերջո կգտնի դա: Կարևորը հետևողականությունն է: Ուրեմն պահպանենք ու զարգացնենք մեր լեզուն, որ շատ ավելի լավն է, քան մենք կարծում ենք:

Օտարներն ավելի ճիշտ են գնահատել մեր լեզուն: Ֆրանսիացի հայագետ **Ֆրեդերիկ Ֆեյդին** դեռ անցյալ դարում հայերենը բնութագրել է որպես «մի զարմանալի յուրահատուկ **շնորհ** ունեցող լեզու, որ ի վիճակի է **ազատորեն** և **ստույգ** արտահայտելու միաժամանակ **գիտական ճշտորոշ միտքը**, **փիլիսոփայական գաղափարները** և **բանաստեղծական նրբին, բազմերանգ կիսասովերները**»:

«... Իմ գիտցած լեզուների մեջ **հայերենը բացառիկ է...** նախ՝ որպես զարմանալի **տրամաբանական** լեզու, ապա նաև՝ իր **ճկունությամբ**, նոր բառեր կազմելու դյուրությունամբ» [13]: Իսկ Ֆեյդին այդպես ասելու իրավունք ունեւր, քանի որ տիրապետել է եվրոպական ու ասիական մի շարք լեզուների:

Անցյալ դարի 70-ական թթ. Ֆեյդին ամերիկացի հայագետ Սոլտեքսի հետ միասին գրել է. «Մենք վստահ ենք, որ **բառերի ճշգրիտ իմաստը տվող** մի լեզու եթե կա, ապա դա հայերենն է...» [13]:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Որքան էլ երբեմն անխուսափելի թվան փոխառությունները, պետք է հիշել, որ փոխառությունը (**«պարտքով վերցված բառը»**) **ժամանակավոր** երևույթ է, մինչև սեփական համարժեքի հայտնվելը և տարածվելը:

Հետևաբար **միշտ պետք է հնարավորինս խուսափել փոխառություններից՝** ձգտելով լեզվի ներքին պաշարների հիման վրա գտնելու համարժեք միջոցներ:

Գրական հայերենն իր վերոհիշյալ որակները ձեռք է բերել հազարամյակներ շարունակ ազատ ու **անկախ զարգացման, մաքրության** ու **ինքնաբավության** շնորհիվ: Եվ որպեսզի հայերենը չկորցնի իր այս առավելությունը, պետք է շարունակել նրա զարգացման ավանդույթները՝ նպաստելով նրա **ինքնամաքրմանը** և **կատարելագործմանը**: Ուրեմն բժշկության, ինչպես և ցանկացած այլ բնագավառի լեզու, անհրաժեշտ է առավելագույնս հայերենացնել: Դրանից կշահի թե՛ մեր մայրենին, թե՛ բժշկագիտության ոլորտը, թե՛ բժշկական կրթության համակարգը, թե՛ հայախոս հանրությունը:

#### Գրականություն

1. **Աբեղյան Մ., Հովհաննիսյան Լ., Տեր-Պողոսյան Ա. Լատին – ռուս – հայերեն բժշկական բառարան:** Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1951: 471 էջ:
2. **Աղայան Է. Տերմինազիտություն:** Երևան: «Լույս»: 1978: 52 էջ:
3. **Ավետիսյան Ա. Լատիներեն–անգլերեն–ռուսերեն–հայերեն բժշկական բառարան:** Երևան: Հեղինակային հրատ.: 2007: 558 էջ:
4. **Արծրունի Վ. Ռուսերեն–լատիներեն–հայերեն բժշկագիտական տերմինների բառարան:** Երևան: Հայպետհրատ: 1956: 359 էջ:

5. **Գաբրիելյան Է., Սեդրակյան Ա.** *Դեղաբանական և դեղագիտական տերմինների ռուսերեն-հայերեն-անգլերեն բացատրական բառարան*: Երևան: «Գիտություն»: 2010: 114 էջ:
6. **Էշխանյան Ռ.** *Ալեկարկներ հայերենի տերմինաշինության*: Երևան: «Լույս»: 1981: 180 էջ:
7. **Էշխանյան Ռ.** *Հայերենի տերմինաշինության հարցեր // Լրաբեր հասարակական գիտությունների*: Հ. 7: Երևան: 1969: 87-103 էջեր:
8. **Չարադյան Հ.** *Հայոց լեզվաշինության անգրպր, ներկան և սպագայի տեսականը // «Հայերենագիտական առցանց գիտաժողով», ՀԳԱ ԼԻ, 2021 / <http://language.sci.am/sites/default/files/hovh.zakaryan.pdf> (դիտվել է 09.10.2023):*
9. **Չարադյան Հ.** *Օտարաբանությունների արտասահման միտումը հայերենում // Բանբեր Երևանի համալսարանի. հասարակական գիտություններ*: Հ. 1: Երևան: 2002: 133-140 էջեր:
10. *Հանրամատչելի բժշկական հանրագիտարան* (խմբ. Հ. Այվազյան): Երևան: Հայկական Հանրագիտարանի հրատ.: 2001: 780 էջ:
11. **Ղազարյան Ռ.** *Բուսանունների բառարան. հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն*: Երևան: ԵՀ հրատ.: 2002: 192 էջ:
12. **Մուրադյան Ա.** *Հունարան դպրոցի կերտած նախածանցները // ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների*: Հ. 11: 1964: 75-86 էջեր :
13. **Որբերեան Ն.** <https://www.ararat-center.org/print.php?art=130&do=print>
14. **Ջահուկյան Գ.** *Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը // Լրաբեր հասարակական գիտությունների*: Հ. 9, Երևան: 1971: 93-98 էջեր:
15. *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու* (կազմ. և խմբ. Հ. Բարսեղյան): Երևան: ԵՀ հրատ.: 1988: 416 էջ:

### References

1. **Abeghyan M., Hovhannisyán L., Ter-Poghosyan A.** Latin-Russian-Armenian Medical Dictionary [*Latin-rus-hayeren bzhshkagitakan bararan*]. Yerevan. ASSR AS Press. 1951. 471 p.
2. **Aghayan E.** Terminology [*Terminagituthyun*]. Yerevan. «Luys». 1978. 52 p. (In Armenian)
3. **Avetisyan A.** Latin-English-Russian-Armenian Medical Dictionary [*Latineren-angleren-ruseren-hayeren bzhshkakan bararan*]. Yerevan. Author's edition. 2007. 558 p.
4. **Artsruni V.** Russian-Latin-Armenian dictionary of medical terms [*Ruseren-latineren- hayeren bzhshkagitakan termineri bararan*]. Yerevan. ASSR State Press. 1956. 359 p.
5. **Gabrielyan E., Sedrakyan A.** Russian-Armenian-English explanatory dictionary of pharmacological and pharmaceutical terms [*Deghabanakan yev deghagitakan termineri ruseren-hayeren-angleren batsatrankan bararan*]. Yerevan. «Gituthyun». 2010. 114 p.
6. **Ishkhanyan R.** Essays on Terminology of Armenian [*Aknarkner hayereni terminashinuthyan*]. Yerevan. «Luys». 1981. 180 p. (In Armenian)
7. **Ishkhanyan R.** Issues of Terminology of Armenian [*Hayereni terminashinuthyan harcer*] // News of social sciences. Yerevan. NAS RA Press. 1969. №. 7. 87-103 pp.. (In Armenian).
8. **Zakaryan H.** The Past, Present of the Armenian Language Planning and Its Vision of Future [*Hayoc lezvashinuthyan ancyal@, nerkan yev apagayi teslakan@*] // Armenological Online Conference, NAS RA LI. 2021 / <http://language.sci.am/sites/default/files/hovh.zakaryan.pdf> (In Armenian)
9. **Zakaryan H.** The Tendency of Ousting of Barbarisms in Armenian [*Otarabanuthyunneri artamghman mitum@ hayerenum*]. – Herald of Yerevan University: Social Sciences. Yerevan. YU Press. 2002. №. 1. 133-140 pp.. (In Armenian)
10. Popular medical encyclopedia [*Hanramatcheli bzhshkakan hanragitaran*]. ed. H. Ayyvazyán. Yerevan. Armenian Encyclopedia Press. 2001. 780 p.
11. **Ghazaryan R.**, Dictionary of plant names: Armenian-Latin-Russian-English-French-German [*Busanunneri bararan: hayeren-latineren-ruseren-angleren-franseren-germaneren*]. Yerevan. YU Press. 2002. 192 p.

12. **Muradyan A.** Prefixes Created by the Hellenistic School [*Hunaban dproci kertats nakhatsancner@*] // ASSR AS Bulletin of Social Sciences. Yerevan. NAS RA Press. 1964. №. 11. 75-86 pp.. (In Armenian)
13. **Vorberean N.** <https://www.ararat-center.org/print.php?art=130&do=print> (In Armenian)
14. **Jahukyan G.** The Discussion of the Development Issues of Armenian Language Terminology [*Hayoc lezvi terminabanuthyan zargacman harceri qnmarkum@*] // News of social sciences. Yerevan. NAS RA Press. 1971. №. 9. 93-98 pp.. (In Armenian)
15. Terminological and Spelling Guide [*Terminabanakan yev ughghagrakan taghekatu*] (compiler and editor *H. Barseghyan*). Yerevan. YU Press. 1988. 416 p. (In Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **20. 02. 2024**  
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **25. 03. 2024**  
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

### **Տեղեկություններ հեղինակների մասին**

**Հնրհետա Վահրամի ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ, Հայաստանի պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի և բժշկական տերմինաբանության ամբիոնի վարիչ, Երևան, ՀՀ, էլ. հասցե՝ [henvs@mail.ru](mailto:henvs@mail.ru), <https://orcid.org/0009-0007-2064-7724>

**Henrietta Vahram SUKIASYAN**: PhD in Philology, Associate Professor, Head of the Department of Armenian Language and Medical Terminology of State Medical University of Armenia, Yerevan, RA, e-mail [henvs@mail.ru](mailto:henvs@mail.ru), <https://orcid.org/0009-0007-2064-7724>

**Генриета Ваграмовна СУКИАСЯН**: канд. филол. наук, доцент, заведующий кафедрой армянского языка и медицинской терминологии, Государственного медицинского университета Армении, Ереван, РА, эл. адрес: [henvs@mail.ru](mailto:henvs@mail.ru), <https://orcid.org/0009-0007-2064-7724>

**Հովհաննես Լևոնի ԶԱԶԱՐՅԱՆ**՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ, «Տաթև» գիտակրթական համալիրի լեզվաբանության բաժանմունքի ղեկավար, Երևան, ՀՀ, էլ. հասցե՝ [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com), [orcid.org/0009-0000-8168-7622](https://orcid.org/0009-0000-8168-7622)

**Hovhannes Levon ZAKARYAN**: PhD in Philology, Associate Professor, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education, Yerevan, RA, e-mail: [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com), <https://orcid.org/0009-0000-8168-7622>

**Оганес Леонович ЗАКАРЯН**: кандидат филол. наук, доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев", Ереван, РА, эл. адрес: [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com), [orcid.org/0009-0000-8168-7622](https://orcid.org/0009-0000-8168-7622)



ՀՏԴ՝ 801.6

DOI: 10.52971/18294316-2024.27.1-129

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԳԻ «ԱՆԻ» ՊՈԵՄՈՒՄ

*Մարիամ Ա. Ալեքսանյան*

Լեզվի կոմիտե, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

*Նախաբան.* Հոդվածում առաջին անգամ քննվել են Հովհ. Շիրազի «Անի» պոեմում գործածված նորակազմ բառերը, որոնք հեղինակային նորաբանություններ են: Նրանց մի մասը դիպվածային բառեր են՝ ստեղծված պահի թելադրանքով և արտահայտչական նկատառումներով, ուստի ընդհանրապես միտում կարող են և չունենալ, բայց կան նաև ներունակ կազմություններ: *Մեթոդներ և նյութեր.* Հայ լեզվաբանությունը նորաբանություն է համարում այն բառը կամ բառային միավորը, որը կա՛մ գոյություն չունի բառարաններում, կա՛մ էլ եթե կա, ապա անհրաժեշտ է պարզել, թե հեղինակային ինչ պատկանելություն ունի: «Անի» պոեմի ուսումնասիրության ժամանակ այս սկզբունքով ենք առաջնորդվել, և յուրաքանչյուր բառ, որ ենթադրվել է, թե կարող է նորակազմություն լինել, համեմատել ենք Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» (Երևան, 1944), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի», (Երևան, 1969-1980), Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (Երևան, 1976), Ս. Համբարձումյանի «Հ. Շիրազի «Հայոց դանթեական» պոեմի նորաբանությունների բառարանի» (Երևան, 2016) տվյալների հետ: *Վերլուծություն.* Ներկայացվել է, թե ինչ բառակազմական միջոցներ է գործադրել Հովհ. Շիրազը «Անի» պոեմում ու հարստացրել մեր բառապաշարը նոր բառերով: *Արդյունքներ.* «Անի» պոեմի նորակազմ բառերը կազմված են լեզվի գործուն ածանցներով, վերջավորություններով և արմատներով: Հովհ. Շիրազը հաճախ է դիմել բառաբարդմանը՝ տարբեր բառերի համադրությամբ կերտելով նոր բառիմաստներով կազմություններ:

**Բանալի բառեր՝** *Հովհաննես Շիրազ, բանաստեղծ, պոեմ, լեզու, գործուն բառապաշար, նորակազմ բառ, դիպվածային բառեր, ածանց, արմատ:*

**Ինչպես հղել՝** Ալեքսանյան Մ. *Նորակազմությունները Հովհ. Շիրազի «Անի» պոեմում:* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2023: Հ. 1 (27): 129-136 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-129

THE INNOVATIONS IN THE POEM "ANI" OF HOVH. SHIRAZ

*Mariam A. Aleksanyan*

Language Committee, Yerevan, RA

**Abstract**

**Introduction:** For the first time, the paper examines the new words, which were used in the poem "Ani". Some of them are occasional words; there are also immanent formations. **Methods and materials:** Armenian linguistics considers a word or a lexical unit to be a new word, which either does not exist in the dictionaries, or it is necessary to find out what authorship it belongs to. During the study of the poem "Ani", we were guided by this principle and every word that was assumed to be a new composition, we compared with the following sources: "Armenian Explanatory Dictionary" by St. Malkhasyants (Yerevan, 1944), RA NAS H. after H. Atcharyan Institute of Language "Explanatory Dictionary of the Modern Armenian Language" Language Institute (Yerevan, 1969-1980), Ed. Aghayan's "Explanatory Dictionary of Modern Armenian Language" (Yerevan, 1976), S. V. Hambardzumyan's "Dictionary of Neologisms of the poem "Armenian Danteakan" by Hovh. Shiraz" (Yerevan, 2016). **Analysis:** It has been presented what word-forming and lexical measures were used in the poem "Ani" written by Hov. Shiraz and enriched our vocabulary with new words. **Results:** The data of the study makes it possible to draw the conclusion that the new words of the poem "Ani" are composed of active suffixes, endings and roots of the language. The new words of the poem "Ani" are composed of active suffixes, endings and roots of the language. Hov. Shiraz has often resorted to lexicography, creating formations with new word meanings by combining different words.

**Key words:** *Hovhannes Shiraz, poet, poem, language, active vocabulary, new words, occasional words, root, suffix.*

**Citation:** Aleksanyan M. *The Innovations in the Poem "Ani" by Hovh. Shiraz.* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(27). 129-136 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-129

НОВООБРАЗОВАНИЯ В ПОЭМЕ ОВ. ШИРАЗА "АНИ"

*Мариам А. Алексанян*

Языковый комитет РА, Ереван, РА

**Аннотация**

**Введение:** В статье впервые были рассмотрены новообразованные слова, использованные в поэме Ов. Шираза «Ани», являются авторскими нововведениями. Некоторые из них являются окказиональными словами, созданными исходя из момента и выразительным соображениям, поэтому они могут не иметь тенденции к обобщению, но есть и потенциальные образования. **Методы и материалы:** Армянское языкознание рассматривает слово или словосочетание как новое слово, которого либо нет в словарях, либо если оно есть, то необходимо выяснить его авторство, то есть когда появилась книга данного автора, в которой появилось изучаемое слово или единица слова. При изучении поэмы "Ани" мы руководствовались этим принципом и каждое слово, которое должно было стать новообразованием, сравнивалось с данными "Армянского толкового словаря" Ст. Малхасянца (Ереван, 1944), "Толкового словаря современного армянского языка" Института языка им. Г. Ачаряна НАН РА (Ереван, 1969-1980), "Толкового словаря современного армянского языка" Эд. Агаяна (Ереван, 1976), а также с данными "Словаря новообразованных слов поэмы Ов. Шираза "Армян-

ская Дантиада" С. Амбарцумяна (Ереван, 2016). *Анализ:* Представлено, какие словообразовательные меры использовал Ов. Шираз в поэме "Ани" и обогатил наш словарный запас новыми словами. *Результаты:* данные исследования позволяют сделать вывод, что новые слова поэмы «Ани» состоят из активных суффиксов, окончаний и корней языка. Ов. Шираз часто прибегал к лексикографии, комбинируя разные слова, чтобы получить формации с новыми значениями.

**Ключевые слова:** *Ованес Шираз, поэт, поэма, язык, новообразованные слова, активный словарный запас, окказиональные слова, корень, суффикс.*

**Как цитировать:** Алексанян М. *Новообразования в поэме Ов. Шираза «Ани».* // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т.1 (27). 129 – 136 сс.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-129

**ՆՍՈՒՄԱՐՄԱՆ.** Շիրազյան նորակազմություններին շատ լեզվաբաններ են անդրադարձել և դեռ կանդախտաբան, քանի որ նրա ստեղծագործությունը հարուստ է հայերենի բառակազմական կադապարներով կազմված յուրատեսակ բառերով, որոնք ուսումնասիրման անսպառ աղբյուր են: Բանաստեղծն օգտվել է մեր լեզվի հարուստ ժառանգությունից, նրա ճկունությունից և հայերենյան բառակազմական կադապարները գունավորել է իր խառնվածքի, մտածելակերպի, խոհափիլիսոփայության և անհատականության դրոշմվածքով: Այդ նորակերտությունները յուրօրինակ են դարձնում հեղինակի խոսքը, դրանք մեր լեզվում բառաստեղծման ճկունության անսահման հնարավորությունների, նաև գրողի բառաստեղծական տաղանդի վառ վկայությունն են:

Հովհ. Շիրազի «Անի» պոեմը, նրա մյուս գործերի նման, հարուստ է յուրօրինակ և արտահայտիչ նորակազմություններով, բայց նաև հարկ է նշել, որ դրանց զգալի մասը դիպվածային է, այսինքն՝ ստեղծված են դիպվածի՝ պահի թելադրանքով՝ բանաստեղծական տողի արտահայտչականության, ոճավորման, ինչպես նաև խոսքի գունագեղության պահպանման նպատակով: Դրանցից շատերը կարող են մտնել գործուն բառապաշար, մեր խոսքի մաս կազմել, իսկ մի մասն էլ ընդհանրանալու միտում չունի:

**ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ.** Նորակազմությունները չափազանց խոսուն են լինում բուն տեքստում, թեև խոսույթից դուրս էլ պատմող են և արտահայտիչ: Ուսումնասիրելով պոեմի լեզուն՝ նկատել ենք, որ պարզ և բաղադրյալ գոյականներից Հովհ. Շիրազը կազմել է բայեր, որոնք նշանակական են ու տպավորիչ, օրինակ՝ արքայել, բուրգել, արմաղանել, դաշնել, բրոնզել, դրախտել, երասանել, թագել, արծվել, համբավել, հայկել, յոթնել, ոսկել, ռազմել, վեմել, տակառել, հրովարտել, անգուզանալ, թոնդրականալ, խոյակել, կայծակել ևն:

Նկատվում է *վ* կրավորական ածանցի նպատակային կիրառություն, որով բայն ստանում է *դառնալ* իմաստը ևս, օրինակ՝ *արծվել-արծիվ դառնալ, ավարայրվել-ավարայր դառնալ, բալասանվել-բալասան դառնալ, ոստիսվել-ոստիս դառնալ, սևանվել-սևան դառնալ* ևն: Բաղադրյալ գոյականներից ևս կազմել է նման բայեր, օրինակ՝ *աշխարհագորվել-աշխարհագոր դառնալ, մայրաքաղաքվել-մայրաքաղաք դառնալ* ևն: Այս բայերը ցույց են տալիս գործողություն, որ կրում է իր վրա նախատիպի ցույց տված առարկան՝ նախատիպի ցույց տված առարկայով բնորոշվող գործողություն ևն: Հովհ. Շիրազը չափազանց հմտորեն կիրառել է հայերենի գործուն ածանցները՝ կերտելով նոր բառեր հե-

տևյալ կաղապարներով, օրինակ՝ Ss-առյուծ*իկ*, նվաստ*ուն*, բաբան*ավոր*, բղեշխ*ական*, պարման*ավոր*, ճորտ*ավոր*, վաղր*ավոր*, վայ*ուկ*, վանք*է*, հոյ*եղ*, օձ*եղ*, sS-*անցույց*, չեղ-բայր, sSs-*անըմպելի*, *անմեռյալ*, Sss-եղնկ*յա* եղնկ*ենի*, խոսք*եղեն*, SSs-խաչքար*յա* են:

Այժմ քննենք, թե ինչ խոսքիմասային կաղապարներ է միավորել Հ. Շիրազն այս պոեմում և այդ կաղապարների համադրմամբ ինչ խոսքի մասեր է կերտել:

Մեծաթիվ են **բառաբարդման միջոցով** կազմված նորակազմ բառերը հետևյալ կաղապարներով՝ N+N (գ+գ) - դրախտաբույր, երկնածրագիր, A+N (ա+գ) - ձյունաշքեղ, ծպտագող, N+V (գ+բ)- ահառած, հրովարտաբեր են:

1. **Գոյական+գոյական** կաղապարով կերտել է գոյականներ, որոնց երկրորդ բաղադրիչ գոյականը պահում է իր հիմնական նշանակությունը, իսկ առաջին բաղադրիչն ունի սեռական հոլովի նշանակություն, օրինակ՝ առյուծագարմ-առյուծի գարմ, մեղրանեկտար-մեղրի նեկտար, մեղրանաբատ-մեղրի նաբատ, մայրադուռ-մոր դուռ, մայրաշուք-մոր շուք, գառնաբառաչ-գառան բառաչ, գիշերաշղարշ-գիշերվա շղարշ, կովեղջյուր-կովի եղջյուր, լեռնակապան-լեռան կապան, հարսնամատանի-հարսի մատանի են:
2. **գոյական+գոյական** կաղապարով կազմել է մակբայներ. ազգեագգ, գռեհեգռեհ:
3. **գոյական+ածական** համադրությամբ կերտել է գոյականներ, որոնք նաև ածականներ են: Այս կաղապարներում առաջին բաղադրիչն ունի սեռական հոլովի նշանակություն. դիվաշշուկ-*դևի* շշուկ, *դիվային* շշուկ, երկնածրագիր-*երկնքի* ծրագիր, *երկնային* ծրագիր, թաթարաթուր-*թաթարի* թուր, *թաթարական* թուր, ծիածանաձալ-*ծիածանի* ձալ, *ծիածանային* ձալ, կաթնածով-*կաթի* ձով, *կաթնային* ձով են:
4. **ածական+գոյական** կաղապարով կազմել է ածականներ, օրինակ՝ գաղտնատեղյակ, գաղտնավախ, մեծամայր, չարահուշ, հոծամբոխ, մեղմահով, մթնաբավիղ, ունայնորս են:
5. **ածական+ածական** համադրությամբ՝ ածականներ, օրինակ՝ տխրավեհ, տխրուրախ են:
6. **թվական+գոյական** կաղապարներով կազմություններում նկատելի է մեր բանահյուսության մեջ գործածվող խորհրդանշական թվերի (յոթ, հազար, բյուր) համադրումը գոյականներին, որոնց արդյունքում ստացվել են ածականներ, օրինակ՝ յոթնացեղ, յոթնակունք, յոթնարծիվ, յոթնադարպաս, միլիոնամեղու, հազարաբարբառ, հազարակարիք, հազարավրան, հազարազանգ են:
7. **գոյական+բայարմատ** միացությամբ կազմել է ածականներ, օրինակ՝ ահախաբ, աշխարհաթափառ, գահատենչ, գաղտնատենչ, երկնամատույց, խանդալլուկ, խնկաբուրվառ, ծաղկավարար, կովախուսան, հրովարտաբեր, հոգեխռով, մահապուրծ, մեղսահար, մեղսավախ, մարմնահար են:
8. **գոյական+գոյական+բայարմատ** կաղապարով կազմել է ածական՝ հայաստվածաշեն:
9. **ածական+բայարմատ** համադրությամբ ստացել է ածականներ, օրինակ՝ խառնակուտակ, խրոխտասլաց, խանդալլուկ, լայնահառաչ են:
10. **թվական+բայարմատ** միացությամբ կերտել է ածական՝ հազարավայ,
11. **դերանուն+բայարմատ** համադրությամբ ստացել է ածականներ, օրինակ՝ ինքնադավ, ինքնակեր են:

12. **մակբայ+գոյական** միացությամբ կազմել է կրկնապարիսպ, կրկնագոտի, մշտամրոց, մշտաքայլ բառերը, որոնցից կրկնապարիսպ-ն ու կրկնագոտի-ն գոյականներ են, իսկ մշտամրոց-ն ու մշտաքայլ-ը՝ ածականներ:

13. **մակբայ+ածական** կաղապարով կերտել է ածականներ, օրինակ՝ նորիցնոր, մշտաքաջ, մշտավեհ են:

Է. Աղայանը բարդություն է համարում այն կազմությունները, «որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևային միավորումը մեկ բառում» [6, էջ 262]: Հենց այս միջոցը շատ է գործադրել Հ. Շիրազը: «...բուն կամ իսկական բարդությունների բնորոշման հիմքը պետք է համարել այն, որ դրանք բնութագրվում են երկու բաղադրական հիմքերի՝ սերող և բաղադրող հիմքերի անպայման առկայությամբ» [6, էջ 271]:

Բարդություններում՝ որպես երկրորդ բաղադրիչ հիմնականում գոյականը, բայը և ածականն են: «Բուն բարդությունների բաղադրիչները միմյանց հետ որոշակի շարահյուսական հարաբերության մեջ են գտնվում, որով և բաղադրվում է բարդության ներքին ձևը» [6, էջ 263]: Բարդ բառերի առաջին բաղադրիչը մեծմասամբ երկրորդի լրացումն է:

Մ. Աբեղյանը գտնում է, որ ցանկացած բարդ բառի նշանակություն կարելի է արտահայտել որևէ շարահյուսական կապակցությամբ [4, էջ 201]: Նույնն է փաստում նաև Լ. Հովսեփյանը՝ նշելով, որ ամեն տեսակի շարահյուսական կապակցություններից կարող են բարդ բառեր առաջ գալ [18, էջ 17]:

Ըստ այս օրինաչափության՝ կան բարդություններ, որոնք որոշիչ-որոշյալ հարաբերության մեջ են կամ հատկացուցիչ-հատկացյալ են: Պետք է նշել, որ եթե (**գոյական.+գոյական**), (**գոյական+ածական**) կաղապարներով կազմությունները **հատկացուցիչ-հատկացյալ հարաբերության մեջ են** (երկնածրագիր-*երկնքի* ծրագիր, թաթարաթուր-*թաթարի* թուր, ծիածանածալ-*ծիածանի* ծալ, կաթնածով-*կաթի* ծով), ապա (**ածական+գոյական**), (**ածական+ածական**), (**թվական+գոյական**) կաղապարներով կազմությունները՝ որոշչային, օրինակ՝ մեղմահով-մեղմ հով, մթնաբավիղ-մութ բավիղ, յոթնաթույր-յոթ թույր, յոթնականար-յոթ կամար, նորաթագ-նոր թագ, նորանուռ-նոր նուռ, հազարակարիք-հազար կարիք, հազարատուղ-հազար պտուղ են:

**N+V (գոյական+բայարմատ)** կերտել է ածականներ, որոնց գերակշիռ մասը կարելի է վերածել որոշիչ դերբայական դարձվածի. ահախար-ահից խարված, ահառած-ահ առած, աշխարհաթափառ-աշխարհ թափառած, մահապուրծ-մահից պրծած, խանդալուկ-խանդից լլկված են:

Այս պոեմում հեղինակը պարագայական ու խնդրային հարաբերություն արտահայտող նոր բառեր ևս կազմել է, օրինակ՝ երկնամատույց, լայնահառաչ, խանդալուկ, խնկարուրվառ են:

Այժմ բարդությունները ներկայացնենք ըստ կառուցվածքի.

**ա/ SS (կցական բարդություններ)**, օրինակ՝ բյուրասպ, եղբայրորաց, երկերես, թագարժան, թագընտիր, կմախքկոփիլ, մեղրորակ, խառնամբոխ, հոծամբոխ, հայարմատ, մայրարմատ, մահանդունդ, յոթնակունք, յոթնաղբյուր, յոթնարծիվ են,

**բ/ SjS (հոդակապով բարդություններ)**, որոնք ունեն սերող և բաղադրող հիմքեր և ամենագերակշռողն են պոեմում, օրինակ՝ բազմաքարաշատ, բարձրաբերդ, գորավի-

շապ, ժայռագրահ, ինքնադավ, ինքնակեր, իշխանագահ, լայնահառաչ, վահագնավայել, վասակավայել, վաճառաշահ են,

գ/ **S-S (վերլուծական բարդություններ)**, որոնցից հաճախադեպ են **անվանականները**՝ առդրական հարադրությամբ: Դրանք խոսուն են, դիպուկ ու պատկերավոր, օրինակ՝ ազգ-բաժակ, ազգ-անտառ, դեղ-սպեղանի են:

Լուսնի խոտերից գիշերով քամված **դեղ-սպեղանի**, բանգ ու բալասան: [1, էջ 26]:

Այդ բառերը հեղինակը կարող էր գործածել որպես կցական բարդություն, բայց նախնորել է վերլուծական տարբերակը, քանզի այդպես խոսքն ավելի տպավորիչ է դարձել:

*Ասում ես՝ մեղք է՝ մի գարկ, ասում ես,*

**Շունչ-կենդանի** են նրանք էլ մեզ պես... [1, էջ 130],

*Չես դառնա, գիտեմ, իմ ճրագը դու,*

*Դու գաս էլ՝ հերդ-մերդ չեն թողնի,*

*Քեզ չեն տա մի որբ գաղթական մարդու...* [1, էջ 130],

Ժողովուրդը **ծով-ծափ** դառավ... [1, էջ 30],

Ու դեռ չանցած մի **թարթ-վայրկյան**՝

Շուտ եկավ հողն էլ մի ուրիշ շիրմի... [1, էջ 238]:

Վերլուծական բարդություններից շատերը հոմանիշ են մեկ բառի, օրինակ՝ հայրեն-մայրեն, հեր-մեր (ծնողներ), փորձ-մարդ (փորձագետ), դեղ-սպեղանի՝ (բալասան), բյուր-հագար (շատ), թարթ-վայրկյան (ակնթարթ) են:

Երբեմն էլ նույնիմաստ բառերից մեկը քնարերգուն գործածել է առդրական հարադրությամբ (հայ-աշխարհաշեն), իսկ մյուսը՝ կցական բարդությամբ (հայաստվածաշեն): Գերակշռում են *հայ, հագար, յոթ, գազան, ահ, մարմին, դժոխ(ք), աստված, արծաթ* բառերով բարդությունները:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ**. Հեղինակային բառերը մեր լեզվից ծնված բառեր են, ինչպես նաև մեր լեզվի հիմնաքարերից են, ուստի անհնար է ներկայացնել որևէ լեզվի բառապաշար, առանց տվյալ լեզվով ստեղծագործող հեղինակների նորակազմ բառերի:

Հովհ. Շիրազը, օգտվելով մեր լեզվի հարուստ ժառանգությունից, լեզվի ճկունությունից ու բառակերտման գորեղությունից, կազմել է բոլորովին յուրօրինակ բառեր: Կիրարկել է հայերենի գործուն արմատներն ու ածանցները:

- «Անի» պոեմում նա հաճախ է դիմել բառաբարդմանը՝ տարբեր բաղադրիչների համադրությամբ ստեղծել նոր բառիմաստներով այնպիսի կազմություններ (հարակցական, առդրական, հարակից), որոնք լեզվի պատմական զարգացման վաղ շրջաններին բնորոշ չեն:
- Առանձին խումբ են ձևավորում գոյականներից կազմված պարզ բայերը:
- Հեղինակը գործածել է բառաբարդման հետևյալ կաղապարները՝ գոյական+ գոյական, ածական+գոյական, թվական+գոյական, դերանուն+գոյական, գոյական+բայ, մակբայ+գոյական, մակբայ+ածական են:
- Մեծաքանակ են վերլուծական բարդություններից կազմված անվանականները:

- Գործածել է նաև բաղիյուսական (շաղկապական) բարդություններ (վրանվրա) և զուգադրական բայեր (բրդել-ուտել, գտնել-մորթել) ևն:
- Հ. Շիրազի գործածած թե՛ դիպվածային ու թե՛ համագործածական բառերը, որոնք նաև անվանում են ներուժունակ, ի ցույց են դնում հայոց լեզվի բառակազմական ճկուն միջոցները, հարստացման մեծ հնարավորություններն ու տարբերակները՝ ևս մեկ անգամ ապացուցելով, որ մեր բառազանձը շարունակ աճում է, թարմացվում և համալրվում նորանոր բառերով:
- Այդ նորակազմությունները համագործածական կղառնան, թե ոչ, մի բան աներկբա է, որ դրանք մեր հարուստ բառազանձի մի մասն են կազմում:

### Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Շիրազ Հ.** «Անի» պոեմ, Երևան: ԵՀ հրատ.: 2011: 315 էջ
2. **Աճառյան Հ.** Հայերեն արմատական բառարան: Երևան: ԵՀ հրատ.: 1926: 2705 էջ:
3. **Աճառյան Հ.** Հայոց լեզվի պատմություն, մաս 1-ին: Երևան: ԵՀ հրատ.: 2013: 184 էջ:
4. **Աբեղյան Մ.** Հայոց լեզվի տեսություն: Երևան: ԵՀ հրատ.: 1965:
5. **Մալխասյանց Ստ.** Հայերեն բացատրական բառարան: Երևան: ՀՍՍՌ պետհրատ 1944: 2409 էջ:
6. **Աղայան Էդ.** Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՀ հրատ.: 1984: 370 էջ:
7. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Երևան: 1980: 2763 էջ:
8. **Աղայան Էդ.** Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան: Հայաստան հրատ.: 1976: 1643 էջ:
9. **Բարսեղյան Հ.** Հայերեն ուղղագրական, ուղղահյուսական, տերմինաբանական բառարան: Երևան: Լույս հրատ.: 1973: 992 էջ:
10. **Գալստյան Ս.** Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԵՀ: Երևան: 1978: 327 էջ:
11. **Պետրոսյան Հ.** Հայերենագիտական բառարան: Հայաստան հրատ.: Երևան: 1987: 716 էջ:
12. **Խաչատրյան Լ., Միրումյան Ս.** Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Երևան 2020, 445 էջ:
13. **Էլոյան Ս.** Արդի հայերենի նորաբանությունների բառարան: Երևան: Նաիրի հրատ.: 2002: 492 էջ:
14. **Ավետիսյան Յու., Սարգսյան Ա., Ներսիսյան Ն., Թեյլան Լ., Տեր-Մինասյան Ա., Գևորգյան Շ., Սարգսյան Լ., Աղիլխանյան Ա.** Հայոց լեզու և խոսքի մշակույթ: ԵՀ: Երևան: 2016: 512 էջ:
15. **Ջահուկյան Գ.** Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն: Երևան: ՀԽՍՀ ԳԱ Լեզվի ինստիտուտ: 1989: 319 էջ
16. **Սուրբասյան Ա., Սուրբասյան Ք., Ֆելեքյան Մ.** Ժամանակակից հայոց լեզու, հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն: Երևան: ԵՀ: 2017: 464 էջ:
17. **Եզեկյան Գ.** Ժամանակակից հայոց լեզու, Երևան: ԵՀ: 2007: 203 էջ:
18. **Հովսեփյան Լ.** Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Երևան: ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ: «Աստղիկ» հրատ. 2016: 122 էջ:
19. **Համբարձումյան Ս.** Հ. Շիրազի «Հայոց դանթեսկանը» պոեմի նորաբանությունները: Երևան: «Աստղիկ» հրատ. 2016: 156 էջ:

### References

1. **Shiraz H.** "Ani" poem, ["Ani" poem,] Yerevan. YU publ. 2011. 315 p.. (In Armenian)
2. **Atcharyan H.** Armenian root dictionary. [Hajeren armatakan bararan] Yerevan. YU publ. 1926. 2705.p. (In Armenian)
3. **Atcharyan H.** History of the Armenian language, part 1, [Hajc lezvi patmutjun] Yerevan. YU publ. 2013. 184 p. (In Armenian)
4. **Abeghyan M.** Theory of the Armenian language. [Hajoc lezvi tesutjun] Yerevan. YU publ. 1965. (In Armenian)
5. **Malkhasyants St.** Armenian Explanatory Dictionary. [Hajeren bacatrakan bararan] Yerevan. State Gazette of the ASSR publ. 1944. 2409 p. (In Armenian)

6. **Aghayan Ed.:** General and Armenian lexicology. [ *Aghayan Ed: Yndhanur ev hajkakan baragututjun*] Yerevan.YU publ: 1984. 370 p. (In Armenian)
7. After H. Atcharyan Institute of Language of RA NAS. Explanatory Dictionary of Modern Armenian Language. [ *Jamanakacic hajoc lezvi bacatrakan bararan*] Yer.ASSR Language Institute publ:1980. 2763 p. (In Armenian)
8. **Aghayan Ed.** Explanatory Dictionary of Modern Armenian, [ *Ardi hajereni bacatrakan bararan*] Yerevan. Armenia publ. 1976. 1643 p. (RA NAS H.(In Armenian)
9. **Barseghyan H.** Armenian orthographic, orthographic, terminological dictionary, Yerevan. [ *Hajereni uxxagrakan, uxxaxosakan, terminabanakan bararan*] Luys publ: 1973. 992 p. (In Armenian)
10. **Galstyan S.** Derivation and suffixes in modern Armenian, YU publ: [ *Acancumy ev acancnery jamanakacic hajerenum*] Yerevan. 1978. 327 p. (In Armenian)
11. **Petrosyan H.** Armenian Dictionary. Armenia publ: [ *Hajerenagitakan bararan*] Yerevan. 1987. 716 p. (In Armenian)
12. **Khachatryan L., Mirumyan S.,** Educational dictionary of Armenian linguistic terms, [ *Hajerenagitakan termineri wuswumnagitakan bararan*], Yerevan 2020, 445 p. (In Armenian)
13. **Eloyan S.** Dictionary of modern Armenian neologisms. [ *Ardi hajereni norabanutjunneri bararan*] Yerevan. Nair publ: 2002. 492 p. (In Armenian)
14. **Avetisyan Yu., Sargsyan A. , Nersisyan N., Telyan L., Ter-Minasyan A., Gevorgyan Sh., Sargsyan L., Adilkhanyan A.,** Armenian language and speech culture. [ *Hajc lezu ev xoski mshakujth*] Yerevan. YU publ: 2016. 512 p. (In Armenian)
15. **Jahukyan G.** Semantics and word structure of the modern Armenian language. [ *Jamanakacic hajoc lezvi imas tabanutjun ev barakazmutjun*] Yerevan. ASSR Language Institute publ: 1989. 319 p. (In Armenian)
16. **Sukiasyan A., Sukiasyan K., Felekyan M.** Modern Armenian language, phonology, lexicology, word formation. [ *Jamanakacic hajoc lezu, hnhjunabanutjun, baragitutjun, barakazmutjun*] Yerevan. YU publ: 1982. 464 p. (In Armenian).
17. **Yezekyan G.** Modern Armenian language, [ *Jamanakacic hajoc lezu*] Yerevan. YU publ: 2007. 202 p. (In Armenian)
18. **Hovsepyan L.** Analytical type of word formation of ancient armenian [ *Grabari barakazmutyan verlucakan tipy*], RA NAS, Institute of Language Yerevan. "Asoghik" publ: 2016. 122 p.. (In Armenian)
19. **Hambardzumyan S.** Dictionary novelizations of the poem "Armenian Dantean" of by Hovh. Shiraz [ *H. Shirazi "Hajwc dantheakany" poemi norabanuthyunmery*] Yerevan. "Asoghik" publ: 2016. 156 p.(In Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **22. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **05. 04. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Մարիամ Արտուշի ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** Լեզվի կոմիտեի լեզվական վերահսկողության բաժնի ավագ մասնագետ, Երևան, ՀՀ, էլ.huuցն՝ alexanyanmariam38@gmail.com, <https://orcid.org/0009-0000-9186-9569>

**Mariam Artush ALEKSANYAN:** Senior Specialist of the Language Control Department of the Language Committee, Yerevan, RA, e-mail: alexanyanmariam38@gmail.com, <https://orcid.org/0009-0000-9186-9569>

**Мариам Артушовна АЛЕКСАНИЯН:** старший специалист отдела языкового контроля Комитета языка, Ереван, РА, эл. адрес: alexanyanmariam38@gmail.com, <https://orcid.org/0009-0000-9186-9569>



Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
A R C H I T E C T U R E  
A P X I T E K T Y P A

ՀՏԴ՝ 728

DOI: 10.52971/18294316-2024.27.1-137

ԿԱՄԱՐ, ԹԱՂ, ԽՈՐԱՆ, ԽՈՅ, ՎԻՇԱՊ ԵՎ ԱՅԼ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ  
ՁԵՎԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԱԽԱՏԻՊԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ<sup>1</sup>

*Աշոտ Հ. Գրիգորյան*

Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Երևան, ՀՀ

*Անի Ա. Գրիգորյան, Դավիթ Ս. Նահատակյան*

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Անվտիմում**

*Նախաբան.* Համաձայն տարածված տեսակետի՝ հայկական միջնադարյան ճարտարապետական որոշ ձևեր հարևան երկրների ազդեցություններ ունեն։ Այս շարքում են նաև տեսական մոտեցումները՝ կամար, թաղ, խորան, խոյ, վիշապ և այլ հորինվածքային ձևերի վերաբերյալ։ Բնական հարց է ծագում՝ նախքան քրիստոնեության շրջանը մեզանում որևէ պատկերացում կամ փաստացի գտածո չի՞ եղել, որը հիմք հանդիսանար դրանց տեղական՝ հայկական ծագման մասին կարծիք հայտնելու համար։ Վերոնդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են ճարտարապետական տիպերի համեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները Արագածոտնի, Տայքի, Շիրակի և Հայքի այլ վայրերի օրինակներով։ Վերլուծություն. Ճարտարապետական հորինվածքային ձևերի ակունքները պետք է փնտրել հնադարի մարդու կողմից արհեստական միջավայր ստեղծելու առաջին փորձերում։ Այս ելակետով առաջնորդվելով՝ կարելի է եզրակացնել, որ ճարտարապետական հորինվածքային տիպերը պիտի նախատիպեր ունենային երկիր-երկինք տիրություն։ Այդ նախատիպերը պիտի ստեղծվեին մարդուն արդեն ծանոթ և ինչ-որ չափով հասկանալի երևույթների,

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում։

պատկերների ու այլ գործոնների հիման վրա, ասենք՝ երկինքը պատկերվեր թռչնի տեսքով, ծիածանը՝ կամարի, ջուրը ընկալվեր որպես կյանքի հարատևման անհրաժեշտ տարր, սկիզբ, անձավը՝ ապաստարան: *Արդյունքներ*. Հայկական լեռնաշխարհում պահպանված հուշարձանների հորինվածքային լուծումներում հայտնի որոշ ձևեր կարելի է խմբավորել հետևյալ կերպ. կամարակապ կառույցների համար որպես նախատիպ են հանդիսացել երկնակամարը, ծիածանը, բնական կամարաձև քարայրի տեսքը և այլ բնական տեսանելի երևույթներ, որոնք իրականացվել են «կեղծ կամար» նախաձևի միջոցով՝ նախ ուղղանկյուն, ապա՝ «կամարաձև» լուծումով կառուցված կառույցի ներսում, նախատիպ հանդիսանալով կամար, թաղ, խորան, տրոմպ հորինվածքների համար, գուգահեռաբար հիմք ստեղծելով մուտք-ելքի՝ ինչպես ուղղանկյուն, այնպես էլ կամարակապ, լուծումների համար: Խոյակերպ կոթողների, ինչպես նաև խաչքարերի համար նախատիպ կարող էին հանդիսանալ բնական ժայռաբեկորները և նախամարդու կողմից ուղահայաց տեղադրված մենաքարերը: Կարող ենք եզրակացնել, որ այդ հորինվածքների նախատիպերը ձևավորվել են Հայկական լեռնաշխարհում, այսինքն՝ տեղական ծագում ունեն: *Հեղինակների ներդրումը*. Հոդվածը գրվել է հեղինակների կողմից համատեղ աշխատանքի արդյունքում: Ճարտարապետական նախատիպերի համեմատական վերլուծությունը կատարել է Աշոտ Հայկազուն Գրիգորյանը, դրանց գեղարվեստական և գեղագիտական մեկնությունները՝ Անի Աշոտի Գրիգորյանը: Պատմական Տայք նահանգից նորահայտ նյութերի հավաքագրումն ու ճարտարապետական վերլուծությունն իրականացրել է Դավիթ Սամվելի Նահատակյանը:

**Բանալի բառեր**՝ Հայկական լեռնաշխարհ, նախատիպ, տիպ, կամար, թաղ, խորան, խոյ, վիշապ, ճարտարապետություն:

**Ինչպես հղել**՝ Հայկազուն Ա., Գրիգորյան Ա., Նահատակյան Դ. *Կամար, թաղ, խորան, խոյ, վիշապ և այլ հորինվածքային ձևերի և դրանց նախատիպերի մի շարք հարցեր*. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2024: Հ. 1 (27): 137-151 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-137

## COMPARATIVE STUDY OF A NUMBER OF ISSUES RELATED TO ARCHES, VAULTS, APSES, RAMS, DRAGONS AND OTHER DESIGN FORMS AND THEIR PROTOTYPES

*Ashot H. Grigoryan*

National University of Architecture and Construction, Yerevan, RA

*Ani A. Grigoryan, Davit S. Nahatkyan*

Shirak Center of Armenological Studies NAS, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** According to a commonly shared opinion, certain medieval Armenian designs are believed to bear the influence of neighboring states. These include also theoretical opinions regarding arches, vaults, apses, rams, dragons and other design forms. The question naturally arises – were there no images or actual findings on Armenian territory in the pre-Christian era that could

serve as the basis for claiming a local, Armenian origin for these forms? *Methods and materials:* This study involves a comparison of architectural types, as well as methods for the combination and analysis of original sources with examples from Aragatsotn, Tayk, Shirak and other locations in Hayk. *Analysis:* The origins of architectural design forms must be sought in the earliest attempts by ancient humans to create an artificial environment for themselves. Guided by this starting point, one could conclude that the architectural design forms would have their prototypes in the earth-heaven domain. Those prototypes would then have been created on the basis of phenomena, factors, and images that are already familiar and, to a certain extent, understandable to human beings. For example, the sky was depicted in the form of a bird, the rainbow as an arch, water was perceived as a necessary element for the continuation of life or its beginning, caves were seen as shelter and so on. *Results:* Some of the best known forms of design solutions for monuments seen in the Armenian highlands can be grouped as follows – arched structures followed the prototype of the arch of the sky, rainbows, natural arched caves and other visible natural phenomena, which were then created in practice using a “false arch” pattern, first as a rectangle, and then with an inner “arched” structure, which then served as the prototype for vaulted arches, apses, and squinch designs, simultaneously establishing the basis for both rectangular and arched entrance-exit solutions. Natural boulders and monoliths placed vertically by prehistoric humans could serve as the prototype for ram-shaped monuments as well as *khachkars*. We can conclude that the prototypes of these designs were formed in the Armenian highlands, i.e., they are of local origin. *Authors’ Contribution:* The article was written by the authors as a result of their joint work. The comparative analysis of architectural prototypes was conducted by Ashot Grigoryan, their artistic and esthetic interpretations were the work of Ani Grigoryan. Davit Nahtakyan carried out the collection and architectural analysis of new materials from the historical province of Taik.

**Key words:** *Armenian Highlands, prototype, form, arch, vault, apse, ram, dragon, architecture.*

**Citation:** Hajkazun A., Grigoryan A., Nahatkyan D. *Comparative Study of a Number of Issues Related to Arches, Vaults, Apses, Rams, Dragons and other Design Forms and their Prototypes*, // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 1 (27). 137-151 pp.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-137

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА АРОК, СВОДОВ, АБСИД, ОВНОВ, ВИШАПОВ И ДРУГИХ КОМПОЗИЦИОННЫХ ТИПОВ И ПРОТОТИПОВ

*Ашот А. Григорян*

Национальный университет архитектуры и строительства, Ереван, РА

*Ани А. Григорян, Давид С. Наатакян*

Ширакский центр арменоведческих исследований НАС, Гюмри, РА

### **Аннотация**

*Введение:* Согласно распространённому мнению некоторые формы средневекового армянского зодчества испытали влияние соседних стран. Возникает естественный вопрос, разве не было до принятия христианства в Армении каких-либо представлений и артефактов, которые позволили бы заявить об их первородном армянском происхождении? *Методы и материалы:* В работе использованы сравнительные методы изучения архитектурных форм, а также анализ и сопоставление письменных источников относительно памятников Арагацотна, Тайка, Ширака и других регионов Айка. *Анализ:* Истоки архитектурных форм необходимо искать

начиная с первых попыток древнего человека создать новую среду обитания. Соответственно можно сделать вывод, что типы архитектурных сооружений имели праобразы в пространстве земля-небо, эти древнейшие типы создавались на основе уже знакомых и понятных человеку явлений и образов. Так, небо изображалось в виде птицы, радуга трансформировалась в арку, вода воспринималась как некое начало и продолжение жизни, пещера как убежище и место обитания и др. *Результаты:* Фактически первые известные попытки создания архитектурных сооружений на Армянском нагорье и прилегающих территориях были предприняты не позднее X-V тысячелетий до н.э.. Сохранившиеся на Армянском нагорье древнейшие памятники, их композиционные решения, можно сгруппировать так: арочные сооружения в качестве праобраза имели небесный свод радугу, “арочные” пещеры и прочие естественные “элементы” природы превратились в “ложную” арку, вначале прямоугольную, а со временем был совершен переход к “арочным” решениям интерьеров. Это стало как бы прототипом для сложных композиций: арочным сводам, хоранам (сводчатая ниша), тропам, а также параллельно, к прямоугольным или арочным “дверным” проемам. Для памятников типа овна и хачкаров прототипами возможно стали отдельно стоящие скалы или вертикально установленные древними людьми камни (менгиры). Напрашивается вывод о местном происхождении и формировании древнейших типов сооружений, а именно на Армянском нагорье. *Вклад авторов:* Статья - результат совместной работы авторов. Сравнительный анализ архитектурных прототипов проведен Ашотом А. Григоряном, их художественное толкование – Ани А. Григорян. Сбор и архитектурный анализ новых материалов из исторической провинции Тайк - Давид Наатакян.

**Ключевые слова:** Армянское нагорье, прототип, тип, арка, свод, хоран, овен, вишан, архитектура.

**Как цитировать:** Айказун А., Григорян А., Наатакян Д. *Некоторые вопросы сравнительного анализа арок, сводов, абсид, овнов, вишанов и других композиционных типов и прототипов*, // «Научные труды» ИШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1 (27). 137-151 сс.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-137

**ՆԱԽԱԲԱՆ.** Ճարտարապետությանը նվիրված պատմատեսական ուսումնասիրություններում ընդունված է այն տեսակետը, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան ժառանգորդն է նախորդի մշակութային ավանդույթների: Հարևան երկրների մշակույթում, նաև ճարտարվեստում, լինում են և կան փոխառություններ [3, էջ 62]: Որպես կանոն, ուսումնասիրողները, հենվելով հնագիտական նյութի և համեմատական վերլուծությունների վրա, փաստում են այս կամ այն հորինվածքային ձևերի տեղը, ժամանակը և մշակութային պատկանելությունը: Նման մոտեցումը վերանայվում է այն ժամանակ, երբ ի հայտ են գալիս նոր փաստեր և գտածոներ: Հաճախ տասնամյակներով շրջանառվում են նույն տեսակետները, որոնք երբեմն դժվար է լինում փոփոխել կամ վերանայել: Համաձայն տարածված տեսակետի՝ հայկական մինչմիջնադարյան և միջնադարյան ճարտարապետությունը հարևան երկրների ազդեցություններ ունի [3, էջ 64]: Այս շարքում են նաև տեսական մոտեցումները կամար, թաղ, խորան, խոյ, վիշապ և այլ հորինվածքային ձևերի վերաբերյալ:

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.** Բնական հարց է ծագում՝ նախքան քրիստոնեության շրջանը, մեզանում որևէ պատկերացում կամ փաստացի գտածո չի՞ եղել, որը հիմք հանդիսանար ճարտարապետական հորինվածքային ձևերի տեղական՝ հայկական ծագման մասին

կարծիք հայտնելու համար, հասկապես որ անընդհատ շեշտվում է, որ ավանդվել է մեր նախապապերի ժառանգությունը [3, էջ 19]:

Այսինքն, եթե հայկական վաղ միջնադարյան պաշտամունքային կառույցների ճարտարապետությունը, բացի տեղական ավանդույթներից, կրել է նաև հարևան երկրների մշակութային ազդեցություններ, ապա անորոշ է մնում, թե մեզ հետաքրքրող կամար, թաղ, խորան, գմբեթ և այլ հորինվածքային ձևերը, որ լայն կիրառություն ունեն վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության մեջ, տեղակա՞ն են, թե՞ փոխառված:

Ճարտարապետական հորինվածքային ձևերի ակունքները, անշուշտ, պետք է փնտրել հնադարի մարդու կողմից արհեստական միջավայր ստեղծելու առաջին փորձերում: Հայտնի է, որ մարդ արարածը նախ մտածում է, հետո գործում, նշանակում է մարդու կողմից արհեստական միջավայրի յուրաքանչյուր բաղադրիչ նախ սևեռվել է մտապատկերում և հետո՝ իրականացվել երկրի վրա: Այսինքն՝ որևէ տիպի փաստացի գոյությունը պիտի ունենար իր նախատիպ մտացածին հորինվածքը: Ուրեմն, ինչպե՞ս որոշել նախատիպի առաջացման պատճառները, տեղը և ժամանակը:

Օրինակ, եթե բանական մարդու գանգ է գտնվել Երևանի Հրազդանի կիրճում, որը թվագրվում է 900-500 հազ. տարով և համարվում է Հայկական լեռնաշխարհի հնագույն գտածոներից, կամ, Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղի մոտ հայտնաբերված քարեդարյան կացարանը 70 հազ. տարվա պատմություն ունի, իսկ Կայանում հայտնաբերված հյուղակի կենտրոնում 4800 տարեկան օջախ է եղել, ապա կարելի է ենթադրել, որ Հայկական լեռնաշխարհի հազարավոր ժայռապատկերներն ավելի հին են, կամ գոնե ժամանակակից Պորտաբլուրի (9000 մ.թ.ա.) [6] մշակույթին: Եթե ընդունենք նաև, որ մեզալիթյան դամբարանային հորինվածքները նույնպես հնագույն ստեղծագործություններ են, ապա, մեզ հետաքրքրող եզրույթների նախատիպերը, առնվազն այդ ժամանակաշրջաններին պիտի վերագրենք:

Պատմահնագիտական հարուստ նյութերը փաստում են, որ Հայկական լեռնաշխարհում մշակույթը չընդհատվելով շարունակաբար զարգացում է ապրել իր ամենատարբեր շերտավորումներով:

Հայ մշակույթում հորինվածքային տարրերի նախատիպեր կարելի է տեսնել արվեստի ցանկացած տեսակներում: Օրինակ՝ ճարտարապետական փոքր ձևերում խաչքարերի նախատիպեր են հանդիսացել մենասյուները (մենհիբները), Արարատյան թագավորության շրջանի սեպագիր, ուղղահայաց կանգնեցված և հղկված սալաքարերը, Վիշապ և ձկնակերպ կոթողները (պատկեր 2):

Հետաքրքիր են նաև խոյ և ձի պատկերող կոթողները, օրինակ, պատմական Տայքի Ագորդ, Օլթի, Օլոր շրջաններում դեռևս կարելի է հանդիպել այսպիսի կոթողների, որոնք իրենց հորինվածքով անշուշտ ավելի նախնական մշակութային հետքեր են պարունակում, քան, ասենք, Նոր Ջուղայի կամ պատմական Հայաստանի այլ վայրերից հայտնի տասնյակ նմանատիպ կոթողները [1, էջեր 11-13, 154-155]: Դրանք իրենց հորինվածքով պարզ են, զերծ գեղարվեստական մանրամասներից, նույնիսկ իրենց ուրվագծային նկարվածքով մոտ ավելի վաղ շրջաններից հանդիպող խոյակոթողների, որոնք իրենցից ներկայացնում են քարաբեկորի խորանարդ հիշեցնող, սակայն մի կողմից թեք

անկյան տակ տաշված հատվածով քարաբեկոր, որը իր նկարվածքով խոյ է հիշեցնում: Նման կոթողներ կարելի է հանդիպել Մաստարայի հին գերեզմանատանը (պատկեր 8): Առանձին հետաքրքրություն են ներկայացնում թաղման ծեսի հետ կապված դամբարանային հորինվածքները:

Թաղման ծեսի հետ կապված մեր նախապապերի կառուցած բլրածև (և այլ տիպերի) դամբարանների, «հսկայի» տների հատակագծային, ծավալատարածական հորինվածքները ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող կամար, խորան, թաղ և այլ հորինվածքների նախատիպերը այստեղ պիտի փնտրել (պատկեր 6): Պատկեր 6,4, 5-ում պատկերված դամբարանի հորինվածքից պարզ է դառնում, որ փորձ է արված «թաղման խուցը» կառուցել քառանկյան տեսքով, իսկ քարակույտային ծավալը կառուցվել է ոչ թե շրջանաձև, ինչպես մյուս դեպքերում, այլ ձվաձև, և սա խոսում է այն մասին, որ այս տեսակն ավելի նախնական է: Այսինքն՝ այստեղ նկատելի է շրջանակի և քառանկյան հորինվածքային նախատիպերի կիրառումը՝ ձվաձևից անցումը շրջանաձևի: Հսկաների այս դամբարանի կառույցում արդեն տեսնում ենք ճիշտ շրջանաձև հորինվածք, իսկ «թաղման խուցը» քառանկյունից «ձգտում» է իր երկարաձիգ կողմից կիսաշրջանի անցման. այս միտումը նկատվում է մի շարք նմանատիպ դամբարաններում (պատկեր 6):

Պատկեր 6-ում հստակ է կիսաշրջան (թաղ), խորան և այլ լուծումների աստիճանական անցման փորձը՝ որպես առաջինների նախատիպեր: Հստակ է նաև քառանկյունից կիսաշրջանի անցման փորձը հատակագծում և աստիճանականից կամար-թաղին անցնելու փորձը կտրվածքում:

Եթե Ներքին և Վերին Նավերի դամբարանադաշտում հիմնական հուղարկավորության հորինվածքային ձևերը հատակագծում ուղղանկյուն են (պատկեր 6), ապա հրակայի տների հատակագծային տիպերը այլ են: Այստեղ հանդիպում են ինչպես ուղղանկյուն, այնպես էլ այլ հորինվածքային ձևեր: Մեզ հետաքրքրողը վերջիններն են, որտեղ ուղղանկյուն լուծումը իր երկարաձիգ կողմի ավարտին աստիճանաբար անցում է կատարում դեպի կորագիծ հորինվածքը: Եթե քառանկյան պարագայում բոլոր անկյունները մոտ են 90°-ին, ապա քննարկվող տարբերակում ուղղանկյան երկար պատը ճակատային հետ հանդիպման կետում ոչ թե 90° է, այլ թեք դրված (աջից և ձախից), մեկ սալի (հաճախ մեկից ավելի) միջոցով «կոտրում» է ուղղանկյան անկյունը և ձգտում է կորագծային լուծմանը (պատկեր 6): Այս հորինվածքում, եթե չունենք ճիշտ երկրաչափական կիսաշրջան, ապա նույնիսկ անգեղն աչքով տեսանելի է այդ 90°-ի ձգտումը կորագծային 180°-ի: Պատկեր 6-ից պարզ է դառնում, որ ներկայացվող հսկայի տան հատակագծային լուծումը կարելի է վերագրել կորագիծ լուծման նախատիպին: Եթե նկատի ունենանք, որ դամբարանի աջ և ձախ պատերը դեպի վեր, աստիճանաձև, մեկը մյուսից առկախ դեպի ներս (և վեր) են դասավորված և ծածկված մի մեծ սալով, ապա հեշտ է նկատել, որ գործ ունենք կամարաձև «թաղ» տիպի ծածկի նախատիպի հետ (պատկեր 6):

Կարևոր է նշել նաև, որ Հայկական միջնադարյան պաշտամունքային կառույցներում լայն տարածված տրոմպի, առագաստի և նաև գլխատան հազարաշեն ծածկի հորինվածքային նախատիպերը նույնպես այս հնագույն հուշարձաններում կարելի է գտնել: Օրինակ, պատկեր 7-ից պարզ հետևում է, որ 90°-ի անկյուն ունեցող պատի պա-

հանջվող շարքի անկյունը 45° թեքությամբ քարե սալի տեղադրումով հնարավոր է փոքրացնել ակնկալվող «թռիչքը» (երկու հանդիպակաց պատերի միջև եղած հեռավորությունը) և կրկնելով այս մոտեցումը բոլոր չորս անկյուններում՝ մի կողմից «մոտենում» ենք գլխատան հազարաշերտ ծածկի նախատիպին, մյուս կողմից՝ անցում ապահովում քառանկյունից բազմանկյան (հետագայում նաև շրջանակին): Բնականաբար կատարելով ևս մեկ քայլ՝ անկյունի վրա դրված սալին տալով կիսակամար փորվածքի ձև (պատկեր 7), հետագայում նրան հարստացնելով գեղագիտական միջոցներով:

Աշտարակի շրջանի Դաշտ գյուղին հարող տարածքում գտնվող շրջանաձև հատակագծով աշտարականման կառույցի հորինվածքում արդեն հստակ է երկրաչափական շրջանակի (կլորի) կիրառումը (պատկեր 12):

Մեր նախապատերը կարող էին համադրել, համեմատել, մտապահել կուտակված փորձն ու գիտելիքները, փոխանցել հետագա սերունդներին: Սկսելով դյուրությամբ իրականացվող պարզունակ հորինվածքներից՝ դրանք հետզհետե բարդացնելու եղանակով, միակից համալիրին, պարզից բարդին անցնելով, ստեղծել մարդածին հորինվածքներ: Հայկական լեռնաշխարհում նախամարդու բնակության, հետևաբար, գոնե պարզունակ հորինվածքների սկիզբը համարվում է առնվազն Օլդուվյան դարաշրջանը: Հետագա դարաշրջաններին վերագրվող (վաղ աշելյան, հին քարի (պալեոլիթ), միջին քարի (մեզոլիթ), պղնձաքարի (էնեոլիթ), վաղ և ուշ բրոնզի, վաղ երկաթի դարաշրջանների և հետագա մշակութային շերտերում, արտեֆակտները ավելի շատ պիտի լինեն:

Մեր նախնիները, ապրելով երկրի վրա, չէին կարող չնկատել երկինք (արև, լուսին, աստղեր) և երկիր, մարդ և բնություն փոխկապակցվածությունը, բնակլիմայական փոփոխությունների, բուսական ու կենդանական աշխարհների զարգացման շարունակական գործընթացը և, դրանցով պայմանավորված՝ կյանքը երկրի վրա: Բնականաբար, առավել հիշարժան և տպավորիչ, երկրային կյանքի համար կենսական նշանակություն ունեցող երևույթների, դրանց պատկերների, ձևի, ծավալի, գույնի և այլ տեսանելի և շոշափելի երևույթների վերաբերյալ մարդը պիտի ստեղծեր գոյապահպանության արժեհամակարգ և առաջնորդվեր դրանով, նաև փոխանցել իր փորձը ապագա սերունդներին: Այս ելակետով առաջնորդվելով՝ կարելի է եզրակացնել, որ ճարտարապետական հորինվածքային տիպերը պիտի նախատիպեր ունենային երկիր-երկինք տիրություն: Այդ նախատիպերը պիտի ստեղծվեին մարդուն արդեն ծանոթ և ինչ-որ չափով հասկանալի երևույթների, պատկերների, գործոնների հիման վրա, ասենք՝ երկինքը պատկերվեր թռչնի տեսքով, ծիածանը՝ կամարի, ջուրը ընկալվեր որպես կյանքի հարատևման անհրաժեշտ տարր, սկիզբ (հետևաբար ջրի ակունքը պահպանելու և պաշտպանելու կարևորություն պիտի ձեռք բերեր, դառնալով նաև պաշտամունքի վայր), անձավը՝ ապաստարան և այլն:

Մակայն հասկանալի է, որ այս թվարկված հորինվածքային ձևերի մեջ անշուշտ չի կարելի անտեսել դրանց մեջ խտացված խորհրդաբանական պատկերացումները, որոնք առնչվում են մարդ, երկիր, երկինք և հակառակ կապին, ուղղահայաց առանցք հակադրությանը, ծառ-կենաց ծառ, երկնային ճառագայթ (երկիրը սնուցող արական սկիզբ) և այլն: Ներկայացված օրինակներից հետևում է, որ շրջանակ, քառանկյուն երկրաչափա-

կան պատկերները նախ իրենց «նմանակները» (պատկերները) պիտի ունենային բնության մեջ և ապա մարդու կողմից պարզից բարդին, կամ պարզունակ նմանակման և իմաստաբանական հիմնավորման ճանապարհով իրենց տեղ գտնեին արհեստածին միջավայրում: Այսինքն՝ հորինվածքային նախատիպերը ծնվում են մարդ բնություն հարաբերական մեկնությունների ընթացքում՝ սկզբնական շրջանում ջանալով հաղորդել նախատիպին ամենաընդհանուր բնական բնութագրեր և ապա ավելի ուշ դրանք հավելել հնարածին զարդարիկ տարրերով, որոնցում փորձ է արվում մանրամասնորեն ներկայացնել նախատիպի ողջ հորինվածքը, խորհուրդը՝ արդեն նոր ընկալումներով, հարըստացած տվյալ ժամանակաշրջանին բնորոշ աշխարհընկալումներով:

Ասվածից հետևում է, որ վերը նշված կամար, թաղ, խորան, խաչքար, մենհիր, խոյ և ընդհանրապես հորինվածքային որևէ տիպ, լինի ճարտարապետության մեջ կամ արվեստի որևէ այլ տեսակում, միշտ ունենալու է իր նախատիպը, որը հիմնված է մարդ՝ բնություն բնափիլիսոփայական ընկալումների արդյունքում ստեղծված խորհրդաբանական պատկերացումների վրա:

Ինչպես ցույց են տալիս Հայկական լեռնաշխարհում պահպանված արտեֆակտները՝ կամար, թաղ, խորան և այլ կորագիծ հորինվածքով արհեստածին կառուցվածքները կայացման բարդ և երկարագիծ ճանապարհ են անցել:

**ԵԶՐԱՆԱԿՈՒՄ.** Հայկական լեռնաշխարհում պահպանված հուշարձանների հորինվածքային լուծումներում հայտնի որոշ ձևեր կարելի է խմբավորել հետևյալ կերպ. կամարակապ կառույցների համար որպես նախատիպ են հանդիսացել երկնակամարը, ծիածանը, բնական կամարաձև քարայրի տեսքը և այլ բնական տեսանելի երևույթներ, որոնք իրականացվել են «կեղծ կամար» նախաձևի միջոցով՝ նախ ուղղանկյուն, ապա «կամարաձև» լուծումով կառույցի կտրվածքում՝ նախատիպ հանդիսանալով կամար-թաղ, խորան, տրոմպ հորինվածքների համար, զուգահեռաբար հիմք ստեղծելով մուտք-ելքի՝ ինչպես ուղղանկյուն, այնպես էլ կամարակապ լուծումների համար:

Հաշվի առնելով այն, որ Հայկական լեռնաշխարհում պահպանված մարդկությանը հայտնի բոլոր մշակութային շերտերում (քարիդարյան – Արարատյան թագավորության շրջանի – միջնադարյան) շարունակաբար ստեղծվել և զարգացման ինքնատիպ ու չնդհատվող ճանապարհ են անցել կամար, թաղ, խորան, խոյ, վիշապ, ինչպես նաև կլոր և քառանկյուն (պատկեր 10,11) հատակագծային լուծումներով ճարտարապետական հորինվածքային ձևերը, կարող ենք եզրակացնել, որ այդ հորինվածքների նախատիպերը ձևավորվել են Հայկական լեռնաշխարհում, այսինքն՝ տեղական ծագում ունեն և հայ ճարտարապետության անբաժանելի մասերն են:






Պատկեր 1, Կամար, թաղի նախատիպերը բնական այրերի, ծիածանի, երկնականարի տեսանելի հորինվածքներում:



Պատկեր 2, Մարդ-երկինք-երկիր, հավերժ, հուշ և այլ փախկապվածությունները ֆիքսող ուղղահայացի գաղափարի խտացումը մենաքարի, որպես հետագայում Արարատյան թագավորության շրջանի սեպագիր կոթողի և ապա քրիստոնեական շրջանի խաչքարերի հորինվածքներում




Պատկեր 3. Մուտք-էջ (անցում, միջավայրի փոփոխում) ուղղանկյուն և կամարաձև հորինվածքային նախատիպեր




Պատկեր 4. Ուղղանկյուն, քառանկյուն մարդածին հորինվածքների նախատիպեր (ինչպես կառույցի հատակագծային լուծումներում, այնպես էլ կտրվածքներում)




Պատկեր 5. Շրջանաձև և կիսաշրջանաձև հորինվածքների նախատիպերը Հայաստանում



Պատկեր 6. Կամար, թաղ հորինվածքների իրականացման նախատիպերը



Պատկեր 7. Տրոմպ, խորան, գմբեթարդ, գմբեթ, թաղ, կամար հորինվածքային նախատիպերը




Պատկեր 8. Տայքի Ագորդ, Օլթի, Օլորի խոյա-ձիակերպ կոթողների և այլ նմանատիպ հորինվածքների համեմատական աղյուսակ



Պատկեր 9. Բազմաթիվ ժայռապատկերներ ցուցում են մարդու կողմից շրջանակ, քառակուսի, կամար, խաչ և այլ պատկերների, որպես (որոշակի պատկերացումներ) նախատիպեր լինելու և հետագայում դրանց կիրառման փաստը:



Պատկեր 10. Շրջանակաձև հատակագծով կացարանների օրինակներ  
Շենգավիթից այլ հնավայրերից



Պատկեր 11. Ուղղանկյուն, քառանկյուն մարդածին հորինվածքների նախատիպեր  
(ինչպես կառույցի հատակագծային լուծումներով, այնպես էլ կտրվածքում)



Պատկեր 12. Աշտարակաձև կառույցներ, Մոխրաբլուր, Դաշտ



Պատկեր 13. Դամբարանների և «հսկայի տների» օրինակներ, Օշական

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ակոպով Ա., Նահատակյան Գ., Հակոբյան Ս., Հայրապետյան Ա., *Տայք պատմամշակութային-տական ուսումնասիրություն, մաս Ա (Ազորդագյիտր և Ճակր)*: Գյումրի: 2023: 200 էջ:
2. Գրիգորյան Ա. Հայ քրիստոնեական ճարտարապետությունը և նախաքրիստոնեական մշակույթի ներգործությունը: 2023: 440 էջ:
3. Հարությունյան Վ. Հայկական ճարտարապետության պատմություն: «Լույս» հրատ.: Երևան., 1992: 540 էջ:
4. Հայկական ճարտարապետության պատմություն: 6 հատորով: Հ. 1 (պատ. խմբ.՝ Գ. Ա. Տիրացյան): ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության հուշարձանների հետազոտման կենտրոն: Երևան: 1996: 298 էջ: 48 նկ., էջ 19:
5. Հայաստանի ազգային ատլաս: Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն: Երևան: 2008: Հ. Բ: 264 էջ:
6. «Professor Klaus Schmidt's views on Gobekli Tepe». Archaeo News. Stone Pages. 31 January 2011.

R e f e r e n c e s

1. Akopov A., Nahatkyan D., Hakobyan S., Hayrapetyan A. Tayk: Historical and Architectural Research. Part I (Azordatspor And Chakq) [Tayq. patmachartarapetakan usummasirutyun, mas A (Azordacpor ev Chakq)], Gyumri, 2023, 200 p. (In Armenian)
2. Grigoryan A. Armenian Christian architecture and the influence of pre-Christian culture. [Hay qristoneakan chartarapetutyun@ ev nakhaqristoneakan mshakuyti nergortsutyun@] 2023, 440 pages (In Armenian)
3. Harutyunyan V. History of Armenian Architecture, [Hay chartarapetutyun patmutyuy], "Luys" State Publishing House, Yerevan, 1992, 540 pages, + photo. (in Armenian)
4. History of Armenian Architecture, in 6 volumes, [Hay chartarapetutyun patmutyuy, 6 hatorov], (Art Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia), ed. council: B.N. Arakelyan et al., National Academy of Sciences of the Republic of Armenia: H.1 (Editor: G.A. Tiratsyan), Yerevan, 1996, 298 pages. (in Armenian)
5. National Atlas of Armenia, Yerevan, Geodesy and Cartography Center, 2008, vol. B, 264 pages. (in Armenian)
6. «Professor Klaus Schmidt's views on Gobekli Tepe». Archaeo News. Stone Pages. 31 January 2011.

Ընդունվել է / Принята / Received on: 30. 03. 2024

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 10. 04. 2024

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 15. 06. 2024

**Տեղեկություններ հեղինակների մասին**

Աշոտ Հայկազուն ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ճարտարապետության և շինարար. ազգային համալսարան, Երևան, ՀՀ, էլ. huugn'ashothaykazun@gmail.com, <https://orcid.org/0009-0007-6467-9672>

Ashot Haykazun GRIGORYAN: Doctor of architecture, professor, National University of Architecture and Construction of Armenia (NUASA), Yerevan, RA, e-mail:ashothaykazun@gmail.com, <https://orcid.org/0009-0007-6467-9672>

Ашот Айказун ГРИГОРЯН: доктор архитектуры, профессор, Национальный университет архитектуры и строительства Армении (НУАСА), Ереван, РА, эл. адрес: ashothaykazun@gmail.com, <https://orcid.org/0009-0007-6467-9672>

Անի Աշոտի ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ ՀՃՇԱՀ, Երևան, ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ, էլ. huugn'ahaykazun@gmail.com, [orcid.org/0009-0000-8515-687X](https://orcid.org/0009-0000-8515-687X)

**Ani Ashot GRIGORYAN:** NUACA, Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA,  
e-mail: ahaykazun@gmail.com, orcid.org/0009-0000-8515-687X

**Ани Ашотовна ГРИГОРЯН:** НУАСА, Ереван, Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА,  
эл. адрес: ahaykazun@gmail.com, orcid.org/0009-0000-8515-687X

**Դավիթ Սամվելի ՆԱՀԱՏԱԿՅԱՆ՝** ճարտ. թեկնածու, ՀՃՇԱՀ ասիստենտ,  
ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,  
էլ.հասցե՝ davit.nahatakyan@gmail.com, orcid.org/0000-0003-1149-7262

**Davit Samvel NAHATAKYAN:** PhD in architecture, assistant in NUACA,  
Researcher at Shirak Center for Armenologikal.Studies NAS, Gyumri, RA,  
e-mail: davit.nahatakyan@gmail.com , <https://orcid.org/0000-0003-1149-7262>

**Давид Самвелович НААТАКЯН:** кандидат архитектуры, асистент НУАСА,  
научный сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,  
эл. адрес: davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

ՄԻ ՊԱՐԵՐԳԻ ՏԵՔՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԾԻՍԱԿԱՆ  
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Հուսինե Ս. Պետրոսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Հոդվածի քննության առարկան հայոց ժողովրդական «Ալաջա պար» խմբապարի պարերգի առանձին մասերն են: Տեքստի երկխոսության մեջ երգող աղջիկը (հարսնացուն) ակնարկում է իր տոհմի և տղայի (փեսացուի) տոհմի հովանավոր աստվածների միջև գոյություն ունեցած հակասության մասին: Իսկ դրանք Արևի և Ամպրոպի աստվածներն էին: Հակասությունը գալիս էր Մառցապատմանը հաջորդած Հալոցքի դարաշրջանից և արտացոլվել է կրակի և ջրի հակասական լինելու ավանդազրույցներում: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը գրվել է պատմահամեմատական մեթոդի կիրառումով: Նյութերից են ինչպես հայկական ժողովրդական «Ալաջա պար» պարերգի նախերգանքը, նրա մի քառյակը, այնպես էլ պարերգի տեքստում անանուն մնացած, անձրև հողի (Ամպրոպի աստծու) և հարսնացու աղջկա թրջված հագուստը չորացնողի (Արևի աստծու), այսինքն՝ հնագույն ջրի և կրակի անձնավորում հակոտնյա աստվածությունների մասին ավանդազրույց-առասպելները: Վերլուծություն. Հոդվածում վերլուծում ենք «Ալաջա պար»-ի նախերգանքը և տեքստի քառյակներից մեկը: Հարսնացու աղջկա՝ «թագուհի» իսկ փեսացու տղայի՝ «թագավոր» և նրանց՝ որպես Արևի և Ամպրոպի աստվածներ ըմբռնումը հայոց հարսանեկան ծեսից բացի կար խեթական մշակույթում: Արդյունքներ. Հայկական հնագույն երկտոհմ ցեղերից մեկի պաշտամունքի առարկաներն են եղել հնդեվրոպական հնագույն երկու աստվածությունները՝ «պարզ օր» հասկացության անձնավորում Արևի աստվածը և «Ամպամած օր» հասկացության անձնավորում Ամպրոպի աստվածը [13, cc. 793-794]: Դրանցից առաջինը, ըստ «Ալաջա պար» ժողովրդական պարերգի տեքստի, եղել է «իգական» տոհմի՝ հարսնացու աղջկա



տոհմի հովանավորը, իսկ երկրորդը՝ «արական» տոհմի՝ փեսացու տղայի տոհմի հովանավոր աստվածը:

**Բանալի բառեր**՝ տոհմ, երգ, հարսնացու, փեսացու, Արևի աստված, Ամպրոպի աստված, կրակ, ջուր, թագավոր, թագուհի:

**Ինչպես հղել**՝ Պետրոսյան Լ. Մի պարերգի տեքստի պատմական և ծիսական բաղադրիչների մասին, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Ն. 1 (27): 152- 159 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-152

## ON THE HISTORICAL AND RITUAL COMPONENT OF THE TEXT OF THE SONG-DANCE

*Lusine S. Petrosyan*

Shirak Center for Armenological Studies of NAS,  
Shirak State University after M. Nalbandyan Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The subject of the article is separate parts of the Armenian folk song-dance "Alaja par" (Alaja dance). The social basis of this folk song-dance is revealed by the one dialogue of the text where the singing girl (bride), alludes to the contradiction between the divine patrons of her own genus and those of the guy (groom). These were the deities of the Sun and Thunder. The contradiction refers to the period Thaw, following the Ice Age, and is reflected in the myth of the contradictions of fire and water. **Methods and materials:** The article is written using the historical-comparative method. The materials include both the Armenian folk song "Alaja Par" and myth about the antipode deities of the Thunder God (formerly the personification of water) and the Sun God (formerly the personification of fire). **Analysis:** In the article we analyse the prelude to the song "Alaja Par" and one of the quatrains of the text. In addition to the Armenian wedding ritual, in the Hittite culture there was also the perception of the bride as a "queen" and the groom as a "king". **Results:** The objects of worship of each Armenian tribe were two ancient Indo-European deities: as each tribe consisted of two genera. These deities were the Sun god as the personification of the concept of "clear day" and the Thunder god as the personification of the concept of "cloudy day". The first of them, according to the text of the folk song "Alaja Par", was the patron deity of the bride's genus, and the second was the patron deity of the groom's genus.

**Key words:** *genus, song, bride, groom, Thunder god, Sun god, fire, water, king, queen.*

**Citation:** Petrosyan L., On the Historical and Ritual Component of the Text of the Song-Dance. // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri. 2024. V. 1 (27), 152- 159 pp.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-152

## ОБ ИСТОРИЧЕСКИХ И ОБРЯДОВЫХ КОМПОНЕНТАХ ТЕКСТА ОДНОЙ ПЕСНОПЛЯСКИ

*Лусине С. Петросян*

Ширакский центр арменоведческих исследований НАН,  
Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** Предметом обсуждения статьи являются отдельные части армянской народной групповой песнопляски «Аладжа пар» (танец Аладжа). Социальную основу этой народной

песнопляски раскрывает тот диалог текста, где поющая девушка (невеста) намекает на противоречие между божественными покровителями своего рода и рода парня (жениха). Это были божества Солнца и Грома. Противоречие относится к периоду Оттепеля, последовавшему за Ледниковым периодом, и отражено в сказаниях о противоречиях огня и воды. Методы и материалы: Статья написана с использованием историко-сравнительного метода. Среди материалов как армянская народная песнопляска "Аладжа Пар" так и сказания об антиподах-божествах, т.е. Бога Громовержца (ранее олицетворение воды) и Бога Солнца (ранее олицетворение огня). Анализ: в статье мы анализируем прелюдию в песнопляске «Аладжа Пар» и одно из четверостиший текста. Помимо армянского свадебного ритуала, в хеттской культуре также существовало восприятие невесты как «царицы», а жениха как «царя». Результаты: Объектами поклонения каждого армянского двухродового племени были два древних индоевропейских божества: это бог Солнца, как олицетворение понятия «ясный день» и бог Грома, как олицетворение понятия «пасмурный день». Первый из них, согласно тексту народной песнопляски «Аладжа пар», был божеством-покровителем рода невесты, а второй был божеством-покровителем рода жениха.

**Ключевые слова:** род, песня, невеста, жених, бог Солнца, бог Грома, огонь, вода, царь, царица.

**Как цитировать:** Петросян Л. *Об исторических и обрядовых компонентах текста одной песнопляски.* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2024, Т. 1 (27). 152 – 159 сс.

DOI: 10.52971/18294316-2024.27.1-152

**ՆԱԽԱԲԱՆ.** Հոդվածը գրելիս օգտվել ենք Գ. Սրվանձտյանցի «Երկեր»-ի I հատորից, Վ. Սամվելյանի կազմած «Երգարան»-ից, Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» գրքից, Ժ. Խաչատրյանի «Գնդի և շրջանի սեմանտիկան հայ ծիսական պարերում» աշխատությունից, Գ. Հակոբյանի «Ներքին Բասենի ազգագրությունը» գրքից, Սրբուհի Լիսիցյանի «Старинные пляски и театральные представления армянского народа» գրքի I հատորից, Օ. Ռ. Գերնիի «Хетты» գրքից և այլն: Հոդվածը նպատակ ունի ցույց տալ, որ ժողովրդական «Ալաջա պար» սիրերգի առանձին մասերում գործ ունենք ոչ միայն երիտասարդ գույգի սիրային զեղումները բացահայտող խոսքի հետ, այլ որ դրանցում հիշողություններ կան մեր նախնի մի ցեղի երկտոհմ կառույցի մասին: Այն արտացոլված է հարսնացու աղջկա՝ Արևի աստծուն պաշտող տոհմից, իսկ փեսացու տղայի՝ Ամպրուպի աստծուն պաշտող տոհմից լինելու մեջ: Այդ հանգամանքը հողվածում հաստատվում է պատմական, ազգագրական, առասպելաբանական, ուղղակի և զուգահեռ բերված նյութերի միջոցով: Դրանով հողվածը թե՛ արդիական է և թե՛ նորույթ է:

**Հնագույն հայկական ցեղի երկու տոհմերի իգական և արական րմբոնումը պարերում**

Մշո խմբապարերից մեկը նկարագրելիս Գ. Սրվանձտյանցը բերում է նաև պարին ուղեկցած պարերգի ամբողջ տեքստը: Ահա պարի նկարագրությունը: «Իբր քսան կամ ավելի ու պակաս այր և կին, տղա և աղջիկ մեջընդմեջ, իրարու ձեռք բռնած, քովքովի, անբաժան, ծնկածալիկ կը պարեն, կարծես մեկ անձի պես. և յուրաքանչյուր տողը մեկ կամ քանի մը հոգի կ'երգեն, իսկ *զըլեջան ու մըրալե և տըլեն, տելեն սընջարի* ամենքը մեկ բերան կը կրկնեն ու կը թռեն» [12, էջ 541]: Հիշատակված Գլեջանը հարսնացուն է, իսկ Գ. Սրվանձտյանցի «կը թռեն» բնութագրումը ցույց է տալիս, որ խմբապարը

հայկական պարերի վերվերի տեսակին է պատկանել՝ կոչված նաև *թոնոցի, թոնոկի, թոնան, թովըրուն, թովերք, թովերի* [15, cc. 263-264]:

Իր տեսած պարի առթիվ Գ. Սրվանձոյանցը վկայում է, որ այն «Վանա, Մշո, Պուլանըի գեղերու հայոց խաղեր»-ից էր [12, էջ 541]: Ամուսնական ծեսերին ուղեկցող պարերգերը սովորաբար ունեն նախ հարսնացու աղջկան, ապա փեսացու տղային ուղղված գովաբանական խոսքեր: Դրա մասին են վկայում բանահավաք-ազգագրագետ Գ. Հակոբյանի՝ Ներքին Բասենին վերաբերող հետևյալ տողերը. «ամուրի երիտասարդները մեկ-մեկ էլ մասնակցում էին պարերգին: Մեկ կամ երկու աղջիկ երգում էին պարողներից, իսկ սրանց որպես արձագանք կամ պատասխան երգում էին մեկ կամ երկու տղա» [6, էջեր 377-378]:

«Ալաջա պար»-ի պարերգի նախերգանքը՝

«Մասման կ'ելներ բարակ ծուխ,

Յարիկ մ'ունենք Պուլանուխ» [12, էջ 541]

պահպանել է պարերգի հնագույն ենթաշերտը՝ ի տարբերություն ծավալով նրա մեծ մասը դարձած սիրերգի: Վերջինը հիմնականում հավաքածու է, բացառյալ քառատողի:

«Յարոջ դոնով ընցա ես,

Անձրև եկավ, թացվա ես.

Արև զարկավ, թըփռա ես,

Քանց կարմիր վարդ բացվա ես» [12, էջ 542]

Մա ևս պարերգի հնագույն շերտին ենք վերագրում նախ նրա համար, որ ուղղակիորեն կապված է պարերգի նախերգանքի հետ, ապա, որ ոչ միայն կենցաղային, այլև առասպելաբանական ենթատեքստ ունի: Նախերգանքում նշվող բարակ ծուխը նույն ինքը Գըլեջանի փեսացուն է: Հայտնի է, որ հայոց կենցաղում տունը, ընտանիքը, գերդաստանը նաև օջախ էր կոչվում [9, էջ 610], ուստի օջախի *ծուխը կտրել* նշանակում էր «մի ընտանիք կոտորել, ոչնչացնել, բնաջինջ անել» [8, էջ 353] և դրան հակառակ՝ *օջախը ծխեցնել* նշանակում էր «ընտանիքի երիտասարդ անդամին ամուսնացնելը» կամ «արու զավակ ունենալը»: Իսկ ինչո՞ւ է ամուսնացող տղան կոչվում *բարակ ծուխ*: Հավանաբար, այն պատճառով, որ նա կամ ընտանիքի միակ արու զավակն է եղել, կամ պատանեկությունից նոր է անցում կատարել երիտասարդություն:

Պարերգի նախերգանքի հետ ուղղակի կապի մեջ եղած քառյակը ցույց է տալիս, որ հարսնացու աղջիկը խախտել էր ամուսնության ծիսակարգում ընդունված ավանդույթը. նա անցել էր «յարոջ դոնով», որի իրավունքը մինչև հարսանիք նա չունեիր: Դրանով նա զայրացրել էր փեսացուի տոհմի հովանավոր բարկացկոտ Ամպրոպի աստծուն: Մա էլ անձրև էր հղել (և կայծակներով, հավանաբար, վախեցրել) խեղճ հարսնացուին: Բայց Ամպրոպի աստծու փոխարեն հանդես եկած Արևի ժպտերես աստվածը՝ հարսնացուի տոհմի հովանավորը, պարզված երկնքից լույս ու ջերմություն էր հղել երկիր: Թրջված հարսնացուն դրանով չորացել էր և կարմիր վարդի նման բացվել: Իսկ կարմիր վարդը խորհրդանշում էր ինչպես Արևի աստծուն, այնպես էլ մարդկության իգական կեսին: Հայոց հնագույն հավատալիքներից եկած ավանդազրույցներում ասվում է. 1. «Վարդն ու մանուշակը քույր ու եղբայր են եղել: Վարդը փշերով միշտ ծակոտել է մա-

նուշակին, սա էլ ծծել է նրա արյունը... Ասում են, թե ով նրանց իրար մոտ բերի մուրա-  
զաչոր կմեռնի» [7, էջ 112]: 2. «Վարդն ու մանուշակը քույր ու եղբայր են: Նրանք միշտ  
իրար կարոտ են մնում: Եթե մեկը կարողանա պահել մանուշակին և ցույց տալ քրոջը՝  
ցանկացածն անմիջապես կկատարվի» [4, էջ 165: 7, էջ 113]:

Գ. Սրվանձոյանցի գրառած քառատողը թերի կամ աղավաղված տեսքով հան-  
դիպում է այլ երգերում նա: Օրինակ, «Ալազյազ սարն ամպել ա» ժողովրդական երգում  
հանդիպում ենք այսպիսի տողերի. «Ալազյազ սարն ամպել ա», «Աղբեր իր ձին թամբել  
ա», «Յարոջ դոնեն անցել ա», «Անձրն եկե թրջել ա», «Արև զարկե՝ չորցել ա», «Քան կար-  
միր վարդ բացվել ա» (ձայնագրումը և մշակումը՝ Կոմիտասի) [3, էջ 172]: Ժողովրդա-  
կան «Կարմիր վարդ» երգում նույնպիսի, բայց շատ պակասավոր, տողերից են. «Ջաղչի  
դրոնով ես անցա», «Անձրն զարկեց, ես թրջա», «Արև զարկեց, ես չորցա» (ձայնագրումը՝  
Կոմիտասի, մշակումը՝ Մ. Մազմանյանի) [3, էջ 290]: Ինչպես համեմատություններից է  
բխում, կատարյալը Գ. Սրվանձոյանցի բերած պարերգում հարսնացու աղջկա երգած  
քառատողն է:

**Հովանավոր աստվածներին համապատասխանող  
բնական տարրերի գույգը**

Հնագույն առասպելաբանական պատկերացումների համաձայն՝ Արևի և Լուսնի  
երկնային գույգից Արևը իգական սեռի է, Լուսինը՝ արական: Բերենք դա հաստատող  
հայկական մի շարք ավանդազրույցների հետևյալ տողերը. «Աստված երկու զավակ  
ունի. մի տղա՝ Լուսինը, և մի աղջիկ՝ Արևը» [7, էջեր 4-7], «Արևն ու Լուսնակ քույր ու ախ-  
պեր ին» [7, էջ 5, N 3<sup>u</sup>], «Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են եղել» [7, էջ 5, N 3<sup>բ</sup>], «Արևն  
ու Լուսինը քույր ու եղբայր են» [7, էջ 5, N 3<sup>գ</sup>], «Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են  
եղել» [7, էջ 5 N 3<sup>դ</sup>], «Արևը շարունակ պտույտ է գալիս: Նա երկնքի երեսով գնում, գետնի  
տակով վերադառնում է: Մի անգամ նա իր եղբայր Լուսնին ասել է...» [7, էջ 5 N 3<sup>ե</sup>],  
«Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են եղել» [7, էջ 5, N 3<sup>զ</sup>], «Արևն ու Լուսինը քույր ու եղ-  
բայր են» [7, էջ 5, N 3<sup>է</sup>], «Արևը՝ աղջիկ, Լուսինը տղա է» [7, էջ 5, N 3<sup>զ</sup>], «Լուսինը կաթնա-  
կեր ժամանակ մի չար տղա է եղել» [7, էջ 4, N 2<sup>գ</sup>]: Գ. Սրվանձոյանցի նկարագրած «Ալա-  
ջա պար»-ի ժամանակ հարսնացուի երգած քառատողն ուշագրավ է նաև նրանով, որ  
պահպանել է նախնադարից եկած խուլ արձագանքը՝ Արևի և Ամպրոպի աստվածնե-  
րին հատուկ հակասությունը [13, էջ 795-796]:

Այդ հակասության հիմքը մեր հեռավոր նախնիների ունեցած առասպելաբա-  
նական պատկերացումն էր լինելու ջրի և կրակի հակամարտության մասին, որը գալիս  
էր Մառցապատմանը հաջորդած Հալոցքի հազարամյակից: Երկվորյակ գույգերի մասին  
հայոց հնագույն հավատալիքների համաձայն՝ «Կրակն ու ջուրը քույր ու եղբայր են  
եղել: Մի անգամ նրանց մեջ վեճ է ծագում, թե որն է իրենցից ավելի ուժեղ: Վճռում են  
փորձել: Քույր կրակը գնում վառում է սարերի խոտը, իսկ եղբայր ջուրը հանգցնում է  
վառվող խոտը: Այդ օրվանից նրանք բաժանվում են իրարից» [7, էջ 411]: Այս գրույցի  
տարբերակում վեճի և բաժանման մասին խոսք չկա: պարզապես «Մի անգամ եղբայր  
ջուրը իջել է սարից, քույր կրակը ասել է նրան. Ե՛կ, մի քիչ նստիր տաքացիր: Ջուրը  
պատասխանել է. Դու էլ մի քիչ ինձանից խմիր, հովացիր» [7, էջ 411: 1, էջեր 58-59]: Տար-

բերակաների առթիվ տեղին ենք համարում հիշեցնել վաստակավոր պարագետ Ժ. Խաչատրյանի հետևյալ դիտողություններն ու դատողությունները. «Հայերի մեջ երկվորյակներն իրենց միջազգային զուգորդների նման հակադիր կերպարներ են, տարբերվում են իրենց սեռով, գործությամբ, բնավորությամբ և հոգեբանությամբ» [5, էջ 29], բայց մեր «*գովընդասպարերում...* կատարողների երկսեռ մասնակցությունը ծիսական միջավայրում երկհակադրության (բինարիզմի) երկու տարբեր նախասկիզբների միասնության նշանակություն են ստանում» [5, էջ 29]:

«Ալաջա պար»-ի պարերգում եթե ջուրն անձրևի տեսքով փորձում է պատժել հարսնացու աղջկան, ապա Ամպրոպի աստծուն հակառակ, Արևի աստվածը՝ սրա հովանավորը, իր ճառագայթներով ոչ միայն չորացնում է նրան, այլև հնարավորություն է տալիս թրջված աղջկան թփռելու և քանց կարմիր վարդ բացվելու: *Թփռել* նշանակում է «թփակալել, թփեր արձակել, տերև՝ սաղարթ արձակել» [8, էջ 132]: Ինչպես տեսնում ենք, այստեղ ավելի կարևորվում է հարսնացու աղջկա տոհմի հովանավորի՝ Արևի աստվածության դերը, որը նաև որպես բուսական աշխարհի հովանավոր է հանդես գալիս: Այս հանգամանքը ևս խոսում է պարերգի ակունքների՝ Մառցապատմանը հաջորդած Հալոցքի դարաշրջանում ստեղծված լինելու մասին, որովհետև այդ դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի կլիման խոնավ էր («ջնորհիվ» Ամպրոպի աստծու), բայց նաև՝ տաք («ջնորհիվ» Արևի աստծու): Կարծում ենք՝ տեղին կլինի հիշատակել մեր նախնիներին հարևան փոքրասիական խեթերի Արիննա քաղաքի իգական աստվածությանը, որը պաշտվում էր թե՛ որպես Արևի աստվածություն և թե՛ որպես Մայր դիցուհի՝ լինելով գուգակիցը խեթական Ամպրոպի աստծու [14, c. 123]:

**Թագավորն ու թագուհին իբրև Ամպրոպի և Արևի աստվածությունների երկրային դրսևորումներ**

Խեթական ծեսերում քննության առարկա գուլյգ աստվածություններն ունեին իրենց ներկայացուցիչ-մարմնավորող անձանց՝ իրական թագավորին և թագուհուն: Դժվար չէ ենթադրելը, որ նույնպիսի մոտեցում գոյություն է ունեցել նաև հայոց նախնիների կենցաղում [10, Բ, ծ]: «Մասնա ծոեր» դյուցազնավեպում պատմվում է ամպրոպային հերոս Սանասարի՝ Դեղձուն-Ծամի հետ ամուսնանալու մասին: Ինչպես Մ. Աբեղյանն է շեշտում, «Դեղձուն-Ծամ նշանակում է «դեղձունամազ, խարտեշ, բաց դեղին գույնի մազերով»: Այս անունը, ըստ երևույթին, առասպելաբանական է» [11, էջեր 829-830]: Դեղձունի գլուխը պսակող դեղին քառասուն ճյուղ/հյուսքերը մեր նախնիների առասպելաբանական պատկերացումներում համադրված են արևի ճառագայթների, իսկ դրանց պսակած գլուխը՝ նրա ոսկեգույն գնդի հետ: Գ.Սրվանձտյանցը ևս նույն կերպ է պատկերացնում «արևու ոսկե գլուխն ու հրեղեն բրջամն» [12, էջ 77], իսկ *բրջամ* նշանակում է «կնկան կամ այր մարդու երկայն հեր գլխո: Եվս անասնոց բաշ» [12, էջ 331]:

Ինչ վերաբերում է Ամպրոպի աստված/թագավոր և Արևի դիցուհի/թագուհի մեր նախնիների կողմից համադրմանը, ապա պետք է նկատի առնենք քրիստոնյա Հայաստանի ամուսնական ծեսերը ևս, որոնցում փեսացու տղան թագավոր (թագվոր) է կոչվում [8, էջ 72], իսկ հարսնացուն, բնականաբար, ըմբռնվել է թագուհի [8, էջ 73]: Նույնպիսի մոտեցում պետք է ցուցաբերել նաև «Ալաջա պար»-ի պարերգում հանդես եկող

ամուսնական գույզի հարցում: Գրելջանը՝ «թագուհի»-ն, հավանաբար, նույնացված էր տոհմական Արևի դիցուհու հետ, իսկ նրա գույզը կազմած փեսացուն՝ «թագավոր»-ը, նույնացված էր լինելու իր տոհմական Ամպրոպի աստծու հետ: Ըստ այդմ, «Ալաջա պարն» իր նախնական վիճակում ձևավորված էր լինելու ամուսնական գույզ կազմած աստվածություններին, ապա՝ նաև երկրի վրա նրանց փոխանորդներ համարված թագավորական գույզին, ի վերջո՝ սովորական ամուսնական ամեն մի գույզի՝ կազմելով ծիսական կարևոր մասը նրանց հարսանեկան հանդիսություններին:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Հայոց նախնադարյան առասպելաբանությունից է գալիս «Ալաջա պար»-ում սիրերգի մաս դարձած մի քառատողը, որտեղ աղջիկը (հարսնացուն) ակնարկում էր իր և տղայի (փեսացուի) տոհմերի հովանավոր աստվածությունների միջև գոյություն ունեցած հակասությունների մասին: Իսկ դրանք Արևի և Ամպրոպի աստվածություններն էին:

. Հնդեվրոպական հնագույն այս աստվածությունների միջև հակասության դրսևորման առիթ է հանդիսացել ամուսնական ծիսակարգում հարսնացու աղջկա թույլ տված խախտումը. նա անցել էր փեսացու տղայի՝ յարի դռնով: Իրականում, Արևի և Ամպրոպի աստվածների միջև առկա հակասությունը գալիս էր Մառցապատմանը հաջորդած Հալոցքի դարաշրջանից և արտացոլվել է կրակի և ջրի հակասական լինելու ավանդազրույցներում:

. Ըստ պարերգի՝ ամուսնացող գույզը երկրային մարմնավորումն էր հանդիսացել երկնային այն գույզի, որ ժամանակին կազմել են Արևի և Ամպրոպի աստվածությունները, ինչպես ընդունված էր նաև խեթական դիցարանում:

#### Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Արեղյան Մ.** *Երկեր:* հ. VII: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 602 էջ:
2. «Բառզիրք հայոց»: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի, Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975, 445 էջ:
3. «Երգարան»: Կազմեց Վ. Սամվելյան: Երևան: Հայպետհրատ: 1949: 599 էջ:
4. **Լալայան Ե.** *Երկեր: հ. II:* Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1988: 505 էջ:
5. **Խաչատրյան Ժ.** *Գնդի և շրջանի սեմանտիկական հայ ծիսական պարերում // «Ծիսական պարը հայոց մեջ»* գիտաժողովի նյութեր: Երևան: «Մուղնի» հրատ.: 2002: 10 էջ:
6. **Հակոբյան Գ.** *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը:* Երևան: «Հայաստան» հրատ.: 1974: 458 էջ:
7. **Ղանալանյան Ա.** *Ավանդապատում:* Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1969: 530 էջ:
8. **Մալխասյանց Ստ.** *Հայերեն բացատրական բառարան:* Երևան: Հայպետհրատ: Հ. II: 1944: 512 էջ:
9. **Մալխասյանց Ստ.** *Հայերեն բացատրական բառարան:* Երևան: Հայպետհրատ: Հ. IV: 1945: 646 էջ:
10. **Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց:** Քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի: Երևան: ԵՀ հրատ.: 1981: 587 էջ:
11. «Մասնա ծեղ. ժողովրդական վեպ»: Ընդհանուր խմբագրությամբ Մ. Արեղյանի: Երևան: Պետհրատ: Հ. Բ: Մասն երկրորդ: 1951: 1004 էջ:
12. **Մրվանձոյանց Գ.** *Երկեր:* Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Հ. I: 1978: 666 էջ:
13. **Гамкрелидзе Т., Иванов В.** *Индоевропейский язык и индоевропейцы.* Тбилиси. Изд. Тбилисского университета. Т. I-II. 1984. 1328 с.
14. **Герни О.** *Хетты.* Москва. Изд. «Наука». 1987. 233 с.
15. **Лисициан С.** *Старинные пляски и театральные представления армянского народа.* Ереван. Т. I. Изд. АН АрмССР. 1958. 603 с.

References

1. **Abeghyan M.** Works [*Yerker*]. Vol. VII. Yerevan. AS pub. 1975. 602 p. (In Armenian)
2. Vocabulary of Armenian language [*Bargirq hayots*]. Yerevan. AS pub. 1975, 445 p. (In Armenian)
3. Songbook [*Yergaran*]. Yerevan. ArmState pub. 1949. 599 p. (In Armenian)
4. **Lalayan Ye.** Works [*Yerker*]. Vol. II. Yerevan. AS pub. 1988. 505 p. (In Armenian)
5. **Khachatryan Zh.** Semantics of circle and sphere in Armenian ritual dances. [*Gndi yev shrjani semantikan hay tsisakan parerum // Materials of the Conference "Ritual Dance in Armenians"*]. Yerevan. «Mughni» pub. 2002. 10 p. (In Armenian)
6. **Hakopyan K.** Ethnography and folklore of the Inner Basin. [*Nerqin Baseni azgagrutyuny yev banahyusutyuny*]. Yerevan. «Hayastan» pub. 1974. 458 p. (In Armenian)
7. **Ghanalanyan A.** Popular tales [*Avandapatum*] Yerevan. AS pub. 1969. 530 p. (In Armenian)
8. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bacatrakan bararan*]. Yerevan. ArmState pub. Vol. II. 1944. 512 p. (In Armenian)
9. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bacatrakan bararan*]. Yerevan. ArmState pub. Vol. IV. 1945. 646 p. (In Armenian)
10. **History of Armenia of Movses Khorenatsi.** [*Movsisi Khorenatswoy Patmutiwn Hayots*]. Yerevan University pub. 1981. 587 p. (In Armenian)
11. Daredevils of Sassoun. [*Sasna tsrer*]. Yerevan. State pub. Vol. II. 1951. 1004 p. (In Armenian)
12. **Srvandztyants G.** Works. [*Yerker*]. Yerevan. AS pub. Vol. I. 1978. 666 p. (In Armenian)
13. **Gamkrelidze T., Ivanov V.** Indo-European language and the Indo-Europeans [*Indo-evropejskij jazyk i indoevropejcy*]. Tbilisi. Tbilisi University pub. Vol. I-II. 1984. 1328 p. (In Russian)
14. **Gerni O.** The Hittites. [*Khetty*]. Moskow. «Nauka» pub. 1987. 233 p. (In Russian)
15. **Lisitsyan S.** Ancient dances and theatrical performances of the Armenians. [*Starinnye pljaski i teatral'nye predstavlenija armjanskgo naroda*]. Yerevan. Vol. I. AS ArmSSR. 1958. 603 p. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **16. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **09. 04. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Լուսինե Սարգսի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝** պատմ. գիտ. թեկնածու,  
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
գիտաշխատող, Շիրակի պետական համալսարանի դասախոս, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ LusineS.P.@gmail.com, <https://orcid.org/0000-0002-3208-9674>

**Lusine Sargis PETROSYAN:** PhD in history, Researcher at  
Shirak Center for Armenologikal Studies NAS, Gyumri,  
Lecturer at Shirak State University, Gyumri, RA,  
e-mail: LusineS.P.@gmail.com, <https://orcid.org/0000-0002-3208-9674>

**Лусине Саргисовна ПЕТРОСЯН:** кандидат истор. наук, научный сотрудник  
Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри,  
преподаватель Ширакского государственного университета, Гююми, РА  
эл. адрес: LusineS.P.@gmail.com, <https://orcid.org/0000-0002-3208-9674>

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՈՃԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ  
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

*Հասմիկ Հ. Հարությունյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մասնաճյուղ, Գյումրի, ՀՀ

*Հասմիկ Հ. Մատիկյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

**Անփոփում**

Նախաբան. Հոդվածը նվիրված է հայ ժողովրդական օրորոցային երգերի արդի դրսևորումներին, դրանց ժանրային, հորինվածքային, կառուցվածքային և արտահայտչական յուրահատկություններին: Ուսումնասիրությունը հիմնականում տարվել է Շիրակի ժողովրդական երգերի արդի դրսևորումներում կենսաձևերի և ստեղծագործական մեխանիզմների բացահայտման և արժևորման տեսանկյունից: Մեթոդներ և նյութեր. Պատմաքննական, բանագիտատեքստաբանական և երաժշտատեսական մեթոդներով քննության են առնվել Շիրակի տարածաշրջանում նախկինում գրառված և մերօրյա օրորոցային երգերի բացառիկ նմուշներ: Վերլուծություն. Հոդվածում դիտարկվել են օրորոցային երգերի շուրջ հինգ տասնյակ տարածամանակյա գրառված նմուշներ, որոնց մեծ մասը քննության է առնվում առաջին անգամ: Արդյունքներ. Շիրակում գրառված ժողովրդական օրորոցային երգերի արդի նմուշների հորինվածքային բնորոշիչների ու առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա բացահայտվել ու արժեքավորվել են ժողովրդական ստեղծագործության արդի հորինվածքային մեխանիզմները: Կատարված աշխատանքի արդյունքում հավաքված և մշակված նյութը հետագայում ընդգրկվելու է համեմատական էթնոերաժշտագիտության ու բանագիտության շրջանակներում: Հեղինակների ներդրումը. Հետազոտությունն իրականացվել է երկու



հեղինակների անմիջական մասնակցությամբ: Առաջին հեղինակի ներդրումը հավաքված նյութերի նոտային վերծանություններն ու էթնոերաժշտագիտական քննությունն է, իսկ երկրորդ հեղինակինը՝ բանագիտական նյութի և տեսական մասի շարադրանքը:

**Բանալի բառեր՝** *հայ բանահյուսություն, օրորոցային երգ, ժանրային բնորոշիչներ, ոճ, ավանդույթ, արդի գրառումներ, Շիրակ, երգաստեղծման մեխանիզմներ:*

**Ինչպես հղել՝** Հարությունյան Հ., Մատիկյան Հ. *Օրորոցային երգերի մի քանի ոճական առանձնահատկությունները Շիրակի արդի բանահյուսության մեջ* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1(27): 160-176 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.1-160

## SEVERAL STYLISTIC CHARACTERISTICS OF LULLABIES FROM MODERN FOLKLORE OF SHIRAK

*Hasmik H. Harutyunyan*

Shirak Center for Armenological Studies NAS,  
Gyumri Branch of Yerevan Komitas State Conservatory, Gyumri, RA

*Hasmik H. Matikyan*

Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA  
State University of Shirak after M. Nalbandyan

### Abstract

**Introduction:** The article is dedicated to the contemporary renditions of Armenian folk lullabies, their genre, compositional (fictional), structural and expressive peculiarities. The primary goal of the study was to recognize and evaluate the lifestyles and creative processes represented in the contemporary adaptations of folk songs of Shirak. **Methods and materials:** Outstanding samples of lullabies recorded in the Shirak region in the past and present were examined using historical, philological, textual, and musicological methods. **Analysis:** Approximately fifty lullabies recorded in different periods were studied in the article, most of which were examined for the first time.

**Results:** The contemporary fictional mechanisms of folk creativity have been discovered and valued by analyzing the fictional attributes and characteristics of contemporary samples of folk lullabies written in Shirak. The comparative ethnomusicology and research framework will include the data collected and examined during the project. **Contribution of the authors:** The study was conducted with the direct participation of the two contributors. The contributions of the first author include note transcriptions and an ethnomusicological analysis of the materials. The second author has conducted the study of the theoretical part by analyzing the folklore material.

**Key words:** *Armenian folklore, lullabies, genre peculiarities, style, tradition, contemporary samples, Shirak, songwriting mechanisms.*

**Citation:** Matikyan H., Harutyunyan H. *Several Stylistic Characteristics of Lullabies from Modern Folklore of Shirak* // "Scientific works" of the Shirak Center for Armenological Studies NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 160-176 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-160

## НЕКОТОРЫЕ СТИЛЕВЫЕ ОСОБЕННОСТИ КОЛЫБЕЛЬНЫХ ПЕСЕН В СОВРЕМЕННОМ ФОЛЬКЛОРЕ ШИРАКА

*Ասմիկ Ա. Արությունյան*

Շիրակский центр арменоведческих исследований НАН,  
Гюмрийский филиал Ереванской государственной консерватории им. Комитаса, Гюмри, РА

*Ասմիկ Գ. Մատիկյան*

Շիրակский центр арменоведческих исследований НАН,  
Շիրակский государственный университет им. М. Налбандяна Гюмри, РА

### Аннотация

**Введение:** Статья посвящена современным проявлениям армянских народных колыбельных песен, их жанровым, композиционным, структурным и выразительным особенностям. Исследование в основном проводилось с точки зрения выявления и оценки форм проявления и творческих механизмов в современных проявлениях народных песен Ширака. **Методы и материал:** Историко-филологическими, текстологическими и музыковедческими методами исследованы исключительные образцы колыбельных песен, записанных в прошлом и настоящем в Ширакской области. **Анализ:** В статье было рассмотрено около пяти десятков записанных образцов колыбельных песен, большинство из которых исследовались впервые. **Результаты:** На основе изучения художественных характеристик и особенностей современных образцов народных колыбельных песен, записанных в Шираке, выявлены и оценены современные художественные механизмы народного творчества. Собранный и обработанный в результате работы материал будет включен в рамки сравнительной этномузыкологии и фольклористики. **Вклад авторов:** Вклад первого автора – нотные транскрипции и этномузыковедческая экспертиза собранных материалов, вклад второго автора – изложение научного материала и теоретической части.

**Ключевые слова:** *Армянский фольклор, колыбельная песня, жанровые характеристики, стиль, традиция, современные записи, Ширак, механизмы песенного творчества.*

**Как цитировать:** Матикян А., Арутюнян А. *Некоторые стилевые особенности колыбельных песен в современном фольклоре Ширака.* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024: Т. 1(27). 160-176 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-160

**ՆԱԽԱԲԱՆ.** Երաժշտական բանահյուսությունը՝ որպես ազգային գեղարվեստական մտածողության ուրույն տեսակ, կյանքի է կոչվում կատարողական մեկնակերպերի միջոցով, և այստեղ է, որ կատարողը երգի պասիվ հնչեցնողից դառնում է ստեղծագործական գործընթացի մասնակից ու, մի տեսակ, համահեղինակ, ընդ որում, որքան հաջողված է երգի մեկնաբանությունը, այնքան մեծանում է նրա՝ իբրև համահեղինակի դերը:

Ժողովրդական կատարողական մեկնակերպերի ուսումնասիրման մեջ էական նշանակություն ունի նույն ստեղծագործության տարբեր կատարումների, ինչպես նաև միևնույն կատարողի տարբեր ժամանակներում արված միայն բազմաբանակ ձայնագրությունների համեմատական դիտարկումը: Ավելացնենք, որ այս հարցում միշտ չէ, որ գեղարվեստականորեն բարձրարժեք կատարումը որոշակի չափանիշի դեր ունի:

Ընդհակառակը, առանձին դեպքերում ոչ այնքան փայլուն համարվող մեկնաբանություն գիտական ուսումնասիրության տեսակետից կարող է ավելի մեծ հետաքրքրու-

թյուն ներկայացնել: Իբրև չափանիշ անհրաժեշտ է ընդունել երաժշտական համեմատական վերլուծության և սոցիոլոգիական տեղեկությունների ու տվյալների համադրման մեթոդը, ինչը հնարավորություն կընձեռի պարզաբանել ֆոլկլորագիտության մեջ առաջնահերթ համարվող մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝ ազգագրական տարբեր գոտիներին, առանձին բնակավայրերին, անգամ քաղաքներին կամ գյուղերին բնորոշ լեզվական և երաժշտական բարբառային առանձնահատկությունների տարբերությունները, յուրաքանչյուր տարածաշրջանում կենցաղավարող երգային ժանրերի շրջանակը, նույն ժամանակաշրջանում ձայնագրված երգերի մեկնաբանության նմանություններն ու տարբերությունները, մեկնակերպերի գունապնակի՝ երաժշտաարտահայտչամիջոցների ընտրությունը, ժամանակի թելադրած ներքին և արտաքին ազդեցությունները, կատարողական կերպերի նմանակումները և այլն:

Շիրակի երաժշտական ժառանգությունն իր բացառիկ կարևոր տեղն ու դերն ունի հայ ազգային երաժշտական արվեստի զարգացման մեջ: Ժողովրդական հարուստ բանահյուսությունը, որ ներծծված էր Արևմտյան Հայաստանի երաժշտական բարբառներից ծնված ժանրային ոճական առանձնահատկություններով, ինքնատիպ հանգրվան գտավ Շիրակի տարբեր համայնքներում և շարունակեց կրել հայ ազգային ինքնության վառ տարրեր: [15]

Ժողովրդական երգի կենսատու միջավայրի փոփոխման և մշակութային բարդ հիմնախնդիրների համատեքստում անդրադարձել ենք **օրորի** ժանրի արդի գրառումներին՝ կարևորելով այս ժանրի կենսունակության, կարևորագույն բնորոշիչների պահպանման կամ փոխակերպման առանձնահատկությունները: [16]

Հիմնվել ենք 2015-2021թթ. ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի երաժշտագիտական խմբի կողմից իրականացրած ազգագրական, բանահյուսական արշավախմբերի նյութերի վերլուծության վրա: Այս երգերի մի մեծ խումբը պետք է դիտարկել որպես նախորդ սերունդներից հաջորդին փոխանցված ժառանգություն: Հետևաբար, որպես ինքնատիպ ժառանգություն, դրանք մեծ մասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը. պահպանվել են ընտրովի, նախասիրված ժանրերը:

Գրառված, ձայնագրված ժողովրդական երգը կարող է գոյատևել բավական երկար ժամանակ: Սակայն ավանդույթը՝ երգաստեղծության ստեղծարար մեխանիզմը, որը հիմնված է դարավոր գենետիկ հիշողության և փորձի վրա, կարող է գոյատևել միայն նոր երգերի ստեղծման և կատարման պայմանների առկայության դեպքում: Շիրակի արդի բանահյուսության մեջ այսօր կան երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նոր նմուշներ: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն են: Կարևոր է այն, որ այդ երգերը, ստեղծվելով համայնքային միջավայրի մեջ, կարևորվում են որպես ավանդական նմուշներ:

#### **Օրորոցային երգերի բնորոշիչների քննություն**

Օրորոցային երգը հայ ժողովրդական բանահյուսական երգային ժառանգության հնագույն և միևնույն ժամանակ ամենակենսունակ ժանրերից մեկն է՝ բազմազան ու հարուստ թե՛ բանաստեղծական և թե՛ երաժշտական բովանդակությամբ: Հայաստա-

նի ազգագրական տարբեր շրջաններում ձայնագրված *նանիկ, լուրիկ, հայրուր, դար-դար, օրոր, այեր, լայլայ, նեննի* և այլնայլ անվանումներով հանդիպող երգերը այդ ժանրի տարածվածության և կենսունակության վկայություններն են:

Կարելի է պնդել, որ հայոց հինավուրց պատմության ընթացքում միշտ հնչել է օրորոցային երգը՝ որպես հայ կնոջ հուզական աշխարհի և զգացմունքայնության կարևորագույն արտահայտիչ: Հայ ֆոլկլորագիտության մեջ և հատկապես քնարական բանահյուսության ժանրային համակարգում հետաքրքրությունն այս ժանրի նկատմամբ չի նվազում: Պատճառը թե՛ ժանրային բնորոշիչների բազմազանությունն է, թե՛ արտահայտչամիջոցների առատությունը: [17]

Հայ բանագետները, երաժշտագետ-ֆոլկլորագետներն իրենց աշխատություններում տարբեր առիթներով հաճախ են անդրադարձել օրորոցայիններին, հատկանշել բանաստեղծական մտքի խորությունն ու երաժշտական ձևակառուցողական ինքնատիպությունը, բնութագրել դրանք որպես ներագոյող և առինքնող ստեղծագործություններ, կարևորել այդ երգերի համակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունը: [4, էջ 165]

Օրորոցային երգը հայ ժողովրդական քնարական բանահյուսության բացառիկ ժանրերից է: Ս. Հարությունյանը, «Բանագիտական ակնարկներ» մենագրության մեջ անդրադառնալով քնարական սեռի ստեղծագործություններին, ընդգծում է. «Քնարական բանահյուսության յուրաքանչյուր ավանդական երկի տարբերակ դառնում է արտահայտիչը այն կատարող որոշակի անհատի կամ նրա միջավայրի տվյալ պահի հոգեվիճակի, տրամադրությունների, հույզերի և ապրումների: Այստեղից էլ այն հարատևող բանաստեղծական կենդանի զգացողությունն ու ընկալումը, որ միշտ ուղեկցում է ավանդական քնարական երկին նրա յուրաքանչյուր կատարման ժամանակ»: [12, էջ 103]

Անշուշտ, օրորոցային երգը դիտարկելի է կնոջ աշխատանքային գործառնությունների համալիրի մեջ: Օրինակ՝ «Կոմիտասն օրորներն արժեքավորում էր որպես կանանց հեղինակություն՝ նրանց հետ կապելով ազգային ժողովրդական երաժշտության պահպանման և փոխանցման խնդիրը: Սակայն տղամարդկանց կատարումներից ձայնագրված նանիկները նույնպես հետաքրքիր օրինակներ են և դիտարկման համար արժեքավոր նյութ: Մի դեպքում դա հիշողությամբ արձանագրված հնավանդ երգի վերարտադրություն է, մեկ այլ պարագայում՝ սեփական երաժշտամտածողության մեջ օրորի ժանրում հորինվածքային ձև: Օրորը հայ ժողովրդական երգարվեստի՝ ազգային առումով ամենաբնութագրական և ամբողջականության տեսակետից ամենաբարդ ստեղծագործություններից է: Այստեղ առավել, քան որևէ այլ երգատեսակում, ակնառու են ժանրի ներսում տեղի ունեցող փոփոխություններ, աստիճանական զարգացման գծեր, ժանրային ներթափանցումներ»: [3, էջ 165]

Իր թեմատիկ բազմազանության և դրանից բխող արտահայտչական միջոցների շնորհիվ օրորոցային երգը դիտվել է նաև ինքնատիպ ժանր, որը դուրս է սուսկ աշխատանքային գործառնությունից: Մ. Բրուտյանը այսպես է բնութագրում այս երևույթը. «Երեխային օրորելիս տնային բազմազան հոգսերից ազատ կինը ընկնում է հիշողությունների գիրկն ու երգով արտահայտում իրեն հուզող զգացմունքները, կամ՝ երգի միջոցով նա կրած տառապանքների ու տանջանքների, կորցրած հարազատների համար ատե-

լության և վրեժխնդրության հրդեհ է բորբոքում, փոխանցում սերունդներին ողբերգական անցյալը, արթնացնում փոքրիկի սրտում հերոսական ոգի, ազգային արժանապատվության զգացում: Չէ՞ որ օրորները մանկական երաժշտական առաջին տպավորություններն են»: [7, էջ 341]

Նկատի առնելով հայ էթնոերաժշտագիտության մեջ օրորոցային երգը որպես ինքնուրույն ժանր դիտելու երևույթը՝ մենք ևս շիրակյան օրորները քննության ենք առել այս տեսանկյունից: Իբրև հիմնարար գիտական կողմնորոշիչ՝ դիտարկել ենք երաժշտագետ ֆուլկլորագետ Հասմիկ Ափիհյանի շիրակյան օրորոցային երգերին նվիրված հոդվածներն ու անտիպ աշխատությունները: Անդրադարձել ենք նաև երաժշտագետ Անի Հակոբյանի աշխատությանը [10], որտեղ «առաջին անգամ կատարվել է ժանրի երաժշտագիտական բնութագրումն ու դրանում ենթատեսակների գոյության փաստի երաժշտագիտական հիմնավորումը, ձայնակարգային, կառուցվածքային, թեմատիկ յուրահատկությունների, ինչպես և համազգային ու տեղային ինքնատիպ դրսևորումների դուրսբերումը»: [10, էջ 6]

Այսպիսով, օրորոցային երգերը իրենց տիպաբանական հատկանիշներով երկու տեսակի են. **քնեցնելու համար հորինված երգեր** և ժանրային այլ բնորոշիչներ կրող երգեր կամ **պարզապես օրորոցի երգեր**, որոնք դուրս են երգի բուն բովանդակությունից կամ ունեն որոշակի աղբյուրներ նրանց հետ: Ինչպես ժամանակին դասակարգել է Մ. Աղայանը՝ առաջին խմբում օրորներն ու նանիկներն են, իսկ երկրորդ խմբում՝ օրորոցի երգերը: [1]

Ինչպես նշել է Հ. Ափիհյանը. «Օրորները տիպաբանական կառուցվածքով բաժանվում են երկու մեծ խմբի՝ մի քանի ենթատիպերով: Յուրաքանչյուր ենթատիպի մեջ խմբավորված երգերը բնորոշվում են երաժշտաբանաստեղծական մտածողության և ոճական հատկանիշների ընդհանրությամբ՝ գեղջկական, քաղաքային, աշուղական, երբեմն նաև տարբեր համադրմամբ»: [3, էջ 166]

Հետևելով երաժշտագետ Մ. Աղայանի դասակարգմանը, Հ. Ափիհյանը ևս օրորոցային երգերը տարրորոշում է երկու բնորոշիչով. **նանիկ** կամ **օրոր**, որը իր բուն նշանակությամբ երեխային օրորելով թմբեցնելու և քնեցնելու համար է կատարվել, և մյուս խմբի երգերը, որոնք կոչվել են օրորոցի երգեր. սրանք առնչվում են ժողովրդական և աշուղական երգերի տարբեր ժանրերի բնորոշիչներին՝ թեև ունեն օրորոցային երգերին հատուկ կրկնակներ: Երաժշտագետը իրավացիորեն նկատում է, որ այս երգերը իրենց բնորոշիչներով մոտ են այլ ժանրերի՝ պարերգերին, լացերին, պատմական, հայրենասիրական, ինչպես նաև աշուղական երգերին: [3, էջ 169]

#### **Շիրակի օրորոցային երգերը էթնոերաժշտագիտական և բանագիտական ուսումնասիրություններում**

Շիրակի օրորները հատկորոշվում են հանկարծաստեղծությամբ. երբեմն մայր օրորասացը օրորերգի դաշտում է գովերգում երեխային. գովքը դառնում է օրորի ստեղծման նախապայման: Օրորների գրառման ժամանակ օրորասացները ոչ միայն երգում էին օրոր, այլ նաև հանգամանալիորեն նշում էին երգի պահպանման կարևորությունը: [18]

Ինչպես վերևում նշեցինք, հայ բանագետները կարևորել են օրոքոցային երգերին անդրադարձը՝ բանաստեղծական յուրօրինակ մտքի և երաժշտական արտահայտչաձևերի բազմազանության առումներով: Գալով այս ժանրի տեղային կամ բարբառային հատկանիշներին, պետք է նշել, որ առայժմ բացակայում է համապարփակ ուսումնասիրություն, սակայն կան հաջողված փորձեր: Նշենք Ա.Փահլևանյանի (Թալինի տարածաշրջանին, Մուշ-Սասուն ազգագրական գոտուն նվիրված [19]), Ջ.Թագակյանի (Ջավախքի տարածաշրջանին նվիրված [8]) աշխատությունները: Առավել ընդգրկունը երաժշտագետ Անի Հակոբյանի աշխատությունն է [10], որտեղ երաժշտագետն ընտրել է «չորս ազգագրական գոտի, որոնցից երկուսի ընտրությունը, այն է՝ Վայոց ձոր և Ջավախք, կապված է նոր շրջանում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատողների կողմից արված տասնյակ ձայնագրությունների քանակից, իսկ երկուսի դեպքում ընտրել ենք պատմական Հայաստանի ամենաերգեցիկ երկու տարածաշրջանները՝ Վան-Վասպուրական և Տարոն: Այս չորս ազգագրական գոտիների օրոքներում բարբառային դրսևորումների դուրսբերումը թույլ կտա ստանալ որոշակի պատկեր՝ դուրս բերել ժանրի համար ընդհանրականը, տիպականը և մյուս կողմից՝ «տեսնել» տվյալ ազգագրական գոտու «կնիքը» ժանրի վրա»: [10, էջ 82]

Շիրակի երաժշտական բանահյուսության նվիրյալ հետազոտողներից մեկը՝ Էթնոերաժշտագետ Հասմիկ Ափինյանը շատ դիպուկ նկատել է. «Շիրակի երաժշտական բանահյուսությունը հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ամենահարուստ ամբարներից է, որտեղ զարմանալի անադարտությամբ պահպանված ավանդական շատ երգատեսակներ, գործիքային նվագներ ու երաժշտաբանաստեղծական հորինվածքներ դարերի հնության խոր կնիքն ունեն: Դրանցից շատերն այսօր էլ կենցաղավարման լայն շրջանակներ են պահպանում և իրենց կենսունակությամբ ժողովրդական գեղարվեստական մտածողության արգասիք են: Անշուշտ, բանավոր փոխանցվող երաժշտական շատ արժեքների ակունքները պատմական Հայաստանի խորքում են՝ Մշո, Ալաշկերտի, Կարինի գավառներում և երգաշատ այլ վայրերում: Սակայն պատմական հայտնի իրադարձությունների բերումով բնօրրանից բռնահանված և Շիրակում վերաբնակեցված ժողովուրդը, շփվելով տեղաբնակների հետ, ժամանակի ընթացքում իր խոսքային ու երաժշտական լեզուն հարստացնում է տեղի հնչերանգներով, որի հետևանքով առաջ են գալիս երգամտածողության նոր շերտավորումներ»: [5, էջ 235]

Օրորը հայ երաժշտական բանահյուսության մեջ ունեցել է և ունի կայուն գործառույթ: Շիրակում այն կոչվում է **նանիկ**: Այս օրորները երաժշտական լեզվի առանձնահատկություններով ու ոճական հատկանիշներով խիստ բազմազան և թեմատիկ առումով բազմաբնույթ ստեղծագործություններ են: Ժանրային տարբերակումը և բարդ համադրությունները ժողովրդական գեղարվեստական մտածողության արգասիք են: Չնայած այս երգերը ձայնագրված են նույն տարածաշրջանում, և առանձին ենթախմբերում միավորված երգերին հատուկ են ընդհանուր հատկանիշներ, այնուամենայնիվ դրանք աչքի են ընկնում երաժշտական, բարբառային և ոճական խայտաբղետությամբ:

XX դարասկզբին գրառված օրոքոցայինների մեջ առանձնանում է Ս. Մելիքյանի գրառած Նանիկը. [13]

Նա - նիկ, գառ - նուկ ջան, նա - նիկ,  
 գոգ - նոց թո - կերս օ - թո - թոց, ծա - ռի  
 թը - փե - թը ծած - կոց, ման-դըր թը - փե - թը՝ փաթ - թոց:

Սա վառ արտահայտված մեղեդային հորինվածքով երգաստեղծություն է, որը բավականին քիչ է հանդիպում Շիրակում:

Հ.Ափինյանը՝ որպես հմուտ բանահավաք և էթնոերաժշտագետ, սկսել էր աշխատել Շիրակի քաղաքներում և գյուղերում ձայնագրված օրորոցային երգերի տարժամանակյա գրառումների հրատարակված և ձեռագիր նմուշների քննական համեմատությամբ: [2; 3; 4] Թեև նա չհասցրեց ավարտել այս ուղղությամբ հիմնարար աշխատությունը, սակայն շիրակյան օրորների նրա ժանրային տիպաբանական և ձևակառուցողական համեմատական ուսումնասիրությունների առանձին դրույթներ այսօր էլ շատ կարևոր կոդիֆորոշիչ դեր են կատարում: Ահա դրանցից առավել կարևորները.

ա/ Օրորոցային երգերին հատուկ է քառյակային ձևը՝ արտահայտման ամենատարբեր դրսևորումներով: Իմպրովիզացիոն զարգացման պայմաններում անգամ սրանցում նկատելի են կառուցվածքային հստակություն և պարզություն:

բ/ Երկտող, եռատող, երբեմն քառատող նախադասություն կամ պարբերություններ կայացնող կառուցվածքներում երաժշտական մտքի կազմավորման հիմքը օրորի կրկնակն է, և երգը՝ իբրև ամբողջություն, կազմված է որևէ ռիթմաինտոնացիոն պարզագույն դարձվածքի նմանատիպ, հաճախ տարբերակային կրկնություններից:

գ/ Առավել ծավալուն, երաժշտական մտքի ազատ շարադրանքով հյուսված օրորներին բնորոշ են միջանցիկ զարգացմամբ ձևակառուցումներ, որոնցում ամբողջի բաղկացուցիչները, հաճախ անհավասար և անհամաչափ հատվածներ, միավորվում և ապա հաջորդում են իրար ոչ քառակուսիության սկզբունքով: Նմանօրինակ երգերում հատկապես կարևորվում է սկզբնական մեղեդային դարձվածքի դերը, որը, աստիճանաբար ծավալվելով և հավելվելով, վերածում է ամբողջի:

դ/ Հետագոտվող երաժշտական նմուշներում հանդիպում են նաև տարբեր տիպի համադրություններ, նույնատիպ և տարասեռ զուգորդումները ստեղծում են պարզ ու բարդ, ծավալուն և սեղմ, զարգացման տարբեր սկզբունքներով խառն ու անխառն կառուցվածքներ:[2, էջ 62]

**Շիրակի օրորոցային երգերի արդի գրառումները**

Օրորոցային երգերում հատկապես կարևորվում են հորինողի հանկարծաբանական հորինվածքային կարողությունների և դրանց համարժեք արտահայտչամիջոցների կենսական փոխկապակցվածությունն ու գեղարվեստական խորությունը: Այս հատկանիշների շնորհիվ է, որ օրորոցային երգը պահպանել է իր կենսականությունը նաև Շիրակի արդի երաժշտական բանահյուսության մեջ: Իր հարուստ երաժշտական ժառանգության մեջ, որտեղ խտացած են Արևմտյան Հայաստանի, հատկապես Բարձր Հայքի երաժշտաբանահյուսական կարևորագույն բնորոշիչներ, այսօր էլ հիշվում և նորովի հորինվում են օրորոցային երգեր՝ լավագույնս պահպանելով հայ մոնոդիկ երգաստեղծության հորինվածքային հիմնարար սկզբունքները:

**Նանա, նանա, իմ բալա** - Երգը գրառվել է Շիրակի մարզի Բավրա գյուղում՝ 2020-ին: Բանասացն է Կիմա Հակոբյանը (ծնվ. 1938 թ., Բավրայում): Նախնիները Աշոցքից են:

Երգի մեղեդային բաղադրիչը յուրահատուկ է նրանով, որ պահպանելով ժանրին բնորոշ տարրերը՝ փոքր ձայնաձավալը, կրկնվողը, ասես *թմրեցնող* դարձվածքները, ծավալվում է F հիմնաձայնով մաժոր ձայնակարգում, ինչը շատ հազվադեպ է օրորներում:

Նա նա նա իմ բա - լա  
 փոքր ես դու շուտ մե - ծա - նաս  
 նա նի նա նի նա - նի ջան:

Ինչպես կտեսնենք ներքևում, գրառված օրորոցային երգերը ծավալվում են մինոր ձայնակարգում՝ հիմնաձայնի գերակշռող հանգավորմամբ:

**Օրոր, օրոր** - Երգը գրառվել է Շիրակի մարզի Իսահակյան գյուղում: Բանասացը Մանյա Հովհաննիսյանն է (ծնվ. 1935 թ., Լեռնակերտում): Ունի ութամյա կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից ու Ալաշկերտից:



4  
 8  
 12  
 15  
 19

Օ-րոր, օ-րոր, օ-րոր, օ-րոր, օ-րոր է-նեմ, օ րոր, օ-րոր, է-նեմ, օ-  
 րոր է-նեմ օ-րո րո - ցին, քուն կը-տա-նի ա - նուշ քա - լին, նա-նիկ  
 է-նե ա-նուշ քա-լես, քը-նի, քը-նի, շուտ մե-ծա-նաս, մե-զի պի - տա-նի մարդ  
 դառ - նաս, օ - րոր է - նեմ, օ - րո - րո-ցին իմ ա-նուշ  
 քա-լին, նա-նիկ, նա-նիկ նա - նիկ:

**Նանիկ, քալա ջան** Երգը գրավել է Շիրակի մարզի Քարաբերդ գյուղում: Բանասացն է Լիզա Մարգարյանը (ծնվ. 1935 թ., Քարաբերդ գյուղում): Ունի ութամյա կրթություն: Նախնիները գաղթել են 1915 թ. -ին Մուշից:

4  
 7  
 8  
 9  
 10  
 14

Նա նիկ քա լա ջան, նա նիկ, նա նիկ դար դար է նիմ դար դար, դար  
 դար, ա նուշ քա լա ջան նա նիկ է նեմ ու քըն ցը նեմ իմ ա նուշ-քա լին  
 նա նիկ քա լես նա նիկ, նա նիկ հա սանք հայ  
 ըն նիք, հայ ըն նիքն ա նուշ է ես չեմ հե ու  
 նա, կաթ նա տուր մայ ըիկ ջան քեզ չեմ մո ու նա, նա նիկ քա  
 լա ջան, նա նիկ, նա նիկ է նեմ ու քըն ցը նեմ իմ ա նուշ քա լին:

Հարկ է նշել այն իրողությունը, որ յուրաքանչյուր ավագ օրորասաց, հավատարիմ մնալով ավանդական օրորի բանաձևին, ստեղծում է իր օրորը, որը երբեք չի մոռանում անգամ տարիների հորձանուտում: Այս խմբի օրորները հարուստ են օրինանքներով, կենսավորձի փոխանցման առատությամբ: Օրորի հիմք են կազմում փաղաքշական բառերն ու դանդաղահունչ, ռիթմիկ միավորները:

**Նանիկ ասեմ բալիս** Երգը գրավել է Շիրակի մարզի Լանջիկ գյուղում: Բանասացն է Աստղիկ Առաքելյանը (ծնվ. 1925 թ., Լանջիկում): Ունի տարրական կրթություն, նախնիները գաղթել են 1915 թ.-ին Մուշից:

Այս օրորոցային երգը ժանրի բովանդակային ընդլայնված սահմանների և դրանով իսկ միջժանրային փոխառնչությունների ցայտուն օրինակ է: Բանասացը ավանդական օրորի տեքստում համադրել է Ավ. Իսահակյանի բանաստեղծությունից վերցված առանձին տողեր, ինչը երգը մոտեցնում է անտունիների կամ պանդխտության երգերի հատկանիշներին:

4 Նա-նիկ ա-սեմ բա - լիս, նա - նար բա-լա ջան նա-նար, նա-նար,  
 7 խորն է քը-նե բա-լի-կըս, բա-լա ջան նա-նա նա - նիկ բա-լա  
 11 ջան, նա-նիկ, նա - նիկ, տա-րեք ինձ իմ հայ-րե-կիք,  
 14 հայ-րե - նի - քից հե-ռա - ցել եմ, բա-լա ջան, նա-նիկ, նա -  
 17 նիկ, խեղճ պան- դուխտ եմ, տուն չու-նիմ, բա-լից բա - ժան - վել  
 եմ, տը-խուր, տը-խուր, քուն չու-նեմ, բա-լա ջան:

Սա այն նմուշներից է, որտեղ երգը «թեմատիկ առումով հաճախ շեղվում է բուն օրորից և այսպես, օրորի ժանր կարող են ներթափանցել թեմատիկ առումով հեռավոր մոտիվներ, որոնք սակայն հստակ սկզբունքներով կրում են օրորի ազդեցությունն ու մեզ «հուշում» երգի ժանրային պատկանելության մասին: ...Ահա այս դեպքերում կրկնակներն ունեն նաև երգողի մտքերն ամփոփող, ամբողջացնող, երգողին իրականություն «վերադարձնող», երգին ձև «հաղորդող» ֆունկցիա»: [10, էջ 37]

Ավագ բանասացների օրորերգերում *Էրկիր* կամ *Էրկրեն* բառը տարածական է. կարոտի, պատմական հիշողության կնիք կա ամփոփված.

Նանիկ, նանիկ, իմ բալիկ,  
Անուշ քնիք, մեծըցիր,  
Դարձիր մարդ մարդկանց մեջ,  
Քունն անուշ է իմ ձագի,  
Արևն է նստել նրա մեջ,  
Չես ուզում փակել աչերդ,  
Փնտրում ես պայծառ արև...  
Օրոր ասեմ, խրատեմ ու աղոթեմ,  
Դառնա արև իմ բալեն,  
Լույս սփռե չորս կողմեն,  
Օրոր քաղցրիկ, բալի բալ,  
Սերունդ ես, տոհմ ու ազգ,  
Էկան ձերոնք **Էրկրեն,**  
**Ղարսի Հարսնեքար** գյուղեն,  
Եկան հասան Հայաստան,  
Դարձան նորեն մշտական,  
Օրոր, օրոր ու նանիգ,  
Իմ անուշ ու քաջ բալիկ...  
Պահիր հարգանք մեծի հանդեպ...

Անգամ պարզունակ թվացող օրորերգի մեջ մայրը պահպանում է հանգավորումը՝ բալեւ, չարչրեւ, խանգարեւ:

Հարցումների ընթացքում օրորասացները հիշողության գունապնակից տալիս էին օրորոցային երգի իրենց նկարագիրը. *Օրորոցային երգը հոգու զմայլք է, շոշափելի չէ, բայց սպրեցնող է ու կյանք տվող: Օրորոցայինը տանում է իմ էրեխու մանկությունը:*

Ավագ բանասացների օրորների շարքում ընդգրկուն տեղ ունի Արևմտյան Հայաստանը, օրորի կանչով նրանք վերադառնում են պատմական անցյալ՝ պապերի հայրենիք: Բերենք երկու գրառած օրոր:

*Մուրադ գետի* բոլորը  
Ես՝ մի մարալ,  
Դարդեղ ընկա չոլերը,  
Քնի՛, բալե՛ս, քնի՛, բալեւ...

Ուշագրավ է այն, որ թե՛ բանասացների հանկարծաստեղծ օրորներում, թե՛ հայ ժողովրդական երգերում գետանուններն ունեն խորհրդանշական իմաստ.

Մշո գելներ երկու գետ,  
Մշո գելներ երկու գետ,  
Մեկ *Մուրատ*, մեկ *Մեղրագետ*,  
Երթան թափվին *Եփրատ* գետ:

Անդրադառնալով երգերի տաղաչափական առանձնահատկություններին՝ կարող ենք մեջբերել Հ. Ափինյանի հիմնադրույթները, քանի որ ժամանակի ընթացքում դրանք առանձնակի փոփոխություններ չեն կրել:

«Օրորոցային երգերում տաղաչափական համակարգը բարդ և բազմակերպ դրսևորումներով է արտահայտված: Վանկաչափական վերլուծության արդյունքում պարզվել է.

. Օրորոցային երգերը հիմնականում բաղկացած են երկտող, եռատող, մեծ մասամբ քառատող, հնգատող հանգավորված կրկնակներով կամ ավելի հաճախ կրկներգերով հավելված բանաստեղծական տողերից:

. Դիտարկվում են հանգավորման բազմազան տեսակներ և տարատեսակներ:

. Առավել բնորոշ են 7,8,10,11 վանկանի տողերը, որոնք արտահայտված են եղանակավորման տարբեր ձևերի մեջ՝ վանկական (սիլաբիկ), չափական (տոնիկական), նաև խառը՝ վանկաչափական տարբերակներով:

Օրորներում, ինչպես և հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության այլ տեսակներում, տողը կազմված է չափական տարբեր ոտքերի հաջորդականություններից, առավել հաճախ հանդիպում են մեծասար-մեծավերջ, IV պետն-քողաբորբ, ավարտեղ-վերջատանջ, մեծավերջ-ներգև, անգայթ-ներգև և այլ ոտքեր» [4, էջ 65]

Մեր կատարած ուսումնասիրությունը վկայում է, որ պատմական թեմատիկա ունեցող օրորները առավել ազատ են կառուցվածքի տեսանկյունից. օրորասացը, հավատարիմ մնալով օրորի չափածո տեսակին /տեքստային դիթամի ապահովում և այլն/, օրորերգի կատարման ընթացքում ասելիքը մեկընդմեջ տեղափոխում է արձակի տիրույթ, որը թերևս պայմանավորված է պատմական առատ իրողությունների թվարկմամբ, վերհուշի զգացողությամբ, կոնկրետ իրավիճակի հիշատակմամբ, որը պատմային է: Ընդգծենք նաև այն, որ ժամանակի հոլովություն փոխներթափանցում է նկատվում. օրորերգը ավագ բանասացներից փոխանցվում է երիտասարդներին, որը ենթադրաբար փոփոխություններ է բերում տեքստային մակարդակում:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Ինչպես նկատում ենք, օրորների մերօրյա ձայնագրություններն արտահայտում են ավանդական նմուշների տիպական գծերը՝ ձայնակարգային ու կառուցվածքային դրսևորումները: Շատ կարևոր կառուցողական դեր են կատարում կրկնվող դարձվածքները, որոնք բանաձևային են թե՛ տեքստում և թե՛ մեղեդու մեջ:

Մրանք պատկանում են *հանպատրաստից հորինված* օրորների շարքին: Այսինքն՝ հորինվում են այդ պահին՝ բանաձևային դարձվածքների հմուտ կիրառմամբ, կրկնակ բառերի ու բառակապակցությունների օգնությամբ: Կայուն բանաձևերից տարածական է օրհնանքը: Բնականաբար, այստեղ հանգավորումը խիստ անկայուն է և ենթարկվում է երգողի հանկարծաբանական մտածողությանը: Այստեղ անհամաչափությունը ձևակառուցման գործոնների բարդ հարաբերակցության արդյունք է. ստեղծվում է մեղեդային առանձին դարձվածքների զգալի տարբերակումների, վանկի ծավալուն եղանակավորումների, արտաքին հավելումների և այլնի շնորհիվ՝ որպես երաժշտաբանաստեղծական մտքի կարևոր առանձնահատկություն, հարուստ մտածողության արտահայտություն:[2, էջ 63]

Երգերի ձայնածավալը փոքր է, վարընթաց, միապաղաղ սահուն շարժումների գերակշռությամբ: Անշուշտ, այս բնորոշիչները վերաբերում են նաև Շիրակի երգային

բանահյուսական բարբառին: Համաընդգրկուն համեմատական հետազոտության մեջ դրանք կդառնան ավելի ցցուն ու հստակ:

### Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Աղայան Մ. *Մի ակնարկ ժողովրդական օրորների մասին* // Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի: Երևան: 1948: N8: 39-51 էջեր:
2. Ափինյան Հ. *Շիրակում ձայնագրված օրորոցային երգերի տարածամասնակյա գրառումների համեմատական վերլուծության փորձ*,// Շիրակի պատմամշակութային ժառանգությունը 4-րդ գիտական. նստաշրջանի նյութեր: Գյումրի: 1998: էջ 61-63:
3. Ափինյան Հ. *Օրորոցային երգի ժանրը Շիրակի ժողովրդական երգարվեստում*: ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Հ. 3: Գյումրի: 2000, 165-175 էջեր:
4. Ափինյան Հ. *Օրորոցային երգի տաղաչափական առանձնահատկությունների շուրջ*: Շիրակի պատմամշակութային ժառանգությունը: 5-րդ գիտ. նստաշրջան: Գյումրի: 2002: էջ 65-66:
5. Ափինյան Հ. *Գիտարկումներ Շիրակի ժողովրդական երաժշտության ուսումնասիրության խնդրի շուրջ*: Շիրակի պատմամշակութային ժառանգությունը: 7-րդ գիտական նստաշրջանի նյութեր: Գյումրի: 2004: 234-236 էջեր:
6. Բրուսյան Ա. *Ռամկական մրմունջներ*: Երևան: «Սովետական գրող»: 1885: 239 էջ:
7. Բրուսյան Մ. *Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն*: Երևան: «Ամրոց գրուպ»: 2014: 255 էջ:
8. Թագակյան Ջ. *Հոգևոր երգաստեասկները Ջափախի ժողովրդական ավանդություն*: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: 2022: 337 էջ:
9. Կոմիտաս Վարդապետ *Ուսումնասիրություններ եւ յօդուածներ*: Գիրք Ա: Երևան: «Սարգիս Խաչենց»: 2005: 517 էջ:
10. Հակոբյան Ա. *Հայ ավանդական օրորներ /սևտիպ/*: Ատենախոսություն: Երևան: 2022: 138 էջ:
11. Հարությունյան Հ. *Օրորի ժանրը Շիրակի արդի երաժշտական բանահյուսության մեջ*, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» միջազգային 11-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 23-24 սեպտեմբեր, 2022, 232-235 էջեր:
12. Հարությունյան Ս. *Բանագիտական ակնարկներ*: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2010:103 էջ:
13. Մելիքյան Ս., Տեր-Ղևոնդյան Ա. *Շիրակի երգեր*: Թիֆլիս: տպարան «Քարթլի»: 1917: 80 էջ:
14. Harutyunyan H. *About some genre features lullaby song*. Praha, Czech Republic, Sciences of Europe, No 124, 2023, 8-14 pp.
15. Harutyunyan H. *Some features of ethnic music*. Praha, Czech Republic, Sciences of Europe, No 128, 2023, 4-8. pp..
16. Harutyunyan H. *About some typological features of lullabies*. European Journal of Arts, Vienna, No 4, 4-14 pp.
17. Matikyan H. *Lullaby as an Awakening Text*. // Proceedings of the 2nd International Conference on Advanced Research in Humanities, 2019, pp.1-5.
18. Матикян А. *Особенности языкового мышления колыбельных текстов*. // Четвертые Всероссийские историко-этнографические чтения, посвященные памяти профессора Магомедова Расула Магомедовича. Сб. статей. Махачкала, "Наука", 2017, 170-172 сс..
19. Пахлеванян А. *Вопросы армянской музыкальной фольклористики*. Ереван: Изд.-во Ереванской государственной консерватории. 2005. 187 с..

### References

1. Aghayan M. An overview of folk songs [*Mi aknark zhoghovrdakan ororneri masin*] // Bulletin of the Academy of Sciences of the Armenian USSR. Yerevan, 1948, N8, pp. 39-51 pp.. (In Armenian)
2. Apinyan H. An attempt at comparative analysis of cross-temporal records of lullabies recorded in Shirak

- [*Shirakum dzaynagravats ororotsayin yergeri tarazhamanakya grarrunneri hamematakan verlutsut'yan pordz*]. Shirak's historical and cultural heritage, 4th Republican Conference. Gyumri, 1998, 61-63 pp. (In Armenian)
3. **Apinyan H.** About the metrical features of the lullaby [*Ororotsayin yergi taghachapakan arandznahatkutyunneri shurj*]. Shirak's historical and cultural heritage. 5th Republican Conference. Gyumri, 2002, 65-66pp. (in Armenian)
  4. **Apinyan H.** Observations on the problem of the study of Shirak's folk music [*Ditarkunner Shiraki zhoghovrdakan yerazhshtut'yan usumnasirut'yan khndri shurj*]. Shirak's historical and cultural heritage 7th Republican Conference. Gyumri, 2007, 234-236 pp. (In Armenian)
  5. **Brutyanyan A.** Rural melodies [*Ramkakan mrmunjner*]. Yerevan. "Soviet writer". 1985. 239 p. (In Armenian)
  6. **Brutyanyan M.** Armenian folk music composition [*Armenian folk music composition*]. Yerevan. «Amroct grup». 255 p.. (In Armenian)
  7. **Tagakchyan Z.** Spiritual songs in the folk tradition of Javakhk [*Hogevor yergatesaknery Javakhk'i zhaghovrdakan avanduyt'um*]. Yerevan, NAS RA "Science" publishing house. 2022, 337 p.. (In Armenian)
  8. **Komitas Vardapet** Articles and studies [*Hodvatsner yev usumnasirutyunner*]. Book I. «Sargis Khachents». Yerevan. 2005. 517 p. (In Armenian)
  9. **Hakobyan A.** Armenian traditional lullabies [*Hakobyan A. Hay avandakan ororner*] A dissertation submitted in partial satisfaction of the requirements. Yerevan, 2022, 138 p. (In Armenian)
  10. **Harutyunyan H.** Lullaby genre in Shirak's modern musical folklore [*Orori zhanry Shiraki ardi yerazhshtakan banahyusut'yan mej*]. "Shirak's historical and cultural heritage. Current issues of Armenian Studies" Proceedings of the 11th International Conference, Gyumri, September 23-24, 2022, 232-235 pp..
  11. **Harutyunyan S.** Scientific essays [*Banagitakan aknarkner*]. Yerevan: RA NAS "Science" ed. 2010. 103 p.. (In Armenian)
  12. **Melikyan S.** Ter-Ghevondyan A. Songs of Shirak [*Shiraki yerger*]. Tiflis. Cartli Printing. 1917. 80 p. (In Armenian)
  13. **Harutyunyan H.** About some genre features lullaby song. Praha, Czech Republic, Sciences of Europe, No 124, 2023, 8-14 pp.
  14. **Harutyunyan H.** Some features of ethnic music. Praha, Czech Republic, Sciences of Europe, N128, 2023, 4-8pp.
  15. **Harutyunyan H.** About some typological features of lullabies. European Journal of Arts, Vienna, No 4, 4-14pp.
  16. **Matikyan H.** Lullaby as an Awakening Text. // Proceedings of the 2nd International Conference on Advanced Research in Humanities, 2019, 1-5 pp.
  17. **Matikyan H.** Peculiarities of Linguistic Thinking of Lullaby Texts [*Osobennosti yazykovogo myshleniya kolybel'nykh tekstov*] // Fourth All –Russian historical and ethnographical readings devoted to the memory of Rasula Magomedova Magomedovicha, 2017, 170-172 pp. (In Russian)
  18. **Pahlevanyan A.** *Issues of Armenian music folkloristics*, [*Voprosy armyanskoy muzykalnoy folkloristiki*]. Yerevan. Publishing of Yerevan State Conservatory, 2005, 187 p. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **02. 03. 2024**  
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **15. 03. 2024**  
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակների մասին**

Հասմիկ Հայկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ արվ-գիտ. թեկնածու, դոցենտ,  
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,  
էլ. huugic` hasmik.har@mail.ru <https://orcid.org/0000-0001-7756-4240>

**Hasmik Hayk HARUTHYUNYAN:** PhD in Art, Associate professor,  
Senior research worker of SHCAS of NAS, Gyumri, RA,  
e-mail: hasmik.har@mail.ru <https://orcid.org/0000-0001-7756-4240>

**Асмик Айковна АРУТЮНЯН:** канд. искусствовед., доцент, старший научный  
сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,  
эл. адрес: hasmik.har@mail.ru <https://orcid.org/0000-0001-7756-4240>

**Հասմիկ Համլետի ՄԱՏԻԿՅԱՆ`** բան. գիտ. թեկնածու,  
ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի գիտաշխատող,  
ԾՊՀ օտար լեզուների և գրակ. ամբիոնի դասախոս, Գյումրի, ՀՀ,  
էլ. հասցե՝ hasvrej@mail.ru. <https://orcid.org/0000-0003-0032-5123>

**Hasmik Hamlet MATIKYAN:** PhD in Philology, Researcher at  
Shirak Center for Armenological Studies NAS, lecturer at the Chair  
of Foreign Languages and Literature of SUSH, Gyumri, RA,  
e-mail: hasvrej@mail.ru. <https://orcid.org/0000-0003-0032-5123>

**Асмик Гамлетовна МАТИКЯН:** кандидат филол. наук,  
науч. сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН,  
преподаватель кафедры ин. языков и литератур ШГУ, Гюмри, РА,  
эл. адрес: hasvrej@mail.ru. <https://orcid.org/0000-0003-0032-5123>

ՀՏԴ՝ 398

DOI: 10.52971/18294316-2024.27.1-176

ԲԱՆԱԶԵՎԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՆԿԱԿԱՆ  
ԲԱՆԱՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ<sup>1</sup>

*Հասմիկ Հ. Մատիկյան*

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

**Անփոփում**

*Նախաբան.* Հոդվածը նվիրված է Շիրակի մանկական բանահյուսական տեքստերի ուսումնասիրությանը բանաձևային տիրույթում: Թե՛ քնամուտի, թե՛ մանկախաղաց տեքստերում փաղաքշական խոսքը ձեռք է բերում բանաձևային մտածողություն: *Մեթոդներ և նյութեր.* Համեմատական, բանագիտատեքստաբանական և վերլուծական մեթոդներով քննության են առնվել Շիրակի տարածաշրջանում լայն կիրառություն ունեցող օրորոցային ու մանկախաղաց երգերի տիպական նմուշներ: *Վերլուծություն.* Փաղաքշական խոսքը, որն արտահայտվում է մի դեպքում հնչերանգային մակարդակում, մյուս դեպքում՝ բառային հատուկ վերաբերմունքով, վերլուծել ենք լեզվաբանություն և բանագիտություն գիտակարգերի շրջանակներում: *Արդյունքներ.* Բացահայտվել ու արժեքավորվել են Շիրակի մանկական բանահյուսական տեքստերում առկա բանաձևային մտածողության շերտերը, մասնավորապես՝ փաղաքշական խոսքային բանաձևերը: Տարածաշրջանն աչքի է ընկնում խոսքաշեն կառույցներով, որոնք առատ են մանկական բանահյուսական տեքստերում:

**Բանալի բառեր՝** *փաղաքշական, օրորոցային, տեքստ, հնչյուն, ոճ, միջավայր, բանահյուսություն, բանաձև:*

**Ինչպես հղել՝** Մատիկյան Հ. *Բանաձևային մտածողությունը Շիրակի մանկական բանահյուսական տեքստերում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1(27): 176-182 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-176

<sup>1</sup> Հետազոտությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22 YR-6B030 ծածկագրով «Շիրակի մանկական բանահյուսությունը» գիտական թեմայի շրջանակում:



## FORMULAIC EXPRESSIVENESS IN SHIRAK'S CHILDREN'S FOLKLORE TEXTS

*Hasmik H. Matikyan*

Shirak Center for Armenological Studies NAS  
Shirak State University, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The article is devoted to the study of children's folklore in Shirak in the formulaic domain. In both bedtime and children's nursery rhyme texts, formulas are abundantly used in the form of diminutives. **Methods and materials:** Typical samples of lullabies and nursery rhymes recorded in the Shirak region were examined by using comparative, analytical, linguo-folkloristic methods. **Analysis:** Diminutives create formulaic milieu which is expressed both in segmental and suprasegmental levels. The research was conducted in the fields of linguistics and folklore studies. **Results:** The Shirak region is distinguished by its unique types of children's folkloric texts that embody formulaic thinking. Diminutives serve as a means of providing the nursery milieu with formulas.

**Key words:** *diminutive, lullaby, text, phoneme, style, milieu, folklore, formula.*

**Citation:** Matikyan H. *Formulaic Expressiveness in Shirak's Children's Folklore* // "Scientific works" of the Shirak Center for Armenological Studies NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 176-182 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-176

## ФОРМУЛЬНАЯ ВЫРАЗИТЕЛЬНОСТЬ В ДЕТСКОМ ФОЛЬКЛОРЕ ШИРАКА

*Асмик Г. Матикян*

Ширакский центр арменоведческих исследований НАН,  
Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** Статья посвящена изучению детского фольклора Ширака в формульной сфере. В текстах детских стишков формулы обильно используются в виде уменьшительно-ласкательных форм. **Методы и материал:** Типичные образцы колыбельных песен и детских стишков, записанных в Ширакском регионе, были исследованы с помощью сравнительно-аналитического и лингвофольклористического методов. **Анализ:** Диминутивы создают формульную среду, которая выражается как на сегментном, так и на супrasegmentном уровнях. Исследование проводилось в области лингвистики и фольклористики. **Результаты:** Ширакская область отличается уникальными типами детских фольклорных текстов, в которых воплощено формульное мышление. Диминутивы служат средством обеспечения детской среды формулами.

**Ключевые слова:** *диминутив, колыбельная, текст, фонема, стиль, среда, фольклор, формула.*

**Как цитировать:** Матикян А., *Формульная выразительность в детском фольклоре Ширака* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1(27). 176-182 сс.  
DOI: 10.52971/18294316-2024.27.1-176

**ՆԱՍՏԱԲԱՆ.** Շիրակի մանկական բանահյուսությունը փաղաքշական բառ ու բանի արտահայտման միջավայր է: Բանահյուսությունը՝ որպես ավանդական մտածողության վերհանման հիմնասյուն, կարևոր է քննել լեզվաբանության համապատկերում: Լեզվական տեսանկյունից փաղաքշանքն արտահայտվում է թե՛ հնչյունական, թե՛ բառային, թե՛ ոճական դիրքերից: Մանկական բանահյուսական տեքստերը վերոնշյալի լավագույն վկայությունն են:

*Փաղաքշական* բառը բառային վկայությամբ ունի փաղաքշանք արտահայտող, գործվական, հրապուրիչ իմաստներ: Շիրակյան մանկանոցում փաղաքշական խոսքը բանաձևային մտածողության կշիռ է ձեռք բերում նույնանման բառային միավորները պարբերաբար կրկնելու շնորհիվ:

Փաղաքշական միջավայրի ապահովումը պայմանավորված է մեծ մասամբ մանուկ հասցեատիրոջ գործոնով: Փաղաքուշ բառեր են կիրառվում կամ ստեղծվում՝ երեխայի տարիքային առանձնահատկություններից ելնելով: Նշենք մի քանիսը՝ *օրորոցկանս, մատողաշ, ձագուկս, պիճիլիկս, պստիկս, ուլուլիկ-ձուլուլիկս և այլն*: Բառընտրությունը կարող է փոխվել՝ երեխայի սեռով պայմանավորված. *աչոնս, մետաքս աղջիկ, խնձորս, նիշունս, նիշածս, խասս, ատլասս* (աղջիկ երեխաներ) և *առյուծս, սյունս, թև ու թիկունքս* (տղա երեխաներ): Ընդհանրական փաղաքշական դիմելիքներ են՝ *օսկիս, հրեշտակս*:

Օրորոցայինը՝ որպես մանկական բանահյուսության տեսակ, փաղաքշական է, գործվի ու գովքի տեքստ: Մեջբերենք շիրակյան օրորերգ.

Օրոր, օրոր, օրոր էնեմ օրոր,  
Օրոր էնեմ, օրորոցին,  
Քունը կտանի *անուշ* բալին... [6, էջ 14]:

Բերված *անուշ* գործվաբառը իմաստային խորքում պարունակում է *հանգիստ, հանդարտ քուն* [2, էջ 30] իմաստը, որը բովանդակային առումով համապատասխանում է օրորի միջավայրին: Նշենք օրորերգի մի հատված.

Օրո՛ր կանչիմ իմանաս,  
Պատկիս *անուշ* քնանաս,  
Քնանաս ու մեծանաս,  
Մեծանաս ու մեծ մի լընիս... [3, էջ 55]:

Կամ՝

Օրոցք դնեմ, օրրեմ քեզ,  
*Անուշ* լեզվով գովեմ քեզ,  
Դուն կրակ ու ես պաղ ջուր,  
Կրատ լլեմ, մարեմ քեզ [3, էջ 76]:

Օրորոցային տեքստերում *անուշ քուն, անուշ քնել* արտահայտություններն ունեն լայն բաշխվածություն՝ անկախ ազգագրական տեղանքից: Ալաշկերտի օրորերգում նույնպես նշվածը դառնում է փակոդ բանաձև, օրինակ՝

Գառնըս, նեննի՛, նեննի՛,  
Արի *անուշ* քնի, իմ խաթեր խմար:

Վանի օրորոցային երգում *անուշ* բաղադրիչը դարձվածքային կապակցությամբ է ընդգծվել.

Էսման աղջիկ վո՛վ ունի,  
*Անուշ* լեզու քուր ունի...[3, էջ 87]:

Կան փաղաքուշ բառեր ու արտահայտություններ, որոնք բնորոշ են ոչ միայն մանկանոցին, այլ նաև տարածված են սիրային և աշխատանքային երգերում: *Անուշ* բառամիավորով հարուստ են նաև աշուղական տեքստերը, օրինակ.

Գարուն սիրուն *անուշ* յար,  
Արի դարդիս արա ճար,  
Ես քեզ համար էրվում եմ,  
Դու նստել ես բեխաբար: (Գուսան Շերամ)

*Անուշ* բառը երբեմն ստացական *u* հոդով դառնում է օրորերգի հասցեատիրոջ դիմելաձև, պայմանականորեն նշենք՝ «Քնի՛ր, քնի՛ր, անուշս...»

Օրորը առանձնանում է արտաբերման ուրույն եղանակով, որը պետք է լինի փաղաքուշ, մեղմիվ: Հատկանշական է նշյալ տեքստերի ինքնաբուխ, ինքնաստեղծ առոգանությունը:

Բանասացներն ընդգծում են օրորի հնչարտաբերման յուրահատուկ ոճը՝ դանդաղ, մեղեդային հնչապատկերը: Այս առումով մեջբերենք բանասաց Ջեմմա Խաչատրյանի հետևյալ խոսքը. «*Երեխային օրոր պետք է ցերեկը երգել, որովհետև ցերեկվա քունը դժվար է գալիս, տեմպը հիմնականում պետք է լինի դանդաղ, որպեսզի երեխան այսպես ասած «թմրի» և հանգիստ ու երկար քնի...*».

*Նանիկ ասեմ իմ բալիս,  
Որ նա քնի ծնկներիս,  
Նանիկ, նանիկ, իմ բալիկ,  
Իմ անուշիկ, նուրբ բալիկ...<sup>2</sup>*

Օրորոցային տեքստը կարող է բազմաշերտ լինել. նույն երգի ներքո մեղեդին կարող է փոխվել՝ կախված երգողի հույզերից և արտաբերվող նյութից: Շատ դեպքերում օրոր երգողները բանավոր խոսքում նշում են անգամ մեկ հնչյունի հանգավոր արտասանությունն ա՛-ա՛-ա՛, այի՛կ, այի՛կ, այի՛կ: Հաճախ էլ օրորոցայինին հատկորոշ բառամիավորներ են ասվում քնեցնելու ժամանակ՝ «*քնի բալես, աչուկներդ փակիր*» և այլն...

Օրորոցային երգի նպատակը հանգստություն, անդորրություն ապահովելն է, որից էլ բխում է երկարացման, ռիթմիկ մեղեդու առկայությունը: Այս իրողությունը նկատելի է ոչ միայն հայ, այլ նաև այլ ժողովուրդների մշակույթներում: Ահավասիկ, անգլալեզու մշակույթում օրորին համարժեք *lullaby*–ը սահմանվում է *մեղմ, փաղաքուշ, փափուկ երգ երեխային քնեցնելուց առաջ* [5, էջ 52]:

Փաղաքշական միջավայրը ձևավորվում է նաև կրկնությունների հաշվին:

2 Բանասաց՝ Ջեմմա Խաչատրյան, ծնվել է 1950 թ., գյուղ Ախուրիկում, ամուսնացած է, ունի 3 երեխա, 5 թոռնիկ, ապրում է Կապսում:

Օրոք, նանիկ, բուրիկ, լայ –լայ բառերը, մեր համոզմամբ, հանգստություն են տալիս, քանի որ բառերում նշված ձայնավորներն ու բաղաձայնները մեղմ արտասանություն ունեն.

- Օրոք բառում՝ «ր» ձայնորդ բաղաձայնը,
- Նանիկ բառում՝ «ն» ձայնորդ բաղաձայնը,
- Բուրիկ բառում՝ «ր» ձայնորդ բաղաձայնը և «կ» խուլ բաղաձայնը,
- Լայ-լայ բառում՝ «լ» և «յ» ձայնորդ բաղաձայնները:

Նշված հնչյունների որակական հատկանիշները ապահովում են օրոքի մեղմությունը, հանգստությունը: Նշենք մեկ կարևոր հանգամանք. երբ երեխան գտնվում է մոր կամ օրորերգողի գրկում, մեղեդին բնականաբար ավելի դանդաղ է:

Արտասանությունը շատ հաճախ կախված է օրոքի տեքստի բնույթից. գովերգ տեքստերն ունեն ածականների առատություն, թվարկվող շղթա են. թվարկումն ինքնին ենթադրում է տևական դադար: Մեջբերենք օրոքին առնչվող հետևյալ հուշը. «Քուրիկս մօրս գրկին մեջ, բերանը կը բանար ու կը գոցեր: Երբեմն՝ մամա ջո՛ւր, մամա ջո՛ւր, կ'աղերսէր նուադուն ձայնով: Ջուր չկար, մայրս միայն մեկ դեղ ունէր, մեղմաձայն իր օրօրները, որ քուրիկս քնանար եւ ջուրի պակասը մոռնար» [1]:

Փաղաքական ու հանգիստ միջավայրի ցուցիչ է նաև օրոք բառի նկարագրականը/մեղմ օրոք երգել/, որը բանահյուսական օրորոցային տեքստերում ունի մեծ ընդգրկունություն:

Շիրակում կատարած դաշտային աշխատանքների ընթացքում գրառել ենք փաղաքական արտահայտություններ, որոնք դառնում են բանաձևային կարևոր նշանակետեր: Փաղաքական խոսքը կարող է հասցեագրված լինել երեխային, երգ ասողի մտերիմներին կամ երեխային պատկանելիք իրերին:

Նյութի լեզվական քննությունը ցույց է տալիս, որ փաղաքական արտահայտվում է մի դեպքում բացականչություններով՝ /նա՛-նա՛- նիկ, ձայնարկություններով /ծուկու-ծուկու-ծուկու/, երբեմն էլ բառ –մասնիկներով /գանձուկ/:

Շիրակի մարզի բանասացներից Գյուլնարա Չարգարյանը<sup>3</sup> մեզ հետ ունեցած զրույցում նշեց. «Մե քանիմ հատ սիրուն բառ կդնես իրար կողք ու կգովաս երեխուն, կխաղցնե՛ս, կքնցնե՛ս».

Իմ քաղցր բալիկ, դե քնի, իմ ծաղիկ՝ անուշ հոտով, նանիկ արա, անուշիկ,

Անուշ երգը քնքուշ հովերի կբերի քունն իմ բալի....

Մանկական որոշ խաղանուններ ևս փոքրացնող մասնիկներով են հիշատակվում:

Փաղաքական խոսքը շատ հաճախ ձևավորվում է այդ մասնիկներով: Վառ օրինակ է «Տունտունիկ» /իկ նվազափաղաքական մասնիկը/ խաղը: Ոսկեհասկ գյուղի պատմությունը նկարագրող գրքում հեղինակը ներկայացնում է նշված խաղը: Մեջբերենք մի հատված. «Գյուղում փոքրիկ քարերով, ամառանոցում ճիմի կտորներով միաչքանի, մի երդիկով ու մեկ դռնով կամ երբեմն էլ 2-3 աչքանի տնակներ էինք շինում, մեր տիկնիկները, հողե թախտեր և այլն դնում էինք ներսը: Յուրաքանչյուր աղջիկ իր տնակն էր

<sup>3</sup> Բանասաց՝ Գյուլնարա Չարգարյան, ծնվել է 1960 թ., Գյումրիում, ամուսնացած է, ունի 1 որդի, 2 թոռ: Ապրում է Գյումրիում:

շինում... Դրսում թողնելով տիկնիկների տնակը՝ իրենց հետ տուն էին տանում միայն տիկնիկներին» [4, էջ 276]:

Շիրակյան մեկ այլ գրառմամբ ցույց տանք բանասացների ստեղծագործ լինելու կարողությունը՝ լեզվական խաղիկներ կիրառելը մանկախաղի տեքստում.

Ծի՛ վ. ծի՛ վ, ծիտիկն է,

Սո-նան մեր տան ծիտիկն է...

Այս տեքստը մեզ փոխանցվել է միջնորդավորված հիշողությամբ. փոխանցողը բանասացի թոռնուհին է: Նրա հաղորդմամբ՝ տատիկը խաղերգն ասելիս աղջկա անունը երկվանկ էր դարձնում՝ փաղաքուշ հնչելու համար:

Ուշագրավ է, որ հայ ավանդական օրորներում ու մանկախաղաց երգերում հանդիպում են լեզվական այնպիսի միավորներ, բառային խմբեր, որոնք շեշտում են օրորասացի կամ խաղ կապողի վերաբերմունքը: Թեպետ յուրաքանչյուր օրոր երգող երգի ուրույն տեքստն է մշակում, այնուամենայնիվ կան կայուն միավորներ, որոնք հանդիպում են տեքստային ողջ տիրույթում թե՛ սկսվածքային, թե՛ միջնամասային և թե՛ վերջնամասային հատվածներում, որոնք կոչվում են կայուն բանաձևեր:

Բանագետ Է. Խեմչյանը «Սկսվածքային և միջնամասային կայուն բանաձևերը Տավուշի հեքիաթներում» հոդվածում մանրամասն ներկայացնում է կայուն բանաձևերի տեսակները Տավուշի հեքիաթների վերլուծությամբ:

Շիրակի ավանդական օրորն ու մանկախաղաց երգը բանաձևային կայուն կառույցներ ունեն: Շիրակի մանկախաղաց երգերի մի խումբ հատկորոշվում է «Ծափի՛ կ, ծափի՛ կ, ծիրանիկ» սկսվածքով, որը Վանի ավանդական խաղերգի սկսվածք է նաև.

Ծափի՛ կ. ծափի՛ կ, ծիրանի,

Կարմիր խնձոր վանեցի,

Աղջիկներուն ճուղպեցի... [3, էջ 251]

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Ամփոփելով նշենք՝ փաղաքշական խոսքը մանկական բանահյուսական տեքստերի համար դառնում է բանաձև: Գովքն ու փաղաքուշ վերաբերմունքը արտահայտվում են գոյական անվան ուղղական հոլովաձևով, ածականներով, ինչպես նաև դարձվածքային մտածողության ձևերով (աղջիկս քաշով մեկ օսկի է): Փաղաքշանք արտահայտող մի շարք բառեր *քուն* բաղադրիչի միահյուսմամբ դառնում են բանաձևային նշանակություն ունեցող միավորներ թե՛ մանկախնամ, թե՛ մանկախաղաց տեքստերի հասցեատիրոջ համար:

## Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. **Բանեան Գ.** *Յուշեր Մանկույթեան և որբույթեան*, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1992:
2. **Գայայեան Հ.** *Բառարան-գանձարան հայերեն լեզուի*, Գահիրե, 1938:
3. **Գրիգորյան Ռ.** *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970:
4. **Հովհաննիսյան Մ.** *Ոսկեհասկ գյուղի պատմությունը, ազգագրությունը և բանահյուսությունը*, Արեգ, Երևան, 2005, էջ 276:

5. **Մատիկյան Հ.** *Անուշ ձայնով կանչեմ օրոր* (անգլարեգու և հայ օրորոցային տեքստերի լեզվա-բանագիտական քննություն), Էդիորադո, Գյումրի, 2020:
6. *Շիրակի ժողովրդական երգերի ժողովածու*, «Ծիրանափող» մշակութային Շ642 երիտասարդական ՀԿ, Գյումրի, 2021:

## References

1. **Banyan G.** Youths of Childhood and Orphanage [*Husher Mankut'ean yev vorbut'ean*] Catholicosate of the Armenian Great House of Cilicia, 1992. (In Armenian)
2. **Gayayan H.** Dictionary-treasury of the Armenian language, [*Barraran-gandzaran hayeren lezui*], Cairo, 1938. (In Armenian)
3. **Grigoryan R.** Armenian folk lullabies and children's songs, [*Hay zhoghovrdakan ororots'ayin yev mankakan yerger*], Publishing House of Armenian SSR, Yerevan, 1970, (In Armenian)
4. **Hovhannisyan M.** The history, ethnography and folklore of Voskehask village, [*Voskehask gyughi patmut'yuny, azgagrut'yuny yev banahyusut'yuny*], Areg, Yerevan, 2005, 276 p.. (In Armenian)
5. **Matikyan H.** Let me sing a sweet lullaby, [*Anush dzaynov kanch'em oror*], Eldorado, Gyumri, 2020. (In Armenian).
6. Shirak's Collection of Folk Songs, [*Shiraki zhoghovrdakan yergeri zhoghovatsu*] "Tsiranopogh" Cultural Youth NGO, Gyumri, 2021. (In Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **21. 03. 2024**  
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **25. 03. 2024**  
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

## Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ Համլետի ՄԱՏԻԿՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,  
ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի գիտաշխատող,  
ՇՊՀ օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ hasvrej@mail.ru. <https://orcid.org/0000-0003-0032-5123>

**Hasmik Hamlet MATIKYAN:** PhD in Philology,  
Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA,  
lecturer at the Chair of Foreign Languages and Literature of SUSH, Gyumri, RA,  
e-mail: hasvrej@mail.ru. <https://orcid.org/0000-0003-0032-5123>

**Асмик Гамлетовна МАТИКЯН:** кандидат филол. наук,  
научный сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН,  
преподаватель кафедры ин. языков и литератур ШГУ, Гюмри, РА,  
эл. адрес: hasvrej@mail.ru. <https://orcid.org/0000-0003-0032-5123>

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԲԱՂՄՈՒՆՔ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԵՐԸ  
ՇԻՐԱԿԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

*Կարինե Ռ. Բազեյան*

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Անվտիմում**

*Նախաբան.* Հոդվածում քննության է առնված Շիրակի բարբառային բառարանների նյութը, որի միջոցով ներկայացված են Շիրակի պատմագագադրական մարզի ու դրա կենտրոն Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության մասնագիտական գործունեության ձևերը, տարածված զբաղմունքներն ըստ տնտեսության ոլորտների՝ արհեստներ, առևտուր, սպասարկում: Ավանդական մշակույթը կրողների բացակայության պայմաններում տարաբնույթ բառարանները հանդես են գալիս որպես անցյալ դարաշրջանի մասին հավաստի տեղեկատվության աղբյուրներ: *Մեթոդներ և նյութեր.* Ուսումնասիրությունն իրականացվել է էթնոլեզվաբանական ու էթնոմշակութաբանական հետազոտության մեթոդաբանությամբ և ազգաբանական մոտեցմամբ, որը հիմնված է լեզվական անհատականության պատմական փորձի, լեզվի և մտածելակերպի փոխհարաբերությունների վրա: Հոդվածում վերլուծվել են Շիրակի բարբառային բառարանները, առանձնացվել են դրանցում ներառված մասնագիտություն և զբաղմունք ցույց տվող բառերը, որոնք համադրվել են համապատասխան գրականության, դաշտային ազգագրական և արխիվային նյութերի հետ: *Վերլուծություն.* Քննության առնված բարբառային նյութի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ շիրակցիների բառապաշարում գերակշռում են քաղաքում տարածված զբաղմունքների ու մասնագիտությունների անունները: Դրանց համեմատական վերլուծության հիման վրա առանձնացվել են արհեստի, առևտրի ու սպասարկման ոլորտի մասնագիտությունները նշող բառերի խմբերն ու քննարկվել են դրանց հարաբերակցությունը թեմային վերաբերող գրականության տվյալների հետ: *Արդյունքներ.* Հետազոտության արդյունքում ստեղծվել է մասնագիտություն և զբաղմունք ցույց տվող անվանումների աղյուսակ, բացահայտվել են մի քա-

նի արհեստ ու զբաղմունք, որոնք ընդգրկված չեն եղել մինչ օրս հայտնի ցուցակներում, ինչը կարևոր նշանակություն ունի տարածաշրջանի առաջնային արտադրության մշակույթի ուսումնասիրության համար:

**Բանալի բառեր՝** էթնոլեզվաբանություն, Շիրակ, բարբառ, զբաղմունք, մասնագիտություն, արհեստ, սկզբնաղբյուր:

**Ինչպես հղել՝** Բազեյան Կ, *Մասնագիտություն ցույց տվող բառերը Շիրակի բարբառային բառարաններում*, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 1(27), 183-195 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.1-183

## WORDS INDICATING PROFESSION AND OCCUPATION IN SHIRAK'S DIALECT DICTIONARIES

*Karine R. Bazeyan*

Shirak Center For Armenological Studies of NAS, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The article examines the material of the dialect dictionaries of Shirak, through which the forms of professional activity of the population of the Shirak ethnographic region and its center Alexandropol-Leninakan are presented, specifically popular occupations have been mirrored according to economic sectors: crafts, trade, service. In the absence of bearers of traditional culture, dictionaries act as sources of reliable information about a bygone era. **Methods and Materials:** The study was carried out with the ethnolinguistic, ethnocultural and ethnological research methodology, which is based on the historical experience of linguistic personality, the relationship between language and mentality. The article analyzes Shirak's dialect dictionaries, by highlighting the words defining profession and occupation, which were compared with relevant literature sources and archival materials. **Analysis:** The study of the examined dialectal material showed that the Shirak vocabulary is dominated by the names of occupations and professions common in the city. On the basis of their comparative analysis, the groups of words denoting professions in the field of craft, trade and service were distinguished and their correlation with the data of the literature related to the topic was discussed. **Results:** As a result of the research, a table of names denoting professions and occupations was created, several trades and occupations that were not included in the known lists were revealed, which is important for the study of the primary production culture of the region.

**Key words:** *Ethnolinguistics, Shirak, dialect, occupation, profession, craft, source*

**Citation:** Bazeyan K. *Words Indicating Profession and Occupation in Shirak's Dialect Dictionaries*. // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri. 2024. V. 1(27). 183-195 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-183



## СЛОВА, УКАЗЫВАЮЩИЕ ПРОФЕССИЮ И ЗАНЯТИЕ В ДИАЛЕКТНЫХ СЛОВАРЯХ ШИРАКА

*Карине Р. Базеян*

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

### Аннотация

**Предисловие:** В статье рассматривается материал диалектных словарей Ширака, по которому представлены формы профессиональной деятельности населения Ширакской историко-этнографической области и его центра Александрополь-Ленинакана, популярные занятия по отраслям экономики: ремесла, торговля и сфера обслуживания. В условиях отсутствия носителей традиционной культуры словари выступают источниками достоверной информации об ушедшей эпохе. **Методы и материалы:** Исследование проводилось с использованием методологии этнолингвистических и этнокультурных исследований и этнологического подхода, основанного на историческом опыте языковой личности, взаимосвязи языка и менталитета. В статье проанализированы диалектные словари Ширака, выделены включенные в них слова, обозначающие профессию и род занятий, которые сопоставлены с соответствующей литературой и архивными материалами. **Анализ:** Изучение рассмотренного диалектного материала показало, что в ширакской лексике преобладают названия занятий и профессий, распространенных в городе. На основе их сравнительного анализа выделены группы слов, обозначающие профессии в сфере ремесла, торговли и обслуживания, и рассмотрено их соотношение с данными из литературы по теме. **Результаты:** В результате исследования создана таблица названий, обозначающих профессии и занятия, выявлено несколько профессий и занятий, не вошедших в известные по сей день списки, что важно для изучения первичной производственной культуры региона.

**Ключевые слова:** этнолингвистика, Ширак, диалект, род занятий, профессия, ремесло, источник.

**Как цитировать:** Базеян К. Слова, указывающие профессию и занятие в диалектных словарях Ширака. // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1(27). 183-195 сс.

DOI:10.52971/18294316-2024.27.1-183

**ՆԱԽԱԲԱՆ.** Ինչպես նշում են հետազոտողները, «լեզուն որոշակի դարաշրջանի և մարդկանց որոշակի հանրույթի մտավոր, մշակութային և տնտեսական վիճակը բնութագրելու հավաստի աղբյուրներից մեկն է՝ պատմության ու մշակույթի փաստերը վերականգնելու համար»: Լեզվի օգնությամբ մարդը ճանաչում է ոչ միայն իրեն շրջապատող աշխարհը, այլև այդ աշխարհում ինքն իրեն, իր ինքնությունը: Էթնոլեզվաբանությունը լեզուն նախնառաջ համարում է ազգի մշակութային ծածկագիր, ոչ թե պարզապես հաղորդակցման և աշխարհի իմացության գործիք: [9, էջ 85]

Էթնոսի լեզվական առանձնահատկությունների և մշակութային յուրահատկությունների փոխհարաբերությունների տարբեր տեսանկյունների ուսումնասիրությունն իրականացվում է համեմատաբար վերջերս ձևավորված, սերտորեն կապված լեզվաբանական երկու ուղղությունների՝ էթնոլեզվաբանության և լեզվամշակութաբանության կողմից: Գիտական հանրության մեջ տարբեր տեսակետներ կան լեզվաբանության այս ոլորտների սահմանների վերաբերյալ: Քանի որ երկուսի հիմքում էլ միջգիտակարգա-

յին մոտեցումն է, երկար ժամանակ լեզվաբանության մեջ միտում կար լեզվամշակութաբանությունը դիտարկել որպես էթնոլեզվաբանության բաժին:

Ազգաբանության մեջ լեզվաբանական աղբյուրների և մասնավորապես բառարանների նկատմամբ հետաքրքրությունը դեռ լիովին չի ձևավորվել, քանի որ ազգաբանության հիմնական սկզբնաղբյուրը համարվել են դաշտային ազգագրական ուսումնասիրությունները: Այժմ ավանդական մշակույթի առանձին՝ արդեն վերացած ոլորտների ուսումնասիրության համար դժվար է գտնել նյութը կրողի կամ իմացողի, ինչը արդիական է դարձնում լեզվաբանական աղբյուրների՝ որպես անցած դարաշրջանի վերաբերյալ տեղեկություններ պահպանողի նկատմամբ հետաքրքրությունը: Ուստի, որպես մեթոդական նոր մոտեցում՝ ազգաբանները սկսեցին տեղեկություններ վերցնել էթնոլեզվաբանությունից, որն ուսումնասիրում է լեզուն էթնոսի մշակույթի հետ հարաբերակցության տեսանկյունից:

**Բարբառային բառարանները որպես էթնոլեզվաբանական սկզբնաղբյուր**

Անկասկած է, որ «մշակութային տարողունակ» բառապաշարի նախակարգապետները բարբառային բառարաններն են, որոնք ի սկզբանե արտացոլում էին ոչ միայն որոշակի տարածքով սահմանափակվող բառամթերքը, այլև հիմնականում ավանդական նյութական ու ոչ նյութական մշակույթի տարբեր իրողությունները՝ դառնալով ոչ լեզվաբանական բնույթի տեղեկության հսկայական շերտի ուղեկցորդ: [10, էջ 112] Ըստ այդմ բարբառային բառարաններն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում տարբեր պատմագագրական մարզերի էթնիկ մշակույթի ուսումնասիրության ու իմացության առումով: Ներառելով հարյուրավոր տեղային բառեր և արտահայտություններ՝ դրանք ժողովրդի կենցաղամշակութային յուրահատկությունները նկարագրող իսկական հանրագիտարաններ են: Այդ բառարանները ծառայում են որպես լեզվաբանական, ազգագրական, պատմական, մշակութային, բանահյուսական աղբյուրներ՝ տվյալ տարածաշրջանի բնակչության մեջ ձևավորված՝ աշխարհի էթնոլեզվաբանական պատկերն ուսումնասիրելու համար: Բարբառային բառարանները, դուրս բերելով օբյեկտիվ իրականության տարբերը, սահմանում են հասկացությունների որոշակի շրջանակ՝ դրանք նշելով բառերով, միաժամանակ այդ բառերով, կատեգորիաներով ու լեզվական ձևերով արտահայտում են ժողովրդի աշխարհայացքն ու մտածելակերպը: Բարբառային բառարաններում գրանցված բառապաշարը երբեմն մարդկանց մի ողջ սերնդի կյանքի ու ապրելակերպի մասին որոշակի տեղեկությունների միակ արձանագրողն է դառնում: [9, էջ 86]

Բարբառային բառերի էթնոլեզվաբանական վերլուծությունն ուղեկցվում է առաջին հերթին պատմական և մշակութային տեղեկության դուրս բերմամբ, որի բովանդակությունը դրսևորվում է բառի ու այն նկարագրող տեքստի ամբողջության մեջ, կախված միավորի բնույթից և նկարագրության լրացուցիչ սկզբունքներից, որտեղ հաշվի են առնվում բարբառային բառի էթնոլեզվական առանձնահատկություններն արտահայտող բաղադրիչները: Մասնավորապես, բառարանը տալիս է ստուգաբանական տեղեկություն կամ բառի մշակութային ստուգաբանությունը, որի միջոցով դիտարկվում է բառի պատմական զարգացումը՝ բացահայտելով դրա օգտագործման հատուկ ձևերը

խոսակցական կյանքի տարբեր պայմաններում՝ համապատասխան մեկնաբանություններով: Այդ ձևով բարբառային միավորի մեջ դիտարկվում են դրանց ծիսական գործառույթները, բառի որոշակի նշանային իմաստը, բացահայտվում են տվյալ տարածքում ապրող ժողովուրդների միջնշակության կապերը և այլն: [9, էջ 86]

Հիշյալ բառարանները չեն սահմանափակվում միայն առանձին բառերի թվարկմամբ, այլև դուրս են բերում ավելի լայն բառարանագրական խնդիրներ՝ կապված դրանց էթնոմշակության իմաստների մեկնաբանության հետ, որոնք բարբառային բառապաշարում հանդիպում են միայն բառարանային նյութի գաղափարային կառուցվածքում:

Որպես էթնոլեզվաբանական ուսումնասիրության օբյեկտ՝ կարող են հանդես գալ բառային-իմաստաբանական տարբեր խմբեր. զբաղմունք նշող բառերը, հագուստը և դրա առանձին մասերը, խոհանոցային պարագաներն ու կարասին, ծիսական-արարողակարգային բառերը, ազգային խոհանոցը և այլն, որոնցից ավելի մանրամասն կանդրադառնանք մասնագիտություն նշող՝ արհեստին ու զբաղմունքներին վերաբերող բառերին:

Մասնագիտական անվանումների իմաստային դաշտը յուրահատուկ մի համակարգ է, որում արտացոլված ենք տեսնում ժողովրդի լեզվամտածողությունը, հոգեբանությունը, պատմամշակության, ընկերային, տնտեսական գործընթացները, հասարակական հարաբերությունները և այլն: Զբաղմունքներ ցույց տվող բառերի համակողմանի քննությունը թե՛ լեզվաբանական, թե՛ պատմագագրական և մշակության տեսակետներից որոշակի կարևորություն է ներկայացնում:

Դա պայմանավորված է նրա միավորների տարասեռ կազմով (ըստ ծագման, տերմինային համակարգ մուտք գործելու ժամանակի, շերտադասման աստիճանների), որը ենթադրում է լեզվական նյութի բազմակողմանի ուսումնասիրություն՝ ինչպես որոշակի ժամանակաշրջանի կայուն համակարգում, այնպես էլ տարժամանակյա զարգացումներում:

Անմիջական կապ ունենալով էթնոսի նյութական մշակույթի հետ՝ դրանք առավել ցայտուն են ցույց տալիս լեզվի սոցիալական բնույթը: Ըստ ուսումնասիրողների՝ «մեր մշակույթի այս կամ այն ոլորտի, արտադրական գործունեության տերմինաբանության պատմությունը միաժամանակ նաև բնության և հասարակության մասին մեր գիտելիքների զարգացման պատմությունն է»: [11, էջ 52] Լինելով անվանական համակարգի ամենակարևոր մասը՝ մասնագիտություն նշող բառապաշարը ներառված է ցանկացած բացատրական բառարանում: Բոլոր ժամանակաշրջաններում լեզվի մեջ ամենամեծ թեմատիկ միավորներից մեկը, որը հատուկ ուշադրություն է պահանջում, արհեստ, զբաղմունք և արհեստավոր նշող անուններն են, որոնք արտահայտում են մարդկային գոյության կենսական կարևորություն ունեցող կողմերը: [11, էջ 53]

Հայ լեզվաբանության մեջ այս առումով նշանակալի է Լևոն Ավետիսյանի «Արհեստ-արհեստավորանիշ անվանումները հայերենում» աշխատությունը, [5] որտեղ առաջին անգամ քննության են ենթարկվել հայերենի արհեստագործական անվանումների բառակազմական կաղապարները, գործառական և իմաստային առանձնահատ-

կույթունները, հումանշային զուգադրսևորումները և այլն՝ հայոց լեզվի զարգացման բուրյ փուլերում:

Հայ ազգաբանության մեջ լեզվաբանական աղբյուրների և, մասնավորապես, բառարանների նյութի համակողմանի և խորը հետազոտության հիման վրա վերլուծություն գրեթե չի կատարվել: Բացառություն է կազմում հայկական ավանդական արհեստներին ու զբաղմունքներին նվիրված տողերիս հեղինակի հոդվածը, որտեղ քննության են ենթարկվել Հր. Աճառյանի երկու՝ «Հայերեն արմատական» և «Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ» բառարանները: [7]

### **Շիրակի բարբառային բառարանների բնութագիրը**

Ի թիվս բազմաբնույթ այլ սկզբնաղբյուրների, Շիրակի բնակչության ավանդական կենցաղի ու մշակույթի ուսումնասիրության համար ևս կարևոր են բարբառային բառարանները, որոնք, բացի անունների զուտ թվարկումից, նաև հետաքրքիր ազգագրական տեղեկություններ են պարունակում: Այդ առումով հատկապես արժեքավոր են Աղ. Մխիթարյանցի և Ն. Նիկողոսյանի բառարանները, որտեղ ներկայացված են շիրակցիների տնտեսական զբաղմունքներին, աշխատանքային գործիքներին, նյութական մշակույթի բոլոր ոլորտներին՝ բնակարանին, հագուստին, ուտեստին, ինչպես նաև ավատալիքներին, տոներին ու ծեսերին, համայնական ու ընտանեկան կենցաղին վերաբերող եզրույթներ, դրանց բացատրություններ ու նկարագրություններ:

Հիշյալ բառարանները կառուցված են այբբենական սկզբունքով, սակայն չեն սահմանափակվում միայն առանձին բառերի թվարկմամբ, այլև դուրս են բերում ավելի լայն բառարանագրական խնդիրներ՝ կապված դրանց էթնոմշակութային իմաստների մեկնաբանության հետ, որոնք բարբառային բառապաշարում հանդիպում են միայն բառարանային նյութի զաղափարային կառուցվածքում:

Ալ. Մխիթարյանցի բառարանը հրատարակվել է Էմինյան ազգագրական ժողովածուի առաջին հատորում՝ հեղինակի «Փշրանք Շիրակի ամբարներից» ազգագրական-բանահյուսական աշխատության վերջում՝ «Հաւելուած. Համառօտ բառարան ժողովրդական բառերի» խորագրով: [1] Քանի որ բառարանը կազմվել է Շիրակի գյուղական մշակույթը ներկայացնող նյութի շրջանակում, ուստի փոքրածավալ է (ընդգրկում է 1143 բառ), և մասնագիտություն ու զբաղմունք ցույց տվող բառերից այստեղ միայն *ջուլհակի* անունն է ընդգրկված, ընդ որում նաև *գործրար* ձևով, որոնց բացատրությունը նույնն է. «*կտավագործ, ոստայնանկ*»: Հատկանշական է, որ բառարանում մեծ թիվ են կազմում նաև ոստայնանկության տարբեր փուլերում գործածվող գործիքների ու հարմարանքների անունները, ինչը ցույց է տալիս Շիրակի գյուղական բնակչության մեջ գործվածքի հետ կապված արհեստների ու զբաղմունքների տարածվածությունը:

Թեմայի առումով շատ ավելի հարուստ ու հետաքրքիր է Ն. Նիկողոսյանի բառարանը, որը ձեռագիր է, գտնվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում և վերնագրված է «Բառարան. Լենինականում և շրջանում գործածվող ժողովրդական բառեր»: Որպես առանձին մաս, այն մտնում է հեղինակի կողմից գրառված սովորածավալ ազգագրական-բանահյուսական նյութերի ժողովածուի մեջ: [2]

Բացի զուտ բարբառային բառապաշարից՝ այս բառարանի բառահոդվածները հաճախ ներառում են նաև առած-ասացվածքներ, սովորությունների, նախապաշարումների նկարագրություններ: Թեմատիկ շրջանակը անսահման ընդարձակ է, և բացի մասնագիտություն ու զբաղմունք ցույց տվող բառերից, ընդգրկում է նաև չափի միավորներ, աշխատանքային գործիքներ, կահկարասի, հագուստ և զարդեր, ուտեստ, խաղեր, պարեր, տոներ, ծեսեր, հավատալիքներ, հարսանեկան արարողակարգ և այլ մշակութային տարրեր նշող բառեր:

Բարձր գնահատելով թե՛ բառարանը, թե՛ ազգագրական ու բանահյուսական նյութեր պարունակող ձեռագրերը՝ որպես Շիրակի նյութական ու ոչ նյութական մշակույթի ուսումնասիրության արժեքավոր սկզբնաղբյուրներ, անհրաժեշտ ենք համարում համառոտ ներկայացնել հեղինակին: Ն. Նիկողոսյանը Ալեքսանդրապոլի 19-դարավերջի և 20-րդ դարի սկզբի հայտնի մտավորականներից էր, որը թղթակցում էր ժամանակի մամուլին, նամակագրությամբ կապված էր անվանի հայ և օտար հայագետների հետ: Չլինելով բանասեր (Ֆինանսիստ էր), սակայն գնահատելով ու կարևորելով Շիրակի մշակութային ժառանգության պահպանման անհրաժեշտությունը, նա հավաքել և գրի է առել ազգագրական և բանահյուսական անգնահատելի նյութեր, այդ թվում՝ կազմել նաև բառարանը:

Իր բառարանն ավելի պատկերավոր ներկայացրել է հեղինակն այսպես. «Ժողովրդի մտավոր պաշարը իսպառ չնոռացվելու համար, հավաքեցի բոլոր բառերն ու ոճերը անխտիր. թե հայերեն և թե օտար լեզվի, որոնց թիվը հասավ շուրջ տասը հազարի: Ժողովրդի բերանից բառերն ու ոճերը հավաքելիս, ուշադրությամբ հետևում էի արտասանությանը և նրանց ճիշտ մտքին: Աշխատության մեջ շատ տեղ բառերի մոտ դրի նրանցով կազմված ասացվածքներ, օրհնանքներ, անեծքներ և այլն: Ես գրի առա այն բառերը, որոնք ունեն ուրույն միտք ու բովանդակություն: Իմ բառարանը ժողովրդի լեզվի զուտ բառերն ու ոճերն են, լինեն նրանք հայերեն թե օտար լեզուներից վերցրած, կրկնում եմ, որոնք ժողովրդի սեփականությունն են, նրա մտավոր ու հոգեկան պաշարը: ... Ես արի որքան կարող էի, ո՛չ հեղինակ լինելու հավակնությունով, այլ իմ լուրման գցելու գրական գանձարանում:» [3, էջեր 7125-712]

Վերադառնալով քննության նյութ կազմող մասնագիտություն նշող բառերին, հարկ եմ համարում անդրադառնալ Շիրակի ու հատկապես դրա կենտրոն Ալեքսանդրապոլ-Լենինականի համար գերակա տնտեսական գործունեությանը՝ արհեստներին: Արհեստների տարբեր տեսակների ծագումն ու ձևաբովանդակային զարգացումը ուղեկցում են մարդուն նրա գործունեության բոլոր փուլերում անխտիր: Արհեստների առաջ գալը, տարաբնույթ ու տարատեսակ դրսևորումները, այլ գործոններից բացի, ժողովուրդների փոխշփումների արդյունք են: Հայտնի է, որ հնագույն ժամանակներից ի վեր հայ ժողովուրդը սերտ շփումներ է ունեցել հարևան և տիրապետող ժողովուրդների հետ. դրանով է պայմանավորված արհեստների ու զբաղմունքների անվանումների մեջ այլ լեզուներից կատարված փոխառյալ և կենցաղում լայնորեն գործածավող շերտի մեծ ծավալը: [5, էջ 4]

Ինչ վերաբերում է Շիրակի բարբառին, պետք է փաստել դրանում արհեստ ու զբաղմունք ցուցանող անունների թուրքերեն, ապա արաբերեն ու պարսկերեն, այնուհետև՝ ռուսերեն բառերի գերակայությունը: Մա պայմանավորված է տարածաշրջանի բնակչության արևմտահայկական ծագումով և, մասնավորապես, Ալեքսանդրապոլ-Լեւինիականի քաղաքային բնակչության հիմքը կազմող կարսեցիների, բայազետցիների ու կարինցիների առկայությամբ:

Արհեստներն ու առևտուրը ալեքսպոլցիների տնտեսական կենցաղի հիմնական բաղադրիչներն էին: Կարինցիների և կարսեցիների շնորհիվ քաղաքում հիմք դրվեց բազմաճյուղ և բարձրարվեստ արհեստներին, իսկ ձեռներեց և հմուտ բայազետցիների շնորհիվ ծաղկեց առևտուրը: [6, էջ 16] Տնտեսական գործունեության այս պատկերը հստակ երևում է բառարանում ներկայացված անվանումների քանակական վերլուծությունից, այսպես. առանձնացվել են արհեստավորի անվանում նշող 61, զբաղմունք նշող 38 բառ, առևտրականի 14 անվանում (ընդհ. 113) և արհեստավորական աստիճանակարգը ցույց տվող 10 բառ: Համեմատության համար ասենք, որ, ըստ ուսումնասիրությունների, XIX դ. վերջին – XX դ. սկզբին Ալեքսանդրապոլում հաշվվում էր 115 արհեստ և զբաղմունք, այսինքն՝ բառարանում առկա անունները ներկայացնում են քաղաքի տնտեսության իրական պատկերը: [6, էջեր 24-26]

*Արհեստավոր* նշող բառերի գերակշիռ մասը թուրքերեն են, կամ, ինչպես Աճառյանն է գտնում՝ օսմաներեն, և ձևավորվել են պատրաստվող ապրանքի անուն-արմատին **ճը** (Շիրակի բարբառում ճի, չի, ջի) արհեստավորանիշ վերջածանց ավելացնելով – *ալվանճի, արմաքճի, դամրչի, դալաչի, չթչի, մարանջի, արաբաջի*<sup>1</sup> և այլն: [1, էջ 23] Ավանդական արհեստ ու զբաղմունք ցույց տվող անունների մի մասը պարսկերեն ու արաբերեն են (*բառբառ, ջուլիակ, զարզար և համանչի, դասաբ, սարաֆ*), իսկ ռուսերենը մուտք է գործել 19-րդ դարի կեսից, ուստի այս լեզվով բառերը կարելի է համեմատաբար նոր համարել: Այս առումով հատկանշական է, որ ռուսերեն են բոլոր պետական պաշտոն ցույց տվող բառերը, ինչպես նաև ռուսական մշակույթի հետ քաղաք մուտք գործած մի քանի արհեստի՝ *պարտնո, սապոկչի, կառեթնիկ* և այլն, ինչպես նաև զբաղմունքի՝ *բազարնիկ, դոխտուր, լակեյ, ֆերշիլ* և այլ անունները: Ջարգացած արհեստավորական մշակույթին բնորոշ երևույթներից է արհեստների նեղ մասնագիտացումը, այսինքն՝ մայր արհեստից անջատված նոր ճյուղերի ձևավորումը: Մա արտահայտվում է նույն արհեստը կամ զբաղմունքը նշող մի քանի անունների առկայությամբ: Նիկողոսյանի բառարանում ներկայացված են ներկարարի 2 անուն – *ալվանճի, բոյաջի*, սափրիչ-վարսավիրի 2 անուն – *բառբառ և դալլաք*, դերձակի 2 անուն – *թարզի, պարտնոյ*, ոսկերիչ-արծաթագործի 4 անուն – *զարզար, դարադոյումճի, դոյումճի, ջահավիրճի*, երաժշտի 5 անուն – *գուռնաչի, դաֆճի, դավուլճի, սազանդար, տկզար* և այլն:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության մյուս կարևոր բաղադրիչը առևտուրն էր, ինչը ևս արտահայտված է բառարանում: Բացի ընդհանրական առևտրական նշող *բազրրկան և կուպեց* բառերից, տեսնում ենք մասնավոր առևտրով զբաղվողների՝

<sup>1</sup> Օտարալեզու բարբառային բառերի հայերեն հոմանիշներն ու բացատրությունները տրված են ստորև ներկայացված ցուցակում:

*ալաֆտար, բազագ, բախալ, բարխանաճի, թուջար, թալալ, չարվադար, չարչի, ջամբագ, փամբուղչի* անուններ:

Քաղաքային մշակույթին բնորոշ երևույթներից է սպասարկման ոլորտի մասնագիտությունների մեծ քանակը: Տարանցիկ առևտրի կենտրոն լինելու հանգամանքը թելադրում էր իջևանատուն-քարավանատների (*խաներ*) և ավելի ուշ հյուրանոցների (*գաստինից*), հասարակական սննդի կետերի թվի անընդհատ աճ, ինչը հանգեցնում էր համապատասխան մասնագիտությունների ցանկի ընդլայնմանն ու նորերի առաջացմանը: Նիկողոսյանը գրանցել է վերոհիշյալ զբաղմունքների հետևյալ անվանումները՝ *խանճի, օդաբաշի, միկիտան, դայֆաճի, ֆոնճի, ալաքճի, աշճի, աքմաքճի*: Սպասարկման ոլորտում բավականին պահանջված էին տարբեր ծառայություն կատարող անձինք, որոնցից, մասնավորապես ներկայացված են հետևյալները. *այվագ, իրդատ, լաքեյ, խզմաթքար, նոքար, փասպանդ, ինչպես նաև* բաղնիսպանության հետ կապված *համանչին, նաթարը, քիսաչին* և բեռների ու մարդկանց տեղափոխությամբ զբաղվողները. *համալ, արաբաջի, էշակճի, ֆայտոնճի* և այլն:

Այս բնագավառին են պատկանում նաև բժշկական ծառայություններ մատուցողները, որոնց թվում են *դահեկը, դոխտուրը, հեքիմը, սնըխչին, ֆերշիլ-բուժակը, ջառահը* / հեքիմ, տանու բժիշկ, տարաբնույթ գուշակները, որոնք կոչվում էին *բթիկչի* և *ֆայջի*: Հատկանշական է, որ քաղաքում երկրագործության հետ կապված զբաղմունքները ևս տարբերակված են *բաղբանչի* և *բոստանջի* անուններով:

Հարկ է նշել, որ բառարանում հեղինակն ընդգրկել է նաև որոշ արհեստավորական շարքերի անուններ՝ *դամրչնոց, զարգրնոց, դասպնոց, մագմնոց* և այլն, ինչը ևս փաստում է այն հայտնի իրողությունը, որ Ալեքսանդրապոլում արհեստները տեղաբաշխված էին առանձին թաղերում, փողոցներում՝ կազմելով շարքեր: [8, էջ 178]

Հետաքրքիր են նաև լայն առումով արհեստ նշանակող բառերը: Բուն արհեստը ներկայացված է *զանիաթ-զանիաթքար* /արհեստ-արհեստավոր/ և *փեշակ-փեշակքար* անուններով, որոնք ավելի լայն իմաստ են կրում և նշանակում են ընդհանրապես մասնագիտություն: Արհեստավորական միությունները հայտնի էին պարսկերեն *համքար* և թուրքերեն *ասնաֆ* անուններով, որոնց հայերեն հոմանիշը, ըստ Նիկողոսյանի, ***համարվեստն*** է: Համքարություններում սահմանված էր արհեստավորների խիստ աստիճանակարգ, դրա անդամ կարող էին լինել միայն *ուստա* / վարպետները, կառույցը դեկավարում էր *ուստաբաշին*- համքարի ավագը, նրա օգնականն էր *իզիթբաշին*: [8, էջ 202]

Վերը շարադրվածն ավելի ամբողջական պատկերացնելու համար կազմվել է մասնագիտություն և զբաղմունք ցույց տվող բառերի աղյուսակ, որը ներկայացվում է ստորև.

Արհեստ նշող բառեր	Զբաղմունք նշող բառեր
1. <i>ալվանճի</i> - ներկարար, բրոյա կտորներ, թելեր ներկող	1. <i>այվագ</i> - մանկլավիկ
2. <i>ալաքճի</i> - փոնում խմորեղեն պատրաստող	2. <i>արաբաջի</i> - սայլապան
3. <i>աշճի</i> - խաշ եփող, խոհարար	3. <i>բաղբանչի</i> - այգեպան, այգետեր
4. <i>աքմաքճի</i> - հացթուխ	4. <i>բազարնիկ</i> - շուկայի հսկիչ
5. <i>բառքառ</i> - վարսավիր, սափրիչ	5. <i>բթիկչի</i> - կախարդ, գրբաց, թովիչ - ֆայջի
	6. <i>բոստրնճի</i> - բանջարանոցի տեր

<p>6.բոյաճի - լեղակով ներկող          7.բրուտ - խեցեղեն ամաններ շինող          8.գգրար - հալաջ          9.գործրար - ջուլիակ,          10.դարաղ - կաշեգործ, խաղախորդ          11.դայլակ - սափրիչ          12.դամրչի - դարբին          13.դաֆճի - թմբկահար          14.դավուլճի - թմբկահար          15.դյուրկար - հյուսն          16.գարգար - ոսկերիչ          17.գուռնաճի - նվագող          18.էհրամճի - էհրամ գործող          19.թանաքաճի - թիթեղագործ          20.թարգի - ասիական շորեր կարող դերձակ          21.թիքիճի - մաշիկագործ          22.թոփճի - ոմբաձիգ, նաև խաղագունդ          23.լաղուճի - ջրի խողովակներ գցող, լաղում - խողովակներ անցկացնելու համար լաղում փորելը          24.լուլաճի - ջրմուղի խողովակներ սարքող          25.խզարճի - տախտակ քաշող          26.կառեթնիկ - փակ կառք շինող          27.հալաճ - գգրար          28.դալայչի - անագագործ. դալայել-կլայելել          29.դալամքյար - փորագրող, նկարագարող          30.դայթանճի - դայթան գործող          31.դասապ - մսագործ          32.դարաղույունճի- հասարակ մետաղով (վարջաղ) զարդեր շինող          33.դոնդաղճի - հրացանի կոթ շինող          34.դույունճի - ոսկերիչ          35.մագման - այծի մագից պարան, ջվալ գործող          36.մառանջի - սայլ, փայտյա անիվներ շինող վարպետ          37.մասճի - մաս կարող          38.մխչի - մեխագործ          39.յափուջի - որմնադիր          40.նալբանդ - պայտար          41.նախշքյար - նկարիչ, ներկարար          42.չարխըճի - չարուխ կարող          43.չթչի - կտավ նախշող, դաջող          44.չիլինկար - փականագործ          45.պալթաճի - փայտահատ          46.պարտոն - եվրոպական զգեստ կարող          47.ջավահիրճի - ակնագործ          48.ջուֆլակ - ջուլիակ          49.սագանդար - սագ նվագող          50.սահաթճի - ժամագործ          51.սապոկչի - կոշկակար</p>	<p>7.դահեկ - մանկաբարձ          8.դավաճի-ուղտապան          9.դիլբանդ - թարգման          10.դոխտուր - բժիշկ          11.էշակճի - էշերով բեռ կրող          12.ինճիներ - ճարտարապետ          13.իրդատ - մշակ, բանվոր          14.լաքեյ - սեղանի սպասավոր          15.խազնատար - գանձապահ          16.խանճի - իջևանատեր          17.խզմաթքար - ծառա, սպասավոր          18.կազնաչեյ - գանձապետ          19.կաչկաճի - կաչկա՝ միաձի սայլի տեր          20.համամչի - բաղնիսպան          21.համալ - բեռնակի, մշակ          22.հեքիմ - բժիշկ          23.մկիտան - օղեվաճառ          24.յազըճի - գրագիր          25.նոքար - ծառա, սպասավոր          26.դայֆաճի - սրճարանատեր          27.նաթըր - բաղնիքում կանանց լողացնող          28.պաժառնի - հրշեջ          29.ջառահ - հեքիմ, տանու բժիշկ          30.սառաֆ - դրամափոխ, սեղանավոր          31.սնըխչի - ջարդվածը կապող, դուրս ընկածը տեղը դնող          32.փահլևան - լարախաղաց          33.փասպանդ - գիշերապահ, պահակ          34.քիսաճի - բաղնիքում լողացնող          35.քյուլհանճի - բաղնիքի կրակարանի սպասավոր          36.օդաբաշի - իջևանի հսկիչ          37.ֆալչի - գուշակ, հմայող          38.ֆերշիլ - բուժակ</p> <p><b>առևտրով զբաղվողների անուններ</b></p> <p>1.ալաֆտար - խոտ և դարման վաճառող նաև հունդավաճառ          2.բագազ-թուջար - ճոթ ու կտոր ծախող          3.բազրրկան - առևտրական          4.բախալ - նպարավաճառ          5.բարխանաճի - մեծաքանակ ուտելիքների առևտրական          6.թալալ - միջնորդ, չարչի, փերեզակ, շրջիկ առևտրական          7.թուջար - ճոթավաճառ, բագազ          8.չարվադար - անասնավաճառ, ջամբազ          9.չարչի - մանրավաճառ          10.ջամբազ - անասնավաճառ          11.փամբուղչի - բամբակ վաճառող          12.կուպեց - առևտրական</p>
--	---



<p>52. սառաջ - թամբագործ, 2. թավիշ նկարագարողո՞ղ – քարգահ էնող</p> <p>53. սվաղճի - ծեփող</p> <p>54. տկզար – տկով նվագող</p> <p>55. փալանճի - ավանակի փայտե համետ շինող</p> <p>56. փահլևան - լարախաղաց</p> <p>57. փաչաճի - խաշ եփող</p> <p>58. փափախչի – մորթե գդակ կարող</p> <p>59. փինաչի, - հնակարկատ</p> <p>60. ֆայտոնչի - կառապան</p> <p>61. ֆոնճի - հացթուխ</p>	<p>13. խագեյին - գործատեր, խանութպան</p> <p>14. պրիկազչիկ – գործակատար</p> <p><b>Արհեստ և արհեստավորական աստիճանակարգ ցույց տվող բառեր</b></p> <p>1. զանիաթ-զանիաթքար - արհեստ-արհեստավոր</p> <p>2. իգիթբաշի - արհեստավորների ավագի օգնականը</p> <p>3. իրդատբաշի - բանվորների հսկիչը</p> <p>4. համքար - ասնաֆ, համարվեստ</p> <p>5. համքարություն - համարվեստների միություն</p> <p>6. ուստա - վարպետ</p> <p>7. ուստարաշի - համքարի ավագ</p> <p>8. փաստրանդ-բաշի – պահակների հսկիչ</p> <p>9. փեշակ - արհեստ</p> <p>10. փեշաքար - արհեստավոր</p>
--	---

Աղյուսակում ներկայացված զբաղմունք-մասնագիտությունների անունների համեմատությունը վերը հիշատակված մինչ օրս հայտնի ցուցակի հետ ցույց տվեց, որ Նիկողոսյանի մոտ թեև բացակայում են բավականին թվով արհեստներ ու զբաղմունքներ, սակայն ներկայացված են նաև այնպիսիք, որոնք չկան այդ ցուցակում: Դրանք հիմնականում սպասարկման ու առևտրի ոլորտի թվով մոտ 40 զբաղմունքներն են: Ըստ այդմ՝ այս բառարանը կարելի է համարել կարևոր սկզբնաղբյուր՝ ավելացնելու Ալեքսանդրապոլում տարածված մասնագիտությունների ցանկը:

Ազգաբանական-մշակութաբանական առումով հատկապես արժեքավոր են այն բառերը, որոնք իմաստային փոփոխություն են կրել և կորցրել են իրենց հիմնական նշանակությունը, ուստի միայն բառի բացատրության միջոցով է հնարավոր վերականգնել դրա նախկին բովանդակությունը: Այս տեսակետից շատ հետաքրքիր է ռուսերեն *պաժարնի*-հրշեջ բառը, որն «օգտագործվում է գող, խարդախ և ընդհանրապես փչացած մարդ մտքով: Հրշեջների աստրին պաշտոնյաները հրդեհի ժամանակ օգտվելով խառնակությունից, գողանում էին իրեղեններ: Գողացածը տալիս էին իրանց գող ընկերներին, որոնք ջուր էին կրում և սրանք, ջուր բերելու պատրվակով բացակայելով, թաքցնում էին գողոնը: Այստեղից՝ ճարպիկ գողը, խարդախը և գրպանահատը ստացան պաժարնի անունը»: Մեկ այլ օրինակ է *փինաչի* բառի բացատրությունը, որի առաջին իմաստն է կոշիկներ կարկատող, հնակարկատ, բայց, փոխաբերական առումով, կիրառվում է նաև «անհմուտ մասնագետ, արհեստին լավ չտիրապետող» իմաստով:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Այսպիսով, բարբառային բառարանների նյութերի վերլուծությունը թույլ է տալիս հետևյալ եզրահանգումներն անել.

. Բարբառային բառարաններից դուրս բերված առանձին մասնագիտությունների ու զբաղմունքների անունները նշող բառերը ներկայացնում են Շիրակի արտադրական մշակույթի մի մեծ շերտ՝ դառնալով Ալեքսանդրապոլ-Լենինականի ավանդական

տնտեսությունն ուսումնասիրելու արժեքավոր մշակութային, պատմական, ազգագրական սկզբնաղբյուր:

. Բառարանի՝ էթնիկ մշակույթի մյուս ոլորտներին (հագուստ, ուտեստ, կահկարասի, տոներ, հավատալիքներ և այլն) վերաբերող բառամթերքի էթնոլեզվաբանական վերլուծությունը կարող է հիմք դառնալ Շիրակի բնակչության ավանդական մշակույթը և շիրակցիների աշխարհընկալման յուրահատկությունը հասկանալու, ինչպես նաև էթնիկ մշակույթի առանձին ոլորտների ուսումնասիրության համար անհրաժեշտ լեզվական տվյալների բանկի ստեղծման համար:

. Հետազոտությունը ևս մեկ անգամ ընդգծեց լեզվաբանական նյութի՝ որպես սկզբնաղբյուրի նշանակությունը ազգաբանական ուսումնասիրությունների համար:

## Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

### Բառարաններ

1. **Աճառյան Հր.** *Թուրքերենէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջեւանի բարբառներուն*, Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:
2. **Մխիթարեանց Աղ.** *Փշրանք Շիրակի ամբարներից* / Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մօսկուա, 1901:
3. **Նիկողոսյան Ն.** *Բառարան. Լենինականում և շրջանում գործածվող ժողովրդական բառեր* / Լենինական, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, FF II:

### Աշխատություններ

4. **Աղանյան Գ.**, *Համարությունների տեղը հայոց սոցիոլոգիայի մշակույթում (Արևսանդրասյուրի օրինակով)* // ԾՊՄԺ հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, 138-142 էջեր:
5. **Ավետիսյան Լ.** *Արհեստ-արհեստավորանիշ անվանումների հայերենում*, ԵՀ հրատ., Եր. 2015, 134 էջ:
6. **Բազեյան Կ., Աղանյան Գ.**, *Արևսանդրասյուր. Ազգագրական էքզիզներ (պատմագրագրական ուսումնասիրություն)* / Շիրակի պատմագրագրական և հնագիտական ուսումնասիրություններ, հ. 2, Երևան-Գյումրի, 2014, 7-117 էջեր:
7. **Բազեյան Կ.** Հ. *Աճառյանի բառարանները որպես հայկական արհեստների ուսումնասիրության սկզբնաղբյուր* // Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի 2011, 72-81 էջեր:
8. **Մեղրոսյան Կ.** *Արհեստավորական ավանդույթները լենինականցիների կենցաղում* // Հայ ազգագրություն և բանահյուսության, պրակ 6, Եր. 1974, 159-251 էջեր:
9. **Лиханова Н.** *Диалектные словари как этнолингвистический источник*, // Вестник Бурятского государственного университета, 2008/10, 85-89сс. <https://cyberleninka.ru/article/n/dialektnye-slovarikak-etnolingvisticheskiy-istochnik/viewer> (վերջին դիտումը՝ 18.03.2023)
10. **Рывкина Г.** *«Словарь карельского языка» как источник по изучению традиционной культуры передвижения карелов-ливвиков* // Ученые записки Петрозаводского государственного университета. 2020. Т. 42. № 2. 112–120 с. [https://uchzap.petrso.ru/files/redaktor\\_pdf/1582794824.pdf](https://uchzap.petrso.ru/files/redaktor_pdf/1582794824.pdf) (վերջին դիտումը՝ 18.03.2023)
11. **Старикова Г.** *Наименования лиц по промыслу и их представление в исторической терминологии*, Вопросы лексикографии. – 2015. – № 1 (7). с. 52-70сс. <https://vital.lib.tsu.ru/vital/access/services/Download/vtls:000511944/SOURCE1?view=true> (վերջին դիտումը՝ 18.03.2023)

References

1. **Acharyan Hr.** Words Borrowed from the Turkish Language in the Armenian Vernacular of Constantinople in comparison with the Van, Karabakh and New Nakhichevan Dialects [*T'urk'erene p'vokharreal barrery Polsi hay zhoghovrdakan lezuin mej hamematut'eamb Vani, Gharabaghi yev Nor-Nakhijevani barbarrnerun*] The Lazarev Institute of Oriental Languages, Moscow-Vagharshapat, 1902. (In Armenian)
2. **Mkhitarian Agh.** Crumbs from the Barns of Shirak [*P'shrank' Shiraki ambarnerits'*] / Eminian 6Ethnographic Collection, vol. A, Moscow, 1901. (In Armenian)
3. **Nikoghosyan N.** Dictionary: Folk words Used in Leninakan and in the Region/ Leninakan, [*Barraran. Leninakanum yev shrjanum gortsatsvogh zhoghovrdakan barrer / Leninakan,*] Archive of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, FF II. (In Armenian)
4. **Aghanyan G.** The Place of Craft Unions in the Armenian Social-normative Culture (using the example of Alexandropol) [*Hank'arut'yunneri teghy hayots' sots'ionormativ mshakuyt'um (Alek'sandrapoli orinakov)*], Materials of the seventh republican scientific session on the historical and cultural heritage of Shirak, Gyumri, 2007, 138-142 pp. (In Armenian)
5. **Avetisyan L.** Craft Names in the Armenian Language [*Arhest-arhestavoranish anvanumneri hayerenum*], YSU Publishing house, Yerevan 2015, 134 p. (In Armenian)
6. **Bazeyan K., Aghanyan G.** Alexandropol: Ethnographic Sketches (hystorio-ethnographic study) [*Alek'sandrapol. Azgagrakan esk'izner (patmazgagrakan usumnasirutyun)*],//Archaeological and Ethnographical studies in Shirak, 2, Yerevan-Gyumri, 2014, 110 p. (In Armenian)
7. **Bazeyan K. H.** Acharyan's Dictionaries as a Source of the Study of Armenian Crafts/ [*Acharyani barrarannery vorpes haykakan arhestneri usumnasirut'yan skzbnaghbyur*] Materials of the republican conference dedicated to H. Acharyan's 135th anniversary, Gyumri, 2011, 72-81 pp.. (In Armenian)
8. **Seghbosyan K.** Craft Traditions in the Life of the People of Leninakan [*Arhestavorakan avanduyt' nery leninakants' ineri kents' aghum*] / Armenian Ethnography and Folklore, vol. 6, Yerevan 1974, 159-251 pp. (In Armenian)
9. **Likhanova N.** Dialect Dictionaries as an Ethnolinguistic Source [ *Dialektnyye slovari kak etnolingvisticheskiy istochnik*], // Periodical "Vestnik of the Buryat State University", 2008/10, 85-89 pp.. (In Russian)
10. **Ryvkina G.** "Dictionary of the Karelian Language" as a Source for the Study of the Traditional Culture of Karelian-Livvik Movement [*«Slovar' karel'skogo yazyka» kak istochnik po izucheniyu traditsionnoy kul'tury peredvizheniya karelov-livvikov*] Scientific notes of Petrozavodsk State University. 2020 vol. 42. № 2. 112–120 pp.. (In Russian)
11. **Starikova G.** Names of people by trade and their representation in historical terminography [*Naimenovaniya lits po promyslu i ikh predstavleniye v istoricheskoy terminografii*], Issues of Lexicography. – 2015. – № 1 (7). 52-70 pp. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **21. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **09. 04. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Վարինե Ռազմիկի ԲԱԶԵՅԱՆ՝** պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,

էլ. հասցե՝ bazeyan60@yandex.ru orcid org//0000-0002-5202-4835

**Karine Razmik BAZEYAN:** PhD in Philology,

Senior Researcher at Shirak Center for AS NAS, Gyumri, RA,

e-mail:bazeyan60@yandex.ru orcid org//0000-0002-5202-4835

**Карине Размиковна БАЗЕЯН:** кандидат филол. наук, доцент, ст. научный

сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА

эл. адрес:bazeyan60@yandex.ru orcid org//0000-0002-5202-4835

ՀՏԴ՝ 394.314

DOI: 10.52971/18294316-2024.27.1-196

## ЯЗЫКОВАЯ ПОЛИТИКА В ПЕРИОД СОВЕТСКОГО СОЮЗА И ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

*Լուսինե Մ. Անգելուի*

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

### Аннотация

**Введение:** В годы Советской власти языковая политика разрабатывалась и осуществлялась КПСС. Ее реализация была важна для всех союзных республик. Языковый вопрос считался одним из центральных компонентов национальной политики. Любое изменение государственной или партийной позиции в отношениях с народами СССР трансформировало характер восприятия языкового вопроса. Цель статьи – представить основные направления языковой политики СССР, возможности ее распространения и реализации в Армении, проблемы, возникавшие в результате этой политики в связи с использованием армянского языка. **Методы и материалы:** Для исследования темы был проведен анализ официальных документов. В частности, был проведен анализ переписи населения 1939, 1959, 1970, 1979, 1989 годов, Конституций СССР и Армянской ССР, законов “Об обязательном преподавании русского языка”, “О языках народов СССР” и других подобных документов. **Анализ:** В статье представлена языковая политика советского периода, обеспечение условий для распространения русского языка, как языка межэтнического общения. Представлена функциональная нагрузка армянского и русского языков, роль каждого из языков в разных сферах общественной деятельности: образовании, семье, работе, сфере юстиции. В статье также рассматривается дискурс, связанный с изменением статуса армянского языка в советские годы, в контексте изменения идентичности. **Результаты:** Результаты анализа материалов показывают, что хотя официально в СССР существовал принцип равенства применения языков, на практике были созданы условия для повышения роли русского языка. Он стал важным фактором возможности восходящей социальной мобильности, особенно среди интеллигенции. Однако как анализ официальной статистики, так и этносоциологические исследования языкового поведения армян СССР показывают сохранение высокой роли армянского языка в обществе, как важный компонент сохранения идентичности. Это отразилось и в Конституции, укрепив государственный статус армянского языка.

**Ключевые слова:** СССР, языковая политика, армянский язык, двуязычие, идентичность, русские школы, государственный язык, официальный язык.

**Как цитировать:** Ангелуш Л. Языковая политика в период Советского Союза и проблемы применения армянского языка. // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 1(27). 196-206 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-196

## LANGUAGE POLICY DURING THE SOVIET UNION AND PROBLEMS OF USING THE ARMENIAN LANGUAGE

*Lusine M. Angelush*

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** During the years of the Soviet power, language policy was developed and implemented by the CPSU. Its implementation was important for all union republics. The language issue was considered one of the central components of national policy. Any change in the state or party position in relations with the peoples of the USSR transformed the nature of perception of the language issue. The purpose of the article is to present the main directions of the language policy of the USSR, the possibilities of its dissemination and implementation in Armenia, the problems arising as a result of this policy in connection with the use of the Armenian language.

**Methods and materials:** Within the research frame, an analysis of official documents was carried out. In particular, an analysis was carried out of the population census of 1939, 1959, 1970, 1979, 1989, the Constitutions of the USSR and the Armenian SSR, the laws “On compulsory teaching of the Russian language”, “On the languages of the peoples of the USSR” and other similar documents. **Analysis:** The article presents the language policy of the Soviet period, providing conditions for the spread of the Russian language as a language of interethnic communication. There are presented the functional load of the Armenian and Russian languages, the role of each language in different spheres of social activity: education, family, work, justice. The article also examines the discourse associated with the change in the status of the Armenian language during the Soviet years, in the context of a change in identity. **Results:** The results of the analysis of materials show that although officially in the USSR there was a principle of equal use of languages, in practice conditions were created for increasing the role of the Russian language. It became an important factor in the possibility of upward social mobility, especially among the intelligentsia. However, both the analysis of official statistics and ethnosociological studies of the linguistic behavior of Armenians in the USSR show the preservation of the high role of the Armenian language in society, as an important component of preserving identity. This was reflected in the Constitution, strengthening the state status of the Armenian language.

**Key words:** USSR, language policy, Armenian language, bilingualism, identity, Russian schools, state language, official language.

**Citation:** Angelush L. *Language Policy during the Soviet Union and Problems of Using the Armenian Language.* // “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 1(27). 196-206 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-196

**ВВЕДЕНИЕ:** Языковая политика, являясь частью общей политики государства, имеет большое значение во всех сферах организации общественной жизни.

За 70-летнюю историю Советского Союза тенденции языковой политики претерпевали изменения, в зависимости от политических требований и ожиданий. Учитывая влияние Москвы, как центра СССР, языковая политика этого периода была в высокой степени ориентирована на реализацию программы русификации.

В научной литературе известен ряд статей и монографий, всесторонне освещающих общую языковую политику СССР, а также языковые проблемы бывших союзных республик. Например, относительно языкового поведения населения Еревана в советский период исследования А. Галстяна представлены в книге «Статьи, воспоминания, интервью», в архиве отдела Этносоциологии ИАЭ хранятся данные анкетных опросов, проведенных среди населения Еревана в 1972 году. Особенности и закономерности языковой политики Советского Союза, регулирование функций языков в многоязычном обществе представлены в книге «150 языков и политика. 1917-2000» В. Алпатова и многих других статьях автора. Данная статья даст возможность сконцентрироваться на вопросах, касающихся использования армянского языка, сформулировать более четкое представление об изучаемом периоде в Армении.

Цель статьи – представить проблемы применения армянского языка в контексте языковой политики Советского Союза. С этой точки зрения было поставлено выявление следующих проблем:

- языковая политика Советского Союза, как часть общей политики государства,
- механизмы и общие тенденции регулирования языковой политики,
- возможности использования армянского языка и роль русского языка в Армянской ССР,
- практические отношения советских армян к советской языковой политике.

В рамках статьи важно всестороннее изучение советской языковой политики и возможностей ее реализации. По этой причине было важно обращение как к законам, регулирующим языковые отношения, конституционным положениям, так и к статистическим данным (перепись населения, этносоциологические исследования). Комбинация этих материалов позволяет представить реальную картину языковой политики Советского Союза в Армении.

Хотя с момента развала СССР прошло более трех десятилетий, проблема соотношения армянского и русского языков не перестает быть актуальной. Даже спустя время по разным поводам обсуждаются статус русского языка в Армении, роль изучения иностранных языков в сфере образования и связанный с вышеперечисленными проблемами вопрос сохранения национального самосознания. Всестороннее исследование урегулирования языковых проблем Армении в условиях языковой политики Советского Союза даст возможность для более эффективной разработки современной языковой политики.

#### **Советская языковая политика. Истинное или ложное равенство языков?**

Советский Союз был полиэтничным государством, в котором в 1960-х годах число нерусского населения составляло 45%. 14 народов (35% населения страны) имели свои союзные государства, в 12-и из которых титульный этнос составлял большинство [17, с. 51].

Советское культурное строение предполагало принятие и использование единого культурного языка, культурной *lingua franca*-и. Таковым стал русский язык [1, с. 17].

Любая языковая политика объективно связана с двумя человеческими потребностями, которые можно назвать потребностью идентичности и потребностью взаимопонимания. Потребность идентичности заключается в том, что и для общества, и для отдельного индивида комфортнее пользоваться одним языком, преимущественно родным, освоенным в детстве, так как не нужно прилагать усилий при усвоении второго и третьего языков. Чаше всего это также и язык своего этноса, своей культуры.

Потребность взаимопонимания заключается в том, что в ситуации языкового общения каждый из ее участников желает для успеха коммуникации без помех общаться с собеседниками. Понятность языка – необходимое условие такого успеха. В случае разных материнских языков собеседников, по крайней мере, один из собеседников должен быть двуязычен (или в случае наличия переводчика добавляется третий (двуязычный) участник) [13, сс. 115-116]. В полиэтническом государстве, каковым был Советский Союз, предпринимались шаги для обеспечения знания языка, понятного всем, то есть – языка межнационального общения.

Хотя ленинская агитация заявляла о равноправии всех наций в культурном пространстве, на самом деле во всех государствах русский язык был вторым, а иногда и первым по употреблению языком [1, с. 17].

Основой языковой политики СССР был Закон “О языках народов СССР”. В соответствии с этим законом были приняты законы Верховных Советов федеральных и автономных государств, на основе которых были разработаны программы развития языков для 148 языков народов СССР [11, с. 73].

Конституция СССР 1924 года де-юре определяла список официальных языков, языков государственного управления и администрации. 34-я статья определяла русский, белорусский, армянский, грузинский и тюрко-татарский языки общеупотребляемыми, следовательно, издание всех правовых актов общесоюзного значения на этих языках стало обязательным [22].

В Советский период армянский имел статус государственного языка. Этот факт был закреплен в Конституциях республики 1922, 1936, 1978 годов, но языковые проблемы не регулировались отдельным законом. Армения не имела собственную языковую политику, но и не была совершенно лишена этой возможности [3, с. 51].

В Советские годы в армянской образовательной системе широко распространился русский язык. Так, в 1925 году в Армении действовало 2 русские школы и 3 детских сада [9], а в 1932-1933 годах число русских школ достигло 18 (3005 учеников) [6].

Если в первые годы формирования Советского Союза была принята идея о том, что русский язык не должен принудительно распространяться на территории СССР, и “гражданином мира можно стать и без знания русского языка”, ознакомляясь с достижениями культуры на родном языке, то во второй половине 1930-х годов языковая политика СССР резко изменилась. Ставилась задача сделать русский язык «вторым родным языком» (или первым) для всех в стране. Этот процесс практически всем русским населением и значительной частью граждан других национальностей воспринимался как естественный: незнание русского языка ограничивало социальную мобильность и возможности получить полноценное образование [13, с. 120].

Эта политика главным образом коснулась системы образования, вследствие чего в 1930-1940-х годах в Ереване были открыты школы, названные в честь русских общественно-политических, культурных деятелей: школы имени Н. Крупской (1921г., сейчас школа им. Н. Агбаляна), С. Кирова (1934, сейчас школа им. В.Амбардзюмяна) А.Пушкина (1937г.), В. Маяковского (1937г.), В. Чкалова (1939г., сейчас школа им. А.Маргаряна), Ф. Держжинского (1943г., сейчас им. Дж. Киракосяна), А. Чехова (1947г.), В. Белинского (1948).

С 1938 года советская политика стала политикой всеобщего знания русского языка [10]. Был принят “Закон об обязательном преподавании русского языка”, которым предусматривалось преподавание русского языка в школах всех республик Союза, начиная с начальных классов. Требование было обосновано следующим: язык станет средством общения между народами в многонациональном государстве, что способствовало бы дальнейше-

му экономическому и культурному развитию, совершенствованию научно-технических кадров, успешной армейской службе [25].

По этому поводу газета “Правда” писала: “Обязательное обучение русскому языку в нерусских школах означает, что он становится международным языком социалистической культуры, как латынь была международным языком верхов раннего средневекового общества, как французский язык был международным языком XVIII и XIX веков” [26].

В том же году в ЕГУ был открыт отдел русского языка и литературы, на основе которого в 1976 году сформировался факультет русского языка и литературы (нынешний факультет русской филологии) [7].

Рассмотренные нами Конституция СССР 1936 года и Конституция Армянской ССР 1978 года регулировали языковые отношения в образовании и юридической сфере. Так, например, согласно 121-й статье Конституции СССР 1936 года, все граждане имели право получать образование на родном языке [4].

В 43-й статье главы “Основные права, свободы и обязанности граждан Республики Армения” Конституции 1978 года отмечено: “Граждане Республики Армения имеют право на образование... в школе с возможностью обучения на родном языке” [5].

Языковые отношения в судебной системе регулировались Конституцией 1936 года в следующей формулировке: “Судебное разбирательство ведется на языке Союза, автономной республики или автономных областей через переводчика для лиц, не владеющих этим языком, для обеспечения полного ознакомления с материалами судебного разбирательства, а также права выступления в суде на родном языке” [4]. Из этого следует формулировка статьи 157 Конституции РА 1978 года, согласно которой: “Судебное разбирательство ведется на армянском языке или на языке большинства населения данного места” [5].

Таким образом, в официальных документах, регулирующих языковые отношения, не только нет ограничений и запретов на использование национальных языков, но и четко определено право использования родного языка в сфере образования и юстиции.

#### **Подъем и распространение статуса русского языка в Советском Союзе. Реалии Армении.**

Рассмотрим, какой подход существовал на практике к вопросу распространения и статуса русского языка.

В 1940-1950-е годы, несмотря на развитие массовой информации на национальных языках (журналы, радио, телевидение), русский язык был доминирующим. Этому способствовала унификация письменности народов СССР, переход знаково-символической системы национальных языков на основу кириллицы.

В результате фактическая доминантная роль русского языка была закреплена в очередной программе КПСС. Русский язык, как первый язык среди равноправных языков СССР, получил идеологическое обоснование в виде формулы “язык международного общения”. Овладение русским языком должно способствовать “обмену опытом, знакомству с другими народами СССР и мировой культурой” [16, с.160].

Хотя статус русского языка официально не обсуждался, анализируя выступления политиков, можно четко очертить путь языкового планирования СССР.

В 1979 году в рамках международной конференции “Русский язык — язык дружбы и сотрудничества народов СССР” Л. Брежнев отметил, что “в условиях развитого социализма возникла новая историческая общность — советский народ, объективно возрастает роль русского языка, как языка межнационального общения и воспитания нового человека в строительстве коммунизма” [16, с. 161]. Во время конференции Л. Брежнев также заявил,



что мечта Ленина о том, чтобы “каждый гражданин имел возможность выучить великий русский язык”, успешно осуществляется, подчеркивая тем самым особый статус русского языка в Советском Союзе.

Первый секретарь Коммунистической партии Узбекистана Ш. Рашидов, в свою очередь, охарактеризовал русский язык как “язык построения нового общества, о котором веками мечтали лучшие мыслители человечества”. По словам Ш. Рашидова: “Он (русский язык) является языком современной науки, техники, культуры... он передал свет знаний, передовые идеи, социалистическую культуру представителям разных народов” [23, с.6].

Хотя основы национально-лингвистической политики СССР до 1980-х гг. не менялись, а языки меньшинств имели государственную поддержку, ведущим процессом было распространение русского языка в республиках СССР. Число русских школ увеличивалось за счет преподавания на других языках. Этот процесс происходил быстрее во время руководства Н. Хрущева. Однако формально русский язык не назывался государственным [12, с.18].

Чтобы понять роль армянского языка в среде армян, обратимся к данным переписи населения. Так, по данным переписи 1939 года, 89,2% армян СССР считали своим родным языком армянский [18, с.80], в 1959 году - 89,9% [19]. В 1970 г. - 91,4% [20], а уже в 1989 г. эта цифра составляла 91,7% [23]. Иными словами, можно констатировать, что среди армян число тех, кто считает армянский язык своим родным, практически не изменилось и составляет абсолютное большинство.

Но проблема обстоит иначе в случае условий предпочтения того или иного языка общения в различных сферах общественной жизни.

Наряду с сохранением большого функционального значения армянского языка в общественной жизни Советской Армении, наблюдался рост использования русского языка во всех сферах, что объясняется сближением экономической и культурной жизни советских республик и в основном проявляется в сфере производства [2, с.26].

О росте использования русского языка свидетельствовал и тот факт, что в 1980-е годы в Армении действовало более 100 русскоязычных школ [15, с.167]. В 1989-1990 годах из 578 тысяч учащихся, обучавшихся в Армении, 91 870 (15,9%) получали образование в русских школах [15, с.168]. Для сравнения отметим, что в соседних странах – Грузии и Азербайджане – количество студентов, получающих русское образование, составляло 24,3% и 18,9% соответственно [15, с.176].

Анализируя данные, можно отметить что, несмотря на осуществляемую политику, русские школы в Армении пользовались меньшим спросом по сравнению с другими советскими республиками. Но даже при этом наблюдается заметный рост числа учащихся русских школ по сравнению с началом 1930-х годов.

Для большинства армянского населения республики (50,8%) ведущую роль в освоении русского языка играла общеобразовательная школа. [2, с.102].

#### **Какие группы в Армении были носителями и пользователями русского языка?**

Важно обратиться к вопросу о том, кто получал русское образование. Результаты этносоциологического исследования, проведенного в 1972 г., показывают, что социальная принадлежность родителей играла большую роль в выборе языка школьного образования. Если в армянских школах учились 89,6% ереванцев, занимающихся физическим трудом, в русских школах - 10,4%, то среди работающих в интеллектуальной сфере эти цифры практически равны: 50,1% и 49,9% [2, с. 11].

Ю. Арутюнян отмечает, что знание русского языка обеспечивало социальную мобильность [17, с. 150]. Этносоциологическое исследование, проведенное в Ереване, показы-

вает высокую функциональную нагрузку русского языка, особенно среди интеллигенции. Русский язык чаще использовали в работе руководители и высокопоставленные специалисты, работавшие в учреждениях союзного значения, научно-исследовательских учреждениях и министерствах [2, сс. 21-22].

По результатам опроса, 20,1% респондентов говорили на работе по-русски, 79,6% - по-армянски. В этих данных также важно различать характер работы респондентов. Самый низкий показатель использования армянского языка замечен среди руководителей и специалистов высшего звена - 67,4%, тогда как среди высококвалифицированных рабочих этот показатель составляет 93,1%, а среди неквалифицированных рабочих - 97,9% [2, с.20].

Это обстоятельство А. Галстян объясняет тем, что эти работники в основном инженерно-технические специалисты, и в университете получали информацию на русском языке, поскольку армянская профессиональная литература не была на должном уровне. Кроме того, в подобных учреждениях оформление документов велось на русском языке, как языке международного общения. Это обстоятельство оказало свое влияние на языковое поведение населения. Русский язык также использовался во время встреч Союзного уровня [2, сс. 21-22].

Иными словами, созданные на практике условия способствовали широкому распространению русского языка среди населения, занимающегося интеллектуальным трудом. Но, несмотря на это, результаты исследования также показывают, что русский язык в Армении так и не стал повседневным разговорным языком для широких кругов общества. Разница между языками, используемыми дома и на работе, явно заметна. Так, около 87,8% населения говорило дома на армянском, 11,2% - на русском (1% - на других языках) [2, с.20].

По этому вопросу лингвист, тюрколог А.Н. Баскаков отметил: "Использование национальных языков в производственной, финансовой сферах и делопроизводстве нецелесообразно, поскольку приведет к большому объему дублирования информации и усложнит функционирование соответствующих сфер общественной деятельности. В некоторых автономных республиках в 1930-е годы использование ряда языков не оправдало себя, и от него пришлось отказаться. Внутри страны практически всегда можно было обходиться без переводчиков (по крайней мере, в официальной сфере), что, конечно, облегчало общение" [14, с. 107].

Однако распространение русского языка в культурно-просветительских учреждениях, творческих союзах, научно-исследовательских институтах обществоведческого профиля существенно уступало армянскому языку, за исключением молодых отраслей искусства, не имевших устоявшихся традиций и специалистов (кино, телевидение) [2, с.23].

Помимо всего этого, В. Алпатов отмечает, что Армения, как самая моноэтническая страна, отличалась довольно низким уровнем владения русским языком [14, с.109].

Конституция Армении, принятая в 1978 году, регулировала также языковую политику Армянской ССР, взаимоотношения армянского языка с другими языками. В частности, согласно статье 72: "Государственным языком Республики Армения является армянский язык. Республика Армения заботится о всестороннем развитии армянского языка и обеспечивает его деятельность в государственных и общественных органах, культуре, просвещении и других учреждениях". В той же статье говорится: "В Республике Армения в этих органах и учреждениях обеспечивается свободное пользование русским языком и другими языками, используемыми населением. Никаких привилегий или ограничений на использование того или иного языка не допускается" [5].

Примечательно, что, несмотря на языковую политику СССР, направленную на повышение роли русского языка, статус армянского языка как государственного был закреп-

лен Конституцией. На территории СССР все языки имели юридическое равноправие, однако представленные выше исследования показывают, что русский язык явно имел высокую функциональную нагрузку, что вызывало беспокойство у армянской интеллигенции и руководства Армянской ССР. В результате восстания армянской интеллигенции в 1978 году русский язык не был включен в качестве государственного в Конституции Армянской ССР [8].

Социолингвистический исследователь В. Алпатов говорит об иерархии языков в советский период. Таким образом, по его словам, армянский и белорусский в равной степени были языками союзных республик, но реальная роль армянского языка была выше, хотя количество носителей было меньше. На вершине иерархии находился русский язык, хотя его правовой статус не был определен. Далее шли региональные языки, титульные языки союзных республик, кроме украинского и белорусского языков. Языки автономных республик имели более низкий формальный статус. Эти языки активно использовались в местной прессе, художественной литературе, в местной администрации, но не имели статуса за пределами их территории [14, с.112-113].

В годы “Перестройки” одной из целей национальных движений было исключение русского языка и замена некоторых его функций другими языками.

24 апреля 1990 года был принят Закон СССР “О языках народов СССР”, которым советские власти объявили русский язык официальным языком Советского Союза, в следующей формулировке: “С учетом исторически сложившихся условий и в целях обеспечения общесоюзных задач русский язык признается на территории СССР официальным языком СССР и используется как средство межнационального общения.

При определении правового статуса языков не допускается ущемление права граждан СССР использовать в различных сферах государственной и общественной жизни свой родной язык и другие языки народов СССР” [21].

Тем не менее, руководство страны не придало русскому языку статуса государственного, что могло быть воспринято советскими государствами как попытка подорвать их суверенитет [16, с.163].

После распада СССР в 1991 году на его территории появилось 15 международно признанных республик, в которых языковые процессы развивались в разных направлениях. В 13 из них (кроме России и Беларуси) активно развивалась роль титульных языков [12, с. 19].

**ВЫВОДЫ:** Таким образом, начиная с 1930-х годов языковая политика СССР отличалась активными действиями, направленными на распространение русского языка, как языка международного общения.

В этом контексте особенно заметны изменения в сфере образования. В частности, принятый в 1938 году закон об обязательном преподавании русского языка, увеличении количества русских школ в союзных республиках, в том числе и в Армянской ССР. В результате в 1989-1990 годах число армян, обучающихся в русских школах, увеличилось примерно в 30 раз, что способствовало увеличению функциональной нагрузки русского языка в обществе. Эта тенденция была особенно заметна среди интеллигенции, высококвалифицированных специалистов и руководителей.

Однако русский язык так и не получил распространения среди широких кругов армянского населения. По данным статистического и этносоциологического исследования, языком общения в семейной среде продолжал оставаться армянский, который считали родным 91,7% армян, проживающих на территории СССР (1989).

Наряду со всем этим важно отметить укрепление статуса армянского языка, как в документах союзного значения, так и в местных документах. Таким образом, в 1924 г. ар-

мянский язык был определен Конституцией как общеупотребляемый язык, а государственный статус армянского языка был упомянут в Конституции Армянской ССР, что в советский период было скорее исключением, чем закономерностью.

Подводя итог, можно сказать, что хотя распространение русского языка в армянской действительности было очевидным в результате проводимой в советский период политики, оно не имело широкого распространения, и было скорее специфично для официального, межэтнического общения.

### Բ Ի Բ Լ Ի Գ ր ֆ Ի Կ Ի Ե

1. **Անտոնյան Յու., Մուրադյան Հ.** «Խորհրդային մշակույթ» կոնցեպտի ու դիսկուրսի ձևավորման համատեքստի շուրջ // Խորհրդահայ մշակույթ. կոնցեպտը, ընկալումներն ու դրսևորումները: Եր.: ԵՀ: 2023: 8-41 էջեր:
2. **Գալստյան Հ.** Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ: Երևան: «Նոյյան տապան» հրատ.: 2002: 596 էջ:
3. **Գյուրջինյան Գ.** «Լեզվաքաղաքականություն» եզրույթի ընդհանուր բնութագիրը // Լեզվաքաղաքական տերմինաբանության հարցեր: Հանրապետական գիտաժողովի նյութեր: Երևան: 2020: 49-58 էջեր:
4. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը (Հիմնական օրենքը): Խորհրդային Հայաստան: 1936: N 135:
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (հիմնական օրենք) <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150837> (դիտվել է 01.02.2024):
6. Խորհրդային Հայաստանի մէջ փոքրամասնություններու համար դպրոցները՝ 1932-1933 թթ. <https://www.aniarc.am/2023/04/17/minority-schools-in-soviet-armenia-1932-1933-hayastani-kochnak/> (դիտվել է 15.02.2024):
7. Ռուս քանադիստության ֆակուլտետ <http://www.old.yasu.am/faculties/hy/Russian-Philology/section/about/amb/107> (դիտվել է 15.02.2024):
8. **Օհանյան Վ.** Պետական լեզու <https://www.lezu.am/?p=174> (դիտվել է 17.02.2024):
9. 1925-ին Խորհրդային Հայաստանում՝ 123 քրդական, թուրքական, ասորական, հունական և ռուսական դպրոցներ <https://www.aniarc.am/2021/09/12/1925-schools-minorities-123/> (դիտվել է 15.02.2024):
10. **Schiffman H.** Language Policy in the former Soviet Union. <https://ccat.sas.upenn.edu/~haroldfs/540/handouts/ussr/soviet2.html> (01.02.2024).
11. **Алексеева Е. Слепцов Ю.** Языковая политика в СССР и постсоветский период // Теории и проблемы политических исследований. 2018. Том 7. № 6А. 71-79 сс.
12. **Алпатов В.** Языковая политика в России и мире // Языковая политика и языковые конфликты в современном мире: Международная конференция (Москва, 16–19 сентября 2014). Доклады и сообщения. Институт языкознания РАН, НИ центр по национально-языковым отношениям. М. 2014. 12-24 сс.
13. **Алпатов В.** Языковая политика и родной язык // Социоллингвистика. 2020. № 3(3). 114-124 сс.
14. **Алпатов В.** 150 языков и политика. 1917-2000 гг. Москва. Крафт+ИВ РАН. 2000. 224 с.
15. **Арефьев А.** Русский язык на рубеже XX-XXI веков. Москва. Центр социального прогнозирования и маркетинга. 2012. 482 с.
16. **Арутюнова М.** Языковая политика и статус русского языка в СССР и государствах постсоветского протранства // Вестник Московского университета. Серия 25. 2012. № 1. 155-178 сс.
17. **Арутюнян Ю.** Дробижева Л. Этносоциология. Москва 1998. 271 с.
18. Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги /Под. Ред. Ю. Полякова. М.. Наука. 1992.256 с.
19. Итоги всесоюзной переписи населения 1959 [https://sovethnational.ru/netcat\\_files/64/86/Perepis\\_SSSR\\_1959\\_g..pdf](https://sovethnational.ru/netcat_files/64/86/Perepis_SSSR_1959_g..pdf) (дата обращения: 18.12.2023).

20. Итоги всесоюзной переписи населения 1970  
[https://sovetnational.ru/netcat\\_files/64/86/Perepis\\_SSSR\\_1970\\_g..pdf](https://sovetnational.ru/netcat_files/64/86/Perepis_SSSR_1970_g..pdf) (дата обращения: 18.12.2023).
21. Закон СССР от 24.04.1990 “О языках народов СССР”  
[http://www.zaki.ru/pagesnew.php?id=1729#google\\_vignette](http://www.zaki.ru/pagesnew.php?id=1729#google_vignette) (дата обращения: 10.10.2023).
22. Конституция (основной закон) Союза Советских Социалистических Республик  
<https://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1924.htm#2> (дата обращения: 12.09.2023).
23. Национальный состав населения СССР по данным всесоюзной переписи населения 1989 г.  
[https://sovetnational.ru/netcat\\_files/64/86/Perepis\\_SSSR\\_1989\\_g..pdf](https://sovetnational.ru/netcat_files/64/86/Perepis_SSSR_1989_g..pdf) (дата обращения: 18.12.2023).
24. **Орешкина М.** Русский язык - язык дружбы и сотрудничества народов СССР // Русская речь. 1979. № 5..5-9 сс.
25. Постановление ЦК ВКП(б) и СНК СССР «Об обязательном изучении русского языка в школах национальных республик и областей». 13 марта 1938 г.  
<https://docs.historyrussia.org/ru/nodes/123876-postanovlenie-tsk-vkp-b-i-snk-sssr-ob-obyazatelnom-izuchenii-russkogo-yazyka-v-shkolah-natsionalnyh-respublik-i-oblastey-13-marta-1938-g#mode/inspect/page/2/zoom/4> (дата обращения: 18.12.2023).
26. Родная речь: как Сталин внедрял русский язык в СССР  
<https://www.gazeta.ru/social/2018/03/12/11679751.shtml> (дата обращения: 18.12.2023).

### References

1. **Antonyan Yu. Muradyan H.** About the context of "Soviet culture" concept and discourse formation [*“Khorhrdahay mshakuyt” kontsek’sti u diskursi dzevavorman hamatek’sti shurj*] // Soviet Armenian culture. concept, perceptions and manifestations. Yerevan. YSU. 8-41 pp. (In Armenian)
2. **Galstyan H.** Articles, memoirs, interviews [*Hotvatsner, hushagrut’yunner, harts’azruts’ner*]. Yerevan. “Noyan tapan” publishing. 2002. 596 pages. (In Armenian)
3. **Gyurjinyan D.** General characteristics of the term "language policy" [*“Lezvak’aghak’akanut’yun” ezruyt’i yndhanur bnut’agiry*] // Questions of linguistic terminology. Proceedings of the Republican conference. Yerevan. 2020. 49-58 pp. (In Armenian)
4. The Constitution of the Union of Soviet Socialist Republics (fundamental law) [*Khorhrdayin Sots’ialistakan Hanrapetut’yunneri Miut’yan Sahmanadrut’yun (himnakan orenk’)*] Soviet Armenia. 1936. No.135. (In Armenian)
5. Constitution of the Republic of Armenia (fundamental law) [*Hayastani Hanrapetut’yan Sahmanadrut’yun (himnakan orenk’)*] <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150837> (01.02.2024). (In Armenian)
6. Schools for minorities in Soviet Armenia, 1932-1933 [*Khorhrdayin Hayastani mej p’ok’ramasnut’yunneru hamardprots’ner, 1932-1933 tt’*] <https://www.aniarc.am/2023/04/17/minority-schools-in-soviet-armenia-1932-1933-hayastani-kochnak/> (15.02.2024). (in Armenian)
7. Faculty of Russian Philology [*Rus banasirut’yan fakultet*] <http://www.old.yasu.am/faculties/hy/Russian-Philology/section/about/amb/107> (15.02.2024). (In Armenian)
8. **Onanyan V.** State language [*Petakan lezu*] <https://www.lezu.am/?p=174> (17.02.2024). (In Armenian)
9. There were 123 Kurdish, Turkish, Assyrian, Greek and Russian schools in Soviet Armenia in 1925 [*1925-in Khorhrdayin Hayastanum 123 k’rdakan, t’urk’akan, asorakan, hunakan ev rusakan dprots’ner*] <https://www.aniarc.am/2021/09/12/1925-schools-minorities-123/> (15.02.2024). (In Armenian)
10. **Schiffman H.** Language Policy in the former Soviet Union  
<https://ccat.sas.upenn.edu/~haroldfs/540/handouts/ussr/soviet2.html> (01.02.2024).
11. **Alkseeva E. Sltpsov Yu.** Language policy in the USSR and the post-Soviet period [*Yazikovaya politika v SSSR I v postsovetskiy period*] // Theories and problems of political research. 2018. Volume 7. № 6A. 71-79 сс. (In Russian)
12. **Alpatov V.** Language policy in Russia and the world [*Yazikovaya politika v Rossii i mire*] // Language policy and language conflicts in the modern world: International conference (Moscow, September 16–19, 2014). Reports and messages. Institute of Linguistics of the Russian Academy of Sciences, Research Center for National-Linguistic Relations. M. 2014. pp. 12-24. (In Russian)

13. **Alpatov V.** Language policy and the native language [*Yazikovaya politika i rodnoy yazik*] Sociolinguistics. 2020. No. 3(3). 114-124pp. (In Russian)
14. **Alpatov V.** 150 languages and policy. 1917-2000 [*150 yazikov i politika. 1917-2000 gg.*] Moscow. Kraft+IV RAS. 2000. 224 p. (In Russian)
15. **Arefyev A.** Russian language at the turn of the XX-XXI centuries [*Russkiy yazik na rubeje XX-XXI vekov*] Moscow. Center for Social Forecasting and Marketing. 2012. 482 p. (In Russian)
16. **Arutyunova M.** Language policy and the status of the Russian language in the USSR and the states of the post - Soviet space [*Yazikovaya politika i status russkogo yazika v SSSR i gosudarstvakh postsovetnskogo prostranstva*] // Bulletin of Moscow University. Series 25. 2012. No. 1. pp. 155-178. (In Russian)
17. **Arutyunyan Yu. Drobijeva L.** Ethnosociology [*Emnosotsiologiya*]. Moscow. 1998. 271 p. (In Russian)
18. All-Union Population Census of 1939. Main results [*Vsesoyuznaya perepis' naseleniya 1939 goda*] /Under. Ed. Y. Polyakova. Moscow. The science. 1992. 256 p. (In Russian)
19. Results of the All-Union Population Census of 1959 [*Itogi vsesoyuznoy perepisi naseleniya 1959*] [https://sovethistory.ru/netcat\\_files/64/86/Perepis\\_SSSR\\_1959\\_g..pdf](https://sovethistory.ru/netcat_files/64/86/Perepis_SSSR_1959_g..pdf) (18.12.2023). (in Russian)
20. Results of the All-Union Population Census of 1970 [*Itogi vsesoyuznoy perepisi naseleniya 1970*] [https://sovethistory.ru/netcat\\_files/64/86/Perepis\\_SSSR\\_1970\\_g..pdf](https://sovethistory.ru/netcat_files/64/86/Perepis_SSSR_1970_g..pdf) 18.12.2023). (in Russian)
21. USSR Law of April 24, 1990 "On the languages of the peoples of the USSR" [*Zakon SSSR ot 24.04.1990 "O yazikakh narodov SSSR"*] [http://www.zaki.ru/pagesnew.php?id=1729#google\\_vignette](http://www.zaki.ru/pagesnew.php?id=1729#google_vignette) (10.10.2023). (In Russian)
22. Constitution (Basic Law) of the Union of Soviet Socialist Republics [*Konstitutsiya (osnovnoy zakon) Soyuz Sovetskikh Sotsialisticheskikh Respublik*] <https://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1924.htm#2> (12.09.2023). (In Russian)
23. National composition of the population of the USSR according to the 1989 All-Union Population Census [*Natsionalniy sostav naseleniya SSSR po dannim vsesoyuznoy perepisi naseleniya 1989 g.*] [https://sovethistory.ru/netcat\\_files/64/86/Perepis\\_SSSR\\_1989\\_g..pdf](https://sovethistory.ru/netcat_files/64/86/Perepis_SSSR_1989_g..pdf) (18.12.2023). (In Russian)
24. **Oreshkina M.** Russian language is the language of friendship and cooperation of the peoples of the USSR [*Russkiy yazik-yazik druzhbi i sotrudnichestva narodov SSSR*] // Russian speech. 1979. № 5. Pp. 5-9. (In Russian)
25. Resolution of the Central Committee of the All-Union Communist Party of Bolsheviks and the Council of People's Commissars of the USSR "On the compulsory study of the Russian language in schools of national republics and regions." March 13, 1938 [*Postanovlenie TSK VKP(b) i SNK SSSR "Ob obyazatel'nom obuchenii russkogo yazika v shkolakh natsional'nikh respublik i oblastey" 13 marta 1938 g.*] <https://docs.historyrussia.org/ru/nodes/123876-postanovlenie-tsk-vkp-b-i-snk-sssr-ob-obyazatelnom-izuchenii-russkogo-yazyka-v-shkolah-natsionalnyh-respublik-i-oblastey-13-marta-1938-g#mode/inspect/page/2/zoom/4> (18.12.2023). (In Russian)
26. Native speech: how Stalin introduced the Russian language in the USSR <https://www.gazeta.ru/social/2018/03/12/11679751.shtml> (18.12.2023). (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **26. 02. 2024**  
 Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **09. 03. 2024**  
 Հանձնվել է սույ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

### **Информация об авторе**

**Լուսինե Միկայելովնա ԱՆԳԵԼՈՒՇ:** старший лаборант Института археологии и этнографии Национальной академии наук, Ереван, РА, эл. адрес: [lusineangelush@gmail.com](mailto:lusineangelush@gmail.com) <https://orcid.org/0000-0003-4072-7813>

**Լուսինե Միքայելի ԱՆԳԵԼՈՒՇ՝** ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ լաբորանտ, Երևան, ՀՀ, էլ. հասցե՝ [lusineangelush@gmail.com](mailto:lusineangelush@gmail.com) <https://orcid.org/0000-0003-4072-7813>

**Lusine Mikayel ANGELUSH:** senior assistant of Institute of Archaeology and Ethnography NAS, Yerevan, RA, e-mail: [lusineangelush@gmail.com](mailto:lusineangelush@gmail.com) <https://orcid.org/0000-0003-4072-7813>



ված են ՀՀ ժողովրդագրական պատկերում առկա մի շարք լրջագույն խնդիրներ, որոնք շուտափույթ լուծում չստանալու պարագայում, ոչ հեռու ապագայում կհանգեցնեն նոր՝ «մահացող ազգ» եզրույթի շրջանառությանը: Ուստի անհրաժեշտ է լրջորեն մոտենալ առաջին հայացքից զուտ անձնական հարթության վրա գտնվող հիմնախնդիրներին և դրանց տալ պետական լուծում, հակառակ դեպքում կդառնան ազգային անվտանգության տեսանկյունից անլուծելի հիմնախնդիրներ: *Հեղինակների ներդրումը*. Հողվածում առաջին հեղինակի ներդրումը տեսական մոտեցումների և բովանդակային նյութի ձևակերպումն է, իսկ երկրորդ հեղինակինը՝ քանակական հետազոտության տվյալների ամփոփումը և ներկայացումը:

**Բանալի բառեր՝** *ժողովրդագրական հիմնախնդիր, ծնելիություն, ամուսնությունների միջին տարիք, բնակչության աճ, տեսակարար կշիռ, ինքնություն, ազգ, գլոբալացում, մուլտիկուլտուրալիզմ:*

**Ինչպես հղել՝** Բոյաջյան Ա., Ավետիսյան Գ. ՀՀ սոցիալ-ժողովրդագրական խնդիրները և ազգային ինքնապահպանության հարցերը // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի: 2024: Հ. 1 (27): 207-217 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.1-207

## SOCIAL-DEMOGRAPHIC PROBLEMS AND NATIONAL SELF-DEFENSE ISSUES IN RA

*Artashes G. Boyajyan*

Shirak Center for Armenological Studies of NAS RA, Gyumri, RA

*Gayane R. Avetisyan*

After M.Nalbandyan State University of Shirak, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The two opposing ideologies prevailing in the modern world, nationalism and globalization, have a decisive influence on the natural reproduction of the population and the preservation of national identity. **Analysis:** Within the framework of the research, studies were mainly carried out from demographic, social geographical, ethnological, sociological, historical and economic perspectives, and the issues of national identity from ethnological, philosophical and cultural perspectives. **Methods and materials:** Within the framework of the research, official statistical data collection, comparative, quantitative, qualitative and analytical methods were combined. When assessing demographic security, we used the magnitudes of individual population aging scales. **Results:** The work presents a number of serious problems in the demographic picture of RA, which, if not solved soon, will contribute to the circulation of the new term "dying nation" in the not-too-distant future. Therefore, it is necessary to seriously approach the problems that are purely personal at first sight and give it a state solution, otherwise it will become an insoluble problem from the point of view of national security. **Authors contribution:** The first author's contribution to the article is the formulation of theoretical approaches and substantive material, and the second author's contribution is the summary and presentation of quantitative research data.

**Key words:** *demographic problem, birth rate, average age of marriage, population growth, specific gravity, identity, nation, globalization, multiculturalism, morality.*



**How to cite:** Boyajyan A., Avetisyan G. *Socio-Geographical Problems of RA and Issues of National Self-Preservation* // "Scientific works" of the National Academy of Sciences of the RA, Gyumri. 2024. V. 1 (27). 207-217 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-207

## СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РА И ВОПРОСЫ НАЦИОНАЛЬНОГО САМОСОХРАНЕНИЯ

*Արտաշես Գ. Բոյաճյան*

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

*Գայանե Ք. Ավետիսյան*

Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** Две противоположные идеологии, преобладающие в современном мире, национализм и глобализация, оказывают определяющее влияние на естественное воспроизводство населения и сохранение национальной идентичности. **Анализ:** В рамках темы исследования проводились в основном с демографической, социально-географической, этнологической, социологической, исторической и экономической точек зрения, а вопросы национальной идентичности - с этнологической, философской и культурологической точек зрения. **Методы и материалы:** В рамках исследования были объединены сбор официальных статистических данных, сравнительные, количественные, качественные и аналитические методы. При оценке демографической безопасности использовались величины отдельных шкал старения населения. **Результаты:** В работе представлен ряд серьезных проблем демографической картины РА, которые, если не будут решены в ближайшее время, будут способствовать распространению нового термина «вымирающая нация» в не столь отдаленном будущем. Поэтому необходимо серьезно подойти к проблемам, которые на первый взгляд являются сугубо личными, и дать им государственное решение, иначе это станет неразрешимой проблемой с точки зрения национальной безопасности. **Вклад авторов:** Вклад первого автора в статью заключается в формулировке теоретических подходов и содержательного материала, вклад второго автора – в обобщении и представлении количественных данных исследования.

**Ключевые слова:** демографическая проблема, рождаемость, средний возраст вступления в брак, прирост населения, удельный вес, идентичность, нация, глобализация, мультикультурализм, мораль.

**Как цитировать:** Бояджян А., Аветисян Г. *Социально-демографические проблемы РА и вопросы национального самосохранения* // «Научные труды» ШЦАИ НАН РА, Гюмри 2024. Т. 1(27). 207-217 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-207

**ՆԱԽԱԲԱՆ.** Բնակչության թվաքանակի և կազմի փոփոխություններն ուղղակիորեն ազդում են հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր, մշակութային և այլն: ԽՍՀՄ-ի լուծարումից հետո մեր հասարակությունը, ազատվելով խորհրդային կոմունիստական մշակույթի և արժեհամակարգի ազդեցությունից, անկախության տարիներին ընտրեց արևմտյան գլոբալիստների արժեհամակարգը, ինչը հակադիր էր ոչ միայն կոմունիստական, այլև ազգային

գաղափարախոսությանը [9, էջ 11]: Հայտնի է, որ արևմտյան գլոբալիստական արժեհամակարգ դավանող պետություններին բնորոշ է ծնելիության ցածր մակարդակը և ժողովրդագրական կայունությունը բացառապես զարգացող երկրներից բնակչության ներգաղթի հաշվին ապահովելը: Մեր հանրապետությունում բնակչության ծնելիության մակարդակի անկմանը զուգընթաց՝ 1991-2000 թթ. արձանագրվել է բնակչության զանգվածային արտագաղթ՝ հիմնականում ՌԴ, ԱՄՆ և ԵՄ անդամ երկրներ:

**ՀՀ սոցիալ-ժողովրդագրական գործընթացները և ազգային ինքնապահպանության հարցերը:**

ՀՀ ժամանակակից ժողովրդագրական իրականության մեջ ձևավորվել են էկզիստենցիալ մարտահրավերներ, որոնք լուրջ խնդիրներ են հարուցել ազգապահպանության խնդրում: Հայաստանը ազգային միատարր երկիր է (ըստ ՀՀ 2022 թ. մարդահամարի նախնական տվյալների՝ մշտական բնակչության 98,1%-ը հայեր են [11]), և առաջին հայացքից թվում է, որ ՀՀ-ում հայերն ազգային ինքնապահպանության խնդիր չունեն: Սակայն, մասնավորապես, 2020թ. արցախյան պատերազմի արդյունքները, հարևան պետությունների՝ Ադրբեջանի և Թուրքիայի թշնամանքը և ագրեսիվ պահվածքը մեր երկրի նկատմամբ, երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ՌԴ-ի շահերի բախման գոտում գտնվելը, նաև ժողովրդագրական աղետալի վիճակը հայերին ազգային ինքնության կորստի և գոյատևման լուրջ հիմնախնդրի առջև են կանգնեցրել:

Չոզվածի գիտական նորույթն այն է, որ փորձել ենք հիմնավորել, թե հանրապետության ժողովրդագրական արդի վիճակն ինչպիսի վտանգ է ներկայացնում հայերի ազգային ինքնության պահպանման առումով: Ազգերի վերջնական կայացումը տեղի է ունենում պետություններում և պետությունների միջոցով, և նրանք իրենց ինքնությունը պահպանում են ազգային համակարգերի գոյությամբ [9, էջ 13]: Ընդգծենք՝ ազգերի ինքնության պահպանման գլխավոր միջոցը վերարտադրվելն է: Ինչքան բարձր է վերարտադրության ցուցանիշը, այնքան ազգային ինքնության պահպանության հնարավորությունը մեծ է, և հակառակը: Ի վերջո, ազգային և ժողովրդագրական անվտանգություն հասկացությունները սահմանվում են որպես պետության և բնակչության վերարտադրության իրական և հավանական վտանգներից պաշտպանություն: ՀՀ ներկայիս սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վիճակը և ազգային ինքնության պահպանումը հրատապ լուծում են պահանջում, որպեսզի դիմակայենք նոր ու գլոբալ մարտահրավերներին: ՀՀ ժողովրդագրական զարգացման հեռանկարները և ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրների վերհանման, համակողմանի հետազոտության և դրանց լուծման ուղիների նախանշման անհրաժեշտությունը պայմանավորում են հետազոտության թեմայի *արդիականությունը և հրատապությունը*:

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.** Բնակչության բացարձակ թվի փոփոխության շարժընթացին օբյեկտիվ գնահատական տալու համար անհրաժեշտ է կատարել էլակետային տարվա ընտրություն. այդպիսին համարել 1989 թվականը, ԽՍՀՄ-ի վերջին մարդահամարի արդյունքները, երբ մարդահամարն էքստրեմալ պայմաններում էր անցնում 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժի պատճառով, երբ մարդկային զոհերի թիվը գերազանցել էր քսանհինգ հազարը, թե՛ էլակետային համարել մեկ

այլ տարի: Հիմնվելով ՀՀ ԱՎԿ պաշտոնական վիճակագրության հրատարակած նյութերի վրա՝ նպատակահարմար է բնակչության թվի ելակետային տարի համարել 1990թ. -ը [12]: Այդ տարում ՀՀ բնակչության թիվը կազմել է 3 514.9 հազ.մարդ[12]: Այսինքն՝ 1989թ. մարդահամարի արդյունքի ցուցանիշի (3304.8հազ. մարդ) համեմատությամբ այն ավելացել է 210,1 հազարով կամ 6,5 %-ով: Այսպիսով, 1992-1994 թթ. ՀՀ բնակչության բացարձակ թիվը նվազել է 373.0 հազ. մարդով կամ 11,6 %-ով: Մեր հանրապետության բնակչության թվի շեշտակի անկումը սկսվեց 1992թ.-ից, ինչն էլ հանգեցրեց ժողովրդագրական ծերացման: Այժմ ՀՀ-ն դասվում է ժողովրդագրական ծերացման շատ բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին[4, էջ 100]: Աղյուսակ 1-ից երևում է, որ 1989թ. 65-ից բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության թվաքանակում կազմել է 5.2%, իսկ 2022 թ.-ին՝ 13.0%<sup>1</sup>: Այսինքն՝ 33 տարիների ընթացքում ժողովրդագրական ծերացման մակարդակն աճել է 2.5 անգամ: Հարկ ենք համարում հիշատակել, որ ներկայումս 65-ից բարձր տարիքային խմբում 1945-1955-ականների սերունդն է, երբ ծնելիության գործակիցն ուներ բավականին բարձր ցուցանիշ՝ շուրջ 38% (այսպես կոչված, հետպատերազմյան «բերի բուս»), ընդ որում՝ այդ խնդիրը դեռևս մոտակա 10 տարում ավելի կսրվի, երբ 65-ից բարձր տարիքային խումբ կմտնեն 1970-ականների ծնվածները, որտեղ ծնելիության գործակիցը միջինը կազմել է 24%: Ճիշտ է, այս թիվը զիջում է 1940-1950-ականների տվյալներին, սակայն ծնվածների բացարձակ թվաքանակով գերազանցում է: Ներկայացված ժամանակահատվածում մեր հանրապետությունում գրանցվել են կենսաթոշակային տարիքի բնակչության տեսակարար համաթվի աճ և մինչաշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշռի անկում: Հաշվի առնելով բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխության զարգացման միտումները՝ կարելի է արձանագրել, որ մոտ ապագայում կկանգնենք ոչ միայն ժողովրդագրական, այլ նաև աշխատաշուկայում լուրջ խնդիրների առջև: Կենսաթոշակառուների թվի աճին զուգահեռ՝ նվազում է աշխատանքային տարիք մուտք գործողների թիվը:

Բնակչության թվի շարժընթացի ներկա միտումները պահպանվելու դեպքում ՀՀ բնակչության թվաքանակը, ըստ ՄԱԿ-ի անդամ երկրների ժողովրդագրական հիմնական ցուցանիշների, 2050թ. կլինի 2.8 մլն, իսկ դարեվերջին՝ 2.0 մլն մարդ [5, էջ 33]: Ներկայացված ցուցանիշների վերլուծումը հարց է ծնում՝ ինչպիսին կլինի հայերի տեսակարար համաթիվը բնակչության ընդհանուր թվաքանակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հանրապետությունը գտնվում է աշխարհաքաղաքական անկայուն տարածաշրջանում: Կանխատեսելի է, որ Իսրայել-Իրան, ԱՄՆ-Իրան, Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա պատերազմական գործողությունների ժամանակ արմատական փոփոխությունների կարող է ենթարկվել մեր հանրապետության էթնո-ժողովրդագրական իրավիճակը: Դրա ապացույցն է Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության 120 հազարից ավելի հայերի բռնի տեղահա-

<sup>1</sup> Ժողովրդագրական ծերացման գնահատման համար օգտվել ենք Ժ. Գարնեյի և ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակից (տե՛ս նաև Մանուկյան Մ. և այլք, << Բնակչության ծերացման հիմնախնդիրները ժողովրդագրական գործընթացների փոփոխության համատեքստում, // Բանբեր ՀՊՏՀ, հ. 4, Եր. 2021, էջ 100):

նումը դեպի Հայաստանի Հանրապետություն: Մեր կողմից իրականացված հետազոտություններից պարզվել է, որ այժմ արցախահայության մի հատված արտագաղթում է հիմնականում ՌԴ, իսկ ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ ՌԴ-ի և Հնդկաստանի քաղաքացիների ժամանակավոր կացությունը ՀՀ-ում առայժմ չի ազդում մշտական, սակայն ազդում է առկա բնակչության թվաքանակի վրա [ 1, թերթ 15]:

**Աղյուսակ 1**

**ՀՀ ժողովրդագրական պատկերը թվերով  
(1989-2022 թթ.)**

	1989թ.	1995թ.	2001թ.	2006թ.	2011թ.	2016թ.	2021թ.	2022թ.
Բնակչության թիվը / հազ. մարդ/	3304.8	3766.4	3212.9	3222.9	3 021.4	2 986.1	2 963.3	2 961.4
Տղամարդ %	49.5	48.5	48.6	48.3	48.5	47.7	47.2	47.1
Կին %	50.5	51.6	51.4	51.7	51.5	52.3	52.8	52.9
Ծնելիությունը՝ %	21.6	13.0	8.4	11.7	13.3	13.5	12.4	12.3
Մահացությունը՝ %	6.0	6.6	6.3	8.5	8.6	9.4	11.6	10.4
Բնական աճը՝ %	15.6	6.4	2.1	3.2	4.7	4.1	0.8	1.0
65-ից բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում, %	5.2	9.5	10.0	10.9	12.0	13.2	12.6	13.0
Մինչև 14 տարեկան բնակչության տեսակարար կշիռը ողջ բնակչության մեջ՝ %	30.4	25,4	23.4	19.7	20.1	21.0	20.2	20.1
Կյանքի միջին տևողությունը տարով	72	72.5	73.5	73.3	74.2	75.0	72.4	75.1
Ամուսնություն	27257	15911	12302	16887	19 706	16 294	17 165	16795
Ամուսնավորվածություն	4134	2741	1776	2797	3 188	3 648	4 434	4525
Բնակչության տարեկան միջին աճի/նվազման տեմպերը՝ %		+2.4	-2.5	+0.1	-1.3	-0.2	-0.1	-0.1

*Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ԱՎԿ-ի տվյալները:*

Ժողովրդագրական անվտանգությունը ազգային ինքնության պահպանման և պետական անվտանգության ապահովման կարևորագույն տարրն է: Այժմ ՀՀ ժողովրդագրական գլխավոր վտանգներն են ծնելիության շեշտակի անկումը, մահացության գործակցի աճը, ամուսնությունների թվի նվազումը, ամուսնական միջին տարիքի մակարդակի աճը, ամուսնական տարիքի տղաների, մասնավորապես՝ 1990-2000-ական թթ. ծնվածների թվի շեշտակի աճը: Մեր կողմից իրականացված էթնոսոցիալական հետազոտություններով պարզել ենք, որ երիտասարդ աշխատող ամուսնական զույգը, որի եկամուտը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից և բնակարանով ապահովված չէ, ցանկություն չունի շատ երեխաներ ունենալու[1, թերթ 12]:

ՀՀ կառավարության կողմից ծնելիության խթանման ուղղությամբ իրականացվող միջոցառումները [13] չեն ապահովում սպասված արդյունքը, ուստի անհրաժեշտություն է առաջանում մշակել ծնելիության խթանման նոր մոդել: Այդ առումով, մենք առաջարկում ենք հիմնել «Ծնելիության խթանման համահայկական հիմնադրամ», որտեղ իրենց ծանրակշիռ դերը կարող են ունենալ ՀՀ մեծահարուստները և սփյուռքի հայությունը, իսկ հավաքված գումարից, որոշակի սկզբունք մշակելով, բաշխել յուրաքանչյուր նորածնին մինչև նրա չափահաս դառնալը:

Բնակչության ծնելիության անկումը և զանգվածային արտագաղթը հանգեցրին բնակչության ծերացմանը, ինչը ժողովրդագրական անվտանգության հիմնախնդիրներից մեկն է: Աղյուսակ 2-ի թվային ցուցանիշների վերլուծությունից երևում է, որ 2000-2009 թթ. ծնվածների գումարային թիվը, համեմատած 1990-1999 թթ., պակասել է 220.5 հազարով կամ 39.7%-ով, իսկ 2010-2019 թթ.՝ 70.2 հազարով կամ 20.9%-ով: Վերջին տասներեք տարիներին ծնվածների թվի աճը պայմանավորված է հիմնականում ամուսնական տարիք մուտք գործողների (1990-1999 թթ. ծնունդներ) թվի աճով:

ՀՀ-ում 1990-2023թթ. պտղաբերության ցուցանիշը նվազել է 1.4 գործակցով և 2002թ. կազմել է 1.2, իսկ 2020թ.-ին՝ 1.6 [3, էջ 5]: Կարծում ենք՝ 2002-2020թթ. պտղաբերության գործակցի աճը պայմանավորված է 2010-ական թվականների ամուսնությունների և ծնվածների թվի աճով: Այժմ աշխարհի շուրջ հարյուր պետություններում մեկ կնոջ հաշվով միջին պտղաբերության մակարդակը չի հասնում 2.0-ի, իսկ ՀՀ-ում՝ 1.5 [8, էջ 267]: Պտղաբերության այսպիսի ցածր մակարդակի դեպքում երկարամյա հեռանկարում հնարավոր չէ ապահովել բնակչության պարզ վերարտադրությունը: 2020թ. ՀՀ բնակչության բնական աճի նվազման համայնապատկերում ուշագրավ է հարևան պետությունների համեմատությունը, ընդ որում՝ Իրանում տարեկան բնական աճը կազմել է 616.6 հազ., Թուրքիայում՝ 608,9 հազ. և Ադրբեջանում՝ 50.9 հազ. մարդ [5, էջ 79], իսկ ՀՀ-ում վերջին 33 տարիների ընթացքում կազմել է շուրջ 539,9 հազ. մարդ (տե՛ս աղ. 2): Հիշատակենք, որ մեր հանրապետությունում պտղաբերության գործակցի ցուցանիշի անկումը պայմանավորված է նաև մեդիանական (ամուսնական) տարիքի աճով: Այսպես, 1995թ. այն եղել է 22 տարի, իսկ այժմ՝ 36.1 է [6, էջ 106]: Կարելի է արձանագրել, որ մեր հանրապետության բնակչության կեսն արդեն անկախության սերունդն է, որն իր ազգային ինքնությանը բնորոշ հատկանիշներով տարբերվում են խորհրդային սերնդից: Այդ առումով հայտնի է, որ երեխա ունենալու ցանկությունը նվազում է մարդակենտրոն հասարակության պայմաններում [5, էջ 12], ինչը բնորոշ է ժամանակակից ՀՀ հասարակությանը:

Ամուսնությունը ժողովրդագրության մեջ, ավանդական ընկալումների համատեքստում դիտվում է վերարտադրողական վարքը պայմանավորող և հաջորդող սերնդի վերարտադրությունն ապահովող պայման: Հետևաբար ազգային արժեքային ընկալումներում ընտանիքի ինստիտուտը չափազանց կարևորագույն նշանակություն ունի: ՀՀ-ում 2000-2009թթ. ամուսնությունների թվի նվազումը և 2010-2019թթ. ամուսնալուծությունների թվի աճը (տե՛ս աղ. 2) իր ազդեցությունն ունեցավ ծնելիության անկման վրա: Ընդ որում ամուսնությունների թվի նվազումը պայմանավորված է եղել աշխա-

տունակ տարիքի, այդ թվում՝ ամուսնական տարիքի տղամարդկանց արտագաղթով: ՀՀ-ում 2002-2007թթ. միգրանտների 94%-ը (տարեկան միջին աշխատանքային միգրանտների թիվը կազմել է 162-189 հազար մարդ) բաժին է ընկնում աշխատանքային միգրանտներին, ի տարբերություն 1990-1999թթ., որտեղ արտագաղթողների ճնշող մեծամասնությունը բաժին է ընկել ակտիվ աշխատունակ տարիքի (25-49 տարեկան) բնակչությանը, իսկ արտագաղթողների թիվը գերազանցել է 800 հազարը [7, էջեր 10-11]: Ըստ այդ հետազոտության արդյունքների՝ աշխատանքային միգրանտների 90%-ը, իսկ մշտական միգրանտների 51%-ը [ 7, էջ 15] տղամարդիկ են:

*Աղյուսակ 2*

**ՀՀ բնակչության ծնելիության, մահացության և բնական աճի թվի շարժընթացը 1990-2023թթ.**

Տարեթիվ	Ծնվածների գումարային թիվը	Մահացածների գումարային թիվը	Բնական աճի գումարային թիվը	Ամուսնական տարիք մուտք գործելու տարեթվերը	Ամուսնությունների գումարային թիվը	Ամուսնալուծությունների գումարային թիվը
1990-1999 թթ.	555428	244591	310837	2015-2025 թթ.	184289	28455
2000-2009 թթ.	334925	261418	73507	2025-2035 թթ.	158302	22644
2010-2019 թթ.	405136	273591	131545	2035-2045 թթ.	173176	36705
2020-2023 թթ.	145616	121555	24061	2045-2050 թթ.	62346	16639
ընդամենը	1441105	901155	539950		578113	104443

*Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ԱՎԿ հրապարակված տվյալները:*

Ամուսնությունների թվի նվազման, ամուսնալուծությունների թվի աճի, բնակչության զանգվածային արտագաղթի պատճառով մեր հանրապետության ազգային ինքնության պահպանման հարցում լուրջ խնդիրներ են առաջացել: Կարծում ենք՝ այդ գործընթացին նպաստել է նաև գյուղալացումը, որի գլխավոր նպատակներից մեկն է ազգային ինքնության արդիականացումը, այսինքն՝ ավանդականից անցում կատարել քաղաքականի կամ արդիականի, որի ձևավորման արդյունքում մոռացության է մատնվում տվյալ ազգի միասնական պատմությունը [2, էջ 92-93]:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ**

- Մեր ուսումնասիրությունից պարզվում է, որ 1990-ական թվականներին ՀՀ-ում հայերի ազգային ինքնության արդիականացման գործընթացը հանգեցրեց բնակչության ծնելիության անկմանը, մահացության աճին, զանգվածային արտագաղթին և բնակչության ծեղրմանը: Այժմ մեր հանրապետությունում ժողովրդագրական աղետալի վիճակ է:
- Հայաստանի Հանրապետությունում 65-ից բարձր տարիքային խմբի տեսակարար կշիռը բնակչության մեջ ոչ միայն բարձր է համաշխարհային միջին ցուցանիշից, այլև ունի շարունակական աճի միտում՝ ավելացնելով պետական բյուջեից կենսաթոշակատուներին հատկացվող գումարները:
- 1989 թ. համեմատ 2023 թ. ծնելիության ընդհանուր գործակիցը նվազել է երկու անգամ:

- Մինչև 15 տարեկան տարիքային խմբի բնակչության տեսակարար կշիռը նվազում է, ինչը մոտակա տասը տարիներին կհանգեցնի աշխատաշուկայի լարվածության խորացմանը, իսկ աշխատուժի պահանջարկի մեծացումը կբավարարվի արտասահմանյան, մասնավորապես՝ շնդկաստանից և Իրանից ներգաղթած երիտասարդ բնակչության հաշվին, ինչն էլ վերջին երեք տարիներին աճման միտումներ ունի: Այդ միտումը շարունակվելու դեպքում միջնաժամկետ հեռանկարում մեր հանրապետության ազգային կազմում կգրանցվի որոշակի փոփոխություն՝ հայերի տեսակարար համաթվի անկում:
- Ներկայացվող ժամանակահատվածում մեր հանրապետությունում ամուսնական տարիքի մակարդակի աճ է գրանցվել՝ 22 -ից դարձել է 28, ինչն իր գործուն ազդեցությունն է ունեցել ծնելիության անկման վրա: Հիշատակենք, որ ուշ ամուսնության դրդապատճառներից է համարվում նաև դպրոցներում անցումը 12-ամյա և բուհերում 6-ամյա կրթությանը:
- ՀՀ այժմ ամենահրատապ հիմնախնդիրներից է բնական պարզ վերարտադրությունը, միգրացիայի բացասական մնացորդը և ժողովրդագրական ծերացման բարձր մակարդակը, ինչը սպառնում է ազգային ինքնության պահպանությանը, ավելի կոնկրետ՝ հայ ազգի գոյատևմանը:
- Փաստորեն, ժողովրդագրական գործընթացների արդի միտումները ՀՀ ազգային անվտանգության և ինքնության պահպանման գլխավոր և իրական մարտահրավերների շարքում են:
- Ամուսնությունների թվի նվազման, ամուսնալուծությունների թվի աճի, բնակչության զանգվածային արտագաղթի պայմաններում մեր հանրապետության ազգային ինքնության պահպանման հարցը գլխավոր հիմնախնդիրներից մեկն է դարձել:

**Գ ր ա կ ա ն ու թ յ ո ն**

1. **Բոյաջյան Ա.** *Ծիրակի մարզի ամուսնությունները և ամուսնալուծությունները:* Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ): Գյումրի: Տետր 1: 2024: 48 թերթ:
2. **Գեմիրճյան Մ.** *Ազգային ինքնությունը ժամանակակից արժեքային փոխարկումների համատեքստում // ՎԷՄ համահայկական հանդես Ժ(ԺՁ) տարի: Թիվ 1(61) հունվար մարտ: հրատ. ՎԷՄ հանդես, Եր. 2018: 91-106 էջեր:*
3. *Ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների զննաստանն համատեքստում:* Ամբերդ մատենաշար: Երևան: «Տնտեսագետ» հրատ.: 2022: 217 էջ:
4. *ՀՀ բնակչության ծերացման հիմնախնդիրները ժողովրդագրական գործընթացների փոփոխության համատեքստում // Բանբեր ՀՊՏՀ:* Երևան: Հ. 4, 2021: 95-115 էջեր:
5. **Մալխասյան Մ. Խաչիկյան Ա. Մալխասյան Մ.** *Ժողովրդագրական անցման արդի փուլը ՀՀ-ում:* Երևան: ԵՀ հրատ: 2023: 160 էջ:
6. **Մանուկյան Մ. և այլք,** *ՀՀ բնակչության ծերացման հիմնախնդիրները ժողովրդագրական գործընթացների փոփոխության համատեքստում // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի,* Երևան: Հ. 4: 2021: 95-112 էջեր:
7. **Մինասյան Ա. և այլք,** *2002-2008թթ. Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն:* Երևան: «Ասողիկ» հրատ: 2008: 80 էջ:
8. **Սարգսյան Լ. Հարությունյան Հ.** *Ժողովրդագրական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում // «Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»:* ՀՀ ԳԱԱ հրատ.: Հ. 2: 2018: 267-279 էջեր:

9. **Տեր-Աբրահամյան Հ.** Ազգային անկախությունը նպաստակ և միջոց: //21-րդ դար: «Նորավանք» գիտակրթական հանդես: Հ.6 (70): 2016: 10-25 էջեր:
10. **Россет Э.** *Процесс старения населения.* изд. Статистика населения с основами демографии. М. 1990. 132 стр.
11. ՀՀ մշտական բնակչության ազգային կազմը, լեզուներին տիրապետելը և կրոնական դավանանքը: Երևան: 2022թ. ՀՀ մարդահամարի նախնական արդյունքներ, <https://armstat.am/am/?nid=81&id=2623>: (դիտվել է՝ 21.01. 2024):
12. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները 1990-2018թթ.: ՀՀ ԱՎԿ նյութեր: [https://armstat.am/file/article/demog\\_2020\\_2.pdf](https://armstat.am/file/article/demog_2020_2.pdf): (դիտվել է՝ 27.01. 2024):
13. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությունը: [https://www.e-draft.am/files/project\\_doc](https://www.e-draft.am/files/project_doc). (դիտվել է՝ 12.02.2024):

## References

1. **Boyajyan A.** Marriages and Divorces of Shirak Marz [*Shiraki marzi amusnut'yunnery yev amusalut-sut'yunnery*]. Ethnographic Field Materials. Gyumri: notebook 1. 2024. 48 sheets. (In Armenian)
2. **Demirchyan M.** National identity in the context of modern value conversions [*Azgayin ink'nut'yuny zhamanakakits' arzhek'ayin p'vokharkumneri hamatek'stum*] // VEM national journal 10(16) year, number 1(61) January March, ed. Journal of the Ministry of Energy, Science and Technology, Yer. 2018. 91-106 pp.. (In Armenian).
3. Demographic Issues in the Context of War and Pandemic Consequences Assessment. [*Zhoghovrdagrakan himnakhndirneri paterazmi yev hamavaraki hetevank'neri gnhatman hamatek'stum*]. Yerevan. // Amberd series, ed. "Economist". 2022 217p. (In Armenian)
4. Problems of aging of the RA population in the context of changes in demographic processes, [*HH bnakch'ut'yan tserats'man himnakhndirneri zhoghovrdagrakan gortsynt'ats'neri p'vop'vokhut'yan hamatek'stum.*] // Banber ASTU. Yerevan: H. 4, 2021. 95-115 pp.. (In Armenian)
5. **Malkhasyan M., Khachikyan A., Malkhasyan M.** The current stage of the demographic transition in Armenia. [*Zhoghovrdagrakan ants'man ardi puly HH-um*] Yerevan: YU newspaper. 2023 160p. (In Armenian)
6. **Manukyan M.** and others. Problems of the aging of the RA population in the context of changes in demographic processes. [*HH bnakch'ut'yan tserats'man himnakhndirneri zhoghovrdagrakan gortsynt'ats'neri p'vop'vokhut'yan hamatek'stum*]. // Banber of the State University of Economics of Armenia, Yerevan. H. 4: 2021 95-112 pp.. (In Armenian)
7. **Minasyan A.** and others. 2002-2008. Survey of migrants returning to Armenia. [ *2002-2008t't'. Hayastan veradarzogh migrantneri hetazotut'yun*]. Yerevan: "Asoghik" newspaper. 2008 80 p.. (In Armenian)
8. **Sargsyan L., Harutyunyan H.** Current Demographic Problems in RA. [*Zhoghovrdagrakan ardi himnakhndirneri HH-um*]. // "Socio-Economic Current Problems in RA", RA NAS Ed., H. 2: 2018. 267-279 pp.. (In Armenian)
9. **Ter-Abrahamyan H.** National independence is a goal and a means. [*Azgayin ankakhut'yuny npatak yev mijots'*]. // 21st century. "Noravank" scientific and educational journal. H.6 (70). 2016. 10-25 pp.. (In Armenian)
10. **Rosset E.** The process of population aging. [*Protsess stareniya naseleniya*] ed. Population statistics with basic demographics. М. 1990. 132 p. (In Russian)
11. The national composition of the permanent population of RA, mastery of languages and religious belief. [*HH mshtakan bnakch'ut'yan azgayin kazmy, lezunerin tirapetely yev kronakan davanank'y*]. Yerevan: 2022 Preliminary results of the RA census, <https://armstat.am/am/?nid=81&id=2623>. (21.01. 2024) (In Armenian)
12. The components of the change in the permanent population of RA in 1990-2018. [*HH mshtakan bnakch'ut'yan t'vak'anaki p'vop'vokhut'yan baghadrich'neri 1990-2018t't'*] Materials of the RA AMC. [https://armstat.am/file/article/demog\\_2020\\_2.pdf](https://armstat.am/file/article/demog_2020_2.pdf). (27.01. 2024) (In Armenian)



13. The development strategy of the healthcare system of the Republic of Armenia for 2023-2026. [*Hayastani Hanrapetut'yan arrohghjapahut'yan hamakargi 2023-2026 t'vakanneri zargats'man rrazmavarut'yuny*] [https://www.e-draft.am › files › project\\_doc](https://www.e-draft.am › files › project_doc). (12.02.2024). (In Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **02. 03. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **30. 03. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **15. 06. 2024**

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Արտաշես Գևորգի ԲՈՅԱՋՅԱՆ՝** պ.գ.թ., դոցենտ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ  
Էլ. հասցե՝ a.bojayyan@mail.ru <https://orcid.org/0009-0002-8424-4522>

**Artashes Gevorg BOYAJYAN:** PhD in History, Associate Professor, Senior Researcher of the Shirak Center of Armenological Studies NAS, Gyumri, RA, e-mail: a.bojayyan@mail.ru <https://orcid.org/0009-0002-8424-4522>

**Арташес Геворгович БОЯДЖЯН:** к. ист. наук, доцент, ст. научный сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА  
эл. адрес: a.bojayyan@mail.ru <https://orcid.org/0009-0002-8424-4522>

**Գայանե Ռոյլեսի ԱՎԵՏԻՍՅԱՆ՝** Շիրակի պետհամալսարան, որակի ապահովման բաժնի պետ, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ gayane.avetisyan.5@mail.ru <https://orcid.org/0009-0005-0522-979X>

**Gayane Royles AVETISYAN:** Shirak State University, Head of Quality Assurance Department, Gyumri, RA, e-mail: gayane.avetisyan.5@mail.ru [orcid.org/0009-0005-0522-979X](https://orcid.org/0009-0005-0522-979X)

**Гаяне Ройлсовна АВЕТИСЯН:** Ширакский госуниверситет, руководитель отдела обеспечения качества, Гюмри, РА  
Эл.адрес: gayane.avetisyan.5@mail.ru [orcid.org/0009-0005-0522-979X](https://orcid.org/0009-0005-0522-979X)

# Բ ո վ ա ց ղ ա կ ո թ յ ու ց

## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### **Ցակնյան Ռ. Ա.**

Դրվագ՝ Ասորեստանա-իսթական միջպետական հարաբերությունների պատմությունից .....5

### **Պետրոսյան Ս. Գ.**

«Լուլու ցեղերի» և Ուագա երկրի բնույթի շուրջ.....18

### **Ակոպով Ա. Ա., Հայրապետյան Ա. Ս.**

Տայքը XI-XV դդ. (պատմական ակնարկ).....31

### **Հովհաննիսյան Ա. Հ.**

ԱՄՆ-ի քաղաքականությունը պաղեստինյան հակամարտության հանդեպ  
Չո Բայդենի նախագահության տարիներին .....42

## Հ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### **Միմոնյան Ա. Գ., Ջաքյան Տ. Ս.**

Կապանի Շահումյանի դամբարանադաշտում 2018 թ. հայտնաբերված  
մետաղական նյութը և դրա վերականգնման առանձնահատկությունները.....50

## Բ Ա Ն Ա Ս Ի Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### **Խաչատրյան Գ. Կ., Հայրապետյան Ս. Ա.**

Փավստոս Բուզանդից մինչև այսօր (դարձվածաբանական միավորների քննություն).....63

### **Խաչատրյան Լ. Ս.**

Հին հայերենի նախդրավոր վերլուծական կառույցների փոխակերպումը  
համադրական կառուցատիպերի (տարժամանակյա հայեցակետ).....78

### **Ջաքարյան Հ. Լ.**

Հ.-ե. \*(s)u(e)- «կտրել, ծակել» արմատից սերված հայերեն  
մի քանի բառերի ստուգաբանություն.....90

### **Ջարգարյան Ա. Ս.**

Մարդկային մեկուսացած հոգու ողբերգությունը  
Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմում .....102

### **Սուքիասյան Հ. Վ., Ջաքարյան Հ. Լ.**

Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը.....113

### **Ալեքսանյան Ս. Ա.**

Նորակազմությունները Հովհ. Շիրազի «Անի» պոեմում .....129

## Ճ Ա Դ Տ Ա Դ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### **Գրիգորյան Ա. Հ., Գրիգորյան Ա. Ա., Նահատակյան Դ. Ս.**

Կամար, թաղ, խորան, խոյ, վիշապ և այլ հորինվածքային ձևերի  
և դրանց նախատիպերի համեմատական վերլուծության մի շարք հարցեր .....137

**Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն**

**Պետրոսյան Լ. Ս.**

Մի պարերգի տեքստի պատմական և ծիսական բաղադրիչների մասին.....152

**Հարությունյան Հ. Հ., Մատիկյան Հ. Հ.**

Օրորոցային երգերի մի քանի ոճական առանձնահատկությունները

Շիրակի արդի բանահյուսության մեջ.....160

**Մատիկյան Հ. Հ.**

Բանաձևային մտածողությունը Շիրակի մանկական բանահյուսական տեքստերում.....176

**Ա Զ Գ Ա Գ Դ Ո Ի Թ Յ Ո Ի Ն**

**Բազեյան Կ. Ռ.**

Մասնագիտություն և զբաղմունք ցույց տվող բառերը

Շիրակի բարբառային բառարաններում.....183

**Անգելուշ Լ. Ս.**

Լեզվական քաղաքականությունը Խորհրդային Միության տարիներին

և հայոց լեզվի օգտագործման խնդիրները .....196

**Բոյսցյան Ա. Գ., Ավետիսյան Գ. Ռ.**

ՀՀ սոցիալ-ժողովրդագրական խնդիրները և ազգային ինքնապահպանության հարցերը.....207

# Contents

---

---

## HISTORY

*Tsakanyan R. A.*

Episode from the History of Assyrio-Hittite Interstate Relations .....5

*Petrosyan S. G.*

About the Character of the “Tribes Lulu” and the Country Uaza.....18

*Akopov A. A., Hayrapetyan A. S.*

Tayk in the XI-XIV centuries (historical review) .....31

*Hovhannisyan A. H.*

The US Policy Towards the Palestinian Conflict During the Presidency of Joe Biden.....42

## ARCHAEOLOGY

*Simonyan A. G., Zakyan T. S.*

The Metal Artefacts and its Restoration Features from  
Shahumyan Necropolis of Kapan in 2018.....50

## PHILOLOGY

*Khachatryan G. K., Hayrapetyan S. A.*

From Faustus of Byzantium to the Present Day (An Examination of Phraseological units) .....63

*Khachatryan L. M.*

The Transformation of Prepositional Structures of old Armenian Into  
Synthetic Structural Types (Diachronic Aspect) .....78

*Zakaryan H. L.*

The Etymology of Several Armenian Words Derived From  
Pie Root \*(S)U̅(E)- “To Cut, to Pierce“ .....90

*Zargarian A. S.*

The Tragedy of the Isolated Human Soul in Hovh. Tumanyan's Poem "Sako Grom Lori" .....102

*Sukiasyan H. V., Zakaryan H. L.*

The Necessity of the Armenization of Medical Terms.....113

*Aleksanyan M. A.*

The Innovations in the Poem "Ani" of Hovh. Shiraz.....129

## ARCHITECTURE

*Grigoryan A. H., Grigoryan A. A., Nahatanyan D. S.*

Arches, Vaults, Apses, Rams, Dragons, and More. Design Forms and Their Prototypes:  
a Series of Comparative Analysis Questions .....137

**FOLKLORE STUDIES**

---

---

*Petrosyan L. S.*

On the Historical And Ritual Component of the Text of the Song-Dance.....152

*Harutyunyan Hasmik H., Matikyan H. H.*

Several Stylistic Characteristics of Lullabies from Modern Folklore of Shirak.....160

*Matikyan H. H.*

Formulaic Expressiveness in Shirak's Children's Folklore .....176

**ETHNOLOGY**

---

---

*Bazeyan K. R.*

Words Indicating Profession and Occupation in Shirak's Dialect Dictionaries.....183

*Angelush L. M.*

Language Policy During the Soviet Union and Problems of Using the Armenian Language.....196

*Boyajyan A.G., Avetisyan G. R.*

Social-Demographic Problems and National Self-Defense Issues in RA.....207

# Содержание

---

---

## ИСТОРИЯ

*Цаканян Р. А.*

Эпизод из истории Ассиро-хеттских межгосударственных отношений.....5

*Петросян С. Г.*

О характере «племен Лулу» и страны Уза.....18

*Акопов А. А., Айрапетян А. С.*

Тайк в XI-XIV вв. (исторический обзор) .....31

*Оганнисян А. Г.*

Политика США в отношении палестинского конфликта  
во время президентства Джо Байдена.....42

## АРХЕОЛОГИЯ

*Симонян А. Г., Закарян Т. С.*

Металлические артефакты, обнаруженные в 2018 г. в  
Шаумянском некрополе города Капана и особенности их реставрации.....50

## ФИЛОЛОГИЯ

*Хачатрян Г. К., Айрапетян С. А.*

От Фавстоса Бузанда до современности (изучение фразеологических единиц).....63

*Хачатрян Л. М.*

Трансформация предложных аналитических конструкций древнеармянского языка  
в синтетичные конструкции (диахронический аспект) .....78

*Закарян О. Л.*

Этимология некоторых армянских слов,  
возникших от пие корня \*(s)ц(e)- «резать, колоть».....90

*Заргарян А. С.*

Трагедия изолированной человеческой души в поэме  
Оганнеса Туманяна «Сако из Лори» .....102

*Сукиасян Г. В., Закарян О. Л.*

Необходимость арменизации медицинских терминов.....113

*Алексамян М. А.*

Новообразования в поэме Ов. Шираза "Ани" .....129

## АРХИТЕКТУРА

*Григорян А. А., Григорян А. А., Наатакян Д. С.*

Некоторые вопросы сравнительного анализа арок, сводов, абсид, овнов,  
вишапов и других композиционных типов и прототипов.....137

**Ф О Л Ъ К Л О Р И С Т И К А**

*Петросян Л. С.*

Об исторических и обрядовых компонентах текста одной песнопляски.....152

*Арутюнян А. А., Матикян А. Г.*

Некоторые стиливые особенности колыбельных песен  
в современном фольклоре Ширака.....160

*Матикян А. Г.*

Формульная выразительность в детском фольклоре Ширака.....176

**Э Т Н О Г Р А Ф И Я**

*Базеян К. Р.*

Слова, указывающие профессию и занятие в диалектных словарях Ширака.....183

*Ангелуш Л. М.*

Языковая политика в период Советского Союза и проблемы  
применения армянского языка.....196

*Бояджян А. Г., Аветисян Г. Р.*

Социально-демографические проблемы РА и вопросы  
национального самосохранения.....207

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1 (27), 2024

Республика Армения  
Национальная академия наук  
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. 1 (27), 2024

Republic of Armenia  
National Academy of Sciences  
Shirak Centre for Armenological Studies

SCIENTIFIC WORKS. 1 (27), 2024

Խմբագրուվել և սրբագրուվել՝ Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի, Ա. Մառաջյանի  
Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի

Ստորագրված է տպագրության՝ 15. 06. 2024թ.

Ծավալը՝ 224 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

---

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն  
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5<sup>ա</sup>  
<https://shiraksciworks.sci.am/> <http://shirakcenter.sci.am/>  
E-mail: [scient.works@shirakcenter.sci.am](mailto:scient.works@shirakcenter.sci.am)